Է. Մ. ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

Э. М. БАГДАСАРЯН

ОВАНЕС ЕРЗНКАЦИ И ЕГО НАЗИДАТЕЛЬНАЯ ПРОЗА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

1033

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌ�ընթեր
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ֆ. Մ. ԲԱԼԴԱՍԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

1 ф (С 43)
Հ 83բ

Աշխատությունը նվիրված է XIII դարի նշանավոր մատենագիր Հովհ. Երզնկացու (Պլուզ) կանոնական խրատներին: Առաջին անգամ հրապարակվում են այդ խրատների քննական բնագրերը, բացահայտվում է նրանց պատմամշակութային և սոցիալ-քաղաքական նշանակությունը: Միաժամանակ տրվում է Երզնկայի հայկական իշխանության պատմությունը և նոր փաստերով լուսաբանվում Հովհ. Երզնկացու կյանքի ուղին:

Բ 10601
703 (02)—77 96—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ պատմագիտության արդի շրջանի կարևոր խնդիրներից է միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի, առանձին դասերի ու դասակարգերի փոխհարաբերության, սոցիալական վիճակի, գաղափարաբանության, ժողովրդական կենցաղի, սովորույթների ու հավատալիքների ուսումնասիրությունը: Բայց հանրահայտ է, որ միջնադարյան սկզբնաղբյուրներում ընդհանրապես և հայ միջնադարյան պատմիչների երկերում մասնավորապես այդ հարցերի ուսումնասիրությանը նպաստող փաստեր գրեթե չկան: Հայտնի է նաև, որ մենք վաղուց ի վեր զրկվել ենք թագավորական, կաթողիկոսական, ինչպես և ավատատիրական առանձին գերդաստանների ու քաղաքային ինքնավար մարմինների դիվաններում պահվող փաստաթղթերի երբեմնի հարուստ հավաքածուներից: Այս պայմաններում հայ միջնադարի համակողմանի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն են ստանում վերոհիշյալ հարցերի մասին ցաք ու ցրիվ այն տեղեկությունները, որոնք գտնվում են միջնադարյան քարոզչական, խրատական ու մեկնողական երկերի մեջ, շրջաբերական թղթերի, առանձին հոգևոր ու աշխարհիկ գործիչների նամակներում և այլուր:

Այդ հանգամանքը նկատի առնելով՝ Մաշտոցի անվան մատենադարանը ծրագրել է ուսումնասիրել ու գիտական շրջանառության մեջ դնել միջնադարից մեզ հասած մեկնողական բնույթի որոշ երկեր ամբողջությամբ, կամ քաղվածաբար հրատարակել նրանց առավել արժեքավոր հատվածները, որոնք լույս են սփռում մեր անցյալի պատմության վրա:

Ճիշտ է, առանձին հեղինակներ (Հ. Աճառյան, Հ. Մանանդյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Խաչիկյան և ուրիշներ) իրենց ուսումնասիրություններում երբեմն օգտվել են նմանատիպ երկերից, իսկ երբեմն էլ հրատարակել առանձին հուշարձաններ, սակայն աղբյուրագիտական այդ աշխատանքին ամբողջական ծավալով Մատենադարանի գիտական անձնակազմը ձեռնամուխ է եղել

վերջին տարիներս, և այս ուղղությամբ կատարված առաջին ուսումնասիրությունը նվիրված է Հովհաննես Երզնկացու խրատներին: Հեղինակը նպատակ է ունեցել ուշադրություն դարձնել հիմնականում պատմագիտական հետաքրքրություն ներկայացնող փաստերի վերհանմանն ու արժեքավորմանը: Նկատի առնելով, որ առայսօր հայագիտության մեջ չի եղել խրատներին նվիրված որևէ հատուկ ուսումնասիրություն, հեղինակը, Երզնկացու խրատների քննությանը ձեռնամուխ լինելուց առաջ, պատմա-բանասիրական ուսումնասիրության է ենթարկել խրատներն ընդհանրապես և կանոնական բնույթի խրատները՝ մասնավորապես: Ձեռագրական նոր տվյալներն անհրաժեշտ են դարձրել նաև Հովհաննես Երզնկացու կյանքի ու գործունեության մի շարք կողմերի լուսաբանումը:

Պետք է նշել մի հանգամանք ևս. խրատական գործերում հանդիպում են բազմաթիվ հետաքրքիր նյութեր հայ ժողովրդի պատմության ու արվեստի, կենցաղի, բարքերի ու սովորությունների և այլ բնագավառների մասին: Բայց այդ ամենի ուսումնասիրությունն ու սիստեմավորումը լուրջ բարդություն են ներկայացնում, որովհետև խրատները սովորաբար որևէ հարցի չեն նվիրվում, և նրանցում եղած արժեքավոր նյութերը հաճախ ցրված, միմյանցից կտրված վիճակում են: Աշխատության մեջ հաղթահարված է այդ դժվարությունը ևս: Ներածական ուսումնասիրության մեջ մատենագրական բազմազան նյութը խմբավորված է ըստ առանձին հարցերի ու արժեքավորված:

Ինչպես այս, այնպես էլ նույն շարքի մյուս հրապարակումները գիտական շրջանառության մեջ կմտցնեն արժեքավոր նոր նյութեր, որոնք մեծապես կնպաստեն մեր ժողովրդի միջնադարյան պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանմանը:

ՄԱՍՆ Ա

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ Ա ՐՈՋԸՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. ԺԱՄԱՆԱԿԸ

Անվանի մատենագիր, ականավոր գիտնական և հասարակական գործիչ Հովհաննես Պլուզ Երզնկացու գործունեությունը համընկնում է մեր ժողովրդի պատմության ամենաբարդ ժամանակահատվածներից մեկի՝ հուսադրող վերելքներով և ողբերգական անկումներով հայտնի XIII դարի II կեսին։

XIII դարի առաջին կեսը բնորոշ է հայ պետականության այս ու այնտեղ պահպանված միավորների հզորացմամբ։

Զաքարյանների հաղթական արշավանքները և Հայաստանի մի շարք նահանգների ազատագրումը սելջուկներից, Կիլիկյան հայկական թագավորության աննախադեպ հզորացումը որոշակի հնարավորություններ են ստեղծում ընդհանուր ճակատ կազմելու Իկոնիայի սելջուկյան սուլթանության և առանձին էմիրությունների դեմ Հայաստանի վերջնական ազատագրման համար։

Քաղաքական քիչ թե շատ ապահով դրությունը զգացնել է տալիս իրեն նաև տնտեսության և մշակույթի բնագավառում։ Ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Հայաստանի ազատագրված շրջաններում շարունակում են արագորեն զարգանալ քաղաքները, որոնց բնականոն աճը դադարել կամ խոպան կանգ էր առել սելջուկյան ավերիչ արշավանքների և ծանր տիրապետության շրջանում։ Հայաստանի քաղաքներից շատերը, շնորհիվ իրենց բնական բարենպաստ դիրքի և արհեստագործության բարձր զարգացման, դառնում են ոչ միայն ներքին, այլև տարանցիկ առևտրի նշանավոր կենտրոններ։

Ազատագրված շրջաններում և Կիլիկիայում վերաշինվում ու կառուցվում են բազմաթիվ վանքեր, դպրոցներ, որոնք դառնում են գիտության և լուսավորության նշանավոր կենտրոններ։ Մշակույթի և գիտության զարգացման համար առանձնահատուկ

նշանակություն են ստանում հայ մտավորականության երկու հատվածների՝ Մեծ Հայքի և Կիլիկիայի գիտնական վարդապետների ու ուսանողների փոխայցելությունները, հանգամանք, որ ոչ միայն նպաստում էր մշակութային կյանքի աշխուժացմանը, այլև ուժեղացնում ժողովրդի երկու հատվածների հոգևոր-բարոյական միասնությունը և հետաքրքրությունը միմյանց ճակատագրերի նկատմամբ:

Սակայն իրերի վիճակը հիմնովին փոխվեց դարի կեսերին, երբ Հայաստանը իր հարևան երկրների հետ նվաճեցին մոնղոլները:

Լինելով հասարակական զարգացման ստորին աստիճանում, քոչվոր անասնապահ մոնղոլներն իրենց արշավանքների և տիրապետության սկզբնական շրջանում հիմնականում մտահոգված էին անասունների հսկայական հոտերի համար արոտավայրեր ձեռք բերելով և կողոպուտով: Այս նպատակով ամենաչնչին դիմադրության դեպքում անգամ մոնղոլներն անխնա կոտորում էին նվաճված երկրի բնակչությանը, ավերում, հողին հավասարեցնում երբեմնի ծաղկուն քաղաքներն ու շենները: Անհոգությամբ ու հետևողականությամբ նրանք ոչնչացնում էին նաև այգիներն ու անտառները, ոռոգման շինությունները, որոնք Հայաստանի և ընդհանրապես Արևելքի պայմաններում ձեռք էին բերվել սերունդների ծանր, տքնաջան աշխատանքով և որոնցով մեծապես պայմանավորված էր երկրի բարեկեցության աստիճանը:

Այս ամենի հետևանքը եղավ դեռևս սելջուկյան արշավանքների շրջանում ծայր առած արտագաղթի աշխուժացումը: Սա ոչ միայն կործանարար էր երկրի տնտեսական կյանքի համար, այլև մեծ չափով թուլացնում էր ժողովրդի ինքնապաշտպանությունը, որովհետև գաղութների մեծ մասը պատկանում էր քաղաքային և գյուղական բնակչության այն շերտերին, որոնք զբաղված էին առավել բարձր արտադրողականություն ունեցող գործերով՝ արհեստներով, առևտրով. վերջիններիս միջոցով էր հիմնականում լրացվում երկրի զինական ուժը: Կացությունն առավել օրհասական էր դառնում հատկապես այն պատճառով, որ հայ բնակչությունից դատարկված երկիրն արագորեն բնակեցվում էր թուրք-թաթարական վայրենաբարո ցեղերով: Վիճակը չբարելավվեց նաև այն ժամանակ, երբ կազմակերպվեց մոնղոլական նոր պետականությունը՝ էլխանությունը, որի կազմի մեջ մտավ Հայաստանի մեծագույն մասը: Այժմ արդեն սովորական դարձած ավարառությունների ու արշավանքների, որ պարբերաբար կատարում էին մոնղոլական առանձին զորապետներ և զինվորական հրամանատարներ, գումարվում են հարկային ծանր քաղաքականությունը և ազատ գյուղացիության ու քաղաքային չքավորության մի մասի ճորտացումը: Բնականաբար, այս պայմաններում պետք է շարունակվեր արտագաղթը: Ժողովուրդը հոծ զանգվածներով դիմում էր դեպի Կիլիկիա, Վրաստան, Ղրիմ, Եվրոպայի զանազան երկրներ, միայն թե փրկվեր նվաճողի վայրագություններից:

Երկրի տնտեսական աշխույժ կյանքն անկման այնպիսի աստիճանի է հասնում, որ սկսում է լրջորեն անհանգստացնել նույնիսկ նվաճողներին: Բանն այն է, որ մոնղոլական խաները կարճ ժամանակում յուրացրել էին արևելյան տիրակալներին հատուկ զեխ կյանքը, պալատական ճոխ ծեսերը: Եվ արքունիքը, հրաժարվելով նահապետական պարզ կենցաղավարությունից, այժմ դրամական ու նյութական մեծ միջոցների պահանջ էր զգում, որ հնարավոր էր բավարարել միայն երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելով:

Ջեռնարկված միջոցներից ամենից ավելի նշանակալին Ղազան խանի հրահանգներն էին, որոնք նպատակ ունեին ինչ-որ չափով կարգ ու կանոն մտցնել երկրի կառավարման գործում՝ ընդհանրապես և հարկերի գանձման հարցում՝ մասնավորապես: Ճիշտ է, նվաճողի կողմից ձեռք առնված միջոցները հեռու էին արմատական բեկում մտցնելու ստեղծված իրավիճակում, սակայն օրինականության հաստատումը մասամբ կանխեց տնտեսական, իսկ նրա հետ նաև մշակութային ու հասարակական կյանքի վերջնական քայքայումը: Դանդաղորեն, բայց նորից կյանքի են կոչվում ավերված շատ քաղաքներ, որոնք դարձյալ ինչ-որ չափով վեր են ածվում արհեստավորական և առևտրական կենտրոնների:

Օրինականության թեկուզ մասնակի հաստատումը նպաստեց նաև մշակութային կյանքի զարգացմանը:

Մոնղոլները, սկզբում հեռու լինելով կրոնական մոլեռանդությունից, ոչ միայն դաժան հալածանքների չէին ենթարկում հայ հոգևորականությանը, այլև, որոշ դեպքերում, նույնիսկ սիրաշահում էին՝ աշխատելով ժողովրդական զանգվածների, քրիստոնյա պետությունների և այլ եկեղեցիների մոտ հայ եկեղեցու ունեցած հեղինակությունը ծառայեցնել իրենց քաղաքական և տնտեսական շահերին: Այս հանգամանքն առավելապես նկատելի էր մինչև մոնղոլների մահմեդականություն ընդունելը: Հայտնի է,

որ XIII դարի կեսերից մոնղոլները երբեմն բանակցություններ էին մտնում Հռոմի, Բյուզանդիայի և եվրոպական այլ պետությունների հետ: Հայ և օտար աղբյուրների մեջ մի շարք վկայություններ կան այն մասին, որ այդ բանակցություններում երկու կողմերն իրար ներկայացնելու և ընդհանուր լեզու գտնելու հարցում ոչ երկրորդական դեր էր խաղում նաև հայ հոգևորականությունը՝ նպատակ ունենալով մոնղոլներին հակելու դեպի քրիստոնեություն և նրանց զինական հզոր ուժը ուղղելու մահմեդականության դեմ[1]: Մոնղոլական արքունիքի և հայ հոգևորականության փոխադարձ շահերն առավել շոշափելի և իրական էին դառնում մոնղոլների և Կիլիկյան թագավորության ռազմա-քաղաքական դաշինքի շնորհիվ, որը դարձյալ ուղղված էր նույն նպատակին:

Մոնղոլների տիրապետության շրջանում վիճակը համեմատաբար բարվոք էր Հայաստանի այն վայրերում, որոնք թեպետ սկզբում ենթարկվեցին մոնղոլների ավերիչ արշավանքներին, սակայն հետագայում հանձնվեցին բնիկ հայ իշխանների, որոնք իրենց հայրենի գավառը կառավարելու համար մոնղոլական խաներից «ինջու»-ի իրավունք էին ստանում: Այդպիսի արտոնյալ վիճակում էին գտնվում Սյունյաց, Արցախի և Հյուսիսային Հայաստանի մի շարք նահանգներ: Այս վայրերում երկրի հասարակական-տնտեսական կյանքը շատ ավելի արագ վերականգնվեց, և պատահական չէ, որ հենց նրանք սկսեցին վճռական դեր խաղալ երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքում: Իրադրությունների քննությունից հետևում է, որ ամենայն հավանականությամբ նույն վիճակում էր գտնվում նաև Հովհաննես Երզնկացու հայրենի եկեղյաց գավառը, որի մասին խոսենք փոքր-ինչ մանրամասն:

Բ. ԵՐԶՆԿԱՆ ԵՎ ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌԸ XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Մոնղոլական արշավանքների նախօրեին Երզնկան ու եկեղյաց գավառը գտնվում էին Իկոնիայի սելջուկյան իշխանության կազմում, իբրև առանձին էմիրություն: Ճիշտ է, XIII դարի սկզբներին, մի կարճ ժամանակով (1204—1205), այն գրավում են հայ և վրաց

[1] Այդ մասին տե՛ս Ռուբրուկի վկայությունը (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, Երևան, 1932, էջ 34—35):

միացյալ ուժերի հրամանատար Զաքարյան հայ իշխանները, բայց շուտով սելջուկներին հաջողվում է նաև գրավել Երզնկան, որն այնուհետև սելջուկյան զանազան իշխանական տների միջև կովախնձոր է դառնում մինչև 1243 թվականը, այսինքն՝ մինչև մոնղոլների գրավումը:

Չնայած քաղաքական անկայուն վիճակին, եկեղյաց գավառը և Երզնկա քաղաքը սելջուկների տիրապետության ժամանակ պահպանել էին իրենց ազգային դեմքը: Ժամանակի հայ և օտար աղբյուրների վկայությամբ, քաղաքի ու նրա շրջակա բնակչության հիմնական մասը հայեր էին, որոնց հետ բնակվում էին որոշ թվով հույներ ու սելջուկներ: Գտնվելով Հայաստանի վրայով հարավից-հյուսիս և դեպի արևելք ձգվող տարանցիկ առևտրական ճանապարհների հանգույցում, Երզնկան շարունակում էր մնալ իբրև առևտրի, արհեստագործության նշանավոր կենտրոն: Քաղաքի արհեստագործության բազմաթիվ նմուշներ լավագույնի համբավ էին վայելում և մեծ պահանջարկ ունեին Արևելքի շուկաներում: Սակայն շուտով նրան ևս վիճակվում է պետականության կորցրած Հայաստանի քաղաքներին հատուկ այն ծանր ճակատագիրը, երբ նախկին նվաճողը պարտվելով՝ անպաշտպան է թողնում քաղաքը նոր նվաճող հորդաների առջև, և պաշտպանության գործը բացառապես ընկնում է տեղի վատ զինված բնակչության ուսերին:

Մոնղոլներն առաջին անգամ Երզնկան նվաճեցին 1243 թվականին: Դրանից մի փոքր առաջ նրանց հաջողվել էր Զաման Կատուկի ճակատամարտում ջախջախել Իկոնիայի սուլթանին, որն աճապարանքով նահանջել էր դեպի արևմուտք՝ ճակատագրի քմահաճույքին թողնելով քաղաքի բախտը: Սակայն հայ բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս մոնղոլական հրոսակներին: Կիրակոս Գանձակեցին վկայում է. «Եւ եկին պաշարեցին զԵրզնկայն և բազում մարտիւք մարտեան ընդ նմա. և բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին»[2]: Քաղաքի պաշտպանների հերոսական դիմադրության մասին է խոսում թեկուզ և այն փաստը, որ սկզբում չկարողանալով կոտրել նրանց դիմադրությունը՝ մոնղոլները ստիպված են լինում շարունակել իրենց առաջխաղացումը և միայն Կեսարիան ու Սեբաստիան գրավելուց հետո, ամբողջ ուժերը կենտրոնացնելով Երզնկայի դեմ, երկարատև պաշարումով ու խաբեությամբ

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 283:

գրավում են այն։ Մտնելով քաղաք, նրանք դաժան հաշվեհարդար են տեսնում պաշտպանների հետ։ Հիմնովին ավերվում են քաղաքի պարիսպները, բնակչության մի մասը սրի է մատնվում, մնացածները գերության են տարվում։ Միակ մխիթարությունը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, լինում է այն, որ մոնղոլական բանակում եղած հայերը հնարավորին չափ աշխատում են թեթևացնել բնակչության վիճակը՝ նրանց մի մասին փրկելով կոտորածից ու գերեվարությունից. «Մանաւանդ մեծամեծ իշխանքըն՝ Աւագն և Շահնշահն, Վահրամ և որդի իւր Աղբուղային, և խաչենեցիքն՝ Զալալ Հասան, և զօրք իւր, և ազգականքն, և Գրիգոր Դօփին որդի, մօրաքուեր որդի Զալալին, և այլ իշխանքն և զօրք նոցին ըստ կարի իւրեանց։ Եւ այս եղև ի ՈՂԲ (1243) թուականիս Հայոց»[3]։

Մոնղոլներն, ավերելով քաղաքը և զրկելով պաշտպանական միջոցներից, իրենց առջև հավանաբար նպատակ չէին դրել հիմնովին կործանել այն, այլապես աննպատակ և անիմաստ կլիներ Երզնկայում «շահնայ» կամ «շահնէ» թողնելը[4]։ Թե որքան ժամանակ է Երզնկան կառավարվել մոնղոլական կառավարչի կողմից, դժվար չէ կռահել, եթե նկատի առնենք, որ 1248 թ. նույն մոնղոլների օգնությամբ Երզնկայում Իկոնիայի սուլթան է հռչակվում Իուքն էդ Դինը։ Բայց այս անգամ սելջուկյան տիրապետությունը այլևս երկար չի տևում, որովհետև 1256 թ. մոնղոլները մի նոր արշավանք են ձեռնարկում դեպի Երզնկա և նորից գրավում այն։

Միջանկյալ նշենք, որ ըստ իրենց որդեգրած քաղաքականության՝ մոնղոլները, Իկոնիայի սուլթանությունը նվաճելուց և հարկատու դարձնելուց հետո, այն վերադարձրել էին սուլթանի ժառանգներին։ Ըստ երևույթին 1256 թ. նրանց երկրորդ արշավանքը Երզնկայի վրա թելադրված է եղել սուլթանության ապստամբությամբ։ Այս շրջանում սուլթանության՝ մոնղոլներից անկախ կամ ապստամբ վիճակում գտնվելը հաստատվում է թեկուզ

[3] Անդ, էջ 284։

[4] Հ. Քյուրտյան, Երիզա և եկեղյաց գաւառ, Ա, Վենետիկ, ս. Ղազար, 1953, էջ 108, ուր բերված է Գեորգ դպիր Պալատեցու բացատրությունը. «Ոստիկան, որ պահպանէ զգաւառն և զքաղաքն ի չարութենէ և ի վնասուս»

և այն փաստով, որ Կիլիկիայի հայոց Հեթում Ա թագավորը, 1254 թ. մոնղոլական Մանգու խանի մոտ բանակցությունների գնալիս, ստիպված է լինում ծպտված անցնել սուլթանության ենթակա շրջաններով, այդ թվում և Երզնկայով[5]։

Որոշակի դժվար է ասել, թե մոնղոլները, Երզնկան երկրորդ անգամ (1256) գրավելուց հետո, ինչպիսի կարգ մտցրին այնտեղ, սակայն փաստն այն է, որ մի քանի տարի անց Երզնկա քաղաքը և եկեղյաց գավառը ժառանգաբար կառավարում էին հայ իշխանները։ Այս իրողությունը, ինչ խոսք, ուսումնասիրողներին հայտնի է, և այս մասին գրվել է, սակայն, որքան գիտենք, առանձին քննության նյութ չեն դարձրել հայկական իշխանության վերստեղծման հանգամանքները։ Ուսումնասիրողներից միայն Ա. Սրապյանը, հենվելով Հ. Մանանդյանի այն ճիշտ եզրակացության վրա, թե մոնղոլները ընդհանրապես չէին փոխում նվաճված երկրների քաղաքական կարգը, այլ աշխատում էին իրենց շահերին ծառայեցնել հայ-վրացական զինվորական ուժերն ու վարչական ապարատը, ենթադրում է, որ նույնը տեղի է ունեցել նաև Երզնկայում[6]։ Այս տեսակետը, կարծում ենք, որոշ բացատրության և լրացման կարիք ունի։

Նախ՝ մոնղոլները այդպես էին վարվում ոչ միայն հայ և վրաց իշխանավորների, այլև, ինչպես վերը նշվեց, Իկոնիայի սուլթանության, այդ թվում և Երզնկայի էմիրության նկատմամբ։ 1243 թ. նվաճվելուց հետո Երզնկան նորից հանձնվեց սելջուկ տիրողներին։ Հետևաբար հայկական իշխանության վերստեղծումը Երզնկայում, ուր վաղուց ի վեր կառավարում էին սելջուկ էմիրները, չի կարող դիտվել իբրև նույն քաղաքականության արդյունք, ինչ, ասենք, հայ կամ վրաց իշխաններին իրենց տիրույթներում վերահաստատելը և նրանց «ինջու»-ի իրավունք տալը։ Մեր կարծիքով, այն առավելապես կապված էր Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում մոնղոլների նոր ռազմա-քաղաքական ծրագրերի հետ և մասամբ արդյունք էր հայ-մոնղոլական ռազմա-քաղաքական դաշինքի։ Այս առթիվ անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել 1256 թ. նախորդող դեպքերի վրա։

[5] Նկատի ունենք Աբուլ Ֆարաջի հաղորդած զրույցը Հեթում Ա-ի հետ Երզնկայում պատահած միջադեպի մասին. տե՛ս Հ. Քյուրտյան, Երիզա և եկեղյաց գաւառ, Ա, էջ 114—115։

[6] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 13—14։

Հայտնի է, որ Հեթում Ա-ն թաթարական արքունիքից վերադառնում է 1256 թ. և, իբրև մոնղոլական կայսրության վասալ ու դաշնակից, մասնակցում է Իկոնիայի սուլթանության դեմ հիշյալ թվականին կազմակերպված արշավանքին: Հեթում պատմիչի վկայությամբ, մինչ այդ Մանգու խանը համաձայնություն էր տվել Հեթումին հանձնելու թուրքերի նվաճած Կիլիկյան թագավորության երկրները, մեղմացնելու հարկային քաղաքականությունը և ընդհանրապես թեթևացնելու հայերի վիճակը բուն Հայաստանում: Հայտնի է, որ թաթարները ինչ-որ չափով կատարեցին իրենց խոստումը[7]:

Այս շրջանում թաթարներն սկսում են ծրագրել Առաջավոր և Փոքր Ասիայի համար կարևոր նշանակություն ունեցող մի արշավանք, որը պետք է հիմնովին փոխեր փոխհարաբերությունն այդ երկրամասում: Դա Բաղդադի խալիֆաթի վերջնական նվաճումն էր և մահմեդականության միջնաբերդի կործանումը: Հասկանալի է, որ այս խնդրի լուծման ճանապարհին մոնղոլները պետք է վերացնեին հավանական խոչընդոտները, որոնցից մեկը Իկոնիայի սուլթանությունն էր: Սակայն, 1256 թ., Իկոնիայի սուլթանության ջախջախումից հետո էլ, մոնղոլներին պետք էր ամուր թիկունք, և պատահական չէ այս շրջանում քրիստոնեական տարրերին սիրաշահելը: Պատմական այս հանգամանքներում է, որ երևան է գալիս Երզնկայի հայկական իշխանությունը: Այս,

---

[7] Մեր կարծիքով, ճիշտ չէ այն տեսակետը, թե Հեթումը, Մանգու խանի մոտ բանակցություններ վարելիս, չէր կարող շոշափել բուն Հայաստանին վերաբերող խնդիրներ (տե՛ս «История Киликийского армянского государства», Ереван, 1952, стр. 306.): Հնարավոր է, որ այդ հարցում Հեթում պատմիչի հաղորդածը որոշ չափազանցություններ պարունակի, սակայն Գրիգոր Ակներցին ևս չի թաքցնում, որ Հեթում Ա-ն խանի մոտ գնալիս հետապնդում էր ոչ միայն Կիլիկիայի անվտանգության շահերը ապահովելու, այլև համահայկական, ավելին՝ նույնիսկ Արևելքի համաքրիստոնեական շահերը պաշտպանելու խնդիրը. «...Ապա վասն սիրոյ քրիստոնէից, ևս առաւել՝ վասն իւր սեփհական երկրիս, գնաց բազում գանձիւք առ Մանկու-ղանն, և հոգաց չթողուլ երկիրս իւր զայսպիսի բարկութիւնս, և յորժամ հասաւ առ ղանն կամօքն Աստուծոյ, մեծարեցաւ ի ղանէն. և արարեալ ղանն մեծ պատիւ և հարկիս թագաւորին Հայոց և զամենայն բան նորա հոգաց ըստ կամաց նորա...» (Մաղաքիայ աբեղայ, Պատմութիւն վասն ազգին նեստորաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 22—23)։ Հեթում Ա-ն, Հայաստանում հանդիպելով հայ իշխաններին, ըստ երևույթին մանրամասն քննարկել էր Մանգու խանին ներկայացնելիք իր խնդիրները՝ այդ հարցում լսելով հայ իշխանների կարծիքները, որոնք քաջ ծանոթ էին մոնղոլների ձգտումներին, սովորույթներին, կենցաղին և այլն:

Մատենադարան. ձեռ. № 7046, էջ 196բ:

ինչպես և այն պարագան, որ մոնղոլները հետագայում ամեն կերպ օգնում ու խրախուսում էին հայկական իշխանությյան գոյատևմանը Երզնկայում, հիմք է տալիս ասելու, որ սուլթանությունից նվաճած հայկական գավառներում հայ իշխանությունների վերահաստատումը նրանք դիտում էին իբրև իրենց թիկունքը ապահովելու կարևոր պայման։

Առաջին տեղեկությունը Երզնկայի հայկական իշխանության և նրա գլուխ կանգնած առաջնորդների մասին վերաբերում է 1266 թվականին։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսը Հուլաղու խանի համար կնունքյան է բերում Միքայել Պալեոլոգ կայսեր դստերը՝ դեսպինա (տիրուհի) Մարիամին, սակայն Հուլաղուն մեռած լինելով՝ նրա հետ ամուսնանում է Ապաղա խանը[8]։ Նույն թվականին առաջին հիշատակությունը կա նաև Սարգիս արքեպիսկոպոսի որդու՝ Երզնկայի Հովհաննես իշխանի մասին. «Գրեալ ի ԷՃԺԵ (1266) թուին ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և յարհեպիսկոպոսութեան տեառն Սարգսի Մարհասիայի մեծի, ի քրիստոսապատակ իշխանին մերոյ պարոն Յովհաննէսի Տեառն ծառայի, ի յԵկեղեաց գաւառն Եզնկայ»[9]։

1033

Ինչպես մոնղոլների մոտ, այնպես էլ Կոստանդնուպոլսի արքունիքում Սարգիս արքեպիսկոպոսի ունեցած մեծ հեղինակու-

---

[8] Օրմանյանը, նրան հետևելով՝ նաև Քյուրտյանը ճիշտ չեն համարում Գանձակեցու հաղորդածն այն մասին, որ դեսպինա Մարիամին կնունքյան բերելու համար ուղարկված է եղել Սարգիս արքեպիսկոպոսը։ Ավելին, Քյուրտյանը, հաստատելու համար Օրմանյանի կարծիքը, մեջ է բերում Աբուլ Ֆարաջի հաղորդածը այս առթիվ. «էֆթիմիա Հունաց Անտիոքի պատրիարքը եկավ և Միքայել Բալեոլոգոսի աղջիկը կնունքյան բերավ Ապաղային» (տե՛ս Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գաւառ, Ա, էջ 129)։ Սակայն հարկ է նշել, որ Աբուլ Ֆարաջի հաղորդածը չի հակասում Գանձակեցու բերած փաստերին։ Գանձակեցին հաղորդում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը մոնղոլների կողմից գնաց իբրև դեսպան. հասկանալի է, որ կայսրը, աղջկան կնունքյան ուղարկելիս, իր հերթին չէր կարող, քաղաքական նկատառումներով, նրա հետ չղնել հոգևոր և աշխարհիկ նշանավոր մարդկանց. շատ տարօրինակ կլիներ, եթե կայսեր դուստրը ճանապարհ ընկներ միայն Սարգիս արքեպիսկոպոսի ուղեկցությամբ։ Սարգիս արքեպիսկոպոսի մեծ հեղինակության մասին վկայում է նաև Հովհաննես Երզնկացին. «Պատուեալ յԱստուծոյ, մեծարեալ յազգեաց և յազանց և ի թագաւորաց մեծաց, որ և շինեաց զհրաշագեղ խորանն Աստուծոյ»։ Արդյոք, բացի մոնղոլական խանից, ուրիշ ինչ մեծ թագավորի մասին է Երզնկացու խոսքը, եթե ոչ առաջին հերթին Կոստանդնուպոլսի կայսեր։

[9] Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գաւառ, Ա, էջ 129։

թյամբ միայն կարելի է բացատրել այն իրողությունը, որ նրան վստահվում էին քաղաքական կարևոր նշանակություն ունեցող գործեր։ Բայց սա նշանակում է նաև, որ նա նոր մարդ չէր իլխաններին մոտ և վաղուց հայտնի էր իբրև Երզնկայի արքեպիսկոպոս ու իշխանահայր։

Այն մասին, որ Սարգիս արքեպիսկոպոսը մինչև 1266 թ. արդեն բավական ժամանակ կառավարել էր Երզնկան, խոսում է նաև հետևյալ փաստը։ Այս շրջանում նա Երզնկայում ավարտում է մի հրաշալի տաճարի շինարարությունը, որի կառուցման համար մի քանի տարի էր հարկավոր։ Այդ տարիներից սկսած մինչև 1276 թ., մինչև Սարգիս արքեպիսկոպոսի և Հովհաննես իշխանի շարանենգ սպանությունը, Երզնկան ապրում էր մի խաղաղ ժամանակաշրջան, որը և տվել էր իր առատ պտուղները ինչպես երկրի տնտեսության, շինարարության, առևտրի ու արհեստագործության, այնպես էլ գիտության ու մշակույթի զարգացման բնագավառում։ Այդ են վկայում մի շարք փաստեր, որոնցից բերենք բնորոշ մեկը միայն. «Կատարեցի զսուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՉԻԱ (1272)... սա ի գաւառս Երիզա, որ յորջորջի Եկեղեաց գաւառ, ի հայրապետութեան տէր Սարգսի, իշխանակալութեան որդւոյ նորա պարոն Յոհանիսի, որ է ի ժամանակս սոցա խաղաղութիւն քրիստոնէից, զորս Քրիստոս Աստուած երկարակեաց արասցէ. ամէն»[10]։

Որքան էլ ցավալի է, սակայն վերոհիշյալ մաղթանքը չի կատարվում, որովհետև 1276 թ. սպանվում են ինչպես Սարգիս արքեպիսկոպոսը, այնպես էլ Հովհաննես իշխանը։ Սակայն նրանց մահով չի վերացվում Երզնկայի հայկական իշխանությունը։ Ա. Սրապյանը, նկատի առնելով Հովհաննես Երզնկացու՝ Եկեղյաց իշխանին ուղղված նամակի այն տողերը, ուր ասված է. «և արեամբն որպէս ճշմարիտ քրիստոնեայ և Քրիստոսի ծառայ՝ վկայեցն եղեալ մահակից և դաւանակից և դասակից։ Ըստ որում և ձեզ եւս Աստուած լինել ժառանգ իշխանութեանն իբր արեամբ հաւր ստացելոյ իշխանութեանն։ Եւ զձեզ եւս Աստուած՝ փոխանակ հարց մխիթարութիւն ազգի և սիւն հաստատուն սրբոյ եկեղեցւոյ և դեղ դիւրացուցիչ խոցոտեալ սրտից քրիստոնէից...»[11],—շատ

10 Հ. Քյուրյան, Երիզա և Եկեղեաց գաւառ, Ա էջ 130։

11 Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 15, տե՛ս նաև Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մտդ), ձեռագիր № 848, էջ 107ա։

ճիշտ եպրակացության է հանգում, թե խոսքն ուղղված է Հովհաննես իշխանի որդիներին և Սարգիս արքեպիսկոպոսի թոռներին։ Իրոք, Եկեղյաց գավառի և՛ քաղաքական, և՛ հոգևոր իշխանությունը շարունակում էր մնալ Սարգիս արքեպիսկոպոսի տոհմի ներկայացուցիչների ձեռքին։ Այդ հաստատվում է նաև նոր փաստերով։ Մի ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքն Եղնկայն, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին կաթուղիկէ եկեղեցւոյն, զոր շինեաց տէրն Սարգիս արհիական եպիսկոպոսն և բարեպաշտաւն որդի իւր Յոհաննէս։ Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԻԹ (1280), ի թագաւորութեանն Լեւոնի բարեպաշտի, որդւոյ Հեթմոյ, և ի հայրապետութենանն տեառն Յակոբայ և յարհիական եպիսկոպոսութենանն տեառն Ներսէսի՝ թաւուին տեառն Սարգսի և աստուածասէր եղբաւր նորին պարոնին Գրիգորիսի և յաշխարհակալութենանն Ապաղա խանին՝ որդւոյ Յուլայուին»[12]։

Երզնկացու կենսագրությանն անդրադառնալիս մենք առիթ կունենանք խոսելու նաև կողմնակի որոշ փաստերի մասին, որոնք թույլ են տալիս ենթադրելու, թե մինչև 1292 թ. Երզնկան պատկանել է հայ իշխանների։

Այն հանգամանքը, որ Երզնկան XIII դարի 50-ական թվականներից մինչև 90-ական թվականները կառավարվում է բնիկ հայ ավատատերերի կողմից և զերծ մնում ավերածություններից, հսկայական դրական նշանակություն է ունենում քաղաքի և գավառի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար։

Պատահական չէ, որ այդ տարիներին Երզնկայով անցնող օտարերկրյա ճանապարհորդները մեծ գովեստով են խոսում քաղաքի մասին։ Ահա քիչ անց, 1333 թ., ինչպես է նկարագրում Երզնկան արաբ ուղեգիր Իբն Բատուտան.

«Այս քաղաքը լայնանիստ և բազմաբնակիչ է։ Բնակիչներուն մեծամասնությունը հայեր են, և մնացյալները՝ մյուսլիմաններ...—Ապա ավելացնում է.—Երզնկա ունի գեղեցիկ հյուսվածեղեններ, որոնք իր անվամբ կը հիշվին։ Ունի պղնձի հանքեր, որով կշինեն ամաններ և աշտանակներ...»[13]։

12 Երուսաղեմի № 3392 ձեռ., էջ 496։ Օգտվել ենք Լ. Խաչիկյանի կատարած ընդօրինակություններից։

13 Տե՛ս Հ. Քյուրյան, Երիզա և Եկեղյաց գաւառ, Ա, էջ 285. տե՛ս նաև «Իբն ի Բատուտա», քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 31։

Մեծ գովասանքով են խոսում Երզնկայի մասին նաև XIII դարի վենետիկցի նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն և XV դարի սկզբներին Երզնկայով անցած իսպանացի ճանապարհորդ և դիվանագետ Կլավիխոն[14]։

Ինքը՝ Հովհաննես Երզնկացին իր համաքաղաքացիներին գրած նոր տարվա շնորհավորական ուղերձում այսպես է նկարագրում Երզնկան. «Բրգնայարմար և ճոխաձև հիացական։ Քաղաք հոյակապ և հռչակաւոր, արքայանիստ և տիեզերալոյր յորջորջեալ եկեղեցւօք...»[15]։ Այնուհետև անսքող հիացմունքով է նա պատկերում քաղաքացիներին, նրանց բարքն ու վարքը, կենցաղը և այլն։

Քաղաքի հարստության և ճոխության մասին է վկայում այն, որ այնտեղ ապրել են մեծահարուստ բազմաթիվ մարդիկ, որոնք հոլջորջվում էին խոճա, իսկ երբեմն՝ նաև իշխանին համազոր պարոն տիտղոսներով։

Քաղաքի աշխատավորական, առևտրական և արհեստավորական լայն շերտերի աշխույժ կյանքի ապացույցն է Երզնկայում կազմակերպված միությունը, որի կանոնադրությունը՝ «Սահմանը», գրել է Հովհաննես Երզնկացին[16]։

XIII դարը Երզնկայի և նկեղյաց գավառի համար խիստ նշանավոր եղավ նաև գիտության և մշակույթի զարգացման բնագավառում։ Քաղաքի շուրջը բռնած Լուսավորչի լեռների հռչակավոր վանքերը դեպի իրենց են ձգել Հայաստանի և Կիլիկիայի մի շարք ականավոր վարդապետների ու բազմաթիվ ուսանողների[17]։

Երզնկայի, իբրև գիտության նշանավոր կենտրոնի, ձգողական ուժը հատկապես մեծ էր Սարգիս արքեպիսկոպոսի ու նրա ժառանգների տիրապետության շրջանում, որոնք ոչ միայն հաջողությամբ պաշտպանում էին գավառի անդորր կյանքը, այլև մեծ չափով նպաստում էին գիտության և մշակույթի տարածմանը։ Եվ պատահական չէ, որ ընդամենը մի քանի տասնամյակում Երզնկան մեր մատենագրությանն է տալիս այնպիսի ականավոր

---

14 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, էջ 48 և 95։

15 Մատ, ձեռ. №610, էջ 112ա։ Ուղերձը մինչև վերջերս բանասիրությանն անծանոթ էր մնացել։

16 Տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրություն»։ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12։

17 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատ. Մեսրոպ վարդ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 510։

դեմքեր, օրպիսիք են Հովհաննես (Օործորեցի), Կոստանդին, Կիրակոս, Մովսես, Մխիթար Երզնկացիները և ուրիշներ։ Սակայն Երզնկայի դպրոցի այս փայլուն համաստեղության մեջ իր մատենագրական հարուստ ժառանգությամբ առանձնապես նշանավոր դարձավ Հովհաննես Պլուզ Երզնկացին։

Գ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե նկատի ունենանք Հովհաննես Երզնկացու թողած գիտական հսկա ժառանգության արժեքը, նրա բեղմնավոր հասարակական գործունեությունը և մեծ հեղինակությունը ժամանակակիցների շրջանում, ապա պետք է ասենք, որ նրա մասին մեզ հասած կենսագրական տեղեկություններն աղքատիկ են։

Հիմնական աղբյուրները, որոնք այս կամ այն չափով լույս են սփռում նրա կյանքի ու գործունեության վրա, իր իսկ ստեղծագործություններն են և ժամանակակիցների թողած հատուկենտ տեղեկություններ հիշատակարաններում։ Այդուամենայնիվ, պահպանված սակավաթիվ փաստերն իսկ հնարավորություն են ընձեռել բանասերներ Հ. Քյուրտյանին և առավել հանգամանալից՝ Ա. Սրապյանին տալու Երզնկացու կյանքի և գործունեության ուրվագիծը։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, Երզնկացու կենսագրության վրա կանգ ենք առնում համառոտ՝ առավել մանրամասն քննության առնելով մեր ձեռքի տակ եղած նոր փաստերը, որոնք ճշգրտում ու լրացնում են մատենագրի կենսագրության որոշ կետեր։

Երկար ժամանակ հայագիտության մեջ իշխել է այն ենթադրությունը, թե Հովհաննես Երզնկացին ծնվել է XIII դարի 40—50-ական թվականներին։ Ուսումնասիրողները սրան էին հանգում այն պարզ պատճառով, որ երկար ժամանակ նույնացվում էին XIII դարի վերջերին մահացած Հովհաննես Պլուզ Երզնկացին և մինչև XIV դարի 30-ական թվականներն ապրած մեկ այլ նշանավոր Հովհաննես Երզնկացի՝ Ոսկոփորեցի մականունով։

Հետագայում, երբ որոշակիորեն զատորոշվեցին XIII դարի այդ երկու նշանավոր հեղինակներն իրենց կենսագրությամբ և գործունեությամբ, հնարավոր դարձավ ճշգրտել Երզնկացու ծննդյան մոտավոր ժամանակը[18]։

---

18 Երկու համանուն հեղինակների զանազանության մասին առաջինը նշել է Լ. Խաչիկյանը (տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարան-

Ա. Սրապյանը, քննության առնելով մի շարք փաստեր, հանգում է այն եզրակացության, որ Հովհաննես Պլուզ Երզնկացին ծնված պետք է լինի մոտավորապես 1230 թվականին։ Կրկնություններից խուսափած լինելու համար այստեղ չենք բերում Սրապյանի փաստարկները, բայց անհրաժեշտ ենք համարում նրա կարծիքը հիմնավորող մի քանի նոր տվյալներ ավելացնել։ Ինչպես հայտնի է, Երզնկացու ծնողները և հարազատները սկզբում չեն ցանկացել, որ նա հոգևորական դառնա, և Երզնկացին մի քանի տարի զբաղվել է աշխարհիկ գործերով։ Հետագայում նա այդ մասին վշտով գրում է.

Զի ժամանակս իմ կորուսի յոյժ անպիտան
Եւ վաստակոց մշակ եղէ անշահեկան,
Զմասունս հոգւոյ ունայն թողի անզարդական
Եւ ըզմտացս աղբեր խցի առանց բըղխման։
Զի որք արեան են մերձակայք և ազգական,
Զիս ստիպէին ի հոգս ունայն՝ աշխարհական։
Յոր փութայի, նոքա չեղեն ինչ օգնական,
Եւ ոչ սրտիս իմ բաղձանաց նոքա նըմանք։
Զի որ մարմնոյ էր ցանկալիք, նոցա էր չան.
Եւ ինձ թողուլ զփոյթն այնպիսի, սիրել ըզբան։
Նոքա սըրտիս իմ տենչանաց ոչ ըղձացան,
Եւ ես նոցունց հետևելով՝ եղէ անբան։
Զի ի յերկրիս, յորում էի տրնկոյ նըման,
Սոցա պըտուղք իմ վաստակոցն՝ էր անպիտան։
Եւ որք պաղոյն քաղցրաճաշակ ոչ բաղձանան,
Եւ ոչ ի տունկն իսկ դիալով՝ տանին դարման,

Վասն այնորիկ բարձի թողի զճաշակն ուսման
Եւ զանձն ի գործ ետու հոգոց աշխարհական։
Թէպէտ անձուկ սրտիս նեղէր տագնապական,
Եւ ի խորոց սրտէ հընչէր ձայն հառաչման։
Այլ որ ի դէպ հասակն ուսման և մանկական,
Երբէք այլ ոչ ինձ հանդիպի՝ քանզի անցան[19]։

Այսպիսով, որոշակի է, որ Երզնկացին պատանի հասակում ուսումնառության մի շարք տարիներ է կորցրել։ Բայց սա նշանակում է, որ նա ուշ է սկսել նաև իր հոգևոր ծառայությունը և ուշ էլ պետք է ստացած լինի հոգևոր աստիճաններ։

Կարծում ենք, որ հարցի լուսաբանման համար կարևոր է հետևյալ փաստը։

Առ այսօր Երզնկացու մասին մեզ հասած առաջին ստույգ վկայությունը վերաբերում էր 1272 թ., երբ նա Երզնկայի Թիլ ավանում արտասանում է շատ կողմերով ուշագրավ մի ճառ, նվիրված Ներսես Պարթևի նշխարների գյուտին։ Սակայն պարզվում է, որ Երզնկացու մասին մեզ հասած ավելի վաղ ժամանակի հետ կապված տեղեկություններ ևս կան։ Հ. Քյուրտյանը իր «Երիզա և Եկեղյաց գավառ» ուշագրավ ու փաստական հարուստ նյութով աշխատության մեջ բերում է մի ձեռագիր ճառընտիրի հիշատակարանի հետևյալ հատվածը՝ իրավացիորեն նրա գրչին նույնացնելով Հովհաննես Երզնկացու հետ. «Ի քաղաքն Եկեղեաց, ընդ Հովանեաւ Սրբոյ Փրկչին, ի Յովհաննէս սարկաւագէ, ի թուին Հայոց ՉԺԵ (1266)»[20]։

Անանուն Սեբաստացու տարեգրության մեջ (XIII դ.) հիշատակված է մեկ ուրիշ կարևոր փաստ Երզնկացու մասին, որ վրիպել է մասնագետների ուշադրությունից։ Սեբաստացին հայտնում է, որ Հովհաննես Երզնկացին վարդապետ է դարձել Հակոբ կաթողիկոսի գահակալության թվականին. «Ի ՉԺԷ (1268 թ.) նստի կաթողիկոս տէր Յակոբն, և եղև վարդապետ Պլուզն Յերզնկան»[21]։ Հասկանալի է, որ եթե Երզնկացին վարդապետական աստիճան է ստացել 1268 թ., ապա մեծ հավանականությամբ

ներ, Երևան, 1950, էջ 649)։ Ավելի ուշ, ի թիվս երկու Երզնկացիների հետ առնչվող այլ հարցերի, այս խնդրին հանգամանորեն անդրադարձել է Ա. Սրապյանը։ Նա ոչ միայն բազմաթիվ փաստերի օգնությամբ զատորոշում է երկու համանուն հեղինակներին ու նրանց կենսագրությունները, այլև վճռական տարբերություններ, նույնիսկ հակասություններ է բացահայտում նրանց գործունեության ու գաղափարախոսության մեջ (տե՛ս Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958)։ Յավոք, մինչև այժմ էլ հրատարակվում են որոշ սխալ ակնարկներ և հոդվածներ Հովհաննես Պլուզ Երզնկացու մասին, որոնք արդյունք են հայ բանասիրության նվաճումների անտեսման ու անտեղյակության (տե՛ս «Սիոն», 1966, № 4, էջ 211, Զոհրապ սարկավագ Շամլյանի հաղորդումը Հովհաննես Պլուզի մասին։ Նաև՝ Երվանդ Տեր-Մկրտչյան, Գանձեր վասպուրականի, Բոստոն, 1956, էջ 47—49 և այլն)։

[19] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 41—42։
[20] Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, Ա, էջ 118։
[21] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ, Երևան, 1956, էջ 145։

կարելի է կարծել, որ 1266 թ. հիշատակված Հովհաննես սարկավագը մեր Հովհաննես Երզնկացին է։

Այժմ հարց է առաջանում. եթե Երզնկացին ուշ է սկսել հոգևոր գործունեությունը և միայն 1268 թ. է, որ վարդապետական աստիճան է ստացել, ապա քանի՞ տարեկան է եղել նա այդ ժամանակ։ Եթե նկատի առնենք, որ հայ եկեղեցու բազմաթիվ կրոնական գրություններում, այդ թվում՝ և իր իսկ գրած խրատներում, վարդապետ ձեռնադրվելու տարիքը 30 և ավելին է համարվում, ապա կստացվի, որ, իրոք, Երզնկացին ծնվել է մոտավորապես 1230 թ. և մի քանի տարի կորցնելով՝ հավանաբար 38 տարեկան հասակում ձեռնադրվել է վարդապետ։

Երկու խոսք Երզնկացու ծագման մասին։ Հասարակության ո՞ր շերտերից էր ծագում Երզնկացին, և ովքե՞ր էին այն սրյան «մերձակայք և ազգական»-ները, որոնք խոչընդոտել են Երզնկացուն նվիրվելու գիտությանն ու եկեղեցուն և դրդել նրան աշխարհիկ զբաղմունքի։

Այս հարցի պատասխանը մասամբ տալիս է վերը բերված չափածո հիշատակարանը։ Հազիվ թե ընչազուրկ ընտանիքում հատուկ հարց դառնար զավակի դաստիարակության խնդիրը։ Դեռևս Ներսես Շնորհալին, «Թուղթ ընդհանրականում» անդրադառնալով հոգևորականության որոշ մասի բարքերի անկմանը, դառնությամբ գրում է, որ նրանցից շատերը եկեղեցու և վանքերի վրա նայում են իբրև հարստանալու հեշտ միջոցի։ Եվ մարդիկ, որոնք աշխարհիկ կյանքում զուրկ էին ինչքից, հոգևորական դառնալուց հետո, չարաշահելով իրենց կոչումը, տեր էին դառնում նշանակալից կարողության։

Եթե նյութական շահագրգռվածությանը ավելացնենք նաև հոգեկան այն ապրումները, որ պետք է ունենար հասարակ հավատացյալը՝ իր զավակին հոգևոր ծառայությունից բռնի ետ պահելու համար, ապա կարելի է կարծել, որ Երզնկացին համեմատաբար ունևոր ընտանիքի զավակ էր։ Ի դեպ, մեր ենթադրությունը հիմնավորող ապացույց տալիս է հենց ինքը՝ Երզնկացին։ Նա նկեղեցաց գավառի իշխանին գրած խրատական թղթում իրեն համարում է իշխանի հետ «հայրենի նախնեաւք ձեզ գաւառական և հոմազգի և մտերիմ սիրով հուպ և մերձավոր սրտիւ»[22]։ Մի կողմ թողնենք

[22] «Թուղթ առ իշխանս նկեղեաց», Մատ, ձեռ. № 848, էջ 107ա։

այն, որ նա իշխանի հետ եղել է «մտերիմ սիրով հուպ» և «մերձաւոր սրտիւ», և փորը-ինչ կանգ առնենք «հոմազգի» բառի վրա։

«Հոմազգի» հայերենում ունի երկու իմաստ. մի դեպքում այն նշանակում է լինել «ազգակից», նույն ազգին, նույն ժողովրդին պատկանող, մյուս դեպքում՝ «ազգական», արյունակից։ Մեր համոզմամբ, այն այստեղ օգտագործված է արյունակից իմաստով, այլապես որքան անիմաստ կհնչի այդ հատվածը, եթե Երզնկացին իրեն քաջածանոթ և մեծ հավանականությամբ աշակերտած իշխանին ակնարկեր իր հայ լինելը։ Հետևաբար Հովհաննես Երզնկացին եղել է Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի և Հովհաննես իշխանի ազգակիցը, այսինքն՝ սերել է մի տոհմից, որ ավելի քան երկու դար իր ձեռքին էր պահում Երզնկայի հոգևոր և հաճախ նաև՝ քաղաքական իշխանությունը[23], պարգևելով հայրենիքին և գիտությանը նվիրված մի շարք անվանի դեմքեր։

Ի միջի այլոց, Հովհաննես Երզնկացու ծագման հարցի վրա մենք կանգ առանք բոլորովին ոչ ինքնանպատակ։ Այն հանգամանքը, որ նա սերում է իշխանական գերդաստանից, ավելի է շեշտում Երզնկացու մարդասիրական հայացքների արժեքն ու նշանակությունը։ Հետագայում կտեսնենք, որ, չնայած իր ծագմանը, նա չի քաշվում պարսավելու իշխող դասի ներկայացուցիչներին՝ ժողովրդական զանգվածների հանդեպ նրանց արհամարհանքի, անպատկառության և հայրենիքի ճակատագրի նկատմամբ անտարբերության համար։

Երզնկացու կյանքի ու գործունեության մասին հաջորդ արժեքավոր վկայությունը, ինչպես նշվեց, վերաբերում է 1272 թվականին։ Այդ թվականից մինչև 80-ական թվականների վերջը եղել են Երզնկացու հասարակական և գիտական կյանքի ամենաբեղուն և արգասաբեր տարիները։ Այդ շրջանում նա շարունակ ճանապարհորդել է։ Նրան երբեմն տեսնում ենք իր հայրենի քաղաքում, որտեղ ի թիվս այլ գործերի գրում է Երզնկայում կազմակերպված եղբայրության «Սահմանքը», երբեմն՝ Կիլիկիայում կամ Հռոմկլայում, որտեղ հորինում է մի շարք փայլուն ճառեր ու քարոզներ, ապա՝ Երուսաղեմ գնալիս, հետո՝ նորից Կիլիկիայում։ Այս նույն թվականներին նա ճանապարհորդում է

[23] Տե՛ս մեր հոդվածը՝ «Երզնկայի հայկական իշխանությունը XIII—XV դարերում» («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1970, № 2, էջ 36—44)։

Վրաստան, որտեղ գրում, ապա և չափածոյի է վերածում «Յաղագս երկնային շարժմանն»[24] կոչված նշանավոր ուսումնասիրությունը: Իր ճանապարհորդությունների ընթացքում նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում արքունիքում, կաթողիկոսարանում իշխանների, բարձրաստիճան հոգևորականների, ինչպես և հայ համայնքի բազմաթիվ այլ ներկայացուցիչների հետ:

Փաստերի անբավարարությունը, ցավոք, թույլ չի տալիս որոշակի ասելու, թե բացի հոգևոր և գիտական գործունեությունից ուրիշ ինչ հարցեր էին հետաքրքրում այդ շրջագայությունների ժամանակ Երզնկացուն: Դատելով իր մի շարք ստեղծագործությունների ոգուց և բովանդակությունից, կարելի է կարծել, որ նրան հուզող հարցերից մեկը եղել է հայ պետականության մնացորդների ամրապնդումը և ժողովրդական ստորին շերտերի վիճակի բարելավումը: Այդ հանգամանքը, ինչպես հետո կտեսնենք, առավելապես որոշակի երևում է նրա իրատական գործերում: Սակայն, ինչպիսին էլ լինեին Երզնկացուն հետաքրքրող հարցերը, մի բան փաստ է, որ մեր անխոնջ երախտավորը շտապում է, կարծեք, մատենագրական վաստակով փոխհատուցել իր կորցրած տարիների համար: Իր իսկ խոստովանությամբ, լինելով մարմնով տկար՝ նա ընդամենը մի քանի տարվա ընթացքում՝ 1280—1285 թթ. ստեղծում է բազմաթիվ ճառեր, իրատներ, իրատական շրջաբերական թղթեր, այդ թվում՝ «Նորին Յովհաննէս վարդապետի ասացեալ... յաւուրն, յորում օրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլ մանկունք իշխանաց» մեծարժեք ճառը: Ամենայն հավանականությամբ, 1280-ական թվականների երկրորդ կեսին է գրվել նաև հայ մատենագրության մեջ կանոնա-իրատական բովանդակություն ունեցող ամենանշանավոր գործերից մեկը ևս՝ նրա «Խրատք հասարակացը»: Ինչպես նշվեց, այն շրջանում է գրվել նաև «Յաղագս երկնային զարդուց» տիեզերագիտական արժեքավոր աշխատությունը, որտեղ Երզնկացին շարունակում է զարգացնել տիեզերքի վերաբերյալ հայ իրականության մեջ եղած առաջավոր գաղափարները:

Ուշագրավ է, որ այս հսկա ժառանգությունը Երզնկացին ստեղծում է ոչ վանական խցում փակված, այլ կյանքի բուռն

[24] Մատ, ձեռ. 652: Երզնկացու այս գործը հրատարակվել է դեռևս 1792 թ. Նոր Նախիջևանում «Վիպասանութիւն վերկնային մարմնոց շարժմանէ, զլուսատրացն՝ որ ի նմա, և զհաստատութենէ երկրի» խորագրով:

իրադարձությունների մթնոլորտում, որոնց մեծ մասի ականատեսն ու մասնակիցն է դառնում նաև ինքը:

Միայն 1280-ական թվականների վերջին, ոչ այնքան ծերությունից, որքան առողջական վիճակից նեղված, Երզնկացին որոշում է քաշվել վանք և նվիրվել գիտա-մանկավարժական գործունեության: Նա նախընտրում է Երզնկայի ս. Մինասի անապատը, որը եղել էր իր մանկության տարիների ուսումնառության վայրը: Այստեղ էլ Երզնկացին գրում և 1291 թ. ավարտում է Հակոբ Սյունեցի կաթողիկոսի խնդրանքով տարիներ առաջ ձեռնարկած իր նշանավոր Քերականության մեկնությունը[25], որը Երզնկացին համարում է իր վանական կյանքի առաջին պտուղը. «զայս առաջին պտուղ յանապատի կենաց ընծայեցաք սուրբ եկեղեցոյ մանկանց»[26]:

Մեր խնդրից դուրս է քերականագիտական այս փայլուն աշխատության արժեքավորումը, սակայն այն հանգամանքն իսկ, որ այս երկն իր սկզբունքներով դասական է դարձել հետագա հայ քերականագետների համար և շարունակել է իբրև դասագիրք ծառայել միջնադարյան հայկական շատ դպրոցներում, ինքնին խոսում է նրա բարձր արժանիքների մասին:

Հավանաբար կյանքի վերջին տարիներին՝ 1289—1290 թվականներին է գրել Երզնկացին նաև իր «Թուղթ... առ իշխանսն Հայոց Ըռուբինեանց, որ ի գահն Կիլիկեցոցն...» իրատականը, որ առաքել է ս. Մինասի անապատից Կիլիկիա՝ ումն Ստեփանոս վարդապետի հետ[27]:

Առ այսօր շատ քիչ բան է հայտնի եղել Երզնկացու կյանքի վերջին տարիների վերաբերյալ: Բանասիրության մեջ այն կարծիքն է իշխել, որ Երզնկացին մինչև 1293 թվականը, այսինքն՝ մինչև իր կյանքի վերջը, ապրել է Երզնկայի ս. Մինասի անապատում, որտեղ և ենթադրվել է, թե նա մշակել ու ամբողջացրել է 1291 թ. ավարտած քերականության մեկնությունը: Բարեբախտաբար այժմ մեր ձեռքի տակ է Հովհաննես Երզնկացու՝ 1293 թ. գրած մի շատ արժեքավոր, ընդարձակ հիշատակարանը, որը վերջերս է դրվել գիտական շրջանառության մեջ և հետաքրքիր

[25] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 44:

[26] Անդ, էջ 30:

[27] Մատ, ձեռ. № 3439, էջ 75բ, այդ մասին մանրամասն խոսում ենք իրատական թղթերի բաժնում:

նոր տվյալներ է հաղորդում նրա կյանքի վերջին տարիների մասին։ Նկատի ունենալով հիշատակարանի կարևորությունը՝ այն մեջ ենք բերում մանանակի կրճատումներով.

«Յամի եօթն հարիւրերորդի քառասուներորդի և միոյ թուականին հայկազնեան տումարիս գրեալ աւարտեցաւ Մեկնութիւնս Գործոց առաքելոցն, զոր համառօտեալ հատաքեալ էր աշխատասէր և արդիւնական վարդապետն Գէորգ[28]։ Եւ ես նուաստ Յոհաննէս Եզնկայեցի, քաղց և ծարաւի կենաց կերակրոյ, և անմահական ըմպելոյ, գրոց սրբոց իմաստութեան հանճարոյ, զոր յամենայն ժամանակս կենաց իմոց, չքաւորութեամբ[29] և աշխատութեամբ, ջան եդեալ ստացա զամենայն գիրս Աստուածաշունչ, և զմեկնութիւնս նոցունց, ծնունդս մտաց աշխատասէր երկանց հարցն սրբոց, և վարդապետաց, և զամենայն նուրբ գրեանսն, կրկին և երեք և չորսպատիկ։ Այլ և զիմաստասիրացն և զարուեստաւոր բանախաւսացն զգիրս իմաստից, որք գտանէին առ մեզ։ Եւ է զոր իմով աշխատութեամբ, բազում ժողովածոյս, բանից և մտաց և ասացուածոց գրեալ ի գիրս հաւաքեցի։ Եւ յամենայն կեանս իմ չարչարանաց և վաստակոց տուեալ զանձն իմ, յիմում գաւառին, ի չորս և հինգ վանս և յանապատս, շինութիւն արարի, այսպիսի յուսով, լինել ինձ տեղի գերեզմանի, և գրեանցն իմ մնալ անդ յաւգտութիւն այլոց, և ինձ պատճառս յիշատակի, նա ըստ կասկածոտ կրից կենցաղոյս, և յոչ կամելոյ զայրեղաց տեղեաց տիրողաց, ոչ եղեւ ինձ անդորրութիւն ի տեղւոջ։

---

[28] Անկասկած խոսքը Գևորգ Սկևռացու մասին է, որը, ինչպես և Երզնկացին, եղել է Վարդան Արևելցու տասնդավոր աշակերտներից մեկը (տե՛ս Ե. Բադրտարայան, Գևորգ Սկևռացու «Վարքը», Բանբեր մատենադարանի, №7, 1964, էջ 399—435)։

[29] Չքավորության մասին Երզնկացու ակնարկը բոլորովին չի հակասում մեր այն կարծիքին, թե Երզնկացին սերում է իշխանական գերդաստանից։ Մովսես Երզնկացու աշակերտի գրած ներբողյանից իմանում ենք, որ «էր սա ի գաւառէ Դարանաղեաց, յանառիկ դղեկէն յամուրն Անի կոչեցեալ, և այժմ Կամախ յորջորջեալ. անուն հօր նմա ներսէս քահանայ Աստուծոյ բարձրելոյ և մօրն մայր և տիկին ի սոյն գաւառէ, ազգաւ մեծատոհմ և երեւելի, որ և ցարդ ևս յայտնի են ամենեցուն» (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 508)։ Արդ, Մովսես Երզնկացին ևս 1292 թ. իր գրած ձեռագրի հիշատակարանում ասում է. «Ընդ որս և փափագանաւք ի սմա վաստակեցի, աղքատ կենաւք և տկար մարմնով թափառական յօտար գաւառի» (տե՛ս «Արարատ», Էջմիածին, 1904, էջ 127)։

Այլ և յանհանդիստ ծփանաց աշխարհային ծովուս, ի յարուցմանէ ալեաց այլասեռիցն ազանց ի վերայ քրիստոնէից, ոչ պատահեաց ախորժելին, վասն որոյ Ձի (1291) թուականիս, դէմ եդեալ բարոյ ակնկալութեամբ, թողեալ լալագին զքաղցրիկ մայրն իմ, զնուագած եղբայրս և զաշակերտեալ քրիստոնեայսն, բարոյ ակնկալութեամբ եկի հրկիրն Հայոց, յորում էր յաթոռ թագաւորութեանն Հեթում որդի Լեւոնի արքայի, անդրանիկ ամենայն եղբարցն, և ժառանգաւոր թագին, և յոյժ սիրող իմաստութեան գրոց, և միաբանութեան քրիստոնէից ազգաց և աստ յուսայի գտանել տեղի անդորրութեան, մնացեալ աւուրց սակաւ կենացն իմ վճարման, և մնալ գրեանցն իմ յիշատակի տեղոջն...»[30]։

Սակայն այստեղ ևս նա հանդիստ չի գտնում։ Հիշատակարանում մանրամասն բերված են պատմական արժեքավոր տեղեկություններ 1292 թ. դեպի Կիլիկիա եգիպտական մամլուքների կատարած արշավանքի, ավերածությունների, Հռոմկլայի գրավման և Ստեփանոս Հռոմկլայեցի կամ Երզնկայեցի կոչված կաթողիկոսի գերեվարման մասին, որին չենք անդրադառնում հարցի հետ անմիջական առնչություն չունենալու պատճառով։

Այնուհետև Երզնկացին շարունակում է դարձյալ իր մասին տեղեկություններ հաղորդել։

«...Որ և ես նուաստ Յոհաննէս, զայս Բ. ամ կայի անհանգիստ, երկմիտ, և անտեղի, շրջելով պանդխտաբար, միջաբեկ և յուսահատեալ յիմ խորհրդոյն, զի թէ անառիկ ամրոցին տիրեցին թշնամիք խաչին, և գանձք հոգևոր աստուածային գրոց ցրուեցան, և չարախոհ մտաւք մախայր ընդ երկիրս Հայոց, ո՛ւր գտանիցեմ տեղի անկասկած, աղքատութեան իմոյ ստացուածոյ, մնալ անտեղափոխ ի նոյն յարակայութեամբ։

Այլ յուսով ողորմութեանն Աստուծոյ թողում զամենայն աշխատութիւնս իմ, եկեղեցւոյ մանկաց և գրոց ուսումնականաց, զի ուր և պատահիցեն, տեսեալ զիմ աղերս աղաչանաց, գրեալ ի բանս իմոց յիշատակաց, շարժեալ ի գութ գորովոյ մարդասիրապէս, յիշեսցեն մեզ, և զծնաւղսն մեր, յողորմութիւնն Քրիստոսի...»[31]։

---

[30] Տ. Եպ. Պալյան, Յուցակ հայերեն ձեռագրաց վանուց ս. Կարապետի և ս. Դանիելի ի Կեսարիա, Վիեննա, 1963, էջ 56։ Կարծում ենք, Երզնկացու Կիլիկիա գնալու որոշումը թելադրված էր նաև նրանով, որ ժամանակի կաթողիկոսը իր հայրենակիցը, գուցե և մտերիմն է։

[31] Անդ, էջ 57։

Այնուհետև դարձյալ մաղթում է հիշել առ աստված իրեն, ծնողներին և «սուրբ հարսն և լուսաւորիչ վարդապետին»:

Հիշատակարանը, ցավոք, թերի է, սակայն նրա վերջից պարզվում է, որ ձեռագիրը գրված է Խորին անապատում. «Կազմեցաւ ի սուրբ եւ ի մեծափառ անապատն ի Խորին... ձեռամբ սուրբ քահանային»[32]:

Այս հիշատակարանի միջոցով պարզվում են Երզնկացու գործունեության մինչև այժմ անհայտ մնացած մի շարք կետեր:

Հաստատվում և լրացվում է, որ Երզնկացին եղել է արդյունական գրիչ, քանի որ, ինչպես ինքն է ասում, «բազում ժողովածոյս բանից և մատց և ասացուածոց գրեալ ի գիրս հալաքեցի»:

Այնուհետև պարզվում է, որ Երզնկացին մեծապես մտահոգվել է հայ մշակույթի ձեռագիր գանձերի պահպանման գործով: Շինարարական այլ աշխատանքների հետ մեկտեղ, նա միայն Երզնկայի վանքերում ստեղծել է չորս-հինգ գրադարան, որոնք թերևս նախատեսվել են ոչ միայն վանականների, այլև հասարակության լայն շրջանների համար: Այդ է ապացուցում այն հանգամանքը, որ նա չի բավարարվել յուրաքանչյուր ձեռագրից մեկ, նույնիսկ երկու օրինակ գրելով կամ պատվիրելով, այլ երբեմն հավաքել է երեքից չորս, գուցե ավելի օրինակներ, որ տպագրության բացակայության պայմաններում արտակարգ դժվար էր:

Սակայն, հակառակ այն մեծ ծառայությունների, որ կատարել է Երզնկացին հատկապես Երզնկայի և նկեղյաց գավառի համար, իր կյանքի վերջին՝ ծերության տարիներին, ինչպես վերը տեսանք, հալածվել է տեղի հզորներից, թողել է իր բազմաթիվ աշակերտներին, հարազատներին ու հետևորդներին և գնացել Կիլիկիա: Հիշատակարանի այս հատվածը շատ ուշագրավ է այն իմաստով, որ նրանից կարելի է եզրակացնել, թե Երզնկացին հալածվել է և լքել հայրենիքը ոչ այնքան օտարների մեղքով, որքան տեղի հայ զորեղների: «Նա ըստ կասկածոտ կրից կենցաղոյս, և յոչ կամելոյ զաւրեղաց տեղեաց տիրողաց, ոչ եղև ինձ անդորրութիւն ի տեղւոջ: Այլ և յանհանգիստ ծփանաց աշխարհային ծովուս, ի յարուցմանէ ալեաց այլասեռիցն ազանց ի վերայ քրիստոնէից, ոչ պատահեաց ախորժելին...»:

Ինչպես տեսնում ենք, որոշակի չի ասվում, թե ովքեր էին տեղի զորեղները, սակայն առանձին է խոսվում օտարների հարուցած նեղությունների մասին: Ցավոք, առայժմ չի պարզվում, թե ինչ հողի վրա է եղել հալածանքը, բայց հավանական ենք գտնում ենթադրելու, որ նրա մարդասիրական հայացքներն ու զորեղների կողմից ժողովրդական զանգվածների դաժան շահագործումը սահմանափակելու մասին խրատները ոչ երկրորդական դեր են խաղացել այդ հարցում:

Հովհաննես Երզնկացին, որ վերը բերված հիշատակարանում էլ ակնարկում է, թե իրեն կարճ կյանք է մնացել ապրելու, իրոք մահանում է ձեռագիրը ավարտելուց ոչ ուշ, 1293 թվականին: Այդ մասին է վկայում Հովհաննես Երզնկացու հայրենակից, գուցե և աշակերտ Մովսես Երզնկացին 1293 թ. գրած իր Պատարագի մեկնության հիշատակարանում: Մովսես Երզնկացին հայտնում է, որ Պատարագի մեկնությունը գրել է ոչ միայն իր մտահղացմամբ, «այլ յորդորեալ առաւել յիմաստուն րաբունապետէն Յովհաննու, որ և ի տայն ամի փոխեցաւ ի Քրիստոս, որոյ շնորհեցէ Տէր Աստուած հանգիստ և ողորմութիւն,...»[33]: Ղ. Ալիշանը, չտարբերելով Պլուզ և Ծործորեցի Երզնկացիներին և Պլուզին շատ ավելի ուշ մահացած համարելով, գրում է. «Ծանոթ և գերագույն Երզնկացի Հովհաննեան չէ սա, այլ ուրիշ մի»[34]: Հետագայում Ա. Սրապյանը ճշտում է այս սխալը և գրում, որ մեծ հավանականությամբ խոսքը այստեղ Պլուզի մահվան մասին է: Սակայն Ա. Սրապյանի մոտ տեղ է գտել մի փոքր թյուրիմացություն՝ Երզնկացու մահվան մասին տեղեկություն հաղորդողի անձնավորության վերաբերյալ: Նա վերոբերյալ հիշատակարանը համարում է ոչ թե Մովսես Երզնկացու, այլ վերջինիս աշակերտներից մեկի գործը: Ըստ երևույթին Ա. Սրապյանը թյուրիմացության մեջ է ընկել հետևյալ պատճառով. Մովսես Երզնկացու հիշատակարանը արտագրված է նրա Պատարագի մեկնության մեկ այլ ընդօրինակության մեջ՝ 1295 թ., Դարանաղյաց գավառում Ստեփանոս Երկայն կոչված քահանայի կողմից, որին և սխալմամբ վերագրվել է հիշատակարանը[35]:

Այս ուղղումն ավելի ևս նպաստում է «առաւել յիմաստուն

[32] Անդ:

[33] Երուսաղեմի ձեռ. № 1236, էջ 190, տե՛ս նաև Ղ. Ալիշան, Հայապատում Բ, էջ 508 (ծանոթագրություն):

[34] Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 508 (ծանոթագրություն):

[35] Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Յուցակ հայերեն ձեռագրաց նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի:

րաբունապետէն Յովհաննու» արտահայտությունը Հովհաննես Երզնկացուն վերագրելուն, որովհետև Մովսեսն ինքն արդեն մեծ գիտնական վարդապետ էր, և նրանից առաջ Հովհաննես անունով առավել «յիմաստուն» վարդապետ կարող էր համարվել միայն Հովհաննես Պլուզը։

Հետաքրքիր է, որ այս երկու նշանավոր վարդապետներն էլ սերում էին Եկեղյաց կամ Դարանաղյաց գավառի մեծատոհմիկ ընտանիքներից, և բացառված չէ նրանց արյունակցական կապը։ Արժե նաև ավելացնել, որ Մովսես Երզնկացին իր հիշատակարանը պետք է որ գրած լինի Կիլիկիայում, որտեղ նա գտնվում էր այդ տարիներին, Գևորգ Սկևռացուն աշակերտելուց հետո էլ[36]։

Արդ, եթե 1292 թ.՝ վշտացած և ծերացած Հովհաննես Երզնկացին գտնվում էր Կիլիկիայում, և եթե 1293 թվականին Մովսես Երզնկացին դարձյալ Կիլիկիայում գրում է, որ ինքը Պատարագամատույցի մեկնությունը գրել է Հովհաննես վարդապետի հորդորներով, ապա դժվար չէ կռահել, որ Երզնկացին վախճանվել է Կիլիկիայում և հավանաբար այնտեղ էլ թաղվել։ Մինչդեռ ուսումնասիրողները նրա գերեզմանը փնտրել են մերթ Երզնկայում[37], մերթ Հաղբատում[38]։ Այս տեսակետները մանրամասն քննության առնելով, Ա. Սրապյանը եկել է այն համոզման, որ Երզնկացին վախճանվել և թաղվել է Երզնկայում։ Սակայն նա անմիջապես նկատում է, որ Երզնկացին չէր կարող նախապես թաղված լինել ս. Նշան եկեղեցում, ինչպես երևում է Գ. Սրվանձտյանի նկարագրությունից, այլ հավանաբար նրա մահվանից բավական ժամանակ հետո է աճյունը տեղափոխվել եկեղեցի, որովհետև Երզնկացին հատուկ կանոնական օրենքներով արգելում էր հոգևորականներին ոչ միայն եկեղեցիների ներսում, այլև բակերում թաղելը[39]։

Որ Երզնկացու աճյունը կարող էր նախապես թաղվել և հետո տեղափոխված լինել, շատ հավանական է, բայց տեղափոխվել ավելի հեռվից, քան ենթադրում է Ա. Սրապյանը։ Ինչպես վերը ասվեց, մեծ հավանականությամբ, Երզնկացին մահացել է

Մատենադարան. ձեռ. № 1374, էջ 160բ։

---

36 *Մտդ. ձեռ. № 177, էջ 595, տե՛ս նաև «Արարատ», 1904, էջ 125—137, Մեսրոպ վարդ. Մագիստրոսի շատ ուշագրավ հոդվածը։*

37 *Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 48 (ծանոթագրություն)։*

38 *Անդ։*

39 *Մտդ, ձեռ. № 2329, էջ 275 բ։*

կիլիկիայում, և եթե Երզնկայի ս. Նշան եկեղեցում եղած շիրմաքարի արձանագրությունը արդյունք չէ Պլուզին ժամանակով մոտիկ Հովհաննես անունով Երզնկացի այլ վարդապետների շփոթության, կամ էլ ուղղակի հուշաքար՝ կանգնեցված նրա հիշատակին, ապա մնում է ենթադրել, որ նկատի առնելով Պլուզի մեծ հեղինակությունն ու հռչակը՝ նրա աշակերտները և հարազատները հետագայում շիրիմը Կիլիկիայից տեղափոխել են Երզնկա[40]:

Վերջապես Երզնկացու մահվան ժամանակի և վայրի մասին պահպանվել է նաև մի այլ ուշագրավ փաստ, որ նկատի չի առնվել ուսումնասիրողների կողմից: Խոսքը վերաբերում է Կիլիկիայի Ակներ վանքում վախճանված Հովհաննես Ճլուզ վարդապետի մասին եղած ակնարկին: Վերջինս 1293 թ. մահացած է եղել և իր մահվան օրը մի օրինակ «Սաղմոսաց մեկնիչ» է նվիրած եղել Ակների վանքին[41]:

Հովհաննես Ճլուզ վարդապետի մասին եղած այս տեղեկությանը անդրադարձել են Ալիշանը[42], Զարբհանալյանը[43], Օրմանյանը[44] և Աճառյանը: Այն հանգամանքը, որ մեր մատենագրության երեք ականավոր ներկայացուցիչներն անգամ հարկ չեն համարել խոսելու Պլուզ և Ճլուզ (Օրմանյանի մոտ՝ ուրիշ Պլուզ—Է. Բ.) Հովհաննես վարդապետների նույնության մասին, իսկ մեծ գիտնական Աճառյանը, խոսելով Ճլուզի մասին, փակագծերում միայն նշել է՝ «ոչ Պլուզ», —լիովին հասկանալի է, եթե դարձյալ նկատի առնենք Պլուզ և Ծործորեցի Հովհաննեսների շփոթությունը և Հովհաննես Պլուզի կյանքը մինչև XIV դարի 30-ական թվականները երկարացնելը: Այժմ կարծում ենք՝ մեր ունեցած փաստերը հիմք են տալիս ասելու, որ 1293 թ. արդեն վախճանված Հովհաննես Պլուզ և Ճլուզ վարդապետները նույն անձնավորությունն են: Ճլուզ անվանումը կամ Պլուզի բարբառային մի տարբերակ է, կամ պարզապես գրչի սխալ, վրիպակ, ինչպես այդ երևում է հայերեն

---

40 Սրբված ուսուցիչների շիրիմը հեռավոր վայրերից տեղափոխելու միակ դեպքը չէ սա մեր պատմության մեջ: Հիշենք Թեկուզ Հովհան Մեծոփեցու դիակի փոխադրումը:

41 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 599—600:

42 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1893, էջ 154:

43 Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1897, էջ 714:

44 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, գիրք Ա, Բեյրութ, 1960, էջ 1795:

գավառական բառարաններից[45]։ Հետևաբար Հովհաննես Երզնկացին թաղվել է Կիլիկիայի Ակներ վանքում։

Սակայն, եթե Ճլուզը նույն Պլուզն է, ապա մեծ երախտավորի թողած մեծ ժառանգությանը գումարվում է մի ընտիր տաղ ևս[46], Գրիգոր Լուսավորչին նվիրված[47]։

---

45 Սաճակ վարդ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 435։ Բերված է Ճլուզի բացատրությունը. «Շատ նիհար մարդ, նաև Ճլուզ»։ Նույնը նաև Հ. Աճառյան, *Հայերեն գավառական բառարան*, տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», 1913, էջ 719, Ճլուզ=Պլուզ։

46 Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 154։

47 Նույն ուսումնասիրությունը ավարտված էր, երբ Ն. Պողարյանի կազմած Երուսաղեմի ձեռագրերի մայր ցուցակի 6-րդ հատորում ծանոթացանք Երզնկացու գրած մի այլ հիշատակարանին։ Այն ոչ միայն մանրամասնություններ է հաղորդում Երզնկացու կենսագրության մասին, այլև նրա ինքնագիրն է։

«Առաջնորդք Սբ. Ուխտիս եւ սպասաւորք Սբ. Լուսաւորչիս գերեզմանին, որ յետ մեր լինիք եւ տեսանէք զգեղեցիկ եւ զծաղկանկար Աւետարանս Քի. Այ. մերոյ, յիշեցէք զստացողդ սորին, զի բարի եւ քրիստոսասէր քրիստոնեայ մի կիր Վասիլ անուն եկեալ ի քաղաքէն Մելտենո յԵղնկայս տամբ եւ զաւակաւք եւ աստ վախճանեալ փոխեցաւ ի Քս. յոյսն քրիստոնէից։

Իսկ ի թուիս ՉԼԶ, ի տաւնի Վարդավառին եկին ի յուխտ ի Սբ. Լուսաւորչիս բարեպաշտաւն կենակից նորա Մեծոփիկն եւ երկեղազարդ որդի նորին Ապուլքարամ այլ տղայաքն, յորում էի ի ծառայութիւն Սբ. Լուսաւորչիս նուաստ վարդապետս Յոհաննէս, եւ տուին զգեղեցկազարդ Աւետարանս ընծայք Սբ. Լուսաւորչիս, յիշատակ հոգւո պր. կիր Վասլին, եւ փրկութիւն զաւակաց իւրոց. եւ ես վր. Յոհաննէս եւ այլ միաբանքս տուաք ի տարին աւր մի պատարագ կիր Վասլին, ի տաւնի Սբ. Քառասնիցն, քանի պատարագող որ լինին յամէն եկեղեցիքն։

Արդ որ գայք յետ մեր՝ անխափան կատարեցէք զյիշատակս զայս, եւ մնասցէ սա անջնջելի յիշատակ կիր Վասլին, Մեծոփկնա, Ապուլքարիմին, Նուարթի խաթունին, եւ Ամիրոցին։

Յիշեսջիք եւ զհարկեւոր քրիստոնեայն զՇահնշահ դերձակն յեղնկեա, որ միջնորդ եղեւ բարեգործութեանս որ և յետին գլուխ Մեծոփկնա, որո տացէ Քս. վարձս բարեաց նմա եւ ծնողաց իւրոց (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. 6, էջ 147)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ

Ա. ԿԱՆՈՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽՐԱՏՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Երզնկացու գիտական ժառանգության ուսումնասիրությամբ տարբեր առիթներով զբաղվել են Մ. Չամչյանը, Ղ. Ալիշանը, Գ. Սրվանձտյանը, Գ. Զարբհանալյանը, Բ. Կյուլեսերյանը, Մ. Պոտուրյանը, Ն. Ադոնցը, Մ. Օրմանյանը, Գ. Հովսեփյանը, Մ. Աբեղյանը, Լ. Խաչիկյանը, Հ. Քյուրտյանը[1]։ Սակայն վերոհիշյալ հեղինակներին հիմնականում հետաքրքրել են Երզնկացու կյանքի ու գործունեության հետ առնչվող մասնակի հարցեր, իսկ երբեմն էլ նրա գրչին պատկանող որևէ գիտական կամ գեղարվեստական երկի պատմա-բանասիրական ուսումնասիրությունն ու արժեքավորումը։

Առաջին մենագրական ուսումնասիրությունը Երզնկացու մասին, ինչպես ասվեց, պատկանում է բանասեր Ա. Սրապյանին։

Ա. Սրապյանի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց առավել ամբողջական պատկերացում կազմելու Երզնկացու նաև

---

1 Մ. Չամչյան, *Պատմութիւն Հայոց*, Գ, Վենետիկ, 1786, Ղ. Ալիշան, *Հուշիկք հայրենյաց հայոց*, Բ, Վենետիկ, 1869—1870, «Շնորհալի և պարագայք», Վենետիկ, 1873։ «*Սիսուան*», Վենետիկ, 1885։ «*Սիսական*», Վենետիկ, 1893։ «*Հայապատում*», հատ. Ա-Բ, Վենետիկ, 1904, 1905։ Գ. Սրվանձտյան, *Թորոս աղբար*, Բ, Կ. Պոլիս, 1885։ Գ. Զարբհանալյան, *Հայկական հին դպրության պատմություն*, Վենետիկ, 1897։ Բ. Կյուլեսերյան, *Հովհաննես Երզնկացի*, «Բյուրակն», 1903։ Մ. Պոտուրյան, *Միջնադարյան բանաստեղծներ*, «Բազմավէպ», 1906», 6, 8։ Մ. Օրմանյան, *Ազգապատում*, Ա-Բ, Կ. Պոլիս, 1912։ Գ. Հովսեփյան, *Դրչության արվեստը*, Գ, Վաղարշապատ, 1913, «*Խաղբակյանք կամ Պոռշյանք*», Բ, Երուսաղեմ, 1944։ Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, Բ, Երևան, 1946։ Լ. Խաչիկյան, *1280 թվականին Երզնկայում կազմակերպված ձեռագրության աղբյուրները*, «Տեղեկագիր Հայկ. ՍՍՀ ԳԱ», 1951, № 12։ Հ. Քյուրտյան, *Երիզա և նկեղյաց գաւառ*։

գիտական, գեղարվեստական ժառանգության հսկայական արժեքի մասին, և պատահական չէ, որ այս աշխատության հրատարակումը խթան հանդիսացավ Երզնկացու ստեղծագործության տարբեր բնագավառներին նվիրված առանձին ուսումնասիրությունների երևան գալուն, որոնցից հատկապես ուշագրավ է Գ. Գրիգորյանի «Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները» մենագրությունը:

Սույն ուսումնասիրության մեջ քննության են առնվում Երզնկացու այն գործերը, որոնք ունեն խրատական բնույթ՝ անկախ ձևից ու անվանումից. խրատներ, թղթեր, քարոզներ, ճառեր և այլն: Ըստ որում դրանք քննվում են ոչ միայն բանասիրական, այլև առավելապես պատմագիտական առումով, իբրև ժամանակի պատմության, ժողովրդի կենցաղի ու սովորույթների, տարբեր գիտությունների, արվեստների, մարմնամարզության ու կյանքի ուրիշ բնագավառների վերաբերյալ հետաքրքիր նյութեր պարունակող սկզբնաղբյուրներ:

Սակայն նկատի առնելով, որ հայ աղբյուրագիտության մեջ խրատների մասին չկա քիչ թե շատ ամփոփ խոսք, համառոտակի անդրադառնում ենք միջնադարյան հայկական խրատների իմաստին ու նշանակությանը, գանազանելու նրանց տեսակները, ցույց տալով խրատական այն գրությունների երևան գալու հանգամանքները, որոնք խրատներ լինելով հանդերձ ձեռք են բերում կանոնական բնույթ:

Խրատը, իբրև անհատի և հասարակության բարոյական դաստիարակության միջոց, երևան է գալիս մարդկության քաղաքակրթության հետ միաժամանակ: Հայտնի են անտիկ և միջնադարյան՝ ամենատարբեր լեզուներով ու խմբագրություններով մեզ հասած բազմաթիվ խրատներ, որոնց մի մասը մեծ տարածում է գտել այլևայլ ժողովուրդների մոտ: Խրատական ժանրի իսկական գլուխգործոցներ են Խիկարի և Նուշիրվանի անունով պահպանված երկերը, մասամբ նաև Պղնձե քաղաքի պատմությունն ու այլ ժողովածուներ: Սրանց մեջ հիմնականում քարոզվում են իմաստության, բարության համամարդկային գաղափարներ, որով, թերևս, պիտի բացատրել և նրանց տարածումը ամենատարբեր երկրներում:

Խրատը միջնադարում որոշակի չի առանձնացվել գրական այլ տեսակներից: Հայ մատենագրության ականավոր ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցին, թվելով Մխիթար Գոշի թողած գրական հուշարձանները, գրում է. «Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզ-

մանի գիրս իմաստախոհս յօգուտ ուսումնասիրաց՝ Համառօտ մարգարէութեանն Երեմիայի՝ գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որպէս պատշաճ իցէ կամ որպիսի կարգօք, և գիրք մի՝ Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա և ի դիմաց Եւայի առ դստերս նորա. և գիրք մի՝ Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս»[2]: Ուշագրավ է, որ հմուտ հայագետ Հ. Տաշյանը հնարավոր է համարում, թե Կիրակոսի վերևում նշված «թուղթս խրատականս» գրությունների մեջ, բացի վերը նշված տարբեր ժանրի գործերից, կարող են հասկացվել նաև Գոշի մյուս գործերը, որոնց մասին դարձյալ ակնարկում է Կիրակոսը. «ցանկացաւ նա հմուտ լինել գրոց սրբոց և առակաց խորնոց, **որ նախընթաց թուղթս խրատականս բառերուն հետ**՝ կրնա առնըվել Գոշի առակներու հավաքում մը հորինելու իմաստով»[3]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ միայն խրատները, այլև արձակ բազմաթիվ այլ գործեր ժանրային բաժանման չեն ենթարկվում, ավելին՝ տարբեր բնույթի և բովանդակության շատ ստեղծագործություններ համարվում են խրատներ:

Եվ իրոք, եթե միջնադարյան արձակի բնագավառում երբեմն խիստ դժվար է ժամանակակից հասկացողությամբ առանձնացնել ժանրային տարբեր պատկանելիության գործեր, ապա այդ առավել ևս դժվար է խրատների հարցում:

Ի՞նչ է խրատը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր գրավոր կամ բանավոր աղբյուր հետևյալ պատասխանն է տալիս. «Հրահանգ, կրթութիւն.... «Սնուցանիջիք զնոսա (զորդիս) խրատու և ուսմամբ Տեառն». նաև՝ «խորհուրդ. «Այսպես տամ քեզ խրատ»», ինչպես և՝ «ուսումն, մակացութիւն, գիտութիւն. «Քերականութեան և ճարտասանութեան և այլոց հանճարոյ խրատու տեսուածք»»[4], կամ՝ «Ուսուցանելու, դաստիարակելու միջոցը հին ժամանակ, պատիժ, ծեծ, խստություն»[5]:

---

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 221:

[3] Հ. Տաշյան, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 16:

[4] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ 1836, էջ 992:

[5] Սա. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Բ, Երևան 1944, էջ 108:

Ինչպես տեսնում ենք, խրատ հասկացությունը լայն առումով իր մեջ ամփոփում է իրարից տարբեր, ոչ մի ընդհանրության մեջ չամփոփվող երևույթներ:

Ինքը՝ Երզնկացին, այլ առիթով խոսելով առակի ժանրի առանձնահատկության մասին, տալիս է մի ձևակերպում, որը, մեր կարծիքով, շատ հետաքրքիր է նախ՝ իմանալու, թե ինչպես էր միջնադարում կատարվում երկերի ժանրային բաժանումը, և ապա՝ այն իմաստով, որ Երզնկացու տված առակի բնորոշումը որոշ չափով վերաբերում է նաև խրատական գրություններին:

«Արդ, ամենայն գիրք աստուածայինք առանձին անուանադրութեամբք յարդեանցն և յիրացն կոչեցան, որպէս ե (5) գիրքն Մովսիսի՝ պատմութիւնն արարածոց ծնունդ և եկք և այլովք անուամբքն մակագրեցան, նմանապէս և այլ գիրք մարգարէիցն և պատմութիւնք թագաւորացն և ի նորս Աւետարանն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Արդ, ի սոցանէ ոմանք յանուն պատմողացն կոչին, և են, որք յիրացն և յարդեանցն և գործոցն զանուանցն կոչումն բերեն յինքեանս: Իսկ Սողոմոնի գիրքս ոչ այնպէս, այլ առակք անուանեալ կոչի, զի ոչ միոյ իրացն նշանակէ, այլ զամենայն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեանս: Եւ ոչ միայն մարգարէութիւն է և ոչ յատուկ պատմութիւն, զի ոչ հայցեաց առ մարգարէութիւն և ոչ թագաւորութիւն, այլ խնդրեաց զիմաստութիւն, որ զամենայն տեսակս բարութեան յինքեանս պարունակել ունի»[6]: Այնուհետև Երզնկացին բացատրում է նաև, որ առակների իմաստը չպետք է ուղղակի հասկանալ, այլ այլաբանորեն[7]:

Այս բնորոշումը, մեր կարծիքով, մեծ չափով համապատասխանում է նաև խրատական բնույթի գործերին: Իրոք, խրատը ևս որոշակի հարցի չի նվիրվում, այլ ինչպես առակը, «զամենայն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան»: Դրանում համոզվելու համար բավական է դիմել հենց իր՝ Երզնկացու խրատական գործերին, որոնցում շոշափվում են ամենաբազմազան հարցեր, ըստ որում, նայած հանգամանքներին, այդ ամենը երբեմն մատուցվում է իբրև խնդրանք, երբեմն՝ խրատ, երբեմն՝

[6] «Նորին Յոհաննիսի Եզնկացոյ ի սուրբ առաքեալսն...» (Մատ. ձեռ. № 2173, էջ 363բ):

[7] Անդ, էջ 364ա:

կարգադրություն և այլն: Հիմնական տարբերությունը, թերևս, այն է, որ խրատի իմաստը պետք է ուղղակի հասկանալ և ոչ այլաբանությամբ:

Մյուս կարևոր եզրակացությունը վերը բերված հատվածից այն է, որ միջնադարում գրական, գիտական երկերը տարբեր «ժանրերի» էին բաժանվում ոչ այնքան իրենց կառուցվածքի, ձևի, որքան բովանդակության առումով:

Մասամբ հետևելով ժանրերի տարբերակման նույն սկզբունքին՝ Հովհաննես Երզնկացու խրատական բովանդակություն ունեցող ճառերն ու քարոզները մենք դիտում ենք իբրև խրատական գործեր:

Ըստ իրենց բովանդակության, միջնադարում խրատները տարբեր խմբերի են բաժանվել: Պիտույից գրքում նրանք անջատված են հետևյալ կերպ. «Եւ խրատուս ոմն է բացատական, որպէս. Պէտք են ընչից: Եւ ոմն է հրաժարական, որպէս. Ոչ է պարտ զամենայն գիշերն քնել: Եւ ոմն՝ յորդորական, որպէս. Պարտ է յաղքատութենէ փախչել: Եւ ոմն՝ պարզ. Մի հաւ՝ քաջ: Եւ ոմն՝ շարալծեալ. Ոչ է բարւոք բազմիշխանութիւն, մի իշխան եղիցի: Եւ ոմն՝ առաւելահրաշ. Ոչինչ տկարագոյն երկիր սնուցանէ քան զմարդ: Արդ զանազանութիւն այս է խրատուս»[8]:

Հետաքրքիր է, որ դասական այս բաժանումը պահպանվել է նաև 1317 թ. գրված մի ձեռագրում աղյուսակի ձևով[9]:



Ուշադիր դիտելու դեպքում դժվար չէ համոզվել, որ ինչպես Պիտույից գրքում, այնպես էլ աղյուսակում եղած տեսակները կարե-

[8] Տե՛ս «Սբրոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 356:

[9] Մատ. ձեռ. № 353, էջ 296ա:

լի է միավորել երեք հիմնական խմբերի մեջ։ Երզնկացին հենց այդպես էլ անում է։ Ըստ նրա, խրատները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) հորդորական, բ) հրաժարական և գ) միջակային.

«Եւ գիտելի է, զի ամենայն խրատ կամ յորդորական է, կամ հրաժարական և է, որ միջակաբար ունի։ Եւ պարտ է, որ յորդորէ յիրս, նախ զգեղեցկութիւն նորին գովութեամբ ներբողեալ ցուցանէ և զպետականութիւն փառաց և պատուոյ նորին նազելի առնէ, որպեսզի ի ցանկութիւն զմիտս լսողին շարժիցէ։ Իսկ յորմէ հրաժարեցուցանէ, զընդիմական նորա և զվնասս հետևողաց նորին երևեցուցանէ, որոց կործեօք բարին թուեցեալ լինիր։ Իսկ միջակ է, որոյ դեմքն ոչ է յայտնի, այլ հատարակաբար զխրատականն բանն առաջի դնէ[10]»։

Ինչպես կտեսնենք, Երզնկացին, իր ասածը համոզիչ դարձնելու համար, խրատական գործերում բազմաթիվ օրինակներ է բերում իրական կյանքից և հենց այդ օրինակներով ու նրանց բացատրություններով է, որ խրատագիրը բազում հետաքրքիր տվյալներ է հաղորդում մի շարք հարցերի վերաբերյալ։

Խրատի ընդարձակ հասկացությունը եթե մի կողմից հնարավոր է դարձնում խրատական գործերի բազմազանությունը, մյուս կողմից օրինաչափ է դարձնում այն հանգամանքը, որ խրատական գործերի համար իբրև աստղձ ծառայեն ամենաբազմազան նյութեր։ Եվ իրոք, նրանց համար աղբյուր են հանդիսացել և Աստվածաշունչը, և Կանոնագիրքը, և սրբերի ու ժամանակակից վարդապետների երկերն ու ասույթները, և իրական կյանքից անհատի ու սերունդների ստացած փորձը։

Խրատական գործերը հանդես են գալիս երբեմն կանոնական գրության, երբեմն՝ խրատական թղթի (ուղղված որևէ անհատի կամ մի խումբ մարդկանց), երբեմն՝ շրջաբերական թղթի, իսկ երբեմն էլ՝ քարոզի կամ ճառի ձևով։ Երզնկացու մոտ առկա են խրատական բովանդակությամբ գործերի գրեթե բոլոր արտահայտությունները։

Ուսումնասիրվող նյութի մեջ որոշ սիստեմավորում մտցնելու նպատակով մենք Երզնկացու խրատական գործերը բաժանել ենք հիմնականում երեք խմբի՝

---

[10] «Նորին Յոհաննիսի եզնկայեցւոյ ի Ն՟Ջ սաղմոսն Դաւթի, ի մեկնողաց բանից յարմարեալ» (Մատ, ձեռ. № 2173, էջ 262ա)։

1. կանոնական բնույթ ու բովանդակություն ունեցող խրատներ.

2. խրատական շրջաբերական թղթեր և նամակներ և

3. խրատական բովանդակություն ունեցող ճառեր և քարոզներ։

Խրատների առաջին երկու տեսակը նորություն չեն, և մեր մատենագրությունից կարելի է բերել նույն կարգի բազմաթիվ օրինակներ, հետևապես Երզնկացու գրչին պատկանող այդ տեսակի խրատների մասին խոսելիս անհրաժեշտ չենք համարում տալ նրանց ծագման և զարգացման պատմությունն առհասարակ, որ առանձին բարդ հարց է։

Ինչ վերաբերում է երրորդ տեսակին՝ կանոնական բնույթի խրատներին, այն, մեր կարծիքով, զարգացում է ապրում հատկապես XII—XIII դարերից սկսած, և նրա խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է Հովհաննես Երզնկացին. ուստի մի փոքր կանգ կառնենք պատմա-քաղաքական այն հանգամանքների վրա, որոնք պատճառ դարձան և խթան հանդիսացան նման խրատների զարգացման ու տարածման համար։

* * *

Հայ ժողովրդի պատմությունը լի է ծանր վայրիվերումներով, որոնք հաճախ ամայության են մատնել երկիրը, դարերով ետ մղել նրա քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքը։ Եղել են պահեր, երբ, թվում է, այլևս անհնարին է դարձել հայ ժողովրդի՝ իբրև առանձին էթնիկական միավորի, և հայ մշակույթի գոյատևումը, սակայն անցել է արհավիրքը, և մոխրի տակից դարձյալ ընձյուղել է կյանքը։

Այս արտակարգ կենսունակությունը իրավացիորեն բացատրվում է նրանով, որ իր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է շատ ավելի բարձր հասարակական կյանք, կենցաղ և մշակույթ, քան այն ցեղերն ու ժողովուրդները, որոնց հաջողվում էր զենքի ուժով նվաճել Հայաստանը։

Այս հանգամանքը պետք է բացատրել նաև նրանով, որ նվաճվելով թշնամու կողմից՝ հայ ժողովուրդը երբեք ավարտված չի համարել պայքարը։ Ընդհակառակը, նայած հանգամանքներին, նա փնտրել և գտել է պայքարի նորանոր միջոցներ։

Երբ V դարի սկզբին հայ ժողովրդի գլխին դամոկլյան սրի պես կախված էր ուծացման վտանգը, երբ առժամանակ անհնար

էր զենքի ուժով ազատագրվել հզոր Բյուզանդիայի ու Պարսկաստանի լծից, ժողովուրդը ծնունդ տվեց Մաշտոցի հանճարեղ գյուտին, ստեղծվեց Հայկական այբուբենը, որն ամրակուռ վահան դարձավ լեզվի, մշակույթի, կրոնի և, վերջին հաշվով, հայ ժողովրդի ինքնուրույն գոյատևման համար:

Վաղ միջնադարում իր նշանակությամբ և հետևանքներով, թերևս, ոչ պակաս կարևորության ունեցավ նաև քրիստոնեական կրոնի ազգայնացումը՝ ազգային եկեղեցու հիմնադրումը, որը հնարավորություն տվեց հայ ժողովրդին և եկեղեցուն չենթարկվել բյուզանդական, ապա նաև պապական եկեղեցիների համաձուլման քաղաքականությանը:

Սակայն միշտ չէ, որ պայքարն արտահայտվել է այդպիսի խոշոր երևույթներով: Երբեմն այն արտահայտվել է առաջին հայացքից աննշան թվացող, քաղաքական կյանքի ու պայքարի հետ, կարծեք, ոչ մի առնչություն չունեցող որևէ գրական երկի կամ ժանրի առաջացմամբ:

Դարձյալ բախտորոշ V դարում, գրերի գյուտից անմիջապես հետո, սկսվում է բուռն թափով զարգանալ հայ պատմագրությունը, որի նպատակն էր ժողովրդի մեջ վառ պահել ազգային արժանապատվությունը, ազատության և հայրենասիրության ոգին:

Նույն երևույթը նկատելի էր նաև VIII դարում, երբ մի կողմից՝ բյուզանդական եկեղեցին, մյուս կողմից՝ հոծ զանգվածներով Հայաստան թափանցող մահմեդականությունը իրենց դաղափարախոսություններով որոշակի սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի համար: Այս շրջանում է երևան գալիս Հովհան Օձնեցու խմբագրած Կանոնագիրքը, որն ավելի է պնդում հայ եկեղեցու օրգանիզմը՝ դարձնելով այն ավելի ամփոփ, ավելի անկախ ու կենսունակ[11]:

Անշուշտ, հասարակական կյանքի և օտար բռնակալության դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունից էր թելադրված հայ և, ընդհանրապես, քրիստոնեական արևելքի իրավագիտական խոշոր հուշարձանի՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի երևան գալը, որ դժվար չէ կռահել հեղինակի իսկ մտքերից: Խոսելով Դատաստանագիրքը գրելու շարժառիթների մասին՝ նա նշում է,

[11] Տե՛ս Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, Ա, Երևան, 1964, Նախաբան, էջ 12—15:

որ Դատաստանագիրքն ստեղծվում է, որպեսզի քրիստոնյաներն ստիպված չլինեն դիմելու օտար դատարաններին, և օտարները չմեղադրեն քրիստոնյաներին, թե նրանք, իբր, դատաստան չունեն:

Գոշն անհերքելիորեն հերքում է քրիստոնյաների՝ մինչև այդ դատարան չունենալու մասին եղած մեղադրանքը, բայց միաժամանակ պարզորոշ ցույց է տալիս, որ իր ժամանակ եկեղեցու դատարանը այլևս անուժ էր իր դերը կատարելու. «...զի այժմ վասն ծուլութեան ոչ վարժին յՕրէնսն և ի Մարգարէսն և յԱւետարանն, զի ի նոցա զօրութենէն ընտրել կարիցեն զուղիղ դատաստան. վասն այնորիկ կազմեցաք գրով դատաստանիս զնոսա իբրև ի քնոյ զարթուցանել», կամ՝ «...զի այժմ ոչ ներգործէ Հոգին Սուրբ որպէս ի Սողոմովն կամ ի Դանիէլ, կամ որպէս ի Կորնթացիսն և յայլս՝ ճշմարիտ առնել դատաստան...»[12]:

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրքի երևան գալու հիմնական պատճառներից մեկը քրիստոնեության բարոյականության և իրավական նորմերի նկատմամբ եղած արհամարհանքն ու անփութությունն էր: Եվ դա այն ժամանակ, երբ վաղուց ի վեր Հայաստանում գոյություն ուներ հայոց եկեղեցու Կանոնագիրքը:

Այս պայմաններում է, որ XII—XIII դարերում հայ իրականության մեջ խրատները ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև կիրառական նշանակությամբ ստանում են կանոնական բնույթ:

* * *

Հայտնի է, որ իր սկզբնավորման առաջին դարերում քրիստոնեության դաղափարախոսությունը համընդհանուր էր: Սակայն, ժամանակի ընթացքում, այն պետական կրոն դառնալուց հետո, հասարակության զարգացման, դասակարգային շերտավորման խորացման հետ զուգահեռ, եկեղեցին ստիպված էր ինքն էլ վերակառուցվել ինչպես դաղափարական, այնպես էլ վարչական-կազմակերպչական իմաստով: Եկեղեցին այժմ պարտավոր էր ոչ միայն քրիստոնեական բարոյականության ու հավատքի մասին մտածել, այլև ծառայել տվյալ ազգի, պետության և նրա իշխող դասակարգի շահերին: Անշուշտ, սա էր հիմնական պատճառը, որ աստիճանաբար միմյանցից զատորոշվում էին ազգային տարբեր

[12] «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց. իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք վահան ծ. վարդապետի Բաստամեանց». Վաղարշապատ, 1880, Նախադրութիւն, էջ 10:

եկեղեցիներ՝ յուրաքանչյուրն իր համար, իր շահերին համապատասխան զարգացնելով իր դավանանքը, ծիսական իր սովորույթները և այլն։

Հետագայում յուրաքանչյուր եկեղեցի իր պաշտոնական դավանանքը, հոգևոր-ազգային ծեսերն ու սովորույթունները ամրացնում և նրանց իրավական-կանոնական ուժ է տալիս։ Սա նշանակում է, որ եկեղեցին հանդես է գալիս իբրև տվյալ ազգի համախմբվածության և պետականության ամրացման համար պայքարող կենտրոնաձիգ ուժ։

Հայ իրականության մեջ եկեղեցու այս դերն առավել ևս շեշտվում է, կապված այն հանգամանքների հետ, որ հայ ժողովուրդը վաղուց ի վեր կորցրել էր իր պետական անկախությունը, և օտարների մոտ նրան հավաքականորեն ներկայացնող միակ կազմակերպությունը մնացել էր եկեղեցին։ Այս պայմաններում հասկանալի է, որ իր վրա պետք է վերցներ նաև պետականության որոշ իրավունքներ ու պարտականություններ, այսինքն՝ հոգալ ժողովրդի ճակատագրի, նրա ֆիզիկական և բարոյական դիմադրողականության բարձրացման, սոցիալական տարբեր շերտերի ծայրահեղ հակասությունների հաշտեցման և այլ խնդիրների մասին։

Այս լուրջ խնդիրների իրագործման համար էր նաև, որ դեռևս V դարից սկսած, բացի օտար կանոնական որոշումները թարգմանվելուց, ընդունվում էին նաև ինքնուրույն կանոններ, որոնք ի վերջո հավաքվեցին «Կանոնագիրք հայոց» ժողովածուի մեջ։

Հայոց եկեղեցու Կանոնագիրքը, ինչ խոսք, հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի պատմական կյանքում՝ նպաստելով նրա բարոյական, կենցաղային, ծիսական սովորույթների մաքրման, հաստատման, ժողովրդի քաղաքական համախմբման և բազմաթիվ այլ հարցերում։ Սակայն չպետք է մոռանալ, որ այս շրջանում հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքում բաժան-բաժան էր եղել՝ ընկնելով միմյանց թշնամի մի շարք պետությունների գերիշխանության տակ։ Այս վիճակում Հայաստանից դուրս՝ Կիլիկյան հայկական թագավորության ներսում գտնվող հայ կաթողիկոսության համար, անշուշտ, խիստ դժվար էր իրականացնել իր գերիշխանությունը բոլոր հայկական համայնքների վրա և պարտադրել հայ եկեղեցու կանոնների կատարումը, մանավանդ որ կաթոլիկ և հունական եկեղեցիների հրահրած երկպառակությունը նորանոր խոչընդոտներ էր հարուցում հայ հա-

մայնքի ղեկավարման հարցում հենց բուն Կիլիկիայում։ Սա ևս երբեմն լուրջ տարաձայնությունների տեղիք էր տալիս հնչակեան հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների տարբեր խմբավորումների միջև, այնպես էլ հայ կաթողիկոսության և Հայաստանի հոգևորականության միջև։ Հայ եկեղեցու կանոնական իրավունքների իրագործմանը և հայ համայնքի կազմակերպմանը մեծ չափով խոչընդոտում էր նաև Հայաստանում հաստատված մահմեդականությունը։ Վերջինիս տիրապետող դիրքը ոչ միայն նպաստում էր զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող, բայց քաղաքականորեն ստորադրված հայ համայնքի բարքերի քայքայմանը, այլև հաճախ հանգեցնում էր առանձին հատվածների և անհատների ազգային ու կրոնական այլասերմանը։

Բնականաբար այս վիճակը պետք է անհանգստացներ ինչպես Կիլիկիայում գտնվող կաթողիկոսությանը, այնպես էլ հայ հոգևորականությանը

Դեռևս Ներսես Շնորհալին իր կաթողիկոս դառնալու կապակցությամբ արտասանած Ատենաբանությունում հակիրճ, բայց ճշմարտացի պատկերացում է տալիս այն դժվարությունների մասին, որոնք ծառացած են եղել հայ ժողովրդի և նրա աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների առջև։ Դժվարություններից մեծագույնը Շնորհալին համարում է այն, որ հայերը «...ոչ ի միում աշխարհի բնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն և սերմանել զբանն, այլ բաժ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդք ընդ ոլորս տիեզերաց ի մէջ օտարաբեր ազանց։

Նաև աթոռս տարբ դրդուեալ է ի հաստատութենէ ի զանազան և յանպատշաճ վայրս տարբերի ընդ հարկաւ և երկիւղիւ այլասեռից, և անօգնական և աննուէր ի մերասերաց, որում ոչ է կար համարձակ շրջել և ուսուցանել, այլ թագնաբար լինել որպէս զվնասապարտս»[13]։ Եվ հենց այդ դժվարությունների արդյունքն է նաև այն հանգամանքը, որ Ատենաբանությունից ընդամենը երեք ամիս հետո գրած իր նշանավոր «Թուղթ ընդհանրական»-ին[14] Շնորհալին տալիս է ավելի խրատական գրության, քան կոնդակի կամ կանոնական դրության բնույթ, չնայած այնտեղ խստորեն պահպանվում են հասարակության տարբեր խավերի արատավոր սովորությունները։

---

[13] «Թուղթ ընդհանրական... Ներսէսի Շնորհալւոյ», էջմիածին, 1865, էջ 422։

[14] Տե՛ս Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 74։

Շնորհալուց հետո պատմական հանգամանքները չէին փոխվել ի նպաստ հայերի։ Նույն դժվարությունների առկայության մասին է վկայում նաև Կոստանդին կաթողիկոսը Վարդան Արևելցու հետ Հայաստան ուղարկած իր խրատական թղթերում[15]։ Երզնկացին նվիր ամենածավալուն խրատական ստեղծագործության՝ «Խրատ հասարակաց...»-ի ներածականում գրում է.

«Զի պարտապան եմ բազում քանքարաց և քիւր տաղանդաց և անհամար պարտուց Տեառն իմոյ՝ ամենառատ պարգևատուի և բարերարի...

Տնկագործ և պահապան սատուածաքն այգոյ նորա կոչեցայ և զվարձս մշակութեան լիով ընդալայ և յերկնաւոր տունկս և ի բանաւոր բոյսս ի ծառայական մշակութիւն քրիստոնէից անձանց ոչ աշխատեցայ և զինչ էր աշխատիլն՝ շրջիլ, քարոզել, խրատել, զբարեգործութեան պտղոցն զվնասակար չարիսն և զսովորական մեղսն կտրե՛լ, հատանե՛լ, վարդապետութեան չրով ոռոգել, շուրջ բրել, կակղացուցանել...»[16]։ Բայց այս ամենը նա չի կարողացել կատարել. «Եւ արդ, զի ոչ կարացի առնել զգործ մշակութեան Տեառն, որպէս արժանն էր, եթէ վասն տկարութեան մարմնոյ, և թէ վասն ժամանակիս ամբոխեալ շարժմանց և դառնութեան, և թէ հակառակասէր բարուց ոմանց կամ անլսութեանց»[17]։

Երզնկացին գրությունից ելք է գտնում խրատական շրջաբերականի գրելով, որը իր էությամբ կանոնական գրություն է. «Այլ այժմ զմտաւ ածի, և հնարեցայ թեթևացուցանել զյորով զբեռինս իմոց պարտուց ի ձեռն սակաւ վճարման և գրեցի զսահմանս բանս խրատուց՝ ի կանոնական հրամանաց առաքելոց սրբոց և աստուածգումար ժողովոց սուրբ հարցն սահմանաց։ Եւ ժողովեցի զյոյժ հարկաւոր և զպիտանին ի յասպուտ քրիստոնէից...»[18]։

Ինչպես որոշակի երևում է Երզնկացու իր իսկ հայտնած մտքերից, «Խրատ հասարակաց»-ը գրվել է պատմական որոշակի ժամանակաշրջանում, առօրյա խնդիրներին արձագանքելով։ Այն գալիս էր ինչ-որ չափով փոխարինելու կամ լրացնելու հայ

---

15 Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին, «Բանբեր մատենադարանի», № 4, 1958, էջ 267—284։

16 Մատ, ձեռ. № 2329, էջ 225ա—225բ։

17 Անդ, էջ 225բ։

18 Անդ, էջ 226բ։

եկեղեցու կանոնական որոշումները, որոնց իրագործման վրա հսկողության իրականացումը գրեթե անհնար էր դարձել։

Կանոնական խրատների երևան գալը ունեցել է նաև այլ հիմնավոր պատճառներ։ Ժամանակի շատ խոշոր գիտնականներ ցավով են նշում այն երևույթը, որ սոցիալ-քաղաքական աննպաստ հանգամանքները պատճառ դարձան Հայաստանում կրթական և գիտական մակարդակի շեշտակի անկման։ Եվ եթե նկատի ունենանք, որ միջին դարերում կրթական և գիտական գործը եկեղեցու մենաշնորհն էր, ապա այն քահանաները, որոնք, Շնորհալու արտահայտությամբ, «զեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնուլ» չգիտեին, մեծ դժվարությունների պետք է հանդիպեին կանոնական, մեծ մասամբ խոտացված բանաձևումներով արվող գրությունների ներքին իմաստը հասկանալու և նրանք հավատացյալներին բացատրելու գործում։ Մինչդեռ կանոնական խրատներում խրատագիրն ինքն ամենամատչելի ձևով մեկնում է ծիսական, կանոնական պահանջների իմաստը։

Կանոնական բնույթի խրատներն ունեցել են նաև մի այլ առավելություն։ Տարբեր պետությունների տիրապետության տակ ընկած հայկական տարբեր համայնքների համար հաճախ առաջ են եկել հրատապ հարցեր, որոնց համար միշտ չէ, որ եկեղեցին ունեցել է պատրաստի կանոնական որոշումներ, մինչդեռ ելնելով կանոնների ընդհանուր ոգուց՝ առանձին նշանավոր անհատներ կարող էին անմիջապես, նույնիսկ եթե ոչ վարչական միջոցով, ապա խրատական գրությամբ հարթել ծագած դժվարությունները։ Վերջապես, կանոնական որոշումներն իրենց էությամբ լինելով խիստ պահպանողական, չէին կարող հաճախ նախատեսել տեղական առանձնահատկությունները, ինչ որ ընդհակառակը կարող էր անել անհատը՝ արտացոլելով այն խրատներում։

Խրատական գրություններում, նաև՝ կանոնական բնույթի խրատներում, շեշտը դրվում էր հիմնական բարոյական համոզման վրա, և պատահական չէ, որ բոլոր խրատագիրները, այդ թվում և՝ կաթողիկոսները, հիշեցնում են, որ իրենք ոչ թե հրամայում, այլ խնդրում և հորդորում են[19]։ Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե կանոնական խրատների միակ հենարանը բարոյական ներգործությունն էր։ Զուտ բարոյական ուժն ամում էր,

---

19 Տե՛ս «Թուղթ ընդհանրական... Ներսեսի Շնորհալւոյ», էջ 68, նույնը և Կոստանդին Բարձրբերդցու թղթում։

կախված այն բանից, թե որքանով հայ եկեղեցին չէր կարողանում իրացնել համազգային ներկայացուցչի և իշխող օրգանիզմի իր դերը: Մինչդեռ այնտեղ, որտեղ եկեղեցին ուժեղ էր, բնականաբար կանոնական խրատները, ինչպես և կանոնները, պարտադրվում էին իբրև օրենք:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ XII—XIII և հետագա դարերում հայ իրականության յուրահատուկ պայմաններում կանոնական բնույթի խրատները այն լծակներից էին, որոնց շնորհիվ եկեղեցին և նրա աչքի ընկնող առանձին գործիչները կարողանում էին միջամուխ լինել հայ հասարակության հուզող բազմաթիվ հարցերի:

Բ. ԵՐԶՆԿԱՑՈՒ «ԽՐԱՏ ՀԱՍԱՐԱԿԱՑ»-Ը

Իր ծավալով և նյութի ընդգրկումով Հովհաննես Երզնկացու ստեղծագործության և ընդհանրապես հայ միջնադարյան կանոնական բնույթի խրատական գրականության ամենանշանավոր երկերից է «Նուաստ վարդապետի Յոհաննիսի Երզնկայեցւոյ Խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից և ժողովրդոց, ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց և հայրապետաց և վարդապետաց և սուրբ հարն մերոյ վարդան վարդապետի, յոր յամենայնի ժողովեցի և գրեցի» ընդարձակ վերտառությամբ գործը[20]:

Պետք է ենթադրել, որ «Խրատ հասարակաց»-ը լայն ճանաչում է գտել ժամանակակիցների և հետագա սերունդների կողմից, որով միայն հնարավոր է բացատրել, թե ինչու այդ երկն իր տարբեր խմբագրություններով, Աստվածաշնչից, Ավետարանից ու պաշտամունքային մի շարք այլ գրքերից հետո, ամենից ավելի շատ օրինակներով է հասել մեզ: Ճշգրտել «Խրատ հասարակաց»-ի մեզ հասած օրինակների թիվը, գրեթե անհնար է, որովհետև միայն Մատենադարանում պահվում են հարյուրավոր օրինակներ: «Խրատ հասարակաց»-ի բազմաթիվ օրինակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդքան լայն տարածում ստացած երկը մեզ է հասել երկու հիմնական խմբագրություններով:

Ա. խմբագրություն. «Խրատ հասարակաց»-ի նախնական բնագիրը, որի պահպանված օրինակներից հնագույնը գրչագրված է դեռևս Երզնկացու կենդանության օրոք, 1291 թ.[21]:

[20] Մատ, ձեռ. № 2329, էջ 224ա:

[21] Մատ, ձեռ. № 2329:

Պատահում են այս խմբագրության այնպիսի ձեռագրեր, որոնց մեջ բուն նյութին կցվել են ինչպես այլ հեղինակների նմանատիպ խրատներից հատվածներ, այնպես էլ որոշ խրատներ՝ երզնկացու խրատական մյուս գործերից[22]: Կան ձեռագրեր էլ, որոնցում ընդհանուր խորագրի տակ երկից բերվում են կամ մի քանի գլուխներ, կամ միայն հատվածներ առանձին գլուխներից:

Բ խմբագրություն, որը հատկանշվում է որոշակի ծրագրով, փոփոխված վերնագրով, առաջաբանով և համառոտված բնագրով: Այս խմբագրությունն ունի հետևյալ վերնագիրը. «Յոհաննիսի վարդապետի Եղնկացւոյ Խրատ կանոնական յառաքելոցն և ի հայրապետացն և ի սուրբ Լուսաւորչին կանոնացն և կաթողիկոսացըն Հայոց»[23]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս տարբեր խմբագրություններն արդյունք են, նախ և առաջ, այլևայլ դարերում կատարված քմահաճ կամ պատահական ընդօրինակությունների: Ինչ խոսք, այդ հանգամանքը կարող է որոշ դեր խաղացած լինել, բայց ոչ հիմնական: Վերը մենք խոսեցինք այն մասին, որ կանոնական բնույթի խրատները ինչ-որ չափով փոխարինում կամ լրացնում են կանոնները և հաճախ դառնում նույն կանոնների մատուցման ավելի մատչելի միջոց: Հետևաբար, որոշ ընդհանրություններ, որոնք բնորոշ են կանոններին, կարող են հատկանշական լինել նաև կանոնական բնույթի խրատներին: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է հետևյալը. Մխիթար Գոշը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր գրած Դատաստանագիրքը հետագայում ենթակա է փոփոխման և լրացումների, գրում է. «Զի որպէս կանոնք, պի ոչ մի անգամ եղաւ և ոչ ի միում տեղւոջ և ոչ ի միոջէ, այլ առ սակաւ սակաւ և ի բազում ժամանակս, և ի բազմաց եղաւ և եղեալ լինի մինչև յաւիտեան... ի դէպ է ասել, պի այսպէս լինիցի և ի գիրս դատաստանի...»[24]:

Գոշի այդ ճշմարտացի ընդհանրացումը գրեթե կետ առ կետ կարող է վերաբերել ընդհանրապես խրատներին և մասնավորապես «Խրատ հասարակաց»-ին: Եվ իրոք, հետագայում «Խրատ հասարակաց»-ը չի փոխարինվել նմանատիպ այլ գործով, նրա վրա են կատարվել անհրաժեշտ հավելումներն ու կրճատումները: Սակայն վերը ասվածը վերաբերում է «Խրատ հասարակաց»-ի Ա

[22] Մատ, ձեռ. № 1152:

[23] Մատ, ձեռ. № 8356, էջ 157բ—176ա:

[24] «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», էջ 66:

խմբագրության տարբերակներին: Մինչդեռ Բ խմբագրությունը, ինչպես ասվեց, համառոտվել է կանխամտածված և ծրագրված կերպով, ըստ որում բուն բնագրի գրությունից ոչ շատ ուշ: Սակայն, մինչև երկու խմբագրությունների առնչակցության անցնելը, նախ երկու խոսք այն մասին, թե ինչ է ներկայացնում բուն բնագիրը:

«Խրատ հասարակաց»-ի բուն բնագիրը սկսվում է հեղինակի գրած ներածականով, որտեղ նա հայտնում է իր երկը գրելու անհրաժեշտության, հանգամանքների և նպատակների մասին: «Հայաստանեացդ ազգ և ազինք, սուրբ Լուսաւորչին մերոյ և առաքելանման հաւրն նահատակութեան և շարչարանացն պտուղք և ծնունդք... համարէն լրումն եկեղեցոյդ քաւիչ քահանայք և Աստուծոյ և մարդկան հաւատարիմ միջնորդք և քրիստոսասէր ժողովուրդք, զձե՛զ աղաչեմ և առ ձե՛զ սակաւ բանիւքս խաւսիմ և զկիրս կսկծելիս և զդաւս հոգոյ իմոյ պատմեմ...», որովհետև՝ «Տնկագործ և պահապան աստուածային այգոյ նորա կոչեցայ»: Սակայն երրնկացին կարծում է, թե չի կարողացել լրիվ կատարել իր պարտքը աստծու և ժողովրդի առջև՝ «ըթէ վասն տկարութեան մարմնոյ, և թէ վասն ժամանակիս ամբոխեալ շարժմանց և դառնութեան և թէ հակառակասէր բարուց ոմանց կամ անլսութեանց»: Բայց ի՞նչ է, որ չի կարողացել անել՝ «շրջիլ, քարոզել, խրատել, զբարեգործութեան պտղոցն զվնասակար չարիսն և զսովորական մեղսն կտրել, հատանել, վարդապետութեան գրով ոռոգել, շուրջ բրել և կակղացուցանել»: Երկար մտատանջվելուց հետո նա վերջապես, որոշում է իր մտադրությունն իրագործել խրատական գրության միջոցով. «Այլ այժմ զմտաւ ածի, և հնարեցայ թեթևացուցանել զյոլով զբեռինս իմոց պարտուցն ի ձեռն սակաւ վճարման, և գրեցի զսակաւ բանս խրատուց՝ ի կանոնական հրամանց առաքելոց սրբոց և աստուածագումար ժողովոց սուրբ հարցն սահմանաց: Եւ ժողովեցի զյոյժ հարկաւորն և զպիտանին և յաւգուտ քրիստոնէից, որպէսզի եպիսկոպոսունքն յամենայն վիճակս իւրեանց՝ ի քաղաքս և ի գեաւղս գրեսցեն և առաքեսցեն, և քահանայքն ուսանիցին և ժողովրդոց իւրեանց քարոզեսցեն»: Ապա նորից հանձնարարում և խնդրում է. «...զաստուածապատիւ առաջնորդս եկեղեցոյ, զեպիսկոպոսունս և զվերայտեսուչս վիճակաց, և զքահանայսդ, որ էք հայր հոգոց և ուսուցիչ ժողովրդոց, զի և դուք զձեզ ի պարտուց և ի խղճէ թեթևացուսջիք և գրելով տայք զսա յամենայն վիճակս ձեր. քահանայքդ կարդայք և քարո-

ղէք ժողովրդեան ձերոյ, զի հարկ ի վերայ ձեր կայ, և առաջի աւետին Քրիստոսի համարս տալոց էք»[25]:

Ներածականին հետևում են աշխարհիկ մարդկանց ուղղված խրատները հետևյալ հաջորդականությամբ՝ «Յաղագս հաւատոյ», «Յաղագս մկրտութեան», «Յաղագս զտղայ սնուցանելոյ», «Յաղագս պսակի և խրատ ամուսնացելոց», «Յաղագս շնութեան», «Յաղագս գողութեան», «Յաղագս երդման» և այլն: «Խրատ հասարակաց»-ի այս բաժինը երրնկացին ավարտում է՝ դարձյալ դիմելով եպիսկոպոսներին և քահանաներին, որոնք պարտավոր էին այն բացատրել և քարոզել ժողովրդին. «Եպիսկոպոս և քահանայ, որ զրէ զկանոնական բանքս և քարոզեն ի վիճակս իւրեանց և ի ժողովուրդս, աւրհնեալ լիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց և ազատ մնասցեն ի խղճոյ իւրեանց ժողովրդեանն: Իսկ որք անփոյթ առնեն և արհամարհեն՝ ինքեանք տայցեն պատասխանի յաւր երևմանն Քրիստոսի, և մեք անպարտ եմք, զի զոր ինչ և կարացաք իմանալ՝ հնարս արարաք»[26]:

Այս բաժնին հետևում է «Կանոնք յաղագս քահանայից» գլուխը, որտեղ բազմաթիվ խրատներ են բերված քահանաների և եպիսկոպոսների համար, քաղված զանազան կանոնական գրություններից՝ «Յառաքելական կանոնաց», «Սրբոյն Բարսղի կանոնք», «Նիկիայի ժողովի», «Յովհան Մանդակունոյ», «Յովհան Իմաստասերի» և այլն:

«Խրատ հասարակաց»-ը ավարտվում է վերջաբանով, որտեղ երրնկացին հայտնում է, թե ծաղկաքաղ է արել տարբեր գործերից: Եվ որովհետև վերջաբանն ունի գեղարվեստական որոշակի արժեք, հարմար ենք համարում այն բերել այստեղ.

«Զկանոնական հրաման սրբոցս ծաղկաքաղ արարել՝ ի մի հաւաքեցաք իբրև զծաղիկ բուրաստանաց, դեղ ցաւալի կենաց: Եւ իբրև զհատ ցորենոյ սերմանել ի սիրտս ձեր՝ յաճեցումն բազմապատիկ պտղոց: Եւ իբրև զգաւազան հաստատուն ի ձեռս ձեր՝ գտանել զհոն անցից յորձանահոս գետոց փորձանաց մեղաց, կամ խթան ընդդատուցիչ ի քնոյ երազական կենաց: Զի թէ նաւավարն ի քուն՝ նաւն ծովածուփ, խաշնարածն ծոյլ՝ խաշինքն վնասակար խոտ ճարակեն: Եւ թէ առաջնորդքն անհաստատ՝ կարգքն ընդ նոսա սայթաքին: Ապա եթէ խարիսխն անշարժ՝ շինուածն ոչ գահա-

---

25 Մատ, ձեռ. № 2329, էջ 224ա—226բ:

26 Անդ, էջ 262ա-բ:

վէժ, հովիւն քաջ՝ խաշինքն ոչ գազանակուր, դէտն զգոյշ՝ քաղաքն ի խաղաղութիւն, զաւրավարն արի՝ զաւրքն յաղթող, վարդապետքն իմաստուն՝ աշակերտքն ուղիղ։

Վասն որոյ ազաչեմ խոտորել ի չարէն և քնարել զբարին, լինել աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ։ Զհոգոյն պայծառ շնորհն յոգոց ձերոց մի՛ շիջուցանէք։ Ծնեսուիթիւն յԱստուծոյ ձեզ հաւատացաւ, և համարս տալոց էք։

Թէ հաւատարիմ գտանիցիք, քանքար ի Տեառնէ ընկալայք բարի և շահաւետ ծառայի նմանեցէք, զի մի՛ լսիցէք՝ «ծառայ չար և վատ»։ Ի հարսանիս հրաւիրեցայք, մի՛ մերկ կամ ապեղի պատմուճանաւ մտանիցէք, զի մի՛ լսիցէք զահագին զձայնն, թէ «կապեալ ոտիւք և ձեռաւք՝ հանէք ի խաւարն արտաքին»։ Այլ քահանայական զգեստիւն այն զարդարեցէք զանձինս ձեր, զոր Դաւիթ ուսուցանէ. «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն»։ Զի և ցնծութեան սրբոցն արժանի լիջիք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս»։

«Խրատ հասարակաց»-ի մասին մտորելիս մեր ուշադրութիւնը գրավեց այն հանգամանքը, որ այնտեղ աշխարհականներին և հոգեւորականներին տրված խրատներն առանձնացված են։ Միջնադարյան մեր մատենագրութեան մէջ կառուցվածքային տեսակետից նախատիպ փնտրելիս մեր ուշադրութիւնը նորից կանգ առավ Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրա։ Հայտնի է, որ առկա են Դատաստանագրքի տարբեր խմբագրութիւններ, և աշխարհիկներին ու հոգևորականներին վերաբերող հոդվածներն առանձնացված են նրա Բ խմբագրութեան մէջ։ Հնարավոր է, որ Երզնկացին նրան հետևելով է կատարել «Խրատ հասարակաց»-ի հոգևոր և աշխարհիկ դասերին վերաբերող խրատների անջատումն առանձին գլուխներում։

Ինչևէ, անկախ այդ առնչութիւնից, մի բան վստահ կարելի է ասել, որ եթե Դատաստանագրքում դա արվել է հիմնականում նկատի առնելով գոյութիւն ունեցող աշխարհիկ և հոգևոր դատարանները, ապա խրատներում անջատումը կատարվել է այն պարզ պատճառով, որ տարբեր էին աշխարհիկների ու հոգևորականների պարտականութիւնները և այն պահանջները, որ դնում էր նրանց վրա կյանքը։ Միաժամանակ հետաքրքիր է, որ Երզնկացին իր երկը գրելիս չի հետևում Ներսես Շնորհալու նշանավոր «Թուղթ ընդհանրականին», որտեղ տարանջատված են հասարակութեան առանձին դասերին ուղղված խրատները։ Պետք

է ենթադրել, որ Շնորհալու միջավայրում վերելք ապրող Կիլիկյան հայկական պետութեան, ինչպես և աստիճանաբար ձևավորվող Զաքարյան Հայաստանի սահմաններում, առավել որոշակի էին ընդգծված այդ դասերն ու նրանց շահերը, քան Երզնկացու ժամանակներում, երբ բուն Հայաստանը գտնվում էր մոնղոլական գերիշխանութեան տակ, և առաջնային նշանակութիւն էին ստանում համաժողովրդական նշանակութիւն ունեցող հարցեր, ու նպատակների որոշակի ընդհանրութիւն էր ստեղծվում օտարի լծի տակ հեծող ժողովրդի տարբեր շերտերի համար։

Այժմ համառոտ խմբագրութեան մասին։

Մինչև այժմ ուսումնասիրողները նշելով, որ Երզնկացին գրել է մի շարք խրատական գրութիւններ, իբրև առանձին գործեր են ներկայացրել «Խրատ հասարակաց»-ը և նույն գործի համառոտ խմբագրութիւնը։ Սակայն, ինչպես վերը ասվեց, «Խրատ հասարակաց»-ի մի քանի տասնյակ օրինակների ուսումնասիրութիւնն ու բաղդատումը համառոտ խմբագրութեան կամ «Խրատք կանոնական»-ի հետ ապացուցեց, որ դրանք նույն երկի ընդարձակ և համառոտ խմբագրութիւններն են։ Համոզվելու համար բավական է դիտել ստորև բերվող երկու քնագրերի ենթապլուխների և վերջիններիս սկզբնատողերի համադրութիւնը։

(ժ 922)

Ընդարձակ

(ըստ 2329 ձեռագրի)

Յաղագս հաւատոյ

Նախ պարտ է իմանալ, եթէ զինչ է քրիստոնէութիւն...

Յաղագս մկրտութեան

Արդ քրիստոնէութեան սկիզբն և գլուխ մկրտութիւնն է... (229 ա)

Յաղագս զղջալ անուցանելոյ

Սրբութեամբ և անարատութեամբ անուցանեն քրիստոնէքն զիւրեանց զատկան... (232 բ)

Համառոտ

(ըստ 8356 ձեռագրի)

Պարտ է գիտել՝ զինչ է քրիստոնէութիւն...(158 ա)

Յաղագս մկրտութեան

Եւ զի հաւատ մկրտութեան քրիստոնէութեան տպաւորի... (159 ա)

Յաղագս խրատոյ և վարուց սրբութեան

Պարտ է որ սրբութեամբ և անարատութեամբ անուցանեն քրիստոնէքն զիւրեանց տղայքն... (160 ա)

Յաղագս պսակի և խրատ ամուսնացելոց

Եւ արդ, որք այսպէս սրբութեամբ սնանին և լինի կարիճ տղայն ժե տարոյ...(235 ա)

Յաղագս շնութեան

Քրիստոնէք մի՛ անկցին յախտ շնութեան...(239 ա)

Վասն գողութեան

Զի գողն Աստուծոյ հակառակ է...(241ա)

Յաղագս երդման

[Սէրն] երորդ բան կանոնական՝ ոչ է պարտ քրիստոնէին երդնուլ սուտ կամ իրաւ... (242 բ)

Յաղագս սուտ վկայից

Իններորդ կանոն գրեմք՝ վասն այնոսիկ, որք սուտ վկայութիւն տան...(244 ա)

Յաղագս յիշոցնատուաց

Տասներորդ կանոնք գրեմք՝ վասն ահեղ և մեծ և դառն և զարհուրելի մեղացն...(244 բ)

Յաղագս առեւրութեան

Տասն և միերորդ բան գրեմք կանոնական՝ որ չէ պարտ, որ քրիստոնէքն զիրար առեն... (247 ա)

Յաղագս պսակի

Պարտ է որ լինի փեսացուն ժ և ե տարոյ...(161 ա)

Քրիստոնէքն մի՛ անկցին ախտ շնութեան (161 բ)

Յաղագս գողութեան

Ոչ է պարտ քրիստոնէին գողանալ ինչ, զի գողն Աստուծոյ հակառակք...(162 ա)

Յաղագս երդման

Ոչ է պարտ քրիստոնէին երդնուլ...(162 բ)

Վասն սուտ վկայութեան

Ոչ է պարտ քրիստոնէին անաստուածաբար սուտ վկայութիւն տալ...(163 ա)

Վասն աճօրէն պեղծ իշոցաց

Գրեմք վասն ահեղ և զարհուրելի մեղացն...(163 ա)

Յաղագս առեւրութեան և ֆինանսութեան

Ոչ է պարտ քրիստոնէին, որ առեն զմիմեանս... (164 բ)

երկու խմբագրութիւններում էլ այս գլխին հետևում է նույն հատվածը.

Ընդարձակ

Արդ այս կանոնական խրատ և պատուիրան, զոր գրեցաք, յաստուածային գրոց հրամանէ, հրաժարականքն է, զոր ոչ է պարտ քրիստոնէին առնել կամ գործել։ Եւ այժմ գրեմք զայն, զոր պարտ է առնել քրիստոնէին և հարկ ի վերայ կայ և աւրէնքն հրամայէ Աստուծոյ...(249 բ)

Համառոտ

Այսոքիկ, զոր գրեցաք, հրաժարականք են, զոր ոչ է պարտ քրիստոնէի առնել և գործել, և այժմ գրեմք, զոր պարտ է քրիստոնէին առնել և գործել... (165 ա)

Ապա շարունակվում են խրատները հետևյալ հերթականությամբ.

Ընդարձակ

Յաղագս սիրոյ

Եւ է առաջին պատուիրան սէրն, և ի համարս կանոնաց՝ ժԹ գլուխ...(249 բ)

Համառոտ

Յաղագս սիրելոյ զմիմեանս

Պարտ է քրիստոնէիցն, որ սիրեն զմիմեանս, զի առաջին պատուիրանն է...(165 բ)

Վասն աղաւթից

Եւ պարտ է քրիստոնէին աւուրն Գ հետ աղաւթք առնել...(252 բ)

Յաղագս աղաւթից

Պարտ է քրիստոնէին աւուրն Գ հետ աղաւթք առնել...(166 ա)

Յաղագս խոստովանութեան

Տասն և չորս գլուխս գրեմք վասն խոստովանութեան... (253 բ)

Վասն խոստովանութեան

Գրեմք վասն խոստովանութեան...(167 ա)

Յաղագս ճաղարդ տալոյ

Պարտ է քրիստոնէին որ յամէն ի աւր հաղորդեսցի...(255 բ)

Բովանդակությունը խիստ համառոտված բերված է նախորդ վերնագրի տակ։

Սահակայ՝ յաղագս ողորմութեան	**Ջիք**
Ողորմութիւն արարէք աղքատաց և կարաւտելոց...(256 ա)	
Յաղագս պահոց	» »
Զպահքն սուրբ և անարատ պարտ է պահել...(256 բ)	
Վասն անդառն առնելոյ	» »
Այլ և այս աւրէնք է քրիստոնէից, զի յորժամ հասանի նմա հիւանդութիւն...(258 բ)	
Յաղագս ոչ առնելոց սուգ մեռելոցն	» »
Դարձեալ ի վերայ ամենայնի գրեմք և զայս կանոնք հաստատութեամբ...(258 բ)	
Սահակայ կանոնք	» »
Պարտ է քառասունք կատարել մեռելոցն...(250 ա)	
Սրբոյն Սահակայ վասն խահանայից	**Սրբոյն Սահակայ վասն խահանայից**
Խորհրդական են նուէրք ամենայն և ընծայքն, զոր տան քահանայիցն...(260 բ)	*Խորհրդական են նուէրք ամենայն և ընծայից, զոր տան քահանայից...*
Սրբոյն Բարսղի կանոնք	**Սրբոյն Բարսղի կանոնք**
Եթէ ոք արգելցէ զպատուս քահանայիցն, զերի կամ զմորթի...(262 ա)	*Եթէ ոք արգելցէ զպատուս քահանայք, զերի կամ զմորթի...(169 բ)*

Երկու բնագրում էլ այստեղ վերջանում են աշխարհիկ հասարակութեանը տրվող խրատները և սկսվում է քահանաներին վերաբերող բաժինը: Ընդարձակ խմբագրութեունում այս բաժինը վերնագրված է «Կանոնք յաղագս քահանայից» և ունի հետևյալ պատկերը.

«ՅԱռաքելական կանոնաց, սրբոյն Բարսղի կանոնք, նորին Բարսղի կանոնք, յԱռաքելական կանոնաց, ի Նիկիայ ժողովոյն կանոնացն 3ԺԸ-իցն, ի սուրբ առաքելոյն Թադէոսի կանոնացն, և դարձեալ ի սուրբ առաքելոյն Թադէոսի կանոնաց, Յոհաննու Մանդակունեցոյ կանոնք նոյն բանի, թէ քան Լ (30) տարին պակաս իցէ հասակն, պարտ է ձեռնադրել, թէ ոչ: Եւ չափ ուսման ո՞րքան լինիցի բաւական, ի Ներսեսի Հայոց կաթողիկոսի կանոնական խրատուցն, ի կանոնական խրատուց Ներսեսի Հայոց կաթողիկոսի, այլ կանոնք, ի կանոնաց սրբոյն Բարսղի Կեսարու, այլ կանոնք, կանոնք յաղագս պէսպէս յանցանաց, որք հանդիպին քահանայ և սարկաւագ, յԱռաքելական կանոնաց, Բարսղի կանոնք, յԱնտիոքոյ ժողովոյն կանոնաց, ի Նիկիայ կանոնաց, սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, կանոն Յոհաննու Իմաստասիրի, Յոհաննու Մանդակունոյ, սրբոյն Սահակայ կանոնք, Եփրեմ, սրբոյն Եփրեմի, Թադէոսի՝ յաղագս եպիսկոպոսաց, Թադէոսի՝ յաղագս եպիսկոպոսաց, Սահակայ՝ յաղագս եպիսկոպոսաց, Հայրապետաց՝ յաղագս եպիսկոպոսաց»: Վերջապես, սրան հետևում է ամբողջ աշխատութեանը վերաբերող՝ վերը բերված վերջաբանը:

Համառոտ խմբագրութեան այդ բաժինը շատ սեղմ է, մեծ կրճատումներով և առանց վերնագրերի: Այստեղ ևս կանոնների վերջում բերված է նույն վերջաբանը առանց խմբագրման:

Հիմնական տարբերութեուններ երկու բնագրերի միջև նկատելի են նաև վերնագրերում և առաջաբանում, որ և դարձել է թյուրիմացութեան հիմնական պատճառը: Ի միջի այլոց, այդ բանին նպաստել է նաև այն, որ ինչպես ընդարձակ, այնպես էլ համառոտ խմբագրութեունների ներածականները գրված են առաջին դեմքով, և թվում է, թե երկուսն էլ երզնկացին է գրել: Սակայն որոշ տվյալներ մեզ հիմք են տալիս կարծելու, որ «Խրատ հասարակաց»-ի համառոտութեունը երզնկացունը չէ:

Նախ վերնագրի հարցը: Ինչպես վերը տեսանք, ընդարձակ բնագրի վերնագիրն սկսվում է միջնադարյան հեղինակներին հատուկ ինքնանվաստացման խոսքերով՝ «Նուաստ վարդապետի Յոհաննէսի Եզնկայեցոյ...», ապա հեղինակը հայտնում է, որ ինքը խրատները գրում է «ի կանոնական սահմանաց» սուրբ առաքյալների, հայրապետների և վարդապետների: Այնուհետև շեշտում է, որ օգտվել է նաև իր ուսուցիչ Վարդան Արևելցուց: Համառոտ խմբագրութեան վերնագրում բացակայում է հեղինակին նվաստացնող

ածականը: Բացակայում է նաև վարդապետներից՝ ընդհանրապես և Վարդան Արևելցուց՝ մասնավորապես օգտված լինելու վերաբերյալ հիշատակությունը: Սա մի կողմից՝ կարող էր թելադրված լինել այն հանգամանքով, որ համառոտման հեղինակը հարկ չի համարել հատկապես նշելու Վարդան Արևելցու անունը, մյուս կողմից՝ որ համառոտ խմբագրությունն ավելի մեծ հավակնություն է ունեցել հանդես գալու իբրև կանոնական, քան խրատական գրություն, որովհետև, ինչպես ներածականի վերջում է ասվում, այն գրված է ժամանակի կաթողիկոսի անունից: Նույնը նկատելի է նաև բուն բնագրում: Եթե ընդարձակ բնագրում Երզնկացին «Խրատ հասարակաց»-ը համարում է, իրոք, իրատական գործ և, այն առավել ընդունելի ու համոզիչ դարձնելու համար, երբեմն խրատներին կից բերում է համապատասխան կանոնական ամբողջական հատվածներ (օրինակ՝ «Յաղագս պսակի և խրատ ամուսնացելոց» գլխի վերջում հատվածներ են բերված տարբեր կանոններից), ապա համառոտ խմբագրության մեջ այդ մեջբերումները իսպառ բացակայում են:

Ուշադրություն պետք է դարձնել նաև խորագրերի հետևյալ տարբերության վրա. մինչդեռ ընդարձակը հեղինակի իսկ կողմից դիտված է որպես մի ամբողջական երկ ու վերնագրված «Խրատ հասարակաց...», համառոտ խմբագրությունը դիտված է իբրև խրատների ժողովածու և անվանված «Խրատք կանոնական...»:

Կարելի է բերել մի շարք այլ ապացույցներ ևս՝ հաստատելու համար, որ երկու խմբագրություններից հեղինակայինն ընդարձակն է: Այդ խմբագրության ներածականում բավական որոշակի երևում է մարդը՝ իր տվայտանքներով ու ապրումներով, իր ներքին անհանգստությամբ սեփական և այլոց ապագայի համար, որ բացակայում է համառոտ բնագրում: Վերջապես, Երզնկացին «Յաղագս չիշողնաւտուաց» գլխում նորից ակնարկ է անում իր ուսուցչի մասին՝ տեղեկացնելով, որ այդ հարցերին բազմիցս անդրադարձել է նաև Վարդան Արևելցին. «Եւ սուրբ հայրն մեր՝ մեծ վարդապետն Վարդան, յիր կենդանութեանն բազում անգամ ժողովք արար և զնոյն կանոնք հաստատեաց»[27]:

Առանձին դժվարություն չի ներկայացնում «Խրատ հասարակաց»-ի հիմնական աղբյուրները ճշտելը: Երզնկացին պատկանում է միջնադարյան այն հեղինակների թվին, որոնք բարեխղճորեն

[27] Մատ. ձեռ. № 2329, էջ 246ա:

նշում են իրենց օգտագործած աղբյուրները: Ինչ վերաբերում է «Խրատ հասարակաց»-ին, ապա գործի բնույթն ու նպատակը, ինչպես դա պարզ երևում է համառոտ և ընդարձակ բնագրերի համեմատական սյունակներից, շահագրգռել են նրան այդ աղբյուրներին, անշուշտ պետք է ավելացնել նաև իր ցույց տված աղբյուրներին, անշուշտ պետք է ավելացնել նաև Աստվածաշունչը, որից հաճախ բառացի մեջբերումներ է անում:

«Խրատ հասարակաց»-ի գրության ճշգրիտ ժամանակը որոշել հնարավոր չէ, սակայն դատելով այն բանից, որ ներածականում Երզնկացին պարտավորում է իրեն, որ, իբր, թերացել է իր պարտականությունները լրիվ կատարելու մեջ և դա բացատրում է ինչպես «վասն ժամանակիս ամբոխեալ շարժմանց և դառնութեան և թէ հակառակասէր բարուց ոմանց կամ անլսութեանց», այնպես էլ «վասն տկարութեան մարմնոյ», — պետք է ենթադրել, որ «Խրատ հասարակաց»-ը Երզնկացին գրել է իր կյանքի հասուն շրջանում: Առանց վերը նշված ակնարկի էլ ինքնին հասկանալի է, որ նման մի լուրջ գործ, այն էլ հայ եկեղեցու բոլոր վիճակներին պատասխանող հանձնարարականով, կարող էր գրել միայն մեծ հռչակի ու ճանաչման հասած գիտնական վարդապետը: Չենք սխալվի, եթե ասենք, թե Երզնկացին, որ XIII դարի 60-ական թվականներին և 70-ական թվականների սկզբներին արդեն լուրջ հեղինակություն էր, համընդհանուր ճանաչման հասավ 1281 թ. հետո, երբ Երուսաղեմից վերադառնալիս երկար ժամանակ կանգ էր առել Կիլիկիայում՝ արժանանալով թագավորի, կաթողիկոսի, կիլիկյան գիտնական վարդապետների ամենաբարձր գնահատականին և նրանց խնդրանքով մի շարք ուշագրավ ճառեր գրելով: Այդ հանգամանքը մեզ հիմք է տալիս կարծելու, որ Երզնկացին «Խրատ հասարակաց»-ը պետք է գրած լինի 1281 թ. հետո:

Հայտնի է, որ Երզնկացին 1281 թ. Հակոբ Կլայեցի կաթողիկոսի պատվերով, իբրև կաթողիկոսական պատվիրակ, զանազան հրահանգներով գնում է Թեոդուպոլիս (Կարին)[28]: Առայժմ հայտնի չէ, թե Կիլիկիայից վերադառնալիս Երզնկացին կանոնական, իրատական ինչ պատրաստի գործեր բերեց Հայաստան: Մ. Օրմանյանը ենթադրում է, թե Երզնկացին իր հետ բերել է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»[29]: Օրմանյանի հետ համաձայն է նաև Ա. Սրապյանը[30]: Սակայն մեզ անհավանական է թվում այս

[28] Տե՛ս Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 45:
[29] Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ, էջ 1675:
[30] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 45:

կարծիքը, որովհետև «Թուղթ ընդհանրականը» հազիվ թե իր գոյության ավելի քան մեկ դարի ընթացքում ճանաչում և տարածում գտած չլիներ Հայաստանում։ Ամենից հավանականն այն է, որ Երզնկացին Հակոբ Կլայեցու կողմից հորդոր է ստանում կանոնա-խրատական գրություններ գրելու և, Վարդան Արևելցու պես, անձամբ շրջելու ու քարոզելու՝ գուցե նրա պես եկեղեցական ժողովներ ևս հրավիրելով։ Սակայն իր տակավին երկրի անհանգիստ վիճակը ստիպում են նրան հրաժարվելու իր մտքից և փոխարենը գրելու «Խրատ հասարակաց»-ը՝ հանձնարարելով այն տարածելու և բացատրելու ժողովրդին։

Երզնկացին, ինչպես ինքն է վկայում, երկրորդ անգամ կրկին կիայից վերադառնալուց հետո լինում է Վրաստանում, ապա հաստատվում Եկեղյաց գավառի ս. Մինասի անապատում, որտեղ գրում և 1291 թ. ավարտում է նշանավոր քերականի մեկնությունը։

Այստեղ ի միջի այլոց ասում է. «Առաջին պատուղ յանապատի կենաց ընծայեցաք սուրբ եկեղեցոյ մանկանց»[31]։ Եթե քերականի մեկնությունը, որի գրության համար բավական ժամանակ էր անհրաժեշտ, անապատական կյանքի առաջին պտուղն է, նշանակում է՝ «Խրատ հասարակացը» նա կարող էր գրել 1281—1284 թթ. ընթացքում։

* * *

Վերը տեսանք, որ «Խրատ հասարակաց»-ի ներածականում և խրատների մեջ Երզնկացին մի քանի անգամ պարտավորեցնում է ժամանակի հոգևոր գործիչներին (որոնց ձեռքին էր ժողովրդի կրթական, բարոյական դաստիարակության գործը) արտագրել, բազմացնել իր երկը և տալ քահանաներին։ Վերջիններս էլ պարտավոր էին այն կարդալու և բացատրելու հավատացյալներին։ Արդեն այդ հանձնարարող տոնը խոսում է ոչ միայն Երզնկացու մեծ հեղինակության, այլև այն մասին, որ «Խրատ հասարակաց»-ը ծանոթ էր բարձրաստիճան հոգևորականությանը և ըստ երևույթին արժանացել էր նաև կաթողիկոսի հավանությանը։

Պետք է եզրակացնել, որ Երզնկացու հանձնարարականը կատարվել է բավական բարեխղճորեն, որովհետև զգալի թվով օրինակներ գրվել են արդեն XIII դարի վերջերին և XIV դարի սկզբներին։

[31] Մատ, ձեռ. № 2329, էջ 26բ։

Ինչ վերաբերում է «Խրատ հասարակաց»-ի համառոտ խմբագրությանը՝ «Խրատք կանոնական»-ին, ապա այն ստեղծվել է ամենաուշը 1322 թ., որովհետև մեզ հասած հնագույն օրինակը գրված է այդ ժամանակ։ Իսկ կաթողիկոսը, որի հրահանգով համառոտվել և տարածվել է «Խրատք կանոնական»-ը, պետք է եղած լինի կամ Հակոբ Կլայեցին (1268—1286), կամ մինչև 1322 թ. նրան հաջորդած կաթողիկոսներից մեկը (Կոստանդին Բ. կաստովեցին, Ստեփանոս Դ. Հռոմկլայեցին, Գրիգոր Է. Անավարզեցին կամ Կոստանդին Գ. Կեսարացին)։ Բացառված չէ նաև, որ համառոտ խմբագրությունը երևան եկած լինի Երզնկացու կենդանության օրոք, նույնիսկ կազմված իր կողմից։

Գ. ԽՐԱՏՔ_ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՎԱԾՔ

Հովհաննես Երզնկացու խրատ-կանոնական կարևորագույն երկերից են Երզնկայի «Եղբարց միաբանության» կանոնադրությունը և «Կրկին կանոնք և խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց» գրվածքը։

Սրանցից առաջինը ծանոթ է գիտական լայն շրջանակներին շնորհիվ Լ. Խաչիկյանի երկու փոքրածավալ, բայց շատ արժեքավոր ուսումնասիրությունների։ Դեռևս 1951 թ. Լ. Խաչիկյանը հրապարակեց մի հաղորդում, որտեղ ոչ միայն գնահատվում է Երզնկացու այդ գործը, այլև իրավացիորեն դիտվում իբրև կարևոր սկզբնաղբյուր Երզնկայի, հետևաբար՝ նաև Հայաստանի մյուս քաղաքների, ներքին կյանքի, կենցաղի, արհեստավորական և առևտրական դասերի ու նրանց փոխհարաբերությունների ուսումնասիրության հարցում[32]։

Նկատի առնելով հաղորդման առաջ բերած մեծ հետաքրքրությունը հայագիտության շրջանակներում՝ Լ. Խաչիկյանը նույն հարցին երկրորդ անգամ անդրադարձավ 1962 թ.՝ հրատարակելով նաև այդ շատ կարևոր սկզբնաղբյուրը[33]։

Վերոհիշյալ ուսումնասիրություններում պիտնականը հանգում է մեր պատմության այդ և հետագա շրջանների համար կարևոր

[32] Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրություն», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73—84։

[33] Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանության» կանոնադրությունը (1280), «Բանբեր մատենադարանի», № 5, 1962, էջ 365—377։

նշանակություն ունեցող եղրակացություններին։ Մասնավորապես ապացուցվում է, որ «եղբարց միաբանությունը» եղել է քաղաքի առևտրա-արհեստավորական դասերի աշխարհիկ կազմակերպություն և նպատակ է ունեցել «միացյալ ջանքերով դիմադրելու «բռնատրաց» ու «չար մարդկան», օգնել տնտեսապես քայքայված ընկերոջը, զորավիդ լինել միմյանց տնտեսական ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում»[34]։ Ավելացնենք, որ այդ կազմակերպությունների անհրաժեշտությունը թելադրված էր նաև այն բազում վտանգներով, որոնց միջին դարերում ենթակա էին արհեստավորներն ու առևտրականները ոչ միայն ճամփին, այլև տանը։ Այդ մասին Երզնկացին մի առիթով գրում է. «Եւ զոր աւրինակ վաճառական ոք բազում ճանապարհորդութեամբ առցեալ ընդ ծով եւ ընդ ցամաք ի վերջինն հասեալ յաւետեան ի քաղաք, յոլովագոյնս մտանէ ի հոգս. մտածել զնախանձ ընկերացն, զերկեղ իշխանացն, զզրդումն վաճառին, զխորելն ընտանեաց...»[35]։

Ինքնին հասկանալի է, որ ճակատագրի այս քմահաճույքներից և իշխանների կամայականություններից նրանց կարող էր փրկել «եղբայրությունը»։ Երզնկացին, խորհուրդ տալով տիրոջ ներին «զեղեալ օրէնսն պահել առ հնազանդեալսն»[36], միաժամանակ զգուշացնում է նրանց, որ հակառակ պարագայում ենթակաները չեն հանդուրժի իշխողի անօրինականությունները։

Բայց Երզնկայի «եղբայրությունը» և նմանատիպ կազմակերպությունները միայն տեղական իշխանների դեմ չէ, որ պայքարում էին։ Լինելով երիտասարդ, ձեռներեց մարդիկ և, ամենակարևորը, համախմբված որոշակի գաղափարախոսությամբ ու նպատակով, նրանք արտաքին վտանգի դեպքում բնականաբար պետք է դառնային ժողովրդի պաշտպանության հիմնական ուժը։

Մեզ անհավանական չի թվում, թե նաև նման կազմակերպությունների գոյությամբ պետք է բացատրել այն փաստը, որ XIII—XIV դարերում հայկական պետականության և ուժեղ ավատատիրական տների բացակայության պայմաններում (բացատրությամբ Կիլիկիայի և Հայաստանի հյուսիսային մի շարք շրջանների) հայկական քաղաքները շարունակում էին մնալ պաշտպանական հզոր ամրություններ։ Հիշենք թեկուզ 1243 թ. Երզնկայի հերոսական պաշտպանությունը մոնղոլների դեմ։ Կարծում ենք, մեզ հետաքրքրող հարցի հետ որոշակի աղերս ունի նաև Կողբ գյուղաքաղաքի երիտասարդության պայքարը Լենկ-Թեմուրի հրոսակների դեմ՝ Մարտիրոս տանուտերի գլխավորությամբ. «Իսկ բարէպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր, ի գեղչէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդոզ, որ կոչի յայլոց ազգաց Թակալթու, յոյժ արի և քաջ մանկամբք գեղչն ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ և սրտապինդ զօրութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ։ Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ զլեառն զայն...»[37]։

Երզնկացու «Սահման և կանոնք»-ից պարզվում է նաև «եղբայրության» ներքին կառուցվածքը։ Կազմակերպության ըստ կրոնական օղակում միավորվել են 10 անդամներ՝ տասնապետի («տասին գլուխն») գլխավորությամբ։ Յուրաքանչյուր չորս նման օղակներ իրենց հերթին ենթակա են եղել «քառասունին մեծին», իսկ եղբայրության գործերը տնօրինել է «գլխաւոր եղբարց» կոչվող մարմինը՝ «գլուխ եղբայրութեանն» պաշտոնյայի նախագահությամբ[38]։

Ելնելով որոշ փաստերից՝ Խաչիկյանը ենթադրում է նմանատիպ կազմակերպությունների գոյությունը նաև Անիում, Վանում, Կարինում և Հայաստանի այլ քաղաքներում, մանավանդ որ, ինչպես իրավացիորեն նկատում է նա, Երզնկայում կազմակերպված «եղբարց միաբանութիւն»-ը ընդհանուր շատ գծեր ունի նույն շրջանում փոքրասիական քաղաքներում լայն տարածում ստացած «Ախի» (եղբայրություն) կոչվող կազմակերպությունների հետ[39]։ Վերոհիշյալ ուսումնասիրություններում Խաչիկյանը քննության է առնում նաև ավելի ուշ ուկրաինահայ և լեհահայ գաղթավայրերում երիտա-

[34] Անդ, էջ 365։

[35] Մատ, ձեռ № 2173, էջ 233ա։

[36] Անդ, էջ 95բ։

[37] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 18։ Թեև այստեղ ուղղակի ակնարկ չկա երիտասարդական միության մասին, բայց որոշակի է, որ հրոսակների դեմ հերոսական պայքար մղող քաջ «մանուկները» կազմակերպված ու մարզված են եղել, իսկ նրանց հրամանատարը՝ քաջատեղյակ պաշտպանական մարտ վարելու արվեստին և «զօրեղ զօրական»։

[38] Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «եղբարց միաբանութեան» կանոնադրությունը, «Բանբեր մատենադարանի», № 5, 1962, էջ 366։

[39] Անդ, էջ 368։

սարդ և ամուրի հայ երիտասարդների ստեղծած քաղաքային կազմակերպությունների՝ «Կարիճվորաց եղբայրությունների» հարցը և նկատում, որ Յազլովեց, Կամենեց-Պոդոլսկ և Ուկրաինայի, Մոլդավիայի, Ռումինիայի ու Հունգարիայի հայաբնակ մյուս քաղաքների նմանատիպ կազմակերպությունները, ամենայն հավանականությամբ, բնդհանուր շատ գծեր պետք է ունենան Հայաստանի նույնատիպ կազմակերպությունների հետ, քանի որ հայ գաղթականները «հարյուրամյակներ շարունակ համառորեն ձգտել են իրենց համայնքների ներքին կյանքը կազմակերպել հայրենի երկրի ավանդական սկզբունքներով...»[40]:

Երզնկացու «Եղբարց միաբանության» «սահմանը»-ը և այդ առիթով Խաչիկյանի ուսումնասիրությունները ոչ միայն կարևոր ղարձան Հայաստանի և գաղթաշխարհի հայաբնակ քաղաքների ներքին կյանքի բազմաթիվ հարցերի լուսաբանման համար, այլև խթան հանդիսացան նոր ուսումնասիրությունների երևան գալուն: Այդ տեսակետից հատկապես ուշադրության է արժանի Վ. Գրիգորյանի «К вопросу о «Братствах удальцов» в армянских колониях Западной Украины» հոդվածը[41], որտեղ հեղինակը փաստական նոր նյութերի օգնությամբ քննության է առնում Արևմտյան Ուկրաինայի հայաշատ քաղաքներում ստեղծված «Կարիճվորաց եղբայրությունների» հետ առնչվող բազմաթիվ հարցեր, որոնց թվում՝ և այդ կազմակերպությունների ունեցած ընդհանրությունները մի կողմից՝ բնաշխարհի քաղաքային երիտասարդական կազմակերպությունների, մյուս կողմից՝ ուկրաինական երիտասարդական կազմակերպությունների հետ և հանգում մի շարք հետաքրքիր եզրակացությունների: Մեր նպատակից հեռու է մանրամասն կանգ առնել առաջ քաշված բոլոր հարցերի վրա, սակայն քիչ անց նորից կանդրադառնանք ինչպես Խաչիկյանի, այնպես էլ Գրիգորյանի վերոհիշյալ ուսումնասիրություններին՝ հատկապես «մանկտավագ» տերմինի առնչությամբ:

Հովհաննես Երզնկացու իրատես-կանոնական մյուս գործը՝ «Նորին Յոհաննէս վարդապետի Եզընկայեցւոյ կրկին կանոնք և խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց, որք մարմնաւոր և երկրաւոր խորհրդով վարեն զկեանս աշխարհիս, զորս և մեք յաստուածային

[40] Անդ, էջ 367:

[41] Տե՛ս «Исторические связи и дружба украинского и армянского народов», Киев, 1965, стр. 128—136.

աւրինացն և ի սուրբ գրոց ուղեմք զայնպիսին ի հոգևորն, շնորհաւորեալն Աստուծոյ» երկը[42], գիտական լայն շրջանակներին դեռևս անծանոթ է[43]:

«Կրկին կանոնք»-ը, որը բաղկացած է երեք հիմնական գլուխներից, պատմագրական և ազգագրական մեծարժեք սկզբնաղբյուր է, որի շնորհիվ լրացվում և ճշտվում են դարեր շարունակ Հայաստանում և գաղթաշխարհում գոյություն ունեցած երիտասարդական կազմակերպությունների զարգացման պատմությունը, քաղաքական-պատմական և սոցիալական տարբեր իրավիճակներում նրանց կրած փոփոխությունները և բազմաթիվ այլ խնդիրներ:

«Կրկին կանոնք»-ի առաջին, ամենաընդարձակ բաժնում, նմանատիպ գրություններին հատուկ դասական առաջաբանում Երզնկացին կոչ է անում երիտասարդ մարդկանց սիրել գիտությունն ու լուսավորությունը, որովհետև «որ ոչ տեսանէ մտաւքն յառաջ և ապա գործէ՝ նման է անբան անասնոյ, որ անմտաբար և առանց խորհրդոյ առնէ զամենայն»[44]: Միաժամանակ նա սովորեցնում է, որ միայն տեսական գիտելիքներ ձեռք բերելը բավական չէ. պետք է կարողանալ դրանք կիրառել ամենօրյա կենցաղում ու գործունեության մեջ: «Բ ազգ է իմաստութիւնն,—բացատրում է Երզնկացին,—տեսական և գործնական: Տեսականն գիտութիւնն և ուսումն է, որով իմաստասիրեալ քննէ յաղագս Աստուծոյ և աշխարհի և ամենայն գոյից: Իսկ գործնականն այն է, որով գործէ զամենայն գործս բարիս հոգևորս և ուղղէ զինքն ի հաճոյսն Աստուծոյ»: Այնուհետև Երզնկացին թռուցիկ, բայց շատ կարևոր ակնարկ է անում մանկտավագության մասին և ապա մանրամասն բացատրում, թե ինչպիսին պետք է լինի մանկտավագը, ինչ պետք է սովորեցնի մանուկին, որտեղից է առաջացել մանուկ անվանումը և այլն:

Երկրորդ բաժնում, որ վերնագրված է «Յաղագս գոտոյ», ուշադրավ բացատրություն է տրված, թե միջնադարում ում ինչ

[42] Մատ, ձեռ. № 2783 (ժամ.՝ 1409 թ.), էջ 7ա—11ա:

[43] Այստեղ հարկ ենք համարում նշել, որ «Կրկին կանոնք»-ի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Լ. Խաչիկյանը, որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում մեծարգո պրոֆեսորին: Հետագայում հայտնի գարձան նաև նույն բնագիրը պարունակող այլ ձեռագրեր ևս, որոնց մասին խոսք կլինի բնագրերի բաժնում:

[44] Մատ. ձեռ. № 2783, էջ 7բ:

գոտիներ են տրվել և ինչ իմաստ ու խորհուրդ ունի յուրաքանչյուր գոտին։ Այդ բաժինն ավարտվում է չափածո խրատով, որը քահանայության կրկնում է արձակի բովանդակությունը։

Երրորդ և վերջին գլուխը վերնագրված է «Վասն գօտի տալոյն», որտեղ հիմնականում խոսվում է մանկտավագի կողմից մանուկին գոտի հանձնելու արարողության և այն տանհինգ պատվիրանների մասին, որ պարտավոր է տալ մանկտավագը, և որին պարտավոր է հետևել մանուկը։

Ձեռագրում «Կրկին կանոնք»-ին կցված է Երզնկացու հայտնի չափածո խրատը Հակոբ մանկտավագին, որ Ա. Սրապյանի հրատարակած օրինակի[45] համեմատությամբ նկատելի տարբերություններ ունի։

Ելնելով Երզնկացու այս գործի բովանդակությունից և այն համեմատելով Երզնկայում կազմակերպված եղբայրության «Սահման և կանոնք»-ի հետ, թվում է, ժամանակագրական իմաստով այն պետք է նախորդեր վերջինիս, որովհետև «Սահման և կանոնք»-ում խոսքը գնում է թեև պատմական մեծ վաղեմիություն ունեցող, սակայն պատմական նոր հանգամանքներում նոր կիրառություն գտած մի երևույթի՝ երիտասարդական առանձին միությունները միաբանություն ստեղծելու և վերջինիս կանոնադրության մասին։ Մինչդեռ «Կրկին կանոնք»-ում խոսքը գնում է երիտասարդական այն միությունների մասին, որոնք ստեղծվում էին վաղնջական ժամանակներում՝ մանկտավագների գլխավորությամբ։

Սակայն իրականում այդպես չէ։ Հենց խորագրի «Կրկին կանոնք» արտահայտությունը հուշում է, որ այն գրված է «Սահման և կանոնք»-ից հետո։ Այս բացատրությունն ավելի հավաստի կդառնա, եթե քննության առնենք մանկտավագության և վերջինիս իմաստի հետ առնչվող մի շարք հարցեր։

Նկատի առնելով մանկտավագի և մանկտավագության իմաստի ու բովանդակության հույժ կարևոր նշանակությունը միջնադարյան հայ սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի մի շարք խնդիրների, ինչպես և «Կրկին կանոնք»-ում արծարծված մյուս հարցերի լուսաբանման համար, փոքր-ինչ հանգամանալից կանգ առնենք դրանց վրա։

---

[45] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 172-182։

Մանկտավագի և մանկտավագության բացատրությանն առաջինը անդրադարձել է Լ. Խաչիկյանը՝ վերն արդեն հիշատակված իր ուսումնասիրություններում։

Նախ ասենք, որ մանկտավագության մասին բավական կարևոր տեղեկություններ և բացատրություններ պարունակող «Կրկին կանոնք»-ը ժամանակին չի եղել ոչ Խաչիկյանի, ոչ էլ նրանից հետո այդ հարցին անդրադարձող հետազոտողների ձեռքի տակ, հետևաբար մեր լրացումներն ու ճշտումները հիմնականում արգասիք են նոր բնագրի ընձեռած հնարավորությունների։ Բացի այդ, նախորդ հետազոտողներին հայտնի չի եղել մի շատ կարևոր հանգամանք՝ մանկտավագի գոյությունը նաև գյուղական վայրերում։

Մեր մատենագրության մեջ առ այսօր մանկտավագի առաջին հիշատակությունը համարվել է Մատթեոս Ուռհայեցու հաղորդածը։ Ժամանակագիրը նկարագրում է Անտիոքում 1120-ական թվականներին մանկտավագի գլխավորությամբ վասպուրականցի երիտասարդ առևտրականների միահամուռ պայքարը իրենց վրա հարձակված քաղաքացիների դեմ։ Խաչիկյանը, համադրելով այս շատ կարևոր փաստը մանկտավագի օգտագործման այլ օրինակների հետ, հանգում է մի շարք ուշագրավ եզրակացությունների։ Նա գտնում է, որ մանկտավագները եղել են երիտասարդական, առևտրական և արհեստավորական կազմակերպությունների ղեկավարներ, որոնք իրենց օժանդակությունն են բերել քաղաքային առևտրական և արհեստավորական շերտերին, հարկ եղած դեպքում պաշտպանել են նրանց շահերը հայրենի քաղաքներում և օտարության մեջ կամ ճանապարհներին՝ ուղեկցելով նրանց առևտրական կարավաններին։ Նրանք օգնել են նաև օտարներին, չքավորներին և այլն։

Սակայն, փաստերի անբավարարության պատճառով, ինչպես Խաչիկյանի, այնպես էլ այս հարցում նրան հետևող մյուս հեղինակների՝ Ա. Սրապյանի և Վ. Գրիգորյանի տեսակետները միակողմանի են։

Մանկտավագ և մանկտավագություն տեսնելով միայն Հայաստանի և հայաշատ գաղութների քաղաքային բնակավայրերում և մանկտավագությունը անպայման կապելով Երզնկայում ստեղծված եղբայրության կամ նմանատիպ այլ կազմակերպությունների հետ, վերոհիշյալ գիտնականները Երզնկայի կամ հետագայում գաղթաշխարհում ստեղծված «Կտրիճվորած եղբայրության» տիպի

կազմակերպություններ են տեսնում քոլոր այն վայրերում, ուր հանդիպում են մանկտավագ կոչումը կրող անձանց։

Մինչդեռ հիմա, կարծում ենք, նոր փաստերի օգնությամբ կարելի է ավելի ամբողջացնել այդ շատ կարևոր երևույթի նկարագիրը։

Կոշի եկեղեցու հարավային պատին մուտքից վերև, պատհանից դեպի աջ կա մի արձանագրություն, որը մեծ արժեք ունի մեզ հետաքրքրող հարցի լուսաբանման համար։ Ահա այն.

«1. Շժ։ (1061) թվականիս ես հայր Յոհաննէս-բազում
2. աշխատութեամբ (Մ) աղատին երդուեալ Կոշա տանուտէրաւքս
3. դատաւորն աւագէրէցն մանկեւագն թափեցին զընաջու
4. ր առուն։ Մ։ դահեկան գիր որ Աւագին տան եւ որ այս չոր
5. յս հակառ կա։ Յ։ ժ։ Ը։ իցն նզովեալ եղիցի»[46]։

Ինքնին հասկանալի է, որ մանկեւագն (=մանկտաւագն) այստեղ օգտագործված է որպես պաշտոն և ոչ իբրև հատուկ անուն, հետևաբար մանկտավագի առաջին ուղղակի հիշատակությունը ետ է գնում 60 տարով (1060)։ Բացի այդ, պարզվում է, որ այդպիսի պաշտոնյա եղել է ոչ միայն քաղաքներում, այլև գյուղատիպ վայրերում։ Ձեռքի տակ ունենալով այս շատ կարևոր հիշատակությունը՝ տեսնենք, թե ինչ բացատրություն է տալիս Երզնկացին մանկտավագությանը։ Ըստ Երզնկացու, մանկտավագությունն աշխարհական գործ է և գալիս է շատ ճնուց։ Մանկտավագները տրդեզրում էին մանուկների և նրանց հաստնալուց հետո գոտի էին տալիս։

«Արդ,—գրում է Երզնկացին,—եկեսցուք ի բանն, որ պիտանացու է մեզ։ Տեսաք յաշխարհի գործ մի, որ սովորութեամբ լեալ է յաշխարհ ի մէջ մարդկան, որ լինին ի մարդկանէ, որ անանին մանկտաւագ և կոչեն տղայահասակ մանկունս իւրեանց յորդեգիրս և տան ճոցա գօտիս։ Եւ չկայր հնար, որ բառնայր այս ի յաշխարհէ, զի հին էր սովորութիւնն և խաղցր և ախորժ թըւէր ճոցա, որք զայս գործէին։ Բայց մարմնական և երկրաւոր աճգիտաբար է գործն ճոցա։ Վասն այսորիկ կամեցաք մեք ճոցա գրել խրատս և ցուցանել ճոցա ճանապարհ...»[47]։ Մանկտավագը, ըստ Երզնկացու, պետք է լինի բարի և առաքինի վարքով, ժրաջան, ուշիմ և այլն։

[46] «Բանասեր», Փարիզ, 1903, էջ 27։
[47] Մատ, ձեռ. № 2783, էջ 7բ։

Մանկտավագ լինելու համար պարտադիր է չորս պայման. նախ՝ գիտություն, որովհետև գիտությունն, ըստ մատենագրի, «լուսատուս ճրագի նման է, որ լուսաւորէ զմարդիկ, որ ի տանն իցեն։ Իսկ անգէտն նման է կուրի, որպէս ասէ Քրիստոս, «թէ կուր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է, և երկոքեանն ի խորխորատ անկանին»։

Երկրորդ՝ մանկտավագը պարտավոր է ունենալ սուրբ և օրինակելի վարք, «զի ի սուրբ վարուցն աւելի ուսանին տեսողքն, քան թէ ի բանիցն»։

Երրորդ՝ «պիտոյ է մանկտաւագին բարի գործք. որ լինի ողորմած, մարդասէր, զի մարդասէրն զամենայն մարդ շահի, և ողորմած բարուքն, որպէս զհայր և զծնօղ ժողովարան լինի անտիրաց և օտարաց, ողորմած, որ խղճայ և ողորմի աղքատաց և կարօտելոց, որոց և այրեաց։ Եւ այնոցիկ, որ զըրկած են յառաքինութենէ և ի գիտութենէ, իբրնամ տանի նոցա և ողորմի ցաւակցաբար»[48]։

Եվ, վերջապես, չորրորդ՝ մանկտավագը պարտավոր է հնազանդ լինել եկեղեցուն և նրա խորհրդով առաջնորդվել[49]։

Այս ամենից դժվար չէ եզրակացնել, որ մանկտավագները, անկախ այն բանից, թե նրանք եղբայրության անդամ են եղել թե ոչ, ունեցել են սոցիալական և տնտեսական որոշակի ուժ և նշանակալից դեր են խաղացել հասարակության կյանքում։

Ի միջի այլոց, որ մանկտավագությունը շարունակել է իր աշխարհիկ ընթացքը նաև Երզնկացու ժամանակներում, վկայվում է «Կրկին կանոնքի» վերնագրում ևս. «...Կրկին կանոնք և խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց, որք մարմնաւոր և երկրաւոր խորհրդով վարեն զկեանս աշխարհիս, զորս և մեք յաստուածային աւրինացն և ի սուրբ գրոց ուղղեմք զայնպիսիսն...»։

Վերն արդեն ասացինք, որ նախորդ ուսումնասիրողները մանկտավագությունը անպայման կապում են Երզնկայի «եղբայրության» կամ հետագայում ստեղծված «Կորինճվորաց եղբայրությունների» տիպի միաբանությունների հետ։ Սակայն այն հանգամանքը, որ մանկտավագությունը ավելի հնուց է գալիս, քան վերը նշված միաբանությունները, ինչպես և այն փաստը, որ մանկտա-

[48] Անդ, էջ 8ա—8բ։
[49] Անդ, էջ 8բ։

վագ, հետևաբար և՝ մանկտավագություն է եղել նաև գյուղական վայրերում, որտեղ հազիվ թե հնարավոր լիներ նման միաբանության գոյությունը, մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ մանկտավագությունը ծնունդ է ոչ թե զարգացած ավատատիրական հարաբերությունների, այլ ավելի վաղ շրջանի:

Երզնկացու մի ակնարկից շատ որոշակի երևում է, որ նույնիսկ իր շրջանում պարտադիր չի եղել մանկտավագի կամ մանուկի միաբանության անդամ լինելը: Նկարագրելով մանկտավագի կողմից մանուկին գոտի տալու արարողությունը՝ նա գրում է. «Յորժամ գոտի տայ մանկտաւագն որդեգրին, թէ ի միաբանն են, յառաջ զմիաբանից սահմանն կարդան, որ լըսէ և հարցանեն զնա, թէ՝ հնազա՞նդ ես օրինացս, և թէ նա հաւնի և ասէ՝ հնազանդեմ, ապա ասէ մանկտաւագն...»[50]: Այստեղից հասկանալի է, որ Երզնկացու հետագա ասելիքը վերաբերում է ինչպես միաբանության մեջ եղող մանկտավագին ու մանուկին, այնպես էլ միաբանությունից դուրս եղողներին: Հետևաբար միայն մանկտավագի գոյությունը կամ հիշատակումը դեռևս հիմք չի տալիս ասելու, թե տվյալ վայրում գոյություն է ունեցել միաբանություն:

Առավել ևս, այժմ հնարավոր չէ մանկտավագությունը ուղղակի կապել Երզնկայի «Եղբարց միաբանության» կամ նման կազմակերպությունների հետ, թեև չի բացառվում, որ մեծ հեղինակություն ունեցող մանկտավագները լինեին եղբայրությունների անդամներ կամ ղեկավարներ: Սակայն, մանկտավագության նկարագիրը առավել որոշակի դարձնելու համար, հարկ է պարզել, թե որոնք են նրանց հիմնական պարտականությունները:

Այստեղ ուշադրության պետք է առնել այն հանգամանքը, որ Երզնկացին, եթե չասենք զուգահեռ է անցկացնում, ապա ընդհանրություններ է նկատում կնքահոր և մանկտավագի պարտականությունների միջև:

«Էէ և այս սովորութիւն քրիստոնէից, որ զաստուածասէր և զբարի քրիստոնեայն կընքահայր առնեն և որդային հաւատոյն երաշխաւոր առ Աստուած: Եւ յորժամ տղայն մեծանայ՝ պարտական է, որում երաշխաւոր կացեալ է, որ զհաւատն ուսուցանէ տայ ի նա ուսուցանելովն և վճարէ և ի պարտուց ելանէ:

Արդ, թէպէտ ամենայն շնորհք յեկեղեցին բաշխի ձեռամբ քահանայիցն, բայց որ բարեգործ և սուրբ քրիստոնեայք են, նոցա արժան է, որ լինին մանկտաւագ, և որպէս հայր և ծընող զիայ ի հոգեւոր որդիսն և յորդորեն զմանկունսն յամենայն գործս բարիս, և բանիւ և գործով առաջնորդին նոցա, և տան գոտի սրբասէր մանկանցն»[51]:

Սակայն, եթե այս հատվածը մի կողմից՝ մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ մանկտավագները իրենց վրա են վերցրել նաև կնքահոր պարտականությունը, մյուս կողմից՝ ավելի որոշակի է դարձնում մանկտավագի՝ դեպի որդեգիրն ունեցած աշխարհիկ պարտականությունները, քանի որ, ինչպես հայտնի է, կնքահոր հիմնական պարտականություններն առավելապես իր որդեգրի հոգևոր, բարոյական դաստիարակության էին վերաբերում:

Բացի այդ, մանկտավագը հանդես է գալիս ոչ միայն որպես առանձին անհատների, այլև մանուկների, երիտասարդների ամբողջ խմբերի հոգևոր և աշխարհիկ դաստիարակ: Ըստ որում նույն մանկտավագի որդեգիրները կոչվել են եղբայրներ: Դա պարզ երևում է մանկտավագի կողմից նոր որդեգիր ընդունելու ծիսակատարությունից: Երբ մանկտավագը վերջացնում է իր խրատները և գոտի է կապում նորընծա մանուկի մեջքին ու շնորհավորում նրան, բոլոր եղբայրները պարտավոր են ասել «Ամէն և եղիցի»:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մանկտավագների, որպես երիտասարդ մարդկանց խմբերի ղեկավարների ու դաստիարակների, տված խրատները: Վերջիններս բացահայտում են այն հսկայական ուշադրությունը, որին արժանանում էր դաստիարակվող երիտասարդ սերունդը միջնադարյան Հայաստանում:

Այդ խրատները տոգորված են ժամանակաշրջանի համար առաջադիմական գաղափարներով: Մանկտավագը պարտական է մանուկներին ուսուցանել մարդասիրություն, աշխատասիրություն, խաղաղասիրություն և այլն. «Յորժամ գոտի տայ մանկտաւագն որդեգրին... ասէ... Ով որդեակ, պատւիրեմ քեզ ԺԵ (15) բանս, որոց առաջին այս է՝ Սիրեա զԱստուած, որ քո արարիչ է, և ապա վասն Աստուծոյ սիրոյն՝ զմարդիկք սիրեա, որ ընկերք և եղբարք են...: Քո ծնողացն հնազանդ կաց և պատւեա զնոսա, զի յետ Աստուծոյ մարդոյն երախտաւոր ծնաւղքն են: Սիրեա զաշխատիլն, որ ի քո վաստակոցն դու ուտես և այլոց տաս...: Ընդ ամենայն

[50] Անդ, էջ 10ա:

[51] Անդ, էջ 8բ— 9ա:

մարդոյ գիտաղաւորիւն կալ և մի՛ լինիր կուասէր, զի խաղաղասէրն որդի Աստուծոյ է...։ Որչափ կարես առանց կնոջ կալ, զանձն քո սուրբ պահեա յօտար մեղաց։ Եւ թէ կամ[իս] ամուսնանալ՝ քեզ օրինաւք և հալալ կին առ աւրհնութեան պսակով...։ Մի՛ սիրեր գինին և արբեցութիւն...։ Հետ վատ և մեղսասէր ընկերաց մի շրջիր, զի թէ մարդ ի գողոյն և ի պիսակոտէն և ի բորոտէն և յայլ յայսպիսի վատ ցաւոց գարշի և ի գաս կենայ և վախէ, թէ փոխիցի յինքն, քանի՞ աւելի մարդկացն որ զմեղաց բորն ունին յիւրեանց հոգին, ի գաս պիտի կենալ և ի հետ սրբոցն և իմաստնոցն շրջիլ, ջանալ և նոցա նմանիլ...»[52]։

«Զկարիս ընկերին քեզ համարեա, լաց ընդ լացողսն և խրնդա ընդ խրնդացողսն»[53]։

Այնուհետև մանկտավագը դարձյալ հորդորում է իր սանին լինել աշխատասեր. «Անգործ և պարապ մի կենար, զի պարապ մարդն տեղի սատանայի է... և Տէրն ուսուցանէ՝ [աղաւ]թն հայցել զհաց մեր [և] ոչ զայլոց, այս է, որ քո հալալ աշխատանացն և ի քրտանցն եղիցի, և [ոչ] զըրկանաց կամ ի գողու[թեանց] և ի վաստակաց օտար[աց]...»[54]։

Միայն այն բանից հետո, երբ այս ամենը մանուկը հանձն է առնում կատարել, մանկտավագը իր ձեռքով գոտի է կապում նրա մեջքին՝ ասելով. «Աստուած շնորհաւոր առնէ»։ Ապա, ինչպես ասվեց, օրհնում են նաև եղբայրները, որով և ավարտվում է ծիսակատարությունը։

Ինչ վերաբերում է 1280 թ. Երզնկայում կազմակերպված եղբայրությանը, ինչպես և ավելի ուշ հանդես եկած կտրիճվորաց միությունները, ապա, անկասկած, հայ ժողովրդի լայն զանգվածների մեջ խոր և մեծ հետք թողած մանկտավագությունը որոշակի ազդեցություն է ունեցել այդ կազմակերպությունների վրա, բայց առ այսօր մեր ձեռքի տակ եղած բոլոր փաստերը հուշում են, որ վերջիններս զարգացած ավատատիրության արգասիք էին և հետապնդում էին ոչ միայն բարոյական ու մտավոր շահեր, այլ նաև սոցիալ-քաղաքական նպատակներ, ինչպես այդ ճշտորեն նկատում են Լ. Խաչիկյանը և նրան հետևող գիտնականները։

Անշուշտ, պետք չէ մոռանալ, որ միջնադարում նույն երևույթը

---

52 Անդ, էջ 10ա-բ։

53 Անդ, էջ 11ա։

54 Անդ։

անգամ Հայաստանի առանձին շրջաններում հաճախ հանդես է գալիս ամենատարբեր առանձնահատկություններով, սակայն մի բան պարզ է, որ ավատատիրության ներսում մտնելով ճանաչեր քիչ թե շատ հզորացող շերտերը ամենուրեք պետք է ձգտեին սոցիալական ուժ դառնալու։ Այս իմաստով Երզնկայի եղբայրությունը իրոք որ ուղղակի առնչության մեջ կարող է մտնել ինչպես արևելյան «Ախի» կոչված կազմակերպությունների, այնպես էլ հայկական Կտրիճվորաց միությունների հետ։

Ավելին, պարզվում է, որ Երզնկայի եղբայրությունը շատ բաներով հիշեցնող կազմակերպություններ են եղել նաև Եվրոպայում։ Այս առթիվ ուշագրավ է 1270 թ. Լուվրում կազմակերպված միությունը, որի մասին ֆրանսիացի նշանավոր գիտնական Բլոկը գրում է. «Հոգևոր պահանջները բավարարելու հետ միասին եղբայրությունները հնարավորություն էին ընձեռում միավորել մարդկանց՝ միասնական ձգտումով համատեղ գործողություններին, իսկ որոշ դեպքերում՝ անգամ քողարկում էին հեղափոխական դիտավորությունները»[54ա]։ Միությունը ոչ միայն հոգ էր տանում եկեղեցիներ կառուցելու, հարկեր հավաքելու, ջրհորներն ու ճանապարհները բարեկարգ վիճակում պահելու ուղղությամբ, այլև պահպանում էր գյուղի շահերը ավատատերերից ու արքայական պաշտոնյաներից։

Ի դեպ, տեղին է նշել, որ միջնադարի պատմությունը լի է տարբեր բնույթի միություններով ու եղբայրություններով, սկսած քաղաքական-տնտեսական մեծ խնդիրներ հետապնդող խաչակրաց հզոր օրդեններից մինչև առանձին վանքերին կից հոգևոր միությունները, սակայն նրանց մեջ առանձնանում են նաև այնպիսիները, որոնք չնայած իրենց տեղայնությանը, առավելապես աշխարհիկ շահեր էին հետապնդում։ Հենց այդպիսի մի կազմակերպություն պետք է դիտել Երզնկայի «Եղբարց միաբանութիւնը»։

Ինչ վերաբերում է Կտրիճվորաց միություններին, չպետք է մոռանալ, որ վերջիններս, Երզնկայի եղբայրության հետ նմանություններ ունենալով հանդերձ, պետք է ունենային նաև լուրջ տարբերություններ, և դա ոչ միայն այն պատճառով, որ XIII դա-

---

54ա М. Блок, Характерные черты французской аграрной истории, М., 1957, стр. 231.

րում եկեղեցին նոր էր սկսել իր հովանավորությունը տարածել եղբայրությունների վրա, այլև այն պատճառով, որ գաղթաշխարհում, օտար միջավայրում, որևէ ազգային ձեռնարկ կամա թե ակամա պետք է ավելի սերտ առնչվեր ու համագործակցեր հայ եկեղեցու հետ:

Վերը նշվեց, որ, ըստ Երզնկացու, մանկտավագությունը սկիզբ է առնում վաղ ժամանակներից, ավելին՝ նա շատ որոշակի ասում է նաև, որ եկեղեցին սկզբնապես պայքարել է այդ երևույթի դեմ, որը շատ խորն է արմատացած եղել ժողովրդական զանգվածների մեջ, և չկարողանալով այն վերացնել, փաստորեն դիմում է պիջումների՝ աշխատելով եկեղեցու գաղափարական ազդեցությունը տարածել նրա վրա: Այստեղից ինքնին հարց է առաջանում. պատմական ո՞ր շրջանի հետ է կապվում մանկտավագության ծնունդը: Արդեն Երզնկացու ակնարկը հուշում է, որ այն ծնունդ է նախաքրիստոնեական շրջանի: Նույնիսկ որոշ հանգամանքներ թելադրում են այդ երևույթի ակունքները փնտրել համայնական-տոհմատիրական հարաբերությունների քայքայման և ավատատիրական հարաբերությունների առաջացման շրջանում: Յավոք, ձեռքի տակ չունենալով հայ ժողովրդի պատմության այդ շրջանին վերաբերող համապատասխան նյութեր, ստիպված ենք բավարարվել ընդհանուր պատմագիտության և բանասիրության ընձեռած հնարավորություններով:

Քննվող հարցի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում տարբեր ժողովուրդների տոհմատիրական հարաբերության շրջանի վերաբերյալ պահպանված մի շարք տեղեկություններ: Մասնավորապես խոսքը վերաբերում է տոհմատիրական հարաբերությունների շրջանում գոյություն ունեցած, այսպես կոչված, «Տղամարդկանց տան» հաստատությանը: Այն, անշուշտ, տարբեր ժողովուրդների մոտ տարբեր պատմական ժամանակաշրջաններում երևան է բերել մեծ տարբերություններ և առանձնահատկություններ՝ այդ բոլորով հանդերձ, սակայն, միշտ և ամենուր պահպանելով իրեն բնորոշ էականը: Այդ տներում է, որ համախմբվել են հասունության հասած ամուրի երիտասարդները:

«Բոլոր դեպքերում կարելի է հաստատել,— գրում է նշանավոր ազգագրագետ Վ. Պրոպպը,— որ արական բնակչության մի մասը, այսինքն՝ երիտասարդները, սկսած սեռական հասունացման շրջանից մինչև ամուսնությունը փոխադրվում են ապրելու հատուկ կառուցված մեծ տներում, որոնք ընդունված է անվանել «տղամարդկանց տուն», որտեղ նրանք ապրում են հատուկ ձևի կոմունաներով[55]:

Երիտասարդական կազմակերպությունների իրենց հիմնական պարտականություններից մեկը համարել են օտարների նկատմամբ հոգատարություն ցուցաբերելը ու նրանց հյուրընկալելը[56]: Հետաքրքիր է, որ նույն երևույթը նկատելի է նաև վերոհիշյալ կազմակերպություններում. «... այդ տները հաճախ ծառայել են իբրև օթևան եկվոր տղամարդկանց համար»[57]:

Կան նաև այլ ընդհանրություններ: Երկու դեպքերում էլ կազմակերպչյան անդամները կոչվել են եղբայրներ և պարտավոր են եղել խստորեն պահպանել եղբայրների և եղբայրության շահերը օտարների ոտնձգություններից: Ուշագրավ է նաև, որ որոշ հեղինակներ, ուսումնասիրելով ավստրալիական բնիկների նմանատիպ կազմակերպությունները, բացահայտել են, որ եղբայրությունները ունեցել են նաև ավելի փոքր միավորներ[58]: Իբրև ընդհանրություններ պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղած երիտասարդական կազմակերպությունների համար, կարելի է նշել հետևյալը. երիտասարդները ամուսնանալուց հետո ազատ էին եղբայրությունից դուրս գալու. ամենուրեք եղբայրություններն ունեցել են իրենց գլխավորները և այլն:

Այս ամենը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ ի դեմս մանկտավագների և միջնադարյան երիտասարդական կազմակերպությունների՝ մեր առջև հառնում են սոցիալ-քաղաքական նոր միջավայրում արմատական խոր փոփոխություններ կրած վաղնջական շատ ուշագրավ երևույթների վերապրուկները:

Ի վերջո ասենք, որ Երզնկացու գրած վերոհիշյալ խրատների առաջին հրատարակությունը նոր կարևոր նյութեր կտա վաղ շրջանի և միջնադարի պատմությամբ զբաղվող մասնագետին՝ ավելի խորանալու քննարկվող հարցերի ուսումնասիրության մեջ:

Դ. ԵՐԶՆԿԱՑՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ ԹՂԹԵՐԸ

Արժեքավոր են Հովհաննես Երզնկացու խրատական նամակ-

---

[55] В. Я. Пропп, Исторические корни волшебной сказки, 1946, Л., стр. 98.

[56] Տե՛ս Լ. Խաչիկյան, *Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանության» կանոնադրությունը (1280)*, «Բանբեր մատենադարանի», № 5, էջ 368:

[57] В. Я. Пропп, Исторические корни волшебной сказки, стр. 98.

[58] Նշվ. էջ 103:

թղթերը՝ ուղղված հայ իշխաններին։ Մինչև վերջերս հայագիտությանը հայտնի է եղել երզնկացու գրչին պատկանող խրատական միայն մեկ «Թուղթ», որը պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանի № 848 ձեռագրի 107ա—121ա էջերում՝ սկզբից և վերջից թերի։

Սրան առաջին անգամ անդրադարձել է բանասեր Ա. Սրապյանը և գիտական շրջանառության մեջ դրել՝ վերնագրելով «Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի» ու քաղվածաբար մի քանի հատված հրատարակել իր «Հովհաննես Երզնկացի» և «Կոստանդին Երզնկացի» գրքերում[59]։

Երզնկացու խրատա-կանոնական երկերի ուսումնասիրության կապակցությամբ պրպտումներ կատարելիս, մենք հանդիպեցինք մատենագրի՝ հայ իշխաններին ուղղված մեկ այլ թղթին՝ հետևյալ վերնագրով. «Թուղթ ի Յովհաննէս վարդապետէ առ իշխանսն Հայոց Ռուբինեանց, որ ի գահ Կիլիկեցոցն, բան խրատուաւգտակար և պիտանի»[60]։ Այն գտնվում է մատենադարանի № 3439 ձեռագրի 75բ—105բ էջերում։ Ձեռագիրը գրված է XVI դարում։

Առաջին հայացքից թվում է, թե այն ուղղված է կիլիկյան իշխաններին։ Սակայն բնագրի ուշադիր զննումն ու համեմատությունը № 848 ձեռագրում պահպանված թղթի հետ բերում են մի քանի հետաքրքրական հետևությունների։

№ 3439 ձեռագրում նամակն սկսվում է ողջույնի հետևյալ խոսքով. «Ի սուրբ լուսաւորչին ի գերեզմանէս և յանապատս սրբոց և յամենայն եկեղեցեացս, որ ի սուրբ լերինս, աւրհնութիւն և պահպանութիւն և ի նուաստ վարդապետի, ի Յովհանիսէ, Քրիստոսի սիրովն և կարաւտեալ ոգւով ողջոյն»։ Սրան մի փոքր անց հետևում է. «Ծանուցանեմ քեզ, զաստուածասէր հոգի այս աւուն, խոհեմամիտ և առաքինասէր հոգի վարդապետիս ձեր Ստեփանո[ս], որ այս քանի ժամանակ, որ առ մեզ էր ի սէր սուրբ Գրիգորի գերեզմանիս, նայ պատմել է զձեր բարութիւն, թէ որպէս քաջ հաւատով և սիրով, արիական սրտի պնդութեամբ, քրտամբ յոլովք և վաստակաւք ջանայք վասն այդ երկրիս բարութեան և հանգստեան և ի սէր ազատութեան սուրբ եկեղեցացդ»[61]։

Վերը բերված առաջին հատվածը հետաքրքիր է այն իմաստով, որ պարզում է, թե որտեղից է գրված նամակը։ Հանրահայտ է, Գրիգոր Լուսավորչի գերեզմանը, ըստ ավանդության, Երզնկայի շրջակայքում գտնվող Լուսավորչի կամ Սեպուհ լեռան վրա է։ Հետևաբար կասկած չի կարող լինել, որ Երզնկացին նամակը գրել է իր հայրենի եկեղեցց գավառից։

Երկրորդ հատվածում հատկապես ուշադրության են արժանի «զաստուածասէր հոգի այս աւուն» դարձվածը և Ստեփանոս վարդապետի անվան հիշատակությունը։

Արդեն թղթի խորագիրը հուշում է, որ Երզնկացին իր նամակը հղել է ոչ թե կիլիկյան մեկ, այլ մի քանի իշխանի՝ «առ իշխանսն Հայոց», և ահա «զաստուածասէր հոգի այս աւուն» դարձվածն էլ գալիս է հաստատելու, որ Ստեփանոս վարդապետը իր հայեցողությամբ այն պետք է հանձներ կիլիկյան իշխաններին՝ «այս աւուն»-ի փոխարեն դնելով համապատասխան իշխանի տիտղոսն ու անունը[62]։

Նկատի ունենալով, որ Երզնկացին իր նամակը որոշակի չի հասցեագրել որևէ իշխանի, այլ Ռուբինյան մի խումբ իշխանների, բնականաբար նա պետք է անվան տեղը բաց թողներ, բավարարվեր վերոհիշյալ ընդհանուր դարձվածներով և անցներ բուն խրատների շարադրմանը։ Սակայն բնագրում այդպես չէ։ Վկայակոչված հատվածին անմիջապես հաջորդում է.

«Վասն որոյ և ես նուաստս Յոհաննէս վարդապետ, հայրենի նախնեաւք ձեզ զաւառական և հոմազգի և մտերիմ սիրով հուպ և մերձաւոր սրտիւ, թէպէտ տարակացեալ տեղեաւ» հատվածը[63],

---

[59] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 15—16, Կոստանդին Երզնկացի, Երևան, 1962, էջ 20։

[60] Մատենադարանի ձեռագրաց ցուցակում այն վերագրվում է ուրիշ Հովհաննես վարդապետի («Ցուցակ ձեռագրաց», էջ 1012 և 1503), սակայն նրա հեղինակը Պլուզն է։

[61] Մատ, ձեռ. № 3439, էջ 76ա-բ։

[62] Անշուշտ այս Թուղթը, ինչպես և խրատական մյուս թղթերը, պետք է կարդացվեր ոչ միայն հասցեատեր իշխանի, այլև շատ ուրիշների կողմից, եթե այն ստանար իշխանի հավանություն։ Այդ բանում համոզվելու համար բավական է հիշել միջնադարյան մեկ այլ նշանավոր գործչի՝ Վարդան Այգեկցու նամակը, ուղղված Պաղտին իշխանին։ Այգեկցին, բացատրելու համար նամակի պարզ, «ռամիկ» լեզուն, գրում է. «Գիտեմ, որ դու խմաստուն ես՝ զներքին կամիս և զխորինն։ Բայց ես կարի պարզեցի զբառ...», որպեսզի շատերը «լսիցեն և օգտեսցին ի սմանէ և զի մի՛ ձանձրացին լսողքն» (Մատ. ձեռ. № 1880, էջ, 365)։

[63] Մատ, ձեռ. № 3439, էջ 76բ։

որը, ի դեպ, կա նաև № 848 ձեռագրում պահպանված Թղթում և հաջորդում է սկզբի այն պարբերությանը, որտեղ հարազատորեն արտացոլված են 1276 թ. Երզնկայում տեղի ունեցած ողբերգական իրադարձության արձագանքները։

Այնուհետև նա ավելացնում է նաև «Ես Նուաստս Յոհաննէս վարդապետ, հայրենի նախնեաւք ձեզ գաւառական և հոմադիմ» հատվածը, որը ոչ միայն չի հակասում № 848 ձեռագրի սկզբին, այլև նրա տրամաբանական շարունակությունն է։ Ավելին, ինչպես վերը ասվեց, այս հատվածից նույնիսկ երևում է, թե Երզնկացին ոչ միայն գավառակից, այլև ազգակից է տեր Սարգսին և Հովհաննես իշխանին, որից սերում են Երզնկայի իշխաններն ու հետագա արքեպիսկոպոսները։

Մինչդեռ նույն հատվածը, իբրև կիլիկյան իշխաններին հասցեագրված նամակի շարունակություն, ուղղակի հակասության մեջ է գտնվում այդ Թղթի հետ։ Ինչպես նշվեց, Երզնկացին Ռուբինյան իշխաններին ուղղած իր նամակը գրել է Երզնկայում՝ հայրենի գավառում, այնինչ այս հատվածում պարզ ասվում է, որ նա «տարակացեալ է տեղեաւ», այսինքն՝ հեռու է գտնվում հայրենի երկրից ու գավառից՝ Երզնկայից, ինչպես և իր հոմադիմ իշխանից։ Եթե այս տողերը վերագրելու լինենք Ռուբինյաններին, ապա կստացվի, թե Երզնկացին գավառակից է կիլիկյան իշխաններին, այսինքն՝ կիլիկեցի է և նրանց ազգական։

Այս փաստերն արդեն, կարծում ենք, մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ № 3439 ձեռագրում պահպանվածը մեկ նամակ չէ՝ ուղարկված Կիլիկիայի Ռուբինյան իշխաններին, այլ երկու նամակների տարբեր հատվածների միակցում։

Սակայն բերենք մեր ասածը հաստատող այլ փաստեր ևս։ № 3439 ձեռագրի 77բ և № 848 ձեռագրի 107բ էջերում կա հետևյալ հատվածը. «Որբ եմք այսաւր ազգս Հայոց ի խնամածու և հայրանման իշխանաց։ Անտէր և անայցելու են եկեղեցիք Հայաստանեաց ի վերակացու տէրանց և յիմաստուն առաջնորդաց»։

Արդ, որքանո՞վ կպատշաճեին այս խոսքերը կիլիկյան հայ իշխաններին, այն էլ՝ «Ռուբինեանց, որ ի գահ Կիլիկեցոցն են», մանավանդ որ, եթե ոչ իրական, ապա բարոյական իմաստով կիլիկյան թագավորները թագավորներ էին բոլոր հայերի համար։ Հիշենք, որ նույնիսկ ամենածանր պայմաններում թագավորներին և կաթողիկոսներին գրված նամակներում խստորեն պահպանվում էր հարգալից տոնը, և նրանք դիտվում էին իբրև երկրի և ժողովրդի հայրեր։ Այս առիթով հեռու գնալու հարկ չկա, որովհետև բազմաթիվ ձեռագրերում պահպանվել են թագավորներին, կաթողիկոսներին և իշխաններին ուղղելիք նամակների ձևեր, որոնց մեծ մասի հեղինակը հավանաբար հենց Հովհաննես Երզնկացին է[64]։ Այնինչ վերևում բերված տողերը միանգամայն պատշաճ էին դրելու իր հայրենի գավառի մտերիմ իշխանին։

Այդ հատվածից մի փոքր հետո Երզնկացին, ողջունելով եկեղյաց գավառի իշխանության վերահաստատումը, գրում է. «Այլ կարծեմ և յոյս ունիմք առ Աստուած, թէ զանձրև քաղցրութեան խնամոցն իւրոց ցաւղէ իբրև ի գաւազանէ առնակ յազգս և յերկիրս մեր և ի հոտոյ ջրոյ ծածկէ յառաջին արմատոյն իշխանութեանն գաւազան։ Որ և նշան գալարութեան շառաւեղին երևեցաւ յայմ գաւառի, զոր օրհնեաց սուրբն Գրիգոր Լուսաւորիչն աջովն սրբոյն Յովանու Կարապետին»[65]։

Նախ՝ հազիվ թե Երզնկացին այս ոճով խոսեր արդեն ավելի քան մեկևկես դար գոյություն ունեցող Կիլիկյան թագավորության մասին, իբրև միայն «նշան գալարության շառաւեղին»։ Եվ, վերջապես, ամենակարևորը՝ Հովհաննես Երզնկացին չէր կարող իր հայրենի եկեղյաց գավառի հետ կապվող սուրբ ավանդությունները վերագրել Կիլիկիային։ Խոսքը վերաբերում է նամակում հիշատակված գավառի օրհնությանը «աջով սրբոյն Յովանու Կարապետին», որը, ըստ ավանդության, հենց եկեղյաց գավառն է, որտեղ, Երզնկացու վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը մատուռ է կառուցում Հովհաննու Կարապետին նվիրված[66]։

Մեր վարկածի օգտին է խոսում նաև հետևյալը. Ռուբինյան իշխաններին ուղղած Թղթում հենց սկզբից Երզնկացին հայտնում է, որ Ստեփաննոս վարդապետից լսել է իշխանի բարության և եկեղեցասիրության մասին. «Ծանուցանում քեզ, զաստուածասէր հոգի այս աւուն, խոհեմամիտ և առաքինասէր հոգի վարդապետիտ ձեր Ստեփաննոս, որ այս քանի ժամանակ, որ առ մեզ էր ի սէր սուրբ Գրիգորի գերեզմանիս, նայ պատմել է զձեր բարութիւն, թէ որպէս քաջ հաւատով և սիրով, արիական սրտի պնդութեամբ, քրտամբք յոլովք և վաստակաւք ջանայք վասն այդ երկրիս

64 Մատ, ձեռ. № 848։

65 Անդ, էջ 108ա։

66 Նույնը Երզնկացին վկայում է նաև Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողում։ Տե՛ս «Սոփերք հայկականք», ե, Վենետիկ, 1853, էջ 136—137։

բարուքեան և հանգստեան և ի սէր ազատութեան սուրբ եկեղեցեացդ»[67]:

Նմանատիպ գովեստներ ենք գտնում նամակի և մի այլ մասում. «Լուաք վասն քո, որ եկեղեցեաց սիրող ես և առաջնորդաց պատուաւոր, արդարադատ և իրաւարար, առաքինաց և գիտնոց մեծարող և ընդունայուր: Ու բիւրապատիկ գոհութիւն տուաք Աստուծոյ»[68]: Հազիվ թե միևնույն և մի փոքրիկ նամակում, որի հիմնական մասը խրատներն են, հեղինակը ինքն իրեն երկու անգամ կրկներ՝ հայտնելու համար, թե ինչ է լսել իշխանի մասին:

Մի ուրիշ հանգամանք ևս. եկեղյաց իշխանին ուղղված խրատները հիմնականում կան, երբեմն նույնիսկ բառացի, «Ամենայն մարդ, որ ընդ իշխանութեամբ է» սկսվածքով[69] նշանավոր ճառում, որը Երզնկացին, ի դեպ, կարդացել է Կիլիկիայում, Ռուբինյան իշխանների համար: Հազիվ թե նույն խրատները Երզնկացին երկրորդ անգամ հղեր նրանց:

Այս ամենը, կարծում ենք, մեզ որոշակի հիմք է տալիս պնդելու, թե № 3439 ձեռագրում պահպանվել և մեզ են հասել Հովհաննես Երզնկացու գրչին պատկանող երկու տարբեր նամակ, ընդ որում եկեղյաց իշխանին ուղղված Թուղթը, որ ինչպես նշվեց, № 848 ձեռագրում թերի է և՛ սկզբից, և՛ վերջից, այստեղ շարունակվում և ավարտվում է գեղեցիկ վերջաբանով՝ ընդհանրապես հատուկ Երզնկացուն:

Անջատելով միմյանց կցված երկու տարբեր բնագրեր՝ փորձենք որոշել նրանց գրության ժամանակն ու հասցեատերերին:

Ա. Սրապյանը, նկատի ունենալով, որ եկեղյաց իշխանին ուղղված նամակում ակնարկվում են Երզնկայի վերոհիշյալ հայտնի անցքերը, ենթադրում է, թե այն պետք է գրված լինի 1280 թ. հետո, երբ Երզնկայում վերահաստատվեց հայկական իշխանությունը, և երբ Երզնկացին, իրոք, գտնվում էր «տեղեաւ տարակացեալ», այսինքն՝ Կիլիկիայում:

Մինչդեռ, մեր կարծիքով, նամակը գրվել է մինչև 1280 թվականը: Բանն այն է, որ Սարգիս արքեպիսկոպոսը և Հովհաննես իշխանը զոհվել են ոչ թե 1279 թ., այլ 1276 թ., և Գրիգորիս իշխանին ու Ներսես արքեպիսկոպոսին Ապաղան «մեծարում» է

[67] Մաշտ., ձեռ. № 3439, էջ 76բ:
[68] Մաշտ., ձեռ. № 848, էջ 108ա:
[69] Մաշտ., ձեռ. № 2173, էջ 86:

1277 թվականին: Հենց այս ժամանակ էլ պետք է որ գրված լինի Երզնկացու նամակը: Հայտնի է, որ այդ անցուդարձերից հետո Երզնկացին մեկնում է Կիլիկիա, որտեղից և, ամենայն հավանականությամբ, գրվել է նամակը:

Վերը ասացինք, որ ինչպես Սրապյանի, այնպես էլ Քյուրտյանի համար Երզնկայի իշխանության վերահաստատման վերաբերյալ միակ աղբյուրը եղել է Զամչյանի հաղորդածը: Քյուրտյանը նշում է, որ Ապաղա խանի կողմից Երզնկայի հայկական իշխանության վերահաստատման մասին, բացի Զամչյանի հաղորդածից, իրեն ոչինչ հայտնի չէ: Ա. Սրապյանը իրավացիորեն Զամչյանի հաղորդածը հաստատող փաստ է դիտում հենց եկեղյաց իշխանին ուղղված Երզնկացու Թուղթը:

Բարեբախտաբար ստորև բերվող նորահայտ տվյալները ոչ միայն անառարկելի են դարձնում տեր Սարգսի և Հովհաննես իշխանի սպանությունից հետո Երզնկայում նրանց ժառանգների կողմից հայկական իշխանության շարունակումը, այլև որոշ մանրամասներ են ավելացնում:

Զմմառի վանքի № 499 ձեռագրում պահպանվում է մի անանուն ժամանակագրություն, որտեղ բավական հետաքրքիր տեղեկություններ են բերված Երզնկայի այս շրջանի քաղաքական պատմության վերաբերյալ, ի թիվս որոնց նաև հետևյալը.

«Ի ՉԻԸ (1276) սպանին զՏէր Սարգիսն յԵզնկան և զորդի նորա զպարոն Յովհաննէսն և ԼԸ հոգի այլ աղուհացի միջոցն»[70], իսկ հաջորդ տարին «Ի ՉԻԶ (1277) եկին ի Հոռոմք եղբայրք Ապաղային[71] Մանկու Տամուրն և Չնքշին բազում հեծելովք, յետոյ զայ և ինքն Ապաղայն յԵզնկան և մտանէ ի սուրբ Կաթուղիկէն և զթով հարցանէ զպատճառ սպանման Տէր Սարգսին, և մեծարէ զթոռունս նորա և երթայ մինչև ի յԱլաւատան և տեսանէ զկատարումն զօրացն: Եւ դարձաւ յետս»[72]:

Ստեփանոս Օրբելյանը, այս դեպքերի մասին գրելիս, նույնիսկ հայտնում է այն ոճրագործ թուրքերի անունները, որոնք ամարդի ձևով սպանել են տեր Սարգսին և Հովհաննես իշխանին. «Յայսմ ամի (ՉԻԸ) սպանաւ ի տաճկաց մեծ արքեպիսկոպոսն էզնկայիս

[70] Ա. Վ. Քեշիշյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 49:
[71] Բնագրում՝ Ապագային:
[72] Անդ, էջ 499—500:

տէր Սարգիս և որդին իւր և այլ քահանայք, որոց գլխաւորքն՝ Տուխարն և Ջալապին։

Եւ Ապաղայն ի Հռոմք գնաց և վրէժխնդիր եղև արեան նորա, և բազում ամիրայք էապան. և ընկիկիտա և զնարբերդոյ երկիրն աւերեաց»[73]։

Նույն իրողությունը մեկ անգամ ևս հաստատվում է Երուսաղեմի № 3392 ձեռագրով (1280), որտեղ հիշատակվում են Հովհաննես իշխանի որդիներ Ներսեսն ու Գրիգորիսը, առաջինը՝ իբրև արքեպիսկոպոս, իսկ երկրորդը՝ գավառի իշխան.

«Արդ գրեցաւ սա ի մայրաքաղաքն չեզնկայն, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին կաթողիկէ եկեղեցոյն, զոր շինեաց տէրն Սարգիս արհիական եպիսկոպոսն և բարեպաշտաւն որդի Յոհաննէս։ Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԻԹ (1280), թագաւորութեանն Լևոնի բարեպաշտի, որուոյ Հեթմոյ, և ի հայրապետութեանն տեառն Յակովբայ, և յարհիական եպիսկոպոսութեան տեառն Ներսիսի՝ թոռին տեառն Սարգսի և աստուածասէր եղբաւր նորին՝ պարոնին Գրիգորիսի, և յաշխարհակալութիւն Ապաղայ խանին, որուոյ Յուլայուին...»[74]։

Բերված փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ Երզնկացու նամակն ուղղված է Երզնկայի աշխարհիկ ու հոգևոր նոր տերերին՝ Գրիգորիս իշխանին և նրա եղբորը՝ Ներսես արքեպիսկոպոսին։

Կիլիկյան իշխաններին ուղղված Թղթի հասցեատերերին, որ մի քանիսն են, դժվար է որոշել, որովհետև բնագրի մի չնչին մասն է միայն մեզ հասել։ Հնարավոր է, որ ի թիվս այլ իշխանների, խրատական Թղթի մի օրինակ էլ նախատեսվեր հանձնել «գահակալ»-ներին, այսինքն՝ Լևոն Բ թագավորի որդիներ Հեթումին և Թորոսին, որոնք Կիլիկիայի փաստական գահակալներն էին, եթե, մանավանդ, նկատի ունենանք, որ իբրև թագաժառանգ Հեթումը հաջորդել էր Լևոնին, բայց հրաժարվել էր թագ ընդունելուց և կառավարում էր իբրև գահակալ իշխան իր եղբոր հետ։ Ի միջի այլոց, ինչպես Հեթումը, այնպես էլ Թորոսը մոտ անձնավորություններ էին Երզնկացուն, որի ձեռքով մի քանի տարի առաջ օրհնություն և ապաշխարական տիպարոս էին ստացել վերջինիս Կիլիկիայում եղած ժամանակ։

[73] Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հատ. 1, Երևան, 1951, էջ 44։

[74] Ձեռագիր Երուսաղեմի, № 3332։ Հիշատակությունը վերցրել ենք Լ. Ս. Խաչիկյանի Երուսաղեմի մատենադարանից բերած անտիպ նյութերից։

Ինչ վերաբերում է այդ Թղթի գրության ժամանակին, ապա կարելի է ասել հետևյալը.

Նամակում, ինչպես ասացինք, հիշատակվում է Կիլիկիայից եկած ոմն Ստեփանոս վարդապետ, որը իր մեր Գրիգոր Լուսավորչի գերեզմանի, սուրբ Լուսավորչի լեռներում է եղել և Կիլիկիայի գահակալ իշխանների մասին բարենպաստ տեղեկություններ է հաղորդել Հովհաննես Երզնկացուն։ Շատ հավանական է, որ այս Ստեփանոսը նույն Ստեփանոս Սկևռացի վարդապետը լինի, որը 1289 թ. վերջերին, Կոստանդին Բ Կաուկեցի կաթողիկոսի գահընկեցությունից հետո, ուղևորվում է Կիլիկիայից Հայաստան՝ հաղորդելու այդ լուրը արևելյան վարդապետներին, համոզելու և հրավիրելու նրանց մասնակից դառնալու նոր կաթողիկոսի ընտրությանը։ Հայտնի է, որ Ստեփանոս Սկևռացին Կիլիկիա վերադարձավ բավական ուշ, 1290 թ., երբ արդեն կատարված էր նոր կաթողիկոսի ընտրությունը։ Կաթողիկոս էր ընտրվել Ստեփանոս Երզնկացի կամ Հռոմկլայեցի Անապատական կոչվող վարդապետը։ Անշուշտ, հայ եկեղեցու համար այդպիսի մեծ նշանակություն ունեցող խնդրում աչքաթող չէին արվի նաև Երզնկայի արքեպիսկոպոսությունը և Լուսավորչի լեռների գիտնական վարդապետները, որոնց մոտ և այդ նպատակով գնացել էր Ստեփանոս վարդապետը։

Եթե այս ենթադրությունը ընդունելի լինի, ապա նամակը գրվել է 1289 թ. վերջերին կամ 1290-ի սկզբներին։ Այս առիթով նշենք, որ եթե հանձին եկեղեցի գավառի հոգևորականության Ստեփանոս Սկևռացին չգտավ համախոհներ օտար եկեղեցիներին զիջումներ անելու հարցում, ապա հանդիպեց ավելի համակիր տարրերի՝ քրիստոնեական ուժերի դաշինք ստեղծելու՝ ընդդեմ Թշնամի մահմեդականության։ Այս եզրակացության համար մեզ հիմք են տալիս այն գովեստները, որ հետագայում Երզնկացին ուղղում է Հեթումին՝ նկատի ունենալով վերջինիս ջանքերը քրիստոնյաներին համախմբելու ուղղությամբ[75]։

Երզնկացու «առ իշխանս եկեղեցւոյ» Թղթի հիմնական մասը խրատներն են, որոնց մի հատվածը բոլորովին նոր է, իսկ մյուսը, իր հիմնական մասով, կրկնություն է բազմաթիվ օրինակներով

[75] Երզնկացին քրիստոնեական ուժերի միասնության գաղափարը հիմնավորում է նաև պատմական-գաղափարական առումով. «Մի գոլով ի սմա և աւազանին ջուրքիւն ի մի մկրտութիւն լուսաւորութեան ձրիգ սուրբ Հոգոյն» (Մատ. ձեռ. № 2178, էջ 255բ)։

մեզ հասած «Արար Աստուած զմարդն հողի և մարմին» խրատաշարքի: Թղթի երկու օրինակները համեմատելով «Արար Աստուած» շարքի մի քանի հնագույն ու լավագույն ընդօրինակություններին հետ՝ նկատեցինք, որ նամակի երկու բնագրերում էլ (որոնք, ի դեպ, սկզբից մինչև վերջ, այսինքն՝ մինչև № 848 ձեռագրում բացակայող հատվածը, հարազատ շարունակվում են) խրատներն ավելի կատարյալ և ամբողջական են, քան նույն շարքի առանձին բնագրերը: Վերջիններս տարբեր ժամանակներում են համբագրված և համատոտված են մեծ մասամբ կամայականորեն:

Խրատների հետագա համբագրություններում բացակայում են այն մասերը, որոնք տրամաբանորեն կապվում են Թղթի հետ: Այսպես, օրինակ, դիմելով իշխանին՝ Երզնկացին ասում է. «Գրեմ քեզ խրատ իմաստութեան», ապա խորհուրդ է տալիս լսելու և հետևելու իր խրատներին: Հասկանալի է, հետագա համբագրողները պետք է բաց թողնեին այս հատվածը, քանի որ այս դեպքում խրատը չէր ուղղվում որևէ մեկին: Կարելի է ենթադրել, թե, «Արար աստուած» խրատների շարքը նախապես եղել է նկեղեայ իշխանին ուղղված Թղթի բաղկացուցիչ մասը և հետագայում միայն առանձնացվել է իբրև ինքնուրույն միավոր:

Ե. ԽՐԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԻ ԱՅԼ ԳՈՐԾԵՐ

Երզնկացու խրատական բնույթի գործերի երրորդ խմբին են պատկանում նրա մի շարք քարոզներն ու ճառերը: Ինչպես մատենագրի այլ գործեր, այնպես էլ քարոզներն ու ճառերը մեզ են հասել տարբեր դարերում կատարված բազմաթիվ ընդօրինակություններով: Դրանցից լավագույնը և հինը Մաշտոցյան մատենադարանի 2173 ձեռագիրն է, որը գրչագրված է հեղինակի ապրած ժամանակներին բավական մոտ՝ ԺԴ դարում, և ամփոփում է բացառապես նրա գրչին պատկանող 37 տարբեր ստեղծագործություններ: Եթե նկատի առնենք Երզնկացու այն հաղորդումը, թե ինքը բազմաթիվ ժողովածուներ է կազմել կամ կազմել է տվել իր և ուրիշների ստեղծագործություններից, ապա մեծ հավանականությամբ կարելի է եզրակացնել, որ № 2173 ձեռագիրը ընդօրինակված է Երզնկացու իսկ կազմած օրինակից:

Որ ժողովածուն կամ նրա նախօրինակը կազմված է եղել Երզնկացու կողմից, երևում է հետևյալ փաստից: «Յաղագս աղաւնոյն միամտութեան» քարոզում հեղինակը հայտնում է, որ

ինքն արդեն կարդացել է օձի խորամանկության մասին քարոզը, «որ ինչ յաղագս խորագիտութեան աւձին էր, ասացաւ մեզ ի խրատ զգօնութեան արարեալ աշխատասիրի ումեմն վարդապետի: Այժմ տեսցուք և զաղաւնոյն միամտութեան օրինակն...»[76]: Միևնույն ձեռագրում օձի խորամանկությանը վերաբերող քարոզը տեղադրված է ճիշտ հակառակը, այսինքն՝ «Յաղագս աղաւնոյն միամտութեան» քարոզից հետո, և հավանաբար ընդօրինակողի կողմից ավելացված է. «...և ասա ըստ կարգի եղեալ եղև ըստ պատշաճի»[77]: Ուրեմն կամ այս ձևով ինքը՝ Երզնկացին է խմբավորել, կամ նախօրոք եղել է նրա կազմած օրինակը, որի վրա կատարվել է փոքրիկ ճշտում: Սակայն անկախ այդ բանից, ինչպես Երզնկացու, այնպես էլ ընդօրինակողի վկայությունները խոսում են այն մասին, որ ժողովածուն կազմվել է որոշակի սկզբունքով և նյութերի ընտրությամբ[78]:

Ձեռագրում Երզնկացուց ամփոփված նյութերի մեծ մասը, անշուշտ, գրվել է տարբեր վայրերում, սակայն նրանց մի զգալի մասը գրված է Կիլիկիայում, ինչպես այդ մասին վկայում է հեղինակը:

Կիլիկիայում են կարդացվել այնպիսի նշանավոր քարոզներ, ինչպես՝ «Ի ճէ սաղմոսն, որ ասէ՝ Տէր, կարդացի առ քեզ. Յոհաննիսի Եղնկայեցւոյ ասացեալ յաւետեանն Դրազարկոյն», «Նորին Յոհաննէս վարդապետի Եղնկայեցւոյ ի տօնի ծննդեան և մկրտութեան Քրիստոսի, ասացեալ ի թագաւորանիստ քաղաքն ի Սիս, յաւետեան տօնախմբութեան», «Յոհաննէս վարդապետի ի քան մարգարէին Դաւթի՝ սքանչելի եղև գիտութիւն քո յիս. յԱնաւարզա խօսեցեալ», «Նորին Յոհաննէս վարդապետի Եղնկացւոյ, յորդորակ ասացուած ի եկեղեցւոյ, ի խնդրոյ Ստեփաննոսի վարդապետի Կոռիկոսցւոյ...» և, վերջապես, իր ամենանշանավոր քարոզներից մեկը, կարդացված արքունական տոնախմբության ժամանակ՝ «Նորին Յոհաննէս վարդապետի ասացեալ ի բանն առաքելոյ, որ ասէ՝ Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ, յաւուրն, յորում օրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլ մանկունք իշխանաց և այլք յարքունական սպասաւորացն»:

[76] Մատ., ձեռ. № 2173, էջ 353ա:

[77] Անդ:

[78] Հետաքրքիր է, որ ժողովածուն կազմողը մի այլ առիթով էլ լուսաբանություն հետևյալ նշումն է անում. «Ասա յիշեր օրինակ և զմարգարիտն, զոր ի ծովէն, զոր ոչ գրեցի» (անդ, էջ 131բ):

Երկնակացու քարոզները ու ճառերը, ինչպես խրատական բնույթի նրա մյուս գործերը, ունեն ճանաչողական մեծ արժեք։ Այս գործերում ևս երևան են գալիս երկնակացու խոր գիտելիքները՝ աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության, ճշգրիտ գիտությունների վերաբերյալ։ Սակայն վերոհիշյալ գործերը նշանակալից չափով մեզ հետաքրքրում են իբրև պատմական սկզբնաղբյուրներ։

Քարոզները ու ճառերը ընդհանուր շատ բան ունեն երկնակացու խրատների հետ։ Նրանց մի մասի բովանդակությունը գրեթե նույնանում է որոշ խրատների հետ։ Այդ տեսակետից շատ ուշագրավ է «Ամենայն մարդ, որ ընդ իշխանութիւնս է» քարոզի, Եկեղյաց իշխանին ուղղված թղթի և «Արար Աստուած զմարդն հոգի և մարմին» խրատների շարքի հարազատությունը։

Բոլոր դեպքերում էլ խոսքը հիմնականում գնում է երկրի ճիշտ կառավարման, տիրոջ և ծառայի փոխհարաբերությունների, ըստ Երկնակացու իշխաններին և թագավորներին անհրաժեշտ բարոյական հատկությունների, ժողովրդական զանգվածների համար երկրի արդար կառավարման ունեցած նշանակության մասին և այլն։ Ահա թե ինչու Երկնակացու խրատներն ու ճառերը դիտվում են իբրև խրատական բնույթի գործեր և քննվում այստեղ։

Հիմնական տարբերությունը բուն խրատների և խրատական բնույթի ճառերի ու քարոզների միջև այն է, որ քարոզները կամ ճառերը կարդացվում էին որոշակի նեղ լսարանում, որոշակի առիթով, իբրև ուսումնառության նյութ, իբրև դասախոսություն, իսկ խրատները գրվում էին ավելի լայն հասարակական զանգվածների համար, նույն նյութի ավելի պարզ մատուցմամբ, և տարածվում էին շրջաբերականների ձևով։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն ասվեց, որ հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում ստեղծված մատենագրական հարուստ ժառանգության առանձին բնագավառներ տարբեր վերաբերմունքի են արժանացել ուսումնասիրողների կողմից։ Իրավացիորեն առավել մեծ ուշադրություն է դարձվել այն հուշարձանների վրա, որոնք ուղղակիորեն առնչվում են մեր ժողովրդի քաղաքական, սոցիալական, տնտեսական հարաբերությունների պատմությանը կամ արտացոլում միջնադարյան Հայաստանի գիտական ու գեղարվեստական մտքի տարբեր բնագավառներ։ Սակայն երբեմն չափից ավելի են անտեսվել մատենագրական այնպիսի հուշարձաններ, որոնք թեպետ իրենց բնույթով ու բովանդակությամբ, նախ և առաջ, կրոնական են, բայց օգտակար տեղեկություններ են հաղորդում հայ ժողովրդի միջնադարյան պատմության ու մշակույթի վերաբերյալ։

Ճիշտ է, նախատավետական հայագիտությունը բավական լուրջ փորձ էր կուտակել այդ կարգի երկերի, եթե ոչ ուսումնասիրության, ապա գեթ հրատարակության բնագավառում (հիշենք թեկուզ Մ. Ավգերյանի կողմից հրատարակված վարքերի և վկայաբանությունների մատենաշարը[1], Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի «Հայոց նոր վկաները»[2] և այլն), բայց հետագայում ինչ-ինչ պատճառներով այդ կարգի երկերի ուսումնասիրությունը գրեթե դադարեցվեց։ Այժմ, երբ պատմագրական երկերի հետազոտության գծով բավարար աշխատանք է կատարվել, ավելի քան

[1] «Վիճակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց...», հատ. 1—12, Վենետիկ, 1810—1815։

[2] «Հայոց նոր վկաները», աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903։

անհրաժեշտ է դարձել հոգևոր համարված ժանրի գործերի ուսումնասիրությունը։

Հովհաննես Երզնկացու խրատների ու խրատական բովանդակություն ունեցող քարոզների արժեքն այն է, որ նրանք մի կողմից՝ բացահայտում են մատենագրի աշխարհայացքը, մյուս կողմից՝ մեր ժողովրդի պատմության, մշակույթի և կենցաղի վերաբերյալ ուշագրավ տվյալներ պարունակող սկզբնաղբյուրներ են։ Երզնկացին թեպետ պատմագիր չէ (եթե նկատի չունենանք Գրիգոր Լուսավորչի և քրիստոնեության մուտքի մասին Ագաթանգեղոսից և ուրիշ պատմիչներից նրա քաղած «Արքայն Գրիգորի Հայոց լուսաւորչին պատմութիւն համառատ և թիւք չարչարանացն կարգ ի գրոց պատմողացն կարճառաւատեալ Յոհաննիսի եպընկացոյ»[3] երկը), սակայն հաճախ է անդրադառնում իր ժամանակի քաղաքական անցքերին։

Վերն արդեն խոսք եղավ այն մասին, որ Երզնկա քաղաքի և եկեղեցաց գավառի վերաբերյալ արժեքավոր պատմական տեղեկություններ են պահպանված եկեղեցաց իշխանին մատենագրի հղած խրատական Թղթում և համաքաղաքացիներին հասցեագրած նոր տարվա խրատական ուղերձում։ Երզնկացին առավել մանրամասնությամբ հաճախ անդրադառնում է այն ծանր պայքարին, որ ստիպված էր իր գոյատևման համար մղել Կիլիկյան հայկական թագավորությունը թշնամական մահմեդական օղակի և, առաջին հերթին, եգիպտական սուլթանության դեմ։ Երզնկացին անհուն կսկիծով է նկարագրում մամլուքների վայրագությունները Կիլիկիայում, Հռոմկլայում և Ասորիքի հայաշատ վայրերում.

«Եւս առաւել կայր ի տագնապի երկիրս Կիլիկիա, յանդրեմիա սուլդանէն Եգիպտոսի։ Որ և յ ՉԽ (1291) թուականին բռնացաւ նա և առ դմեծահռչակ և զգեղեցկաշէն քաղաքն Ակռա, զոր ունէին ազգ ֆրէդրացն, տունն Դամբլուն, և Ոսպեթալին, և այրմամբ հրոյ և տապալմամբ հիմանց աւերեաց զզարմանահրաշ շինուածս նորա, և սպանմամբ սրոյ և դերութեամբ վտարելոյ չնջեալ զբնակիչս նորա, յորմէ ահէ ամայի թողեալ բնակչաց ծովեզերեայ քաղաքացն այլոց փախստեայ եղեալ գնացին, և այսպէս աւերեցան զեղեցկաշէն քաղաքքն՝ որ առ եզերք ծովուն։ Իսկ անուն սուլդանին, որ զայս գործեաց աղէտ և սուգ քրիստոնէից, Մելիք Աշրաֆ, որդին Ալճէյ։ Եւ առաւել զոռայր, իբրև զամպ կարկտածին, լցեալ բարկութեամբ կայծակամբ, և ահաբեկեալ զողացուցանէր երկիրս Հայոց, և նեղէր բազում հարկաբեկեալ զողացուցանէր երկիրս Հայոց, և նեղէր բազում հարկապահանջութեամբ զթագաւորն Հայոց Հեթում, խնդրելով երկիր և գաւառ և բերդս։ Իսկ ՉԽԱ (1292) թուականին դիմեաց ի դուրս յերկրէն, իւրմէ, իբրև զառիւծ ի մօրենոյ, անհուն զայրութ և անթուելի հեծելաւք, և անհամար հետևակաւք, իբրև զգետ հոսեալ, և որպէս զծով տարածեալ, յորմէ սարսեալ սասանեցաւ երկիրս Կիլիկիոյ, և ի լերինս և յամրոցս դիմեալ փախչէին, և էին աւուրք հնձոյ ցորենոյ, թողեալ զվաստակս քրտանց և զպատճառս կենաց իւրեանց, ի ժողովելոյն ժամանակ, որ և սղութիւն եղև և նուազութիւն հացի, իսկ նա ոչ եկն յերկիրս Հայոց, այլ գնաց պատեաց, պաշարեաց, սղարեաց զՀռոմկլայն, զաթոռ հայրապետութեան Հայոց, և բազմաձեռն պատերազմողաւք, և մեքենաւոր մարտիւք, և կործանիչ բաբանաւք կռուեալ զաւուրս Լե (35). մինչև չնչեալ սպառեցան մարտիկ զինուորք բերդին և չնչեցան ի քարանցն հարմանէ և ի խոցմանէ անձրևաւորէն նետից թանձր բեմբմանէ, և զաւրքն եգիպտոսի, քարահատաւք արուեստաւորաւք, փորեալ նաղմեցին զքար բերդին իբրև զհող, և դիմեալք ի վեր առին զգեղապաճոյճ ամուրն պանծալի։ Սպանին և գմնացեալ զինուորսն, գերեցին և աստուածային սուրբ կտակարանն, որ ի բազում ամաց ամբարեալ էր ամենայն կաթողիկոսացն և թագաւորաց, և զամենայն անաւթս սրբութեանց և զարդուց եկեղեցւոյն, և զխաչն ոսկեղէն և արծաթեղէն, և զաւետարանսն ոսկեհուռի մանրեալ փշրեցին. և զմասունսն նշխարաց, առաքելական և մարտիրոսական նահատակաց։ Գերեցին և զսուրբ կաթողիկոսն և զհայրն մեր հոգեւոր զտէր Ստեփաննոս, եպիսկոպոսաւք և քահանայիւք և անհամար քրիստոնէիւք, և եղև սոպ մեծ ամենայն Հայոց...»[4]։

Ինչպես տեսնում ենք, հիշատակարանի այս հատվածում բավական ուշագրավ տեղեկություններ կան ոչ միայն Հռոմկլայի գրավման և Կիլիկիայի մասին, այլև խաչակրաց վերջին հենարաններից մեկի անկման, ինչպես և դեպի Կիլիկիա եկած գաղթականության մասին։

Երզնկացին շատ հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում նաև 1293 թ. Կիլիկիայի և Եգիպտոսի միջև կնքված դաշինքի մասին։

[3] Տե՛ս, ձեռ. № 2123, էջ 395ա—401բ։

[4] Տ. եպ. Գալյան, Յուցակ հայերեն ձեռագրաց վանուց ս. Կարապետի և ս. Դանիելի ի Կեսարիա, էջ 56—57։

«ի նոյն թուիս ՉԽԲ (1293), ի մուտս յունիս ամսոյ եկին դեսպանք պատուաւորք ի սուլտանէն և բերին օժիտս մեծագին և պատուական զգեստուց ղալաթ և զիւա անձին թագաւորին և վեց եղբօր նորա։ Բերին և թուղթս երդման զսուլտանին և զմեծամեծ ամիրայից նորա և հաստատեցին դաշինս սիրո և խաղաղութեան ընդ թագաւորն Հեթում, առ[ի]ն ի նմանէ երդումն հաստատութեան։ Ընկալան և պատմուճան զարդուց ամենայն եկեալքն ի սուլտանէն։ Առաքեաց և առատաձիտ թագաւորն մեր բազում բեհեզս արծաթուց և զանազան կտաւս ոսկեկար մետաքսից և բազմութիւն ձիոց և ջորոց և այլ իրս նորոգիւս, աղերս և հարկ սուլտան, և եղև այս սիրոյ և խաղաղութեան հաստատութիւն և խնդութիւն մեծ երկիրս Հայոց»[5]։

Որքան էլ, սակայն, նվաճողների՝ դեպի Հայաստան կամ Կիլիկիա կատարած արշավանքները սարսափելի լինեին, այնուամենայնիվ կար ամենասարսափելին, որի դեմ քաղաքական հմուտ գործչին վայել հեռատեսությամբ պայքարում է Երզնկացին. դա ժողովրդի արտագաղթն էր հայրենիքից և երկրի բնակեցումը օտար խաշնարած և ավազակաբարո ցեղերի կողմից։ Մեծ հայրենասերին վայել ողբով է արձանագրում այդ փաստը Երզնկացին.

«Ողբա՛, աշխարհ և ազգ Հայաստանեայց, որ երբեմն համանման երկնի լուսապայծառ աստեղօք լցեալ, այսօր նսեմացեալ կրկին խաւարաս, մեղաց ասեմ և նեղչացն, ամպովք ծածկեալ։ Ողբ յիմաստուն տնկագործէն իբրև զդրախտ փափկութեան ծաղկապարգեցայք, այսօր իբր դաշտ ապականութեան տգեղացեալ տխրութեամբ կայք և անզարդեալ, զի սեպհական գաւառք հայրենի յօտարալեզու ազգաց տիրեացան, և գաւազանք մեղատրաց ի վիճակս արդարոց մտին»[6]։

Եվ ահա, թերևս առաջիններից մեկը հայ իրականության մեջ, Երզնկացին ծառանում է այդ կործանարար երևույթի դեմ ամբողջ սրտիությամբ։ Շատ լավ հասկանալով հանդերձ, որ արտագաղթը թելադրվում էր այն անտանելի պայմաններով, որ ստեղծել էին նվաճողները Հայաստանում, նա խրատում, հորդորում է՝ որքան էլ ծանր լինեն պայմանները, անձնական բարեկեցության համար ձգել երկու բան՝ հայրենիքը և հավատը։ Սրանք, ըստ նրա, այն

[5] Մատ. ձեռ. № 2325, էջ 206ա։

[6] «Սոփերք հայկականք», ե, Վենետիկ, 1853, էջ 147։

հիմնական գործոններն են, որով կայուն է մնում ազգը և կարող է հուսալ հետագայում ավելի լավ ապագայի համար։

Իբրև օրինակ Երզնկացին բերում է աղավնուն, որը չի լքում իր բույնը և չի խառնվում օտարներին. «Ողջախոհ է թռչունս այս, զի ոչ խառնի ի յատուարազգիսն, այլ յիւր համանմանսն», կամ՝ «Արդարամիտ աղաւնեացն ազգ, զի ի տունս, յորս բնակէ, ոչ հեռանայ անտի իւրովք ծննդովքն և փոխի առ աւտարս... մի՛ փոխիք տանէ ի տուն, զի մի՛ տրամեսցի առաջինն և մի՛ թեւսցի վանն որովայնի ի հեշտութիւն փոխել զասպնջականսն»[7]։

Իր խրատներում և քարոզներում ուղղակիորեն դնելով ազգապահպանության հարցը՝ նա որոշակիորեն զանազանում է մեջբերում հաճախ իրար բախվող երկու տարբեր հասկացություններ՝ ազգ և քրիստոնեություն։ Մեծ տեղ տալով հավատի պահպանությանը, նա դրանով իսկ առաջ է քաշում ազգային դավանանքի, լեզվի, սովորությունների ու ծեսերի պահպանման հարցը։ Այս հանգամանքը առավելապես ընդգծվում է կնքահայր ընտրելու կապակցությամբ նրա տված խրատներում։ Ստորև ադիթ կունենաք ծանոթանալու օտարների նկատմամբ Երզնկացու քարոզած արդարամտությանը, որը երբեմն հասնում է դրական իմաստով օտարասիրության, սակայն դա չի խանգարում նրան, ճիշտ գնահատելով իրականությունը, հորդորելու հայերին հեռու մնալ օտարների հետ այնպիսի մերձեցումից, որը կործանարար էր անդրադառնում հայ ժողովրդի գոյատևման վրա։

Ինչպես հայտնի է, դեռևս վաղ շրջանից հայերի մոտ սովորություն է եղել օտարազգի կնքահայր վերցնելը, որը հետևանք էր տարբեր, հաճախ բախտակից ժողովուրդների դարավոր համակեցության, ինչպես նաև որևէ ազգի ներկայացուցչի կողմից քաղաքականորեն տիրապետող ազգի ներկայացուցչի հովանավորության վայելելու ակնկալության։ Սակայն հայ պետականության բացակայության և Հայաստանն օտարալեզու ժողովուրդների հոծ զանգվածներով լցվելու պայմաններում իրերի այդպիսի ընթացքը մեծ մասամբ վերջանում էր ի վնաս հայերի, որովհետև հայերի մոտ վաղուց ի վեր կնքահայրը հսկայական հեղինակություն է ունեցել իր սանհոր ընտանիքում և համարվել է սանիկի պևխավոր դաստիարակն ու ուսուցիչը՝ մինչև վերջինիս չափահաս դառնալը։ Այս է պատճառը, որ Երզնկացին, ինչպես նրանից

[7] Մատ. ձեռ. № 2173, էջ 354բ։

առաջ Ներսես Շնորհալին և ուրիշներ, արգելում է օտարներից կնքահայր ընտրելը:

Ուշագրավ է, որ այն դեպքում, երբ հայ պետականության ու եկեղեցին ուժեղ են եղել, արգելվել է միայն ոչ քրիստոնյաներից կնքահայր վերցնել. «Եւ մի՛ յանհաւատից արանց կամ կանանց, որք ոչ երկրպագուք Քրիստոսի, առցէ որք կնքահայր մանկանց մկրտելոց, զի զոր ինքեանք ոչ ունին՝ այլոյ զիա՞րդ կարեն տալ զխոստովանութիւնն, որ ի Սուրբ Երրորդութիւնն, յորժամ պահանջէ զքահանայն ի դէմս մկրտելոյն»[8],—գրում է Ներսես Շնորհալին: Սակայն XIII դարում, այն էլ քան Հայաստանում, ձուլման վտանգն առկա էր նաև օտարադավան քրիստոնյաների կողմից, և պատահական չէ, որ Երզնկացին խստորեն արգելում է կնքահայր ընտրել ընդհանրապես այլազգիներից. «Զայլազգի մի՛ առնէք կնքահայր»[9]:

Ի միջի այլոց նույնը պահանջում է Երզնկացու ժամանակակից մի այլ ականավոր գիտնական վարդապետ ևս՝ Եսայի Նչեցին: Իր Թղթերից մեկում, ուղղված Թավրիզի հայերի հոգևոր առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսին, նա լրիվ մեջբերելով այդ մասին Շնորհալու ասածը, հատուկ անհրաժեշտություն է համարում ավելացնել.

«Եւ մի՛ զայլազգի ոք ի քրիստոնէից, որք ոչ ունին զգաւանութիւն Հայոց, և մի՛ զկին մարդ: Զի կնքահօրն երեք գործ է. խրատուդ է՝ որ ուսուցանէ, երախտաւոր է՝ որ պահէ, որ ի հետ վատ ընկերի ոչ շրջի, վկայ է՝ որ քրիստոնեայ է: Երբ զգաստանայ մանուկն՝ զխաչ հանելն ուսուցանէ. երբ յաւտի ելնէ՝ զծունր ածելն. երբ ի խօսի ելնէ՝ զհայոց դաւանութիւնն. զի յայնժամ այլոց լեզուաւ խոստովանեցաւ և հրաժարեաց ի սատանայէ»[10]:

Ժողովրդի և նրա մշակույթի պահպանության հարցը Երզնկացին անմիջապես կապում է ազգային լեզվի և հայ պետականության առանձին միավորների պահպանության, ամրապնդման և համախմբման հետ: Երզնկայի իշխանին ուղղված Թղթում, ինչպես տեսանք, նա մեծ բերկրանք է ապրում այդ իշխանության իրավունքների վերահաստատման համար:

Նա մաղթում է, որ հզորանա քրիստոնեությունը և կարողանա դեմ կանգնել մահմեդական ահարկու վտանգին, սակայն նրան առաջին հերթին մտահոգում է հայ պետականության, Կիլիկիայի հայկական թագավորության ճակատագիրը:

«Զարգացոյ, Քրիստոս Աստուած, զօրութեամբ խաչատարած բազկի քո, զթագաւորս քրիստոնէից և զզօրսն նոցա, եւ առաւել զբարեպաշտ և զքրիստոսապսակ թագաւորն Հայոց, և աներեւոյթ ձեռին քո զօրութեամբ, դու իսկ մարտիցես ընդ թշնամիսն խաչի քո և զորացուսցես զզօրս քրիստոնէից»[11]: Սակայն նա շատ լավ հասկանում է, որ միայն մաղթանքներով իշխանությունը չի պահպանվի կամ հզորանա, որ իշխանության պահպանման համար ուժ և ճիշտ կառավարում է պահանջվում: Այդ մասին նա ուղղակի դրում է դարձյալ Եկեղյաց գավառի իշխանին ուղարկած Թղթում. «Վասն զի թէ էր այժմ հնար զաւրաւք կամ զանձիւք շնորհաւորեալ զաստուածապարգեւ իշխանութիւն ձեր, յոյժ ախորժի է», բայց ի վիճակի չլինելով այդ անել՝ նա բազմաթիվ հետաքրքիր խրատներ է տալիս իշխանության ճիշտ կառավարման համար:

Երզնկացին իշխանության, պետության պահպանման կարևոր նախապայման է համարում ժողովրդի մարտական ոգու ամրապնդումը:

Ա. Հովհաննիսյանը, անդրադառնալով 1273 թ. Երզնկայի Թիլ ավանում Ներսես Պարթևի «Նշխարների» գյուտին, իրավամբ այն համարում է հայ ազատագրական լեգենդի արձագանքներից մեկը[12]: Ինքը՝ Երզնկացին էլ այդ առիթով տված իր նշանավոր քարոզում նշխարների գյուտը համարում է «նշան ակնկալութեան յուսոյ փրկութեան Հայաստանեայց...»[13]: Սակայն Երզնկացու քարոզի ուշադիր քննությունը բերում է այն եզրակացության, որ նշխարների «գյուտը» հավանաբար կազմակերպված էր հայ աշխարհիկ և հոգևոր տերերի կողմից, և, անշուշտ, այդ հարցում երկրորդական չէր իր՝ Երզնկացու դերը: Ուշագրավ է, որ գյուտը կատարվում է Սարգիս արքեպիսկոպոսի և Հովհաննես իշխանի տիրապետության ծաղկման տարիներին, երբ բավարար հիմքեր կային լավատեսորեն տրամադրվելու:

---

8 Ներսես Շնորհալի, Ընդհանրական Թուղթք, Սրուագղէմ, 1871, էջ 60:

9 Մատ, ձեռ. № 2329 («Խրատք հասարակաց»), էջ 232ա:

10 «Ճռոաքաղ», № 2, էջ 206: Ինչպես տեսնում ենք, և Երզնկացին, և Նչեցին ազգի և նրա պահպանման հիմնական գործոններից են համարում ազգային լեզուն:

11 Մատ, ձեռ. № 2173, էջ 55բ—56ա:

12 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ա, Երևան, 1957, էջ 86:

13 Ալիշան, Հայապատում, Բ, էջ 478—479:

Երկնակային իշխանության և պետության ամբարձման հիմնական պայմաններից մեկն է համարում, միջնադարյան հասկացողությամբ, արդար կառավարումը:

Իշխանության հարցում երկնակաց եկեղեցին այն է, որ այն վերուստ է տրված. «Չի այն, որ իշխան լինի, կամօք Աստուծոյ է, ի պարտ է, որ ոմն իշխան լինի և ոմն՝ ընդ իշխանութեամբ»[14], սակայն անմիջապես էլ ավելացնում է, որ ամեն իշխան չէ, որ աստծուց է կարգված: Աստծու դրած իշխանը նա է, ով կատարում է նրա պատվիրանները:

Ելնելով այն մտքից, որ ապտված մարդուն ստեղծում է ինքնիշխան, երկնակային մարդ անհատին հակադրնում է ստեղծագործության և նախաձեռնության ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այսպես՝ եթե իշխանությունը աստված է տալիս, ապա այն պահպանելն ու հզորացնելը զուտ մարդկային գործ է: Բայց իշխանը կամ թագավորը այդ կարող են անել միայն այն դեպքում, երբ տվյալ երկրի ժողովուրդը հնազանդում ու հավանում է նրանց: Իսկ դրա համար հարկավոր է խելացի, ճիշտ կառավարում:

«Երկիր և քաղաք այն մնայ իշխանութիւն, յորժամ իշխանքն Աստուծոյ օրինացն հնազանդին, և քաղաքն և երկիրն՝ իշխանաց»[15]: Երկնակային առանձնապես պահանջում է արդարամտություն ավատատիրական հասարակության ստորին դասերի նկատմամբ, առանց որոնց չէր կարող կայուն լինել ոչ մի իշխանություն: «Իշխանացն զորդութիւնն և իրաւունքն հոգի է աղքատաց: Եւ քաղաք և երկիր, որ ոչ գոյ իրաւունք և դատաստան, մեռած են և ելած է հոգին»[16]: Կամ՝ «Զորդ դատաստանն աղքատացն հոգի է, զինչ մարմինն, որ հոգի չունենա՝ մեռած է, նոյնպէս և քաղաք, որ յինք իրաւունք և զորդութիւն չկենա, զիա՞րդ կարէ շէն մնալ:

Անիրաւ և ծուռ դատաստանն սարդի ոստանի նման, որ զճանճն և զմեժեխն կարէ բռնել, իսկ պիծակ և մեղուն պատառեն և ելնեն: Նոյնպէս և անիրաւ օրէնքն զաղքատն և զանկարն հանեցնեն, իսկ մեծամեծք և հարուստն պատառեն և ի դուրս ելանեն և ոչ հնազանդին»[17]:

[14] Մատ, ձեռ. № 848, էջ 109բ:
[15] Անդ:
[16] Անդ:
[17] Մատ, ձեռ. № 3439, էջ 100բ:

Իշխանները պարտավոր են խորամուխ լինելու երկրի ներքին գործերի մեջ, որպեսզի ժամանակին կարողանան կանխել չարը և խրախուսել բարին: Կիլիկիայում կարդացած «Ամենայն մարդ, որ ընդ իշխանութեամբ է...» քարոզում նա խրատում է. «Իշխանաց և դատաւորաց պարտ է այնպէս լինել, զի ո՛չ վասն արդարոցն աղաչիցեն և ո՛չ վասն անիրաւացն բարեխօսեսցին: Այսինքն՝ ոչ է արժան կալ մնալ իշխանացն, մինչ զի աղաչեսցեն և ապա բարի արանց և արդարոց արասցեն բարի, այլ յինքենէ պարտին շարժել, և ոչ վասն անիրաւացն բարեխօսիլ և ոչ խրատել քան յանցանացն, զի մի՛ այնու յուսով բաղում յանցաւորք լինիցին»[18]:

Երկնակաց խրատներում արձագանք են գտել զարգացած ավատատիրության շրջանին հատուկ՝ ավատատիրոջ և քաղաքի միջև եղած հակասությունները: Նա իշխաններին խրատում է, որ նրանք պարտավոր են քաղաքի և քաղաքացիների նկատմամբ հետու մնալ կամայականություններից և առաջնորդվել եղած օրենքներով. «Նախ զիւր բնութիւնն զարդարել իրաւամբք, խոյս տալով յանիրաւութենէ, և ապա զեղեալ օրէնսն պահել առ հնապանդեալսն... յորժամ իշխանքն հնազանդ լինին աստուածաբեր օրինացն, և քաղաքացիքն՝ իշխանացն: Եւ զի հոգի քաղաքաց օրէնքն են, զոր օրինակ մարմին մեռեալ է առանց հոգւոյ, նոյնպէս բնակիչք քաղաքի, տկարք և աղքատք, մեռեալ են առանց իրաւանց օրինացն: Քանզի բժիշկք օգնեն հիւանդաց, իսկ իշխանք օրինօքն՝ զրկելոց, և որպէս բժիշկք անխմաստք վնասեն հիւանդաց, նոյնպէս իշխանք, որք ոչ գիտեն զիրաւունս օրինացն և կամ ոչ պահեն, վնասեն զարդարս և զանմեղս, զզրկեալս յանիրաւացս...»[19]:

Այս հատվածից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում իշխանների իրավունքները քաղաքների վրա որոշակի սահմանների մեջ են դրված եղել: Ըստ որում, որքան հզոր է իշխանը, և որքան մեծ է նրա ենթակաների թիվը, այնքան պարտավոր է նա շրջահայաց լինել. «Իշխանացն որքան բարձրութիւնն և արժանաւորութիւնն է, այնքան և վտանգն, և որքան բազմութեան իշխան է, պարտ է այնքան աչս ունել տեսանողս և ունկն ի լսել, զի մի՛ վրիպեսցի չիրաւանց...»[20],

[18] Մատ, ձեռ. № 2173, էջ 94բ:
[19] Անդ, էջ 95ա-բ:
[20] Անդ, էջ 99ա:

որովհետև իշխանի մի փոքր սխալն անգամ կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ երկրի համար։

Իշխաններից և թագավորներից պահանջելով արդարամտություն իրենց ենթակաների նկատմամբ՝ Երզնկացին միաժամանակ զգուշացնում է, որ նրանք պարտավոր են խստորեն և հետևողականորեն պատժել հանցավորներին. «...պատժել և պատուհասել արժան է իշխանացն զյանցաւորս և ոչ պիրել, և մերձաւորս առնել, և կամ թոյլ տալ գնալ ըստ ախորժակաց»[21]։

Երզնկացին ուշագրավ խրատներ է տալիս հայ թագավորներին և իշխաններին նաև արտաքին քաղաքականության վերաբերյալ։ Նա սովորեցնում է, որ նրանք պարտավոր են քաղաքականության մեջ լինել զգույշ, շրջահայաց դիվանագետներ։ Թագավորի և իշխանի իսկական փառքը, ասում է Երզնկացին, ոչ թե նրա արտաքին շուքի և փայլի մեջ է, այլ նրանում, թե որքանով է նա կարողանում պահպանել իր հպատակներին և ազատագրել նվաճված ազգակիցներին ու հավատակիցներին. «Զոր օրինակ ծիրանածին արքա, յորժամ զոսկենկար և զմարգարտաշար պատմուճանն զգենու, ոչ է այնքան գովելի, որպէս զայն, յորժամ սիրոյն յաղթի և գնա ի հեռաւոր աշխարհ և զնոսա, զորս ծառայեցուցանէին թշնամիքն, վերծուցանէ...»[22]։ Բայց այդ ամենը պետք է արվի զգուշորեն, բազմակողմանիորեն հաշվի առնելով հանգամանքները և ժամանակը, թե արդյոք տվյալ քայլը տվյալ պահին կարո՞ղ է օգտակար լինել. «Իշխանին պիտոյ են երիս իրս այսոքիկ... ընդ ձեռամբ անգիտական բարեմասութիւն։ Եւ առ դիմադարձան համարձակութիւն՝ այն իսկ է, զի յարտաքին թշնամիսն, այս է՝ յօտարսն և ի հակառակսն իշխանութեանն, համարձակապէս և հզօրաբար զօրս կազմել և պատերազմել։ Իսկ առ ժամանակն բնութիւն ըստ իմաստնոյն խրատու առնել և զայս, զժամանակն ճանաչել պատերազմի և խաղաղութեան, զի թէ գիտէ, թէ ոչ կարէ մարտնչել, ըստ Տեառն խրատու նստեալ խորհի, թէ կարող է ԺՌ (10000)—աւ զդէմ ունել այնմ, որ գայցէ ի վերա նորա ԻՌ (20000)—աւ, ապա թէ ոչ հրեշտակութիւն առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն, է զի և զանձս տացէ, զի վասն այնորիկ են զանձք, և ամենայնիւ

[21] Անդ, էջ 100բ։
[22] Անդ, էջ 34բ։

հնարեսցի զիրկութիւն երկրի. և այսպէս յամենայն իրս ընդ փոփոխման ժամանակին հնարել և զհետ գնալ ժամանակին»[23]։

Ուշագրավ է, որ քաղաքականության հարցերում Երզնկացին խորհուրդ է տալիս սովորել նաև չարից։ «Յաղագս օձին խորամանկութեան» քարոզում նա խրատում է. «Զի որ կամիցի յերկրաւոր կենցաղս հանդիսանալ և զհոգոյն ճառագայթն անուաղելի պահել, պարտ է առնուլ յաւձին խորագիտութենէն ոչ զպաժան բարոն, կամ զչար թիւնիցն զխածատումն, որ զստեղծուածս Աստուծոյ մահացուցանէ, այլ զբարին և զաւետարարն, զոր մեզ յաւգուտ է»[24]։

Առավել հաստատուն և ընդունելի դարձնելու համար իր միտքը՝ Երզնկացին չի խորշում հիշեցնելու նույնիսկ քրիստոնեության ամենանվիրական սրբերից մեկի՝ Պողոս առաքյալի խորամանկությունը. «Ես այնպէս ընտրեսցէ զժամանակն, թէ որպէս պարտ է անմեղութեամբ կալ և որպէս խորամանկութեամբ։ Որպէս երանելին Պաւղոս առնէր, զի յորժամ յԱթենս չոգաւ, խորամանկութեամբք առաւել յաղթեաց, քան անմեղութեամբն։ Գիտէր նուաստանալ, գիտէր և բարձրանալ»[25]։

Անշուշտ, Երզնկացու այս խրատը մասամբ հակադիր արձագանք էր այն ճկուն ու նենգ քաղաքականության, որ իրենց կրոնի թուլությամբ վարում էին մահմեդական իշխանություններն ու հոգևորականությունը։ Գաղտնիք չէ, որ իսլամն իր հետևորդներին թույլ էր տալիս ոչ միայն խորամանկել, երդմնազանց լինել, այլև հանգամանքների ճնշման տակ նույնիսկ կեղծ ուրանալ հավատը։ Այդպիսի պայմաններում լիովին հասկանալի է դառնում, որ քրիստոնեության վարդապետության բարոյականության սահմաններում Երզնկացին և ուրիշ քրիստոնյա գործիչներ ևս պետք է նույնը խրատեին՝ այդ նպատակով երբեմն խորը պրպտումներ կատարելով՝ քրիստոնեության պատմության մեջ նման երևույթներն արդարացնող փաստեր բերելու համար։

Հայրենիքի պահպանության և ժողովրդի փրկության համար, ըստ Երզնկացու, պետք է հոգան ոչ միայն թագավորը և իշխանը, այլ բոլորը։ Առաջ տանելով իր միտքը, Երզնկացին զբաղնում է, որ հանուն գլխավոր շահի՝ ժողովրդի և հավատքի փրկու-

[23] Անդ, էջ 96ա։
[24] Անդ, էջ 361ա։
[25] Անդ, էջ 361բ։

թյան, ինչպես ողջ հասարակությունը, այնպես էլ յուրաքանչյուր անհատ պարտավոր է դիմելու նույնիսկ ծանր զոհաբերությունների՝ իր խոսքն առավել համոզիչ դարձնելու նպատակով նա դարձյալ դիմում է օձի օրինակին։ Ինչպես օձը վտանգի ժամանակ զոհում է իր պոչը՝ գլուխը փրկելու համար, այնպես էլ մարդիկ հարկ եղած դեպքում պետք է հանդուրժեն այլևայլ զոհողություններ՝ հավատքը և աղգը փրկելու համար, որովհետև միայն վերջիններիս պահպանումը հնարավորություն կտա հետագայում վերքերը բուժել և մարմինը առողջացնել։

* * *

Երզնկացու խրատներում բազմաթիվ մտքեր կան անհատի բացարձակ, անսահմանափակ իշխանության՝ բռնապետության դեմ։ Հասկանալի պատճառներով չկարողանալով տեսնել հասարակության զարգացման այն օրինաչափությունները, որոնք շատ ավելի ուշ պետք է սասաններին ավատատիրական հասարակության հավիտենականության մասին եղած պատկերացումը, Երզնկացին միաժամանակ չի հաշտվում այդ հասարակության մեջ տիրող ծայրահեղ անարդարությունների հետ։ Ըստ որում, քննադատելով այդ հասարակության ծայրահեղությունները, նա ոչ միայն իր առաջարկությունները հաճախ հիմնավորում է բարեպաշտության հորդոր կարդալով տիրողներին, այլև հենվում է փորձի, պատմության և առողջ տրամաբանության վրա։

Լինելով չերմ հայրենասեր, արտահայտելով հայ ժողովրդի, նրա մտավորականության դարավոր իղձը՝ իր հայրենիքը միավորված տեսնելու ընդհանուր հայ պետականության շրջանակներում, նա միաժամանակ համարձակորեն ծառանում է ոչ միայն օտար հարստահարիչների, այլև անխոհեմ ու անմիտ հայ ավատատերերի, նույնիսկ թագավորների դեմ։ Ինչպես նկեղյաց գավառի իշխանին գրած իր խրատներում, այնպես էլ բազմաթիվ խրատական բնույթի գործերում նա հայ ժողովրդին բաժին հասած քաղաքական ու տնտեսական ծանր փորձությունների համար մեղավոր և պատասխանատու է համարում թագավորներին ու իշխաններին, որոնք, փոխանակ հայրենիքը պաշտպանելու, շենացնելու և դիտություն տարածելու, «եղեն անիրաւք և նեղիչք երկրի», որի հետեվանքով և «մատնեցաք մեք աւար աղգաց սպանողաց, գերողաց և դառն գրկողաց»[26]։

[26] Մատ, ձեռ. № 848, էջ 108ա։

Պետության և իշխանության կառավարման մասին խրատներում, ինչպես վերն արդեն տեսանք, Երզնկացին պահանջում էր հնազանդություն իշխանի ու թագավորի հանդեպ, որովհետև դա ի վերուստ սահմանված կարգ է, և հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց իշխողի ու ենթակայի։ Սակայն նա իր խրատներում բազմիցս նշում է, որ այդ հնազանդությունը չպետք է դառնա ստրացուցիչ, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը վիրավորող, որովհետև մարդն ստեղծված է ոչ միայն բանական, այլև «ազատական» մտքով։

Իշխաններին տված խրատներում նա բազմիցս զգուշացնում է նրանց, որ տեր լինելով հանդերձ՝ ոչնչով առավել չեն իրենց ենթականերից, որովհետև նրանք տեր են ոչ թե անբան կամ ստորադաս էակների, այլ իրենց հավասարների, որովհետև բոլոր մարդիկ հավասար են ծնվում՝ նույն նյութից. իսկ եթե մեկը իշխան է, մյուսն՝ ընդ իշխանությամբ, ապա դա բացառապես արդյունք է սեփականության և բխում է երկրի ու հասարակության կառավարման անհրաժեշտությունից. «Իշխանի երէց իրք զմտաւ պիտի ածել, որ անիրաւ բան չառնէ։ Մէկ այս է, որ գիտենա, թէ այնոք, որ ընդ ձեռամբ նորայ են, մարդիկ են ստեղծեալ յԱստուծոյ ի միոջէ զանգուածոյ իբրև զինքն և չունին ինչ պակասութիւն, բայց միայն զիշխանութիւն»[27]։

Իր խրատներում զարգացնելով այն միտքը, թե մարդ էակը չի կարող անսխալական և անքննադատելի լինել («և ոչ զայն ինչ ասեմ, թէ մի՛ մեղանչեր, զի անհնար է հողեղէն բնութեանս, զի այս աստուածավայել է անմեղութիւն... իսկ արարածական բնութիւնս մեղանչական է»[28]), — դրանով իսկ ժխտում է անսահմանափակ իշխանությունը։ Երզնկացին գտնում է, որ թագավորը կամ իշխանը պարտավոր են պետության կառավարման բոլոր գլխավոր հարցերի՝ խաղաղության, շինության, պատերազմի և հաշտության վերաբերյալ միահեծան որոշումներ չընդունել, այլ խորհրդակցել իշխանակիցների հետ։ Վերջիններս իրենց հերթին պարտավոր են հանդես բերել ազատական, անծառայական միտք և համարձակություն՝ այդ հարցերի քննարկման ժամանակ. «Հարկ է իշխանացն առ տէրն իւրեանց համարձակապէս խաւսել վասն բարութեան աշխարհին»[29]։ Մի այլ առիթով նա խստորեն

[27] Մատ, ձեռ. № 848, էջ 119բ։

[28] Մատ, ձեռ. № 2173, էջ 360ա։

[29] Անդ, էջ 297ա։

պախարակում է այն իշխաններին, որոնք իրենց առօրյա շահերից ելնելով՝ քծնում են արքաներին և «ոչ տան թոյլ հայել յիւրեանց սխալանսն...»[30], այլ ընդհակառակը՝ դրդում են նրանց նոր սխալների ու անիրավություններին:

Ծխտելով մարդու անսխալականությունը, Երզնկացին մերժում է նաև մարդու բացարձակ իշխանությունը եկեղեցում: Նա բազմիցս խրատում է եպիսկոպոսներին ու բարձրաստիճան մյուս հոգևորականներին չգործել միահեծան, այլ միշտ լսել ընկերակիցների խորհուրդներն ու հորդորները («մի բնաւ առանց ընկերակցացն հարցմանց գործել ինչ, զի այն է հաճոյ Աստուծոյ»[31]):

Զարդացնելով իր մտքերը աշխարհիկ ու հոգևոր իշխանության միահեծանության և մարդու անսխալականության դեմ, հատկապես հենվելով հայ լուսավորչական դավանանքի վրա, Երզնկացին, մեր կարծիքով, հակահարված է տալիս նաև Կիլիկիայում տարածվող կաթոլիկական գաղափարախոսությանը, որը միտում ուներ մարդուն՝ հանձին պապի, ներկայացնելու իբրև հոգևոր և աշխարհիկ անսահմանափակ իշխանության տեր և անսխալական:

Երզնկացու խրատական գրություններում բավական հետաքրքրքիր նյութեր կան հայ եկեղեցու իրական վիճակի, դավանաբանական պայքարի և աղանդավորական շարժումների մասին:

Լինելով հայ եկեղեցու ամենակարկառուն դեմքերից մեկը, բնականաբար, սպասելի է, որ Երզնկացին հանդես գար ի պաշտպանություն այդ եկեղեցու, մանավանդ որ ցաք ու ցրիվ եղած հայ ժողովրդի պետական առանձին միավորներին իրար կապող և քիչ թե շատ ընդհանուր շահեր ստեղծող միակ կազմակերպությունը եկեղեցին էր:

Ձգտելով վերականգնելու հայ եկեղեցու վաղեմի փառքը, աշխարհիկ իշխաններին Երզնկացին կոչ է անում մշտական հոգատարությամբ շրջապատել այն և այդ հարցում օրինակ ծառայել ժողովրդին:

Եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու համար թագավորներն ու իշխանները պարտավոր են եկեղեցի հաճախել կամ աղոթել ոչ թե միայնության մեջ, ժողովրդից ու զորքից հեռու, այլ ընդհակառակը՝ «թագաւորաց և պիսաւոր առաջնորդաց ի մէջ

30 Անդ, էջ 184ա:

31 Մատ, ձեռ. № 2329, էջ 277բ:

ամենայն պատուոյն և բազմախումբ ժողովոց արժան է աղօթելն»[32]: Կամ՝ «Զի յորժամ թագաւոր զօրաց և տէր աշխարհաց ի տեղի աղօթիցն ընթանայ և կացորդի ընդ խոնարհս ժողովրդեան իւրոյ յաղաւթիսն Աստուծոյ, ինչ այլ քաղցրագոյն և շահաւետ քան զայն կայցէ, յորժամ թագաւոր՝ զօրաւք և իշխանն՝ իշխեցեկովք և առաջնորդ՝ ժողովրդօք և տէր տան՝ ընդանեօք և զաւակօք յեկեղեցին ժողովեացին: Զի զոր օրինակ քար ընդ քարի հարեալ հուր ծնանի, նոյնպէս բազմութիւն ժողովոցն դեգերեալ առ միմեանս՝ հոգևոր սիրովն ջեռնուցուն»[33]:

Այս հատվածները պարզորոշ ցույց են տալիս ոչ միայն Երզնկացու ձգտումը առավել չերմեռանդ դարձնելու մարդկանց եկեղեցու նկատմամբ, այլև վերականգնելու վերջինիս նյութական ապահովությունը, որը լրջորեն վնասվել էր օտար տիրապետության և աշխարհիկ գանգվածների՝ եկեղեցուց հեռանալու հետևանքով:

XIII դարի հայ իրականության մեջ հասարակական կյանքի ամենալուրջ հարցերից մեկը պայքարն էր կաթոլիկության դեմ, որը դարի վերջերին լրջորեն սպառնում էր ոչ միայն հայ եկեղեցու շահերին, այլև ազգային լեզվի, մշակույթի, սովորույթների և կենցաղի հարատևմանը: Բնականաբար այդ պայքարի մեջ ընդգրկվում էին հայ եկեղեցու ամենակարող ուժերը:

Բանասիրության մեջ կարծիք է եղել, թե, իբր, Երզնկացին ընդհանրապես հեռու է եղել դավանաբանական պայքարից: Ա. Սրապյանը, քննության առնելով հարցը, մերժում է այդ սխալ տեսակետը[34]: Խնդրի բերումով մենք ևս կցանկանայինք մի փոքր կանգ առնել դրա վրա:

Ինչպես հայտնի է, դավանաբանական պայքարը քողարկվում էր հիմնականում, առաջին հայացքից խիստ սխոլաստիկ թվացող, երկու հարցերի՝ Քրիստոսի բնության և նրա ծննդյան ու մկրտության շուրջը տարվող պայքարով: Այս հիմնական հարցերից է, որ բխեցվում էին մյուս մասնակի խնդիրները՝ հաղորդության բաժակին ջուր խառնելը, պահոց օրերին ձեթ կամ ձուկ ուտելը և այլն: Երկու հիմնական հարցերում էլ Երզնկացին կանգնած է հայ եկեղեցու ազգային դավանության պաշտպանության դիրքերում: Իր «Խրատ հասարակաց»-ում նա ուղղակի հայտարարում

32 Մատ, ձեռ. № 2173, էջ 392բ:

33 Անդ:

34 Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 21—26:

է. «Որք վկայակոչին յեպիսկոպոսութիւն, քննեսցի, թէ կարասցէ՞ հերքել զհերձուածողացն և այլս՝ տեղեկութեամբ Գրոց Սրբոց, ապա թէ ոչ իցէ առ այս բաւական, դադարեսցէ, թէ և ի սրբոց իցէ»[35]: Այս հատվածից իսկ պարզորոշ երևում է, որ Երզնկացին ոչ միայն միաբարության հակառակորդներից է, այլև պահանջում է առաջ քաշել խելացի ու պատրաստված մարդկանց, որոնք կարողանային ճիշտ կողմնորոշվել դավանաբանական պայքարի լաբիրինթոսում և արժանի հակահարված տալ հերձվածողներին:

Իր անհանգիստ գործունեության ընթացքում, անընդհատ շրջելով զանազան վայրեր, Երզնկացին հաճախ է ստիպված եղել ուղղակի կամ անուղղակի դավանաբանական պայքար մղել: Նա կարողացել է հայ ժողովրդին ու եկեղեցուն իր անսահման նվիրվածությանը զուգակցել դիվանագիտական ճկուն միտք: Վերը խոսք եղավ այն մասին, որ երկրի ղեկավարներին խրատելիս Երզնկացին պահանջում է չլինել պարզամիտ, այլ խելոք, շրջահայաց և զգույշ, որպեսզի ամեն ինչ կատարվի իր ժամանակին ու իր տեղում: Այս խրատին հարազատորեն հետևել է հենց ինքը: Բուն Հայաստանում, որտեղ միաբարների սանձարձակությունը երբեմն անհանդուրժելի էր դառնում, նա ամեն առիթով անդրադառնում է դավանաբանական խնդիրներին՝ մեղադրելով միաբարներին տգիտության, ամբարշտության և այլ ախտերի մեջ:

Մինչդեռ դրությունը մի փոքր այլ էր Կիլիկյան հայկական թագավորությունում: Թե որքանով էր ճիշտ կիլիկյան հայ թագավորների ու կաթողիկոսների այն քաղաքականությունը, որը նպատակ ուներ ինչ-ինչ դիջումների գնով օգնություն ստանալ Հռոմից և եվրոպական այլ պետություններից, դա առանձին խնդիր է: Փաստը մնում է փաստ, որ այդ հանգամանքը կար և, որ հետաքրքրքիր է, այդ հոսանքի ամենանշանավոր ներկայացուցիչներն անգամ ոչ միայն մեծարում են Երզնկացուն, այլև խնդրում նրան գրելու կանոնական, խրատական գրություններ, քարոզներ կարդալ և այլն: Երզնկացին այստեղ ևս պաշտպանում է հայ եկեղեցու դավանանքը, սակայն առավել զուսպ, առանց վիրավորական արտահայտությունների, որոնք կարող էին անցանկալի հետևանքներ առաջ բերել: Այդ հանգամանքը պարզորոշ նկատվում է նույն հարցի՝ Քրիստոսի ծննդյան ու մկրտության վերաբերյալ նրա կարդացած երկու քարոզներից: Դրանցից մեկում, որը կարդացվել

[35] Մատ, ձեռ. № 2329, էջ 278ա:

է Հայաստանում, պատճառաբանելով տարբեր դավանանքների առաջացումը, նա գրում է. «...յետոյ ոմանք բաժանեցին ըստ այլ և այլ կարծեաց, ոմանք՝ պատճառանօք, և այլք՝ հերձուածողական ամբարշտութեամբ և ոմանք՝ տգիտական անուսումնութեամբ... իսկ մեք, որք ճիշտ և ուղիղ հաւատով ունիմք զդաւանութիւնս սրբոց առաքելոցն և զմեծ վերիցս երանեալ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի և ըստ տուչութեան նոցա մեզ ի միում աւուր կատարեմք տօնախմբութիւն աստուածային իրագործութեան ի մեզ և վասն մեր եղելոյ, ճշմարիտ Աստուած խոստովանիմք զնա, միևնոյն ծննդեամբ և մկրտութեամբն...

Այլ մեզ զմերս հաստատեսցուք արձան ճշտութեան բազմամբք վկայիցն հաստատութեամբ ի միում աւուր լինել ծննդեան և մկրտութեան...»[36]:

Մինչդեռ Կիլիկիայում նույն հարցերին անդրադառնալիս նա հանդես է բերում պետական և հասարակական նշանավոր գործչին վայել շրջահայեցություն՝ աշխատելով իր ասածը հիմնավորել ոչ այնքան այս կամ այն դավանանքի դոգմաներով, որքան տրամաբանական դատողություններով:

Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Երզնկացու՝ Անավարզայում կարդացած «Ի բան մարգարէին Դաւթի՝ Սքանչելի եղև գիտութիւն քո յիս...» քարոզը: Հարկ է նկատի առնել, որ նա քարոզը կարդում է ժամանակի խոշորագույն գիտնական-աստվածաբան, իր միաբարական հակումներով հայտնի և Կիլիկիայում մեծ ազդեցություն վայելող Գրիգոր Անավարզեցու պատվերով: Ուշագրավ է, որ հենց քարոզի վերնագրում Երզնկացին, Անավարզեցու եպիսկոպոս լինելու հանգամանքը նշելուց առաջ, պատվում է նրան վարդապետ տիտղոսով[37]:

Քարոզում Երզնկացին հիմնականում անդրադառնում է միաբնակության և երկաբնակության խնդիրներին և նրբորեն հարցը տեղափոխում է տրամաբանության ու փորձի ոլորտը: Ապացուցելու համար Քրիստոսի մի էության, նա դիմում է բնական երևույթներին. այնպես, ինչպես հրի և երկաթի փոխներգործությունից որակական փոփոխության է ենթարկվում միայն

[36] Մատ, ձեռ. № 2178, էջ 101ա:

[37] «Յոհաննէս վարդապետի Եզնկայեցւոյ Ի բան մարգարէին Դաւթի՝ Սքանչելի եղև գիտութիւն քո յիս: Յանաւարզա խօսեցեալ, առ տէր Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս» (Մատ, ձեռ. № 2173, էջ 101ա):

երկաթը, այնպես էլ Քրիստոսի աստվածային և մարդկային բնությյան միավորումից որակական փոփոխությյան է ենթարկվում մարդկայինը՝ ձուլվելով աստվածայինի հետ մի էության մեջ։ Առավել տրամաբանական ու համոզիչ դարձնելու համար իր ասածը՝ Երզնկացին հարցը քննում է՝ ելնելով ավատատիրական աշխարհիկ հարաբերությունների էությունից, բացատրելով երկու էության վնասակար լինելը. «Զի ի երկու բնութիւնն երկու կամք են և երկու խորհուրդք և երկու տեարք. և թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, զի բնութիւն բնութեան հակառակ մաքառակիցք են միմեանց և կամ մինն՝ տէր և միւսն՝ ծառայ»։ Եվ եթե երկու բնությյուն է, ապա՝ «Աստուած ի մարմնի իւրում կռիւ ունի, իբրև ընկեր առ ընկեր, և զիա՞րդ կարէ նա այլում տալ խաղաղութիւն»[38]։

Որ դավանաբանական պայքարը Երզնկացուն հետաքրքրում է, նախ և առաջ, իր ժողովրդի պետական շահերի տեսանկյունից, պարզորոշ նկատվում է թեկուզ նրանից, որ նա շատ հեռու է կույր մոլեռանդությունից և գրեթե պատմական մոտեցում է հանդես բերում քրիստոնեական վարդապետության մեջ տարբեր ուղղությունների հանդես գալու հարցին։ «Ասացուածք ի բանն Տեառն, որ ասէ՝ «Ես եմ հովիւն քաջ», երջանիկ վարդապետին Յոհաննեսի եզնկայեցւո, արարեալ ի խնդրո և ի հայցմանէ վարդապետին արի, որ ի դրանէ սուրբ Կարապետին»[39] քարոզում նա ուղղակի նշում է, որ տարբեր ուղղությունների ու տեսությունների հանդես գալը բացատրվում է սուրբ հայրերի՝ տարբեր ժամանակներում ու տարբեր պայմաններում ստեղծագործելու հանգամանքով. «Եւ զի ոչ էին սոքայ ի միում ժամանակի, թէպէտ և զմի աստուածութիւն

[38] Մատ, ձեռ. № 2173, էջ 124ա-բ։ Ուշագրավ է, որ նույն միտքը, անշուշտ առավել լայն զանգվածների համար, նա զարգացնում է նաև իր հայրեններից մեկում.

«Զարևն ի յերկինս իմայ ու լուսոյն նատար դու արայ,
Որպէս որ ճարակ չկայ ի նիւթոյն լոյսն որ հեռանայ,
Յորոհեղ որ արևն երթայ, լոյսն անճատ աղբիւր ցոլանայ,
Հուրն և ճառագայթն և նիւթն միացեալ և երկու չէ նայ։
Այսպէս ի Քրիստոս ասայ, դասանումն է սերտ հաւատայ,
Եւ մի՛ լինիցիս թեերի դու տըղայ տըխմար 'ւ անիմայ»
(տե՛ս Ս. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 152)։

[39] Մատ, ձեռ. № 2173, էջ 337ա։ Վերնագիրը խիստ անընթեռնելի էր, և մեծ դժվարությամբ հաջողվեց վերծանել։

երորդութեանն քարոզէին և զմի ճանապարհ ճշմարտութեան գնային։ Այլ յայլ և յայլ ժամանակս եղեն վասն մեծ խորհրդոյն»[40]։

Այս միտքը, կարծում ենք, արժանի է հատուկ ուշադրության։ Միջնադարում եկեղեցու պատմության նկատմամբ պատմա-քննական այդպիսի մոտեցումը, անկասկած, հայ միջնադարյան պատմագրության նշանակալից նվաճումներից մեկն էր։

* * *

Երզնկացու խրատներում, ինչպես և խրատական բովանդակություն ունեցող այլ ստեղծագործություններում, հետաքրքիր ակնարկներ կան նաև ժամանակի աղանդավորական տրամադրությունների մասին, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու աղանդավորական գաղափարախոսության որոշ կետեր։ Այսպես, «Խրատ հասարակաց»-ի «Յաղագս հաւատոյ» գլխում Երզնկացին այն միտքն է զարգացնում, թե հավատը երկու անհրաժեշտ մասերից է բաղկացած. «Եւ զի այսպէս է, ապա պարտ է գիտել, եթէ երկու են սեռք հաւատոյ, առաջին է դաւանութեան և խոստովանութեան հաւատն, և երկրորդ՝ հաւատալ ամենայն աստուածային և Սուրբ Գրոց, թէ յԱստուծոյ հոգւոյն են խաւսեցեալք առաքեալք և մարգարէք և հայրապետքն սուրբ, և յԱստուծոյ առ մեզ գրեալ են ամենայն բանք գրոց, և ամենայն սուրբքն միջնորդք և պատգամաւորք են յԱստուծոյ և ուսուցանեն մեզ զանցեալն և յորում կամքս և որ գալոցն է ժամանակ»[41]։

Մի այլ առիթով նա խրատում է, որ չպետք է խորշել նախնիների ու սրբերի նշխարներից, չպետք է վերջիններս պիղծ և խոտելի համարել. «Որ հաւատացեալ ժողովրդոց ոչ գարշելի կարծի կամ մեռելոտի ըստ հնոյն, այլ յոյժ ցանկալի և մեծի բարեաց պատճառք և առիթ։ Նշխարք սրբոցն և պանծալի նահատակացն Քրիստոսի, ոտքս մերձաւորութիւնն ոչ խոտելի է և կամ պիղծ համարիլ, որ մերձենայ յայսպիսի մեռեալ, որպէս թուի աւրինաւցն, այլ հաւատովք մերձեցելոցն ոչ միայն սրբութեան առիթ լինին, այլ յոյժ մեծաց և անեղրակաև պարգևաց»[42]։

Եթե նկատի առնենք, որ պաշտոնական ոչ մի քրիստոնեական եկեղեցի, գոնե մինչև XIII դարը, ընդհանուր առմամբ մարգարե-

[40] Անդ, էջ 338ա։

[41] Մատ, ձեռ. № 2329, էջ 228բ։

[42] Մատ ձեռ. № 2173, էջ 386ա։

ների, հայրապետների և սրբերի գործն ու գրությունները կասկածի տակ չի առել (չնայած առանձին գործիչներ մերժվել են այս կամ այն եկեղեցու կողմից), ինչպես և չի մերժել նրանց նշխարների սրբությունը, ապա ինքնին հասկանալի է, որ Երզնկացու այս մտքերը պատասխան են ժամանակի աղանդավորական տրամադրություններին:

Շատ հետաքրքիր է, որ Երզնկացին իր բազմաթիվ գործերում, հոգու և մարմնի հարաբերության, ինչպես և մարդու մարմնական կարիքների մասին խոսելիս, պնդում է, որ մարդ պարտավոր է հոգալ նաև մարմնական պահանջների մասին, իր պաշտպանության տակ է վերցնում ճգնավորական կենցաղը: Նա խրատում է, որ թեև պետք չէ մարմինը արհամարհել կամ մեռցնել, բայց չպետք է անսուրբ և անպատիվ համարել նրանց, ովքեր անձնիշխան, այսինքն՝ կամավոր, մահով մեռցնում են իրենց մարմինը հանուն Քրիստոսի:

Բերված օրինակներում որոշակի ակնարկներ կան մի գաղափարախոսության, որը շատ բաներում մերժում է պաշտոնական եկեղեցու պաշտամունքն ու ծեսերը, ժխտում եկեղեցու պաշտոնական գրականությունը, պաշտամունքը նշխարների հանդեպ և այլն:

Երզնկացին իր խրատներում հատուկ քննության նյութ է դարձնում, թե հավատացյալները երբ, որտեղ և ինչպես պետք է աղոթեն:

Վերը արդեն տեսանք, որ նա թագավորներին ու իշխաններին պատշաճ է համարում եկեղեցի հաճախել իրենց շքախմբով, իսկ տան գլխավորներին՝ իրենց ընտանիքով: Դատելով Երզնկացու որոշ մտքերից, պետք է ենթադրել, որ եղել են նաև հակառակը պնդողներ, որոնց դեմ և պայքարում է Երզնկացին: Այդ գաղափարախոսության կողմնակիցները, հավանաբար, քարոզել են, որ մարդն ազատ է և պետք է աղոթի այնտեղ, ուր իր համար հաճելի է: Մի ակնարկից երևում է նաև, որ այդպես մտածողները ունեցել են քրիստոնեության վարդապետության քաջածանոթ ղեկավարներ, որոնք պաշտոնական եկեղեցու դավանանքին հակադրվել են՝ հենվելով քրիստոնեության պատվիրանների վրա: Նրանք, ըստ Երզնկացու, պնդել են, որ տերն ինքն է պատվիրել՝ «յորժամ յաղօթս կաս, մտ ի սենեակ քո և փակեալ դրուռս քո»[43]: Հակադրվելով փաստորեն եկեղեցին ժխտող այս գաղափարախոսությանը,

[43] Մատ, ձեռ. № 2173, էջ 392ա:

Երզնկացին հենվում է Դավթի այն պատվիրանի վրա, թե՝ «Զաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդոյ». ապա բացատրում է. «Իսկ տեղի աղօթիցն, ասէ, յորում տամ պատրաստ զօրհնութիւն և զաղօթս ի գաւիթս տան Տեառն և ի մէջ քո, Երուսաղէմ: Եւ գաւիթս Տեառն իմանամք զերկրաւորս եկեղեցի, և նոյն կոչի նոր Երուսաղէմ»[44]:

Երզնկացու պես հմուտ աստվածաբանը, անշուշտ, գտնում է այս հակասության պատմական պատճառները: Նա բացատրում է, որ Քրիստոսի ասածը վերաբերում է նրանց, ովքեր ստիպված են օտարի լծի տակ լինելով՝ թաքուն աղոթել, կամ կեղծ են աղոթում, մինչդեռ Դավիթը «Զանկեղծաւոր բարուց և զանփառասէր մտաց ասէ, առաջի ամենայն ժողովրդեանն մատուցանել օրինակ բարեաց ամենեցուն»[45]:

Սակայն ինչպիսին էլ լինի Երզնկացու բացատրությունը, մեզ համար առկա է այն փաստը, որ այս շրջանում ևս գոյություն է ունեցել իր տեսական հիմնավորումն ունեցող աղանդավորական գաղափարախոսություն:

Բերված փաստերը, ճիշտ է, մեզ հիմք չեն տալիս պարզելու, թե որոշակի ովքեր են եղել այդ գաղափարախոսության կողմնակիցները և հատկապես Հայաստանի ո՞ր շրջանում է այն ավելի կենսունակ եղել, բայց նկատի առնելով, որ Երզնկան և եկեղյաց գավառը դեռևս XII դարում դիտվել են իբրև աղանդավորական կենտրոններ, կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է նաև եկեղյաց գավառի աղանդավորներին:

Պարզ է նաև մեկ այլ բան. XIII դարի աղանդավորները եթե չեն եղել պավլիկյան կամ թոնդրակյան գաղափարախոսության ներկայացուցիչներ, ապա շատ հարցերում հետևել են նրանց:

* * *

Խրատների հիմնական նպատակներից մեկը ժողովրդի, նրա առանձին խմբերի, անհատների դաստիարակության խնդիրն է՝ ժամանակի ոգուն և բարոյականությանը համապատասխան: Հետևաբար պատահական չպետք է թվա, որ միջնադարյան մանկավարժության, վերջինիս մեթոդների և միջոցների մասին առավել մանրամասն տեղեկություններ պարունակում են խրատները կամ խրատական բովանդակություն ունեցող քարոզները: Այդ տեսա-

[44] Մատ, ձեռ. № 2173, էջ 392ա:

[45] Անդ, էջ 392բ:

կետից բացառություն չեն կազմում նաև Երզնկացու խրատները։ Իրավացիորեն Ա. Սրապյանը գրում է. «Երզնկացին նաև խոշոր մանկավարժ է։ Երեխայի ուսումն ու կրթությունը ճիշտ ձևով կազմակերպելու համար նա մշակել է դաստիարակչական-մանկավարժական մեթոդներ, հաշվի առնելով մարդու և հատկապես մանկան կառուցվածքի և հոգեբանության առանձնահատկությունները»[46]։

Մանկավարժության վերաբերյալ իր հայացքները Երզնկացին շարադրել է ինչպես «Խրատ հասարակաց»-ում, այնպես էլ ուրիշ առիթներով։

Նա գտնում է, որ մարդկային միտքը մանուկ հասակից ձեռք բերած հինգ զգայարանների միջոցով տեղյակ է ընկալելու և բացատրելու այն ամենը, ինչ շրջապատում է նրան, ուստի պահանջում է երեխայի դաստիարակությունն սկսել ամենավաղ հասակից. «Սրբությեամբ և անարատությեամբ անուցանեն քրիստոնէքն զիւրեանց զաւակն և զգուշ կան ի մկրտութեան աւրէն մինչ ի կատարիլ հասակին...»[47], որովհետև երեխայի միտքը մի հստակ հայելի է, որի մեջ անմիջականորեն տպավորվում են ինչպես լավը, այնպես էլ վատը։ «Զի տղային միտքն որպէս յստակ հայելի է. մի՛ թողուլ անխրատ, որ մեղաց ժանգն չնստի ի վերայ և ապականէ։ Տղային միտքն որպէս կակուղ մոմ է. զբարի խրատն և զիմաստութեանն ուսումն դիր ի վերայ մատնէհար, որ այլ պիղծ և վատթար իրք չկերպարանի ի միտքն»[48]։

Երեխայի միտքը Երզնկացին նմանեցնում է նաև հստակ ակունքի, որը ժամանակի հետ զուգընթաց հոսում և մեծանում է, հետևաբար երեխայի ծնողներն ու դաստիարակները պարտավոր են խստիվ հետևելու նրա ընթացքին, ուղղություն և խորհուրդ տալու, որպեսզի այդ մաքուր հոսքը չաղարտվի վատթար ջրերով։ Նա գտնում է, որ երեխայի զգայարանները չպետք է այլանդակ արարքներ գրանցեն նրա մանուկ, պարզ հոգում ու ուղեղում, որովհետև մանկան տպավորությունները շատ ուժեղ են լինում և հիշողության մեջ երկար մնում։

Երզնկացին խստագույնս պարսավում է այն ծնողներին, որոնք փոխանակ բացահայտելու իրենց երեխաների թերությունները և պայքարելու դրանց դեմ, ինչ-ինչ պատճառներով կոծկում են դրանք, փաստորեն խրախուսելով նոր հանցանքներ գործելու։ Նա զգուշացնում է ծնողներին, որ նման դեպքերում մանկան ոչ միայն առանձին զանցանքների, այլև հետագա ողջ ճակատագրի մեղքը ընկնում է իրենց վրա։

Շատ հետաքրքիր է, որ մանուկի դաստիարակության հիմքում Երզնկացին դնում է համոզելը, բացատրելն ու հասկացնելը՝ լիովին բացառելով բռնության միջոցները։ Ծնողները պարտավոր են «ոչ զայրացուցանել զորդիս, այլ սնուցանել խրատու և իմաստութեամբ Տեառն»[49]։

Երզնկացին գտնում է, որ մարդ դաստիարակության կարիք ունի ոչ միայն մանկական հասակում, այլև ողջ կյանքի ընթացքում, միայն թե ըստ տարիքի փոխվում են պահանջներն ու ձևերը։ Ուշագրավ է, որ այստեղ ևս նա առաջնությունը տալիս է ոչ թե բռնության և երկյուղի միջոցներին, այլ մարդու կողմից իր սխալների գիտակցմանը և կամավոր հրաժարմանը, որովհետև ակամա հրաժարումը ծառայական մտքի արդյունք է և ըստ էության մարդուն չի մաքրում նոր արատներ գործելու ախտից, այլ միայն ետ է պահում տվյալ հանցանքը գործելուց։

Երզնկացին երեք հիմնական պատճառներ է ընդունում, որոնք մարդուն դրդում են չարության. «Կամ ի խաւնուածոյ մարմնոյն, կամ ի չար հրահանգից, կամ յանուսումնութենէ։ Զի թէ ի չարն վարժի և զվատթարն լսէ և տեսանէ, յաղթի և ախտիցն և մեղացն ոչ կարէ ընդդիմանալ։ Թէ ի բարի ուսմանէ անխրատ է, միտքն խոպանի, և որպես խոպան երկիր փուշս և անպիտան բերս բուսուցանէ, նոյնպէս անուսումն միտքն զանազան չարիս բուսուցանէ, վասն որոյ պարտ է, մինչդեռ տղայն է, խնամ տանիլ և ի բարին վարժել»[50]։

Նույն միտքը նա առավել հանգամանալից բացատրում է «Ի ԾԲ սաղմոսն...» քարոզում։ Այստեղ, քննության առնելով մարդու դաստիարակության հարցը, նա գտնում է, որ ինչպես մարդկային մարմինն է բաղկացած չորս տարրերից, և նրանց բարեխառնությունից ու համաչափությունից է կախված մարդու մարմնական առողջությունը, այնպես էլ մարդու հոգին է բաղկացած չորս տարրերից։ Եվ նրանց համաչափությունից է կախված

46 Ա. Սրապյան, *Հովհաննես Երզնկացի*, էջ 63։
47 *Մատ*, ձեռ. № 2329, էջ 232բ—233ա։
48 *Անդ*, էջ 234։
49 *Մատ*, ձեռ. № 2173, էջ 164ա։
50 *Մատ*, ձեռ. № 2329, էջ 233բ—234ա։

մարդու հոգեկան առողջությունը։ Հոգին, ըստ Երզնկացու, ունի «բան, ցասումն և ցանկութիւն, արդարութիւն, խոհականութիւն և ողջախոհութիւն»։ Սրանց համաչափությունից է կախված մարդու վիճակը, որովհետև անհամաչափությունը ծնում է վախկոտություն, անզգամություն և այլն։ Ըստ որում այդ տարրերի անհամաչափությունը մարդու մոտ կարող է լինել կամ ի ծնե, կամ առաջ գալ մարդու ոչ ճիշտ դաստիարակության շնորհիվ։ «Տեսցուք և զերծորդ գլուխն, թէ ուստի՞ յառաջ եկեալ ծնանի անզգամութիւնն կորուսիչ ախտ և կամ այլոց մասանց հոգւոյն չարութեանն անուանեալ տեսակք։

Արդ լինին չարք ախտք անձին ի ձեռն երից այսոցիկ՝ ի չար հրահանգից, յանուսումնութենէ, ի չար ունակութենէ»[51]։ Սակայն չարության ծնող բոլոր պատճառներն էլ, ըստ նրա, ենթակա են վերացման՝ ճիշտ դաստիարակության միջոցով. «...զի որպէս բնութեամբ առողջք և հիւանդոտք են ի խառնուածոյն, այսպէս ոմանք բնութեամբ դառնամաղձեալք և բարկացողք են, այլք՝ երկչոտք և վայրաբերք...

Արդ բժշկելի է զչար սովորութիւն՝ սովորութեամբ բարոյ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ։ Ի սկզբան մանկական հասակին ոչ տալ թոյլ արտաքս ընդ զգայութիւնս ցնորիլ մտացն, այլ որպէս ի մամոլս, խելամտութեամբ մեծաւ յամենայն կողմանցն յուսմունս իմաստութեան շարապնդել, մինչ զի բնաւորապէս ընտանասցի իմաստութեանն հանճարոյ և ընդ աճել մարմնական տիոցն՝ աճեսցի ընդ նմա և մտաւորական զարմութիւն իմաստիցն։

Իսկ զչար ունակութիւնն ողջացուցանելի է մարմնապէս դեղովք, ըստ կարի ի միջինն փոխադրելով խառնուած»[52]։

Մարդու դաստիարակության հիմքում դնելով կրթությունը, Երզնկացին պայքարում է միօրինակ կրթության դեմ։ Նա գտնում է, որ մանկան և երիտասարդի համար պետք է ընտրել նրա խառնվածքին ու ընդունակություններին համապատասխան զբաղմունք, ոմանց նվիրել գործնական զբաղմունքների, մյուսներին՝ գիտությանը, «Զերիտասարդս երկնաւոր սիրով խրատել, զոմանս վարժել և զայլս ի մարտի զօրացուցանել»[53]։

51 Մատ, ձեռ. № 2173, էջ 182ա-բ։
52 Անդ, էջ 182ա-բ։
53 Անդ, էջ 165ա։

Սակայն գիտությանն ու կրոնին նվիրված աշակերտները ևս տարբեր ընդունակություններ են ունենում, հետևաբար ուսուցիչները պարտավոր են այստեղ ևս ընտրություն կատարել, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի տրվեն իր ընդունակություններին և կարողությունների համապատասխան գիտելիքներ. «Վասն որոյ վարդապետք կոչեցան հարքն սուրբք, զի որք սիրեն յաստուածայինն մտանել դպրոց, կարողք եղեն տալ զիմաստութեանն գծագրութիւն և զանազան վարժ վարդապետութեան սոցա. ոմանց՝ զնախակրթականն իրատ և այլոց՝ զմիջինն իմաստ հանճարոյ և այլոց՝ ծայրագոյնն»[54]։

Ի միջի այլոց այս հատվածից կարելի է նաև եզրակացնել, թե գիտական և մանկավարժական ինչպիսի մեծ պատրաստականություն էր պահանջվում ժամանակի ուսուցչապետներից՝ վարդապետներից։

Ընդունելով հանդերձ, որ մարդկային ընդունակությունները տարբեր են լինում, Երզնկացին միաժամանակ մարդկային ունակությունների զարգացման գլխավոր պայման է համարում մարդու աշխատասիրությունը. «Եւ դարձեալ. զի ամենայն գիտութիւն և հանճար յերկուց բաժանի՝ ի պարզականն և յուսումնականն։ Պարզականն՝ որպէս մարգարէիցն սրբոց, ուսումնականն՝ որ աշխատասէր ջանուց և ի տրամաբանական քննութենէ»[55]։

Ելնելով այս ճշմարիտ մտքից, Երզնկացին զգուշացնում է վարդապետներին, որ տարբերակելով հանդերձ ուժեղ ու թույլ աշակերտներին՝ նրանք պարտավոր են վերաբերմունքի հարցում խտրություն չդնել աշակերտների մեջ, որովհետև լավ խնամքի և դաստիարակության դեպքում երբեմն ի ծնե ոչ ընդունակ աշակերտը ևս կարող է հասնել շոշափելի արդյունքների։

Երզնկացին, կրթությունն ու դաստիարակությունը դիտելով իբրև ժողովրդական բարքերի մաքրման, տգեղ երևույթների վերացման և մարդկային ընդունելի հարաբերությունների հաստատման կարևոր պայմաններ, այսքանով չի սահմանափակվում։ Նա գտնում է, որ կրթությունը և դաստիարակությունը չպետք է լինեն առանձին անհատի կամ դասի մենաշնորհը։ Նա պահանջում է, որ տերը, անկախ այն բանից, թե ավատատիրական հիերարխիայի որ աստիճանում է գտնվում, պարտավոր է հոգ տանել

54 Անդ, էջ 340բ—341ա։
55 Անդ, էջ 364ա։

իր ենթակաների և ծառաների ոչ միայն մարմնական, այլև հոգևոր պահանջների նկատմամբ և նրանց կրթության տալ ըստ նրանց ընդունակությունների[56]։

Երզնկացին գիտության և լուսավորության տարածումը դիտում է որպես երկրի աշխարհիկ և հոգևոր տերերի ամենամեծ առաքինություններից մեկը։

Նա բարի նախանձով է խոսում այն ժողովուրդների մասին, որոնք սեփական պետականություն և պետության կողմից հովանավորվող դպրոցներ ունեն։ Ըստ որում Երզնկացին չի խորշում օրինակ բերելու նաև մահմեդական ժողովուրդներին։ Այս հանգամանքը շատ կարևոր է այն իմաստով, որ պարզորոշ ցույց է տալիս, թե Երզնկացուն հուզել են ոչ այնքան ներքին գիտությունները, որոնք եկեղեցու կողմից հովանավորվող դպրոցներում էլ հաջողությամբ զարգանում էին, այլ «արտաքին» գիտությունները, որոնք այս շրջանում ևս բավական բարձր մակարդակի վրա էին գտնվում արաբների մոտ։ Եվ պատահական չէ, որ նա ոչ միայն հաճախ է իր խրատներում արծարծում ճշգրիտ գիտությունների վերաբերյալ խնդիրներ, այլև հայ և արաբական աղբյուրներից օգտվելով առանձին աշխատություններ գրում տիեզերագիտության, երկնային լուսատուների և այլ հարցերի վերաբերյալ։

Իշխաններին և բարձրաստիճան հոգևորականներին խորհուրդ տալով լինել կրթության ու գիտության տարածողներ ու պաշտպաններ, Երզնկացին անձնական օրինակ է ցույց տալիս նրանց՝ կազմակերպելով, ինչպես վերը տեսանք, մի շարք դպրոցներ, չնայած իր բազմազբաղ կյանքին և, հավանաբար, ոչ շատ մեծ նյութական միջոցներին։

Երզնկացու՝ գիտության և լուսավորության տարածման վերաբերյալ խրատները իրենց սահմանների մեջ անհիմն վերացականություններ չեն։ Նա շատ լավ հասկանում է, որ գործը տեղից շարժելու համար հարկավոր են նյութական և բարոյական խթաններ։ Երզնկացին պահանջում է, որ ոչ միայն տերերը, այլև ողջ հասարակությունը պարտավոր է սիրել ու հոգ տանել «գիմաստունս տեսության և վարուք երևելիս» մարդկանց նկատմամբ, հատկապես նրանց նկատմամբ, ովքեր զբաղվում են գիտության ուսումնասիրությամբ և մանկավարժությամբ, «որք աշխատին ի բան վարդապետության»[57]։

[56] Անդ, էջ 165ա։

[57] Անդ, էջ 165բ։

Անդրադառնալով մարդու գնահատմանը, նա հանգում է այն եզրակացության, թե մարդու անձնական բարեմասնություններով ու գիտելիքներով պետք է չափել նրա արժանիքները և ոչ թե ծագմամբ։

Մարդկային հարաբերություններում անհրաժեշտ համարելով տիրոջ և ծառայի գոյությունը, նա այդ հարաբերությունը քարացած չի համարում անհատի համար։ Ընդունելով, որ երկրի վրա ամեն ինչ փոփոխության և զարգացման մեջ է, նա գտնում է, որ մարդու ճակատագիրն էլ վերջնական չէ և ենթակա է փոփոխման։ **Մարդու իմաստությունը, ըստ Երզնկացու, կարող է նրա սոցիալական և տնտեսական վիճակի մեջ զգալի փոփոխություններ մտցնել**[58]։

* * *

Երզնկացու խրատական գործերում ուշագրավ նյութեր կան ժողովրդական բարքերի, սովորույթների ու կենցաղի վերաբերյալ։ Այդ իմաստով առավել հետաքրքիր են «Խրատ հասարակաց»-ը և Երզնկայի բնակիչներին ուղղված նոր տարվա շնորհավորական ուղերձը։

XII—XIII դարերում քաղաքային կյանքի ու աշխարհիկ մտածելակերպի զարգացումը էական տեղաշարժեր էր առաջ բերել մարդկանց գիտակցության մեջ։ Մարդիկ աստիճանաբար հեռանում էին կրոնական քարացած ըմբռնումներից ու նախապաշարումներից։

Այս տեսակետից հետաքրքիր օրինակ է 1371 թ. գրված մի աշխատություն, որի հեղինակը, նկարագրելով ժողովրդական զանգվածների խորթացումը եկեղեցուց, գրում է. «Իսկ ժողովրդականք, ամայիք և թափառականք, կորդացեալ մտաւք, մոլորեալ..., ի եկեղեցի ոչ դիմեն..., զաղօթս և զարտասուս ոչ ճանաչեն..., ի

[58] Մարդու անձնական բարեմասնությունների, իբրև նրա գնահատման հիմնական պայմանի, մասին Երզնկացու առաջ քաշած թեզը ոչ միայն նրա անձնական տեսակետն է, այլև ժամանակի հայ իրականության գերիշխող տրամադրությունը։ Այս շրջանի բազմաթիվ այլ հեղինակներ ևս փառաբանում են աշխարհիկ և հոգևոր այնպիսի գործիչների, որոնք ճանաչման և փառքի են հասել ոչ այնքան իրենց ծագման, որքան անձնական արժանիքների շնորհիվ (տե՛ս է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու վարքը, «Բանբեր մատենադարանի»։ № 7, 1964, էջ 412)։ Տարբերությունն այն է, որ Երզնկացու մոտ այդ խնդիրն առավել խորն է հիմնավորված և փաստարկված։

պատարագ ոչ փախտգին...»[59] և այլն։ Այնուհետև հեղինակը պատմում է, որ ինքը լսել է մեկի մասին, որը տասնհինգ տարեկան է դարձել, բայց եկեղեցում պատարագ չի լսել, մեկ ուրիշը տասը տարուց ավելի չի էլ հաղորդվել։

Անշուշտ կյանքի և մարդկանց դիտակցության աշխարհականացումը ուներ դրական մեծ նշանակություն։ Սակայն երբեմն ժողովրդական զանգվածները, հեռանալով եկեղեցուց և չստանալով բարոյական այլ սնունդ, մատնվում էին բացարձակ ատիտուդյան կամ ընկնում օտար կրոնների գաղափարախոսության ազդեցության ներքո, որ կործանարար էր անդրադառնում ժողովրդական բարքերի վրա։

Այդ հանգամանքը հատկապես նկատելի էր ընտանեկան հարաբերությունների հարցում։

Ընտանիքի և բարոյականության հարցը, XIII դարի հայտնի պայմաններում, չի կարելի դիտել իբրև առանձին, ժողովրդի քաղաքական ու սոցիալական ճակատագրից կտրված խնդիր։ Միայն ամենակայուն բարոյական ընտանիքը կարող էր դիմագրավել այն բազում փորձություններին, որ բերում էին մի կողմից՝ մահմեդական միջավայրն իր այլասերող հարեմական և սրանից բխող այլ բարքերով, մյուս կողմից՝ զարգացող քաղաքները, որտեղ մահմեդական Արևելքի և Եվրոպայի մեծ քաղաքների օրինակով երևան էին գալիս հասարակաց տներ, և որոշ կանայք իրենց զբաղմունքը դարձնում էին պոռնկությունը[60]։

Երզնկացին խստորեն պարսավում է այն հոգևորականներին, որոնք, ժողովրդական բարքերի դաստիարակներ լինելու փոխարեն, ընչաքաղցությունից դրդված, ակամա իրենք են խրախուսում պոռնկությունը՝ թույլ տալով այդպիսիներին ոչ միայն եկեղեցի հաճախել, այլև հաղորդվել։

Բարոյական ընտանիքի հիմքը Երզնկացին համարում է կամավոր, փոխադարձ սիրո վրա հիմնված ամուսնությունը։ Նա գտնում է, որ ամուսնացող զույգերը նախօրոք պետք է իրար տեսնեն և հավանություն տան։ Արգելելով բռնի ամուսնությունը, նա խրատում է հոգևորականներին ու ծնողներին, որ դրանից «բաղում վնասք լինին»[61]։

[59] Տե՛ս Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանության» կանոնադրությունը (1280 թ.), «Բանբեր մատենադարանի», № 6, էջ 370։

[60] Այդ մասին ուշագրավ օրինակներ կան հենց Երզնկացու խրատներում։

[61] Մատ, ձեռ. № 2329, էջ 236բ։

Երզնկացին, ինչպես և ժամանակի մյուս առաջավոր հայ գործիչները, ծառանում է անչափահաս ամուսնությունների դեմ՝ բացատրելով, որ դեռևս չհասունացած երեխաների ամուսնությունը պատճառ է դառնում հոգևոր ու ֆիզիկական այլանդակությունների. «Եւ թէ քանի մեծ մեղք և չարիք է ի լինել յայն մէջն, որ զփոքր աղջիկն պսակեն, զայն ոչ կարեմ գրել ի գրի ասա։ Վասն որոյ թողէք զչար սովորութիւն»[62]։

Երզնկացին տղայի համար ամուսնության տարիքը է համարում 15-ը, իսկ աղջկա համար՝ 14-ը։ Սակայն, նկատի առնելով խառնակ ժամանակները, նա թույլ է տալիս երբեմն այդ սահմանից շեղումներ հատկապես աղջիկների համար՝ «և թէ այլ նեղին՝ ԺԲ (12) տարոյ»[63]։

Վաղ ամուսնություններից պակաս չարիք չի եղել նաև մերձավոր ազգականների ամուսնությունը։ Փաստեր կան այն մասին, որ այս ժամանակներում հատկապես տիրող շերտերի շրջանում է մեծ չափերի հասնում այն։ Ինքնին հասկանալի է, որ այդ արվում էր ավատատիրական՝ առանց այն էլ մասնատված տիրույթները տրոհումից կանխելու նպատակով։ Այդ արվում էր, թերևս, նաև այն պատճառով, որ շատ քիչ վայրերում էին պահպանվել ազնվական ընտանիքներ, և նոր ընտանիքի հետ ազգակցական կապեր հաստատելը երբեմն հարուցում էր որոշակի դժվարություններ։ Պայքարելով մերձամուսնությունների դեմ, Երզնկացին ոչ միայն նշում է նման երևույթի ֆիզիոլոգիական վնասը նոր սերնդի համար, այլև զգուշացնում, թե դա հակասում է քրիստոնեական բարոյականությանը, ըստ որի արյունակիցներն արդեն իսկ ազգականներ են, մինչդեռ ամուսնությունը պետք է հետապնդի

[62] Անդ, էջ 236ա-բ։

[63] Ամուսնության համար սահմանված տարիքի այս նվազեցումը հայ եկեղեցու մեջ հաճախ են ստիպված եղել կիրառել եկեղեցու գործիչները՝ երեխաներին փրկելու համար մահմեդական տիրապետողների առևանգումից, իսկ ավելի ուշ՝ մանկամժողովներից։ Բանն այն է, որ կինը, անկախ իր ազգային և կրոնական պատկանելությունից, եթե քրիստոնյայի կին է եղել, մահմեդականի աչքում համարվել է պղծված և ազատվել է հարեմ ընկնելու վտանգից։ Հայտնի են դեպքեր, երբ կաթողիկոսը կարգադրել է պսակել յոթից ավելի տարիք ունեցող բոլոր աղջիկներին։ Ավելորդ է ասել, որ այս դեպքում արգելվում էր զույգերի կենակցումը մինչև արբունքի հասնելը (տե՛ս Մաքր Մաքրեան, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, Մոսկվա, 1876. տե՛ս նաև Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 126)։

աղգակցական նոր կապերի ստեղծում: Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա է քրիստոնեական բարոյագիտության և ավատատիրության իրական շահերի բախում:

Երզնկացին գտնում է, որ ամուսնական նորմալ կյանքի և բարոյական ընտանիքի ամրապնդման համար պետք չէ անհարմար զգալ կամ քաշվել երիտասարդ մարդկանց մանրամասն խորհուրդներ տալուց. «Ու արդ, լուարուք, հաւատացեալք և քահանայք, եթէ մեք ամաչեմք և ոչ քարոզեմք, և դուք ամաչէք և ոչ խրատէք, ի մեղաց նորա և ի խղճէ ոչ եմք անպարտ: Զոր աւրինակ բժիշկ, որ գիտէ զցաւս հիւանդի, եթէ ոչ զդուշացուցանէ, և նա վնասի, պարտական է խղճոյ, և թէ բժիշկն զդուշացոյց, և նա ոչ պահպանեցաւ՝ ինքն է անձին իւրոյ վնասուղ»[64]: Ելնելով այս ճշմարիտ մտքից և մտահոգվելով մոր ու մանկան առողջության համար, նա խստիվ արգելում է երիտասարդ ամուսիններին մերձենալու կնոջը հղիության և դաշտանի ժամանակ՝ խրատելով, որ այդ հանգամանքը կարող է պատճառ դառնալ հոգեպես ու ֆիզիկապես անկատար երեխաներ ծնելու, իսկ դրա ամբողջ մեղքը ընկնում է ծնողների վրա:

* * *

Հասարակության բարոյական ամենածանր ախտերից մեկը Երզնկացին համարում է գողությունը:

Հանրահայտ է, որ գողությունը ուղիղ համեմատության մեջ է եղել ավատատիրական մասնատվածության և անիշխանության հետ: Թե ինչպիսի մեծ տարածում և չափեր էր ընդգրկել գողությունը միջնադարյան Արևելքում, կարելի է դատել եվրոպական մի շարք ճանապարհորդների ուղեգրություններից: Օգտվելով կենտրոնացված ուժեղ իշխանության բացակայությունից, գողությամբ զբաղվում էին ոչ միայն առանձին անհատներ կամ ավազակախմբեր, այլև ավատատեր իշխաններ: Այս տեսակետից խիստ հատկանշական է հույն իշխան Կաբասիլայի մասին իսպանական դիվանագետ և ճանապարհորդ Գոնսալես դե Կլավիխոյի հաղորդածը: Սրանից իմացվում է, որ այս իշխանի հիմնական եկամուտները ստացվում էին ճանապարհորդներին ու առևտրականներին կողոպտելու կամ «հարկ» վերցնելու միջոցով, որի չափերը որոշում էր ինքը՝ իշխանը: Հետաքրքիր է, որ Կլավիխոյի այն բողոքին, թե ինքը վաճառական չէ, այլ իսպանիայի դեսպան, և գնում է հզոր Թեմուրի մոտ, որը Կաբասիլայի տիրոջ՝ Տրապիզոնի կայսեր սյուզերենն է, Կաբասիլան անփութորեն պատասխանում է, թե ճիշտ է, բայց չի արգելում իրեն հարկ վերցնել դեսպանից, որովհետև իր իշխանության պահպանման համար նա ստիպված պիտի լիներ կողոպտել նույնիսկ Թեմուրին:

Երզնկացու խրատներում առավել հետաքրքիրն այն է, որ տեղեկություններ են պահպանված ոչ միայն գողության այս ձևի, այլև այդ բացասական երևույթի այլ դրսևորումների մասին:

Գողության չորս տեսակ է նշում Երզնկացին. «Այն, որ բռնաւորքն են, ի լերինս և ի ճանապարհակիցս նստին և սպանանեն և կողոպտեն և յափշտակեն, որպէս գազան կատաղի. և որ տկարքն են, մկան պէս որմափոր լինին, գաղտաբար շորթեն և գողանան: Եւ են, որ յայգիս և ի ծառս և յարտաւարեայս և յանդաստանս անխտրաբար գողանան զընկերացն: Եւ են, որ ի վաճառս գնոյ և ծախոյ խաբեն և աւելի առնուն և պակաս տան, որ կարի դառն է և աննեղելի»[65]: Ինչպես տեսնում ենք, Երզնկացին գողության ամենածանր տեսակը համարում է վերջինը, որ ինքնին ապացույց է, թե ինչպիսի մեծ չափեր էին ընդունել վաշխառուությունն ու խաբեությունը առևտրի ասպարեզում:

Գողությունը հասարակական չարիք է, և նրա դեմ պարտավոր է պայքարել ողջ հասարակությունը, ասում է Երզնկացին, որովհետև գողը, եթե ի վիճակի լիներ, անխտիր բոլորից պիտի գողանար, և միայն անկարողությունն է նա պահում նրան իր ցանկությունը լրիվ իրականացնելուց:

Գողի համար նա չի գտնում արդարանալու որևէ միջոց, քան գողացածը նա վերադարձնելը և ապաշխարելը. «Արդ գիտացիք, եթէ գողն և ղրկողն և յափշտակողն մէկ սպիտակացն ոչխար մի մատաղ առնէ՝ չունի թողութիւն»[66]:

* * *

Երզնկացին գտնում է, որ արատները ինչպես անհատի, այնպես էլ հասարակության մեջ հանդես են գալիս սերտորեն շաղկապված և մեկը մյուսով պայմանավորված, այդ իսկ պատճառով իր խրատներում նա հետամուտ է լինում ոչ թե առանձին

64 Մատ, ձեռ. № 2329, էջ 238ա-բ:

65 Մատ, ձեռ. № 2329, էջ 241բ—242ա:

66 Անդ, էջ 242ա:

արատների քննությանն ու ժխտմանը, այլ աշխատում է հասարակությանը և անհատին բուժել ամբողջության մեջ։

Նա «Խրատ հասարակաց»-ում մանրամասն կանգ է առնում այն ծանր հետևանքների վրա, որ առաջ են գալիս երդման չարաշահությունից, սուտ վկայությունից և հիշողնատվությունից (հայհոյանքից)։

Երդումը հսկայական նշանակություն ուներ միջնադարյան իրավագիտության համար։ Աստծո անունով և ավետարանի վրա երդում տալը համարվում էր մեծագույն սրբություններից մեկը։ Սակայն ամեն չնչին առիթով երդվելը, երդման հաճարակացումն ու գռեհկացումը արժեքազրկում էին նրա նշանակությունը ժողովրդի աչքում։ Հաճախ անտեղի տրված երդումը մարդկանց գցում էր ծանր կացության մեջ։

Երզնկացին, իր խրատները համոզիչ դարձնելու համար, գտնում է նորը բացատրություն։ Նա զգուշացնում է, որ մարդիկ մեծ մասամբ երդվում են հուզմունքի, զայրույթի, ոգևորության, ամոթի պահերին, իսկ խոստացածն իրականացնելը հետագայում դառնում է ուժերից վեր կամ անհնարին, և մարդ կամա թե ակամա երդմնազանց է լինում[67]։

Երզնկացին հատկապես խստիվ արգելում է աստծո անունով երդվելը, և այս հարցի վերաբերյալ բացատրությունը լավագույնս ցույց է տալիս, թե ինչպես յուրաքանչյուր վարդապետություն բարոյական այս կամ այն ըմբռնումը ծառայեցնում է իր շահերին։ Աստծո անունով երդվելու սովորությունը, ըստ Երզնկացու, գալիս է մովսեսականությունից, բայց այն ժամանակ, ինչպես նա է բացատրում, այդ երդման իմաստն այն էր, որ մարդկանց հեռացնի կռապաշտությունից և կուռքերի անունով երդվելուց, որով հեթանոս հասարակության մեջ հաստատվում կամ ժխտվում էին երեվույթներն ու փաստերը։ Մինչդեռ քրիստոնեությունը հարկ չուներ դիմելու այդ քայլին, ուստի աշխատում էր երդումը յուրովի ծառայեցնել իր շահերին։ Այս հանգամանքը հասկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ քրիստոնեությունը ծագել էր հրեական հասարակության ընդերքում, որն արդեն լրիվ մարսել էր միաստվածության գաղափարը։

Երզնկացին գտնում է, որ երդվել կարելի է միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, պայմանով, որ այն լինի ճիշտ,

67 Մատ, ձեռ. № 2329, էջ 243ա-բ։

հետապնդի բացառապես բարի նպատակներ և կատարվի միայն եկեղեցում, քահանայի միջնորդությամբ։

«Արդ, յորժամ հարկ լինի քրիստոնէին, և երդումն հասնի յեկեղեցի, և քահանայի միջնորդութեամբ, և ղորդ է քանն, և հոգոյ շահ կայ, և արեան փրկութիւն, կայ՝ յայնժամ զայս վկայական երդումս թոյլ տան, այլ և այս ոչ առանց ապաշխարութեան լինի»[68]։ Իսկ նրանք, ովքեր սովորություն են դարձրել, սուտ թե իրավ, ամեն առիթով երդվել «ի փողոցս և ի հրապարակս», ենթակա են ծանր պատժի։

Ինչպես ասվեց, երդման հետ ամենասերտ առնչության մեջ էր սուտ վկայությունը, որի չարաշահումը բազմաթիվ ողբերգությունների առիթ էր ծառայում։ Երզնկացին, առավել քան երդումը, ծանրագույն մեղք է համարում սուտ վկայությունը, որն «աւերիչ և կործանիչ է ճշմարտութեանն, որ զոր ոչն ետես և զոր ոչն գիտէ՝ վկայէ»[69]։ Նա խրատում է, թե սուտ վկայություն տվողը հավասարապես հանցակից է այն արարքի համար, որը թաքցնում է, և ենթակա է խիստ պատժի։

Հասարակության միջից արմատախիլ անելու համար հայհոյելու տգեղ սովորությունը, Երզնկացին հիշեցնում է, որ հիշողնատուներին նզովել են դեռևս Մովսեսն ու այլ մարգարեներ։ Սակայն առավել հետաքրքիր է Երզնկացու հայտնած այն տեղեկությունը, թե այդ հարցի առթիվ իր կենդանության օրոք բազմաթիվ ժողովներ է գումարել Վարդան Արևելցին և վերստին հաստատել, թե հիշողնատուն ոչ ոք, նույնիսկ կաթողիկոսն իրավունք չունի ներում շնորհելու, եթե հանցավորը չի զղջում և ներում չի աղերսում։ «Եւ սուրբ հայրն մեր մեծ վարդապետն Վարդան յիւր կենդանութիւնն բազում անգամ ժողովք արար և զնոյն կանոնք հաստատեաց, որ կաթողիկոս կամ եպիսկոպոս կամ վարդապետ կամ երէց չունին իշխանութիւն զիշողնատուն կամ աւրհնել կամ հաղորդել կամ թաղել, կամ զաղաչան կնքել, կամ պսակել, որ չտան զսրբութիւն շանց և ինքեանք նոցա մեղացն և նզովիցն կցորդ լինին»[70]։ Երզնկացին առավել խիստ պատիժներ է սահմանում հիշողնատուների համար։ Նա խրատում է, որ վերջիններից պետք է խորշեն ոչ միայն օտարները, այլև հարազատները. «Արդ յայտնի եղև, որ

68 Անդ, էջ 243բ։
69 Անդ, էջ 244ա։
70 Անդ, էջ 246ա։

յիշողնատուն Աստուծոյ հայհոյիչ է, վասն որոյ չէ պարտ զյիշողնատուն քրիստոնէ կոչել, այլ հայրն և մայրն, եղբայր և սիրելիք, կին և որդիք գարշին յիշողնատուէն և ատեն, որպէս զգարշելի և զպիղծ, և դև և սատանայ կոչեն, մինչև դառնայ ի շար սովորութենէն և պահաւք և աղաւթիւք և ողորմութեամբք քաւի և արդարանայ շնորհաւքն Քրիստոսի։ Ապա որչափ չէ դարձել ի մեղացն և սրբել զբերանն, չունի ոք իշխանութիւն թողութիւն առնել նմա, կամ եկեղեցի թողուլ և կամ հաղորդել»[71]։

* * *

Քննադատելով և մերժելով հասարակության մեջ տեղ գտած արատները, երզնկացին հասարակության առաջին, ամենակարևոր առաքինությունն ու նրա ներդաշնակության հիմնական պայմանը համարում է սերը։ Սակայն նրա մոտ սերը, սիրո գաղափարը ավետարանի կույր կրկնությունը չէ, որքան էլ նրա ելակետը ավետարանն է կամ եկեղեցական հայրերի ասույթները։ Նա իր դարով, իր ժողովրդի պահանջներով ու հոգսերով ապրող անձնավորություն է, և ամենուրեք, ինչ հարցի մասին էլ գրելիս լինի, նկատվում է նրա մտահոգությունը նախ և առաջ հայ ժողովրդի ներկայի և ապագայի համար։ Այս հանգամանքն է, որ նրան թելադրում է հոգալ առավելապես երկրային սիրո մասին։

Երկրային առաջին և ամենամեծ սերը նա համարում է դեպի ծնողը տածած զգացմունքն ու պարտավորությունը. «...զի յետ Աստուծոյ պատճառք և գործիք են ծնաւղքն իւրեանց ծննդոցն և որպէս թէ մարմնաւոր աստուածք են իւրեանց զաւակացն, զի ծնան և սնուցին և պատճառ կենաց եղեն»[72]։ Նա խրատում է զավակներին, որ ծնողների նկատմամբ իրենց տածած հոգատարությունն ու խնամքը միայն մի չնչին մասն է նրանց հանդեպ ունեցած պարտքի, որովհետև՝ «թէ զայլն ամենայն վճարեն, զայն ո՞րպէս կարեն վճարել, որ ծնան զնոսա։ Զի ծնունդքն ոչ կարեն զնոսա ծնանիլ և այնու պարտական գտանին»[73]։

Երզնկացին շատ բարձր է գնահատում նաև ընկերոջ նկատմամբ տածած սերը։ Նա դարձյալ խրատում է, թե հանուն ընկերոջ ու եղբոր սիրո մարդ պետք է ընդունակ լինի ամենածանր

71 Անդ, էջ 246բ—247ա։
72 Անդ, էջ 250բ։
73 Անդ։

զոհաբերության, ընդհուպ անձնազոհության։ Թե որքան գործնական ու երկրային է նրա քարոզած սերը, կարելի է գաղափար կազմել հետևյալ հատվածից. «Եւ ամենայն ոք, որ ասէ, թէ սիրեմ զԱստուած, և զեղբայր և զընկեր իւր ատէ՝ սուտ է, զի որ չէ մարդասէր, նա և ոչ աստուածասէր իսկ է»[74]։ Ընկերոջ նկատմամբ սիրո և նվիրվածության մասին իր գաղափարները երզնկացին առավել զարգացնում է երզնկայում կազմակերպված եղբայրության համար իր գրած «Սահման և կանոնք»-ում, ուր նա պահանջում է, անհրաժեշտության դեպքում, ոչ միայն նյութապես և բարոյապես օգնել ընկերոջը, այլև ընդդիմանալ հզորներին, բռնավորներին, որոնց զոհ է դարձել իրենց ընկերը[75]։

Վերն արդեն առիթ ունեցանք ասելու, որ երզնկացու երազանքն է տեսնել իր հայրենիքն ու ժողովուրդը ազատագրված օտար բռնակալական լծից և համախմբված ավատատիրական մի հասարակության մեջ, որը, սակայն, զերծ պետք է լինի գոյություն ունեցող անարդարություններից ու իշխանության ծայրահեղ չարաշահումներից։ Ահա այս «ներդաշնակ» հասարակության երազն է, որ դրդում է նրան, ելնելով իր իսկ քարոզած՝ ամեն ինչ իր տեղի և ժամանակի մեջ սկզբունքից, խրատելու և կոչ անելու փոխադարձ սիրո և շահերի հասկացության հասարակության բոլոր անդամների միջև. «Այսպէս պարտ է սիրել և պատուել զթագաւորս և զիշխանս, զդատաւորս, զծերս, զդիտունս, զարուրբս, զեպիսկոպոսս և զիշխանս, զդատաւորս, զծերս, զդիտունս, զիմաստունս, զառաքինիս, զաղքատս, զաւետարականս և զամենայն հաւատացեալս»[76], — եզրափակում է երզնկացին։

* * *

Այնքանով, որքանով երզնկացու խրատներն ուղղված էին ոչ միայն աշխարհիկ մարդկանց, այլև հոգևորականներին, նրանցում բավական նյութ կա հոգևորականության բարքերի, սովորույթների մասին ևս։

Ինչպես երզնկացու խրատներից, այնպես էլ նրանից դեռևս շատ առաջ գրված Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից որոշակի երևում է, որ աշխարհիկ կյանքի զարգացումը մեծ տեղաշարժեր էր առաջ բերել նաև հոգևորականության շրջանում։

XII—XIII դդ. միջնադարյան մատենագրության այն աստիճան

74 Անդ, էջ 250ա։
75 Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանության» կանոնադրությունը (1280), «Բանբեր մատենադարանի», № 6, էջ 374։
76 Մատ, ձեռ. № 2329, էջ 250ա։

տեղի է տալիս բնությանը, նրա ընձեռած վայելքներն ըմբռշխնելու մարդկանց ցանկությանը, որ շատ հոգևորականներ ոչ միայն հաճույքով մոռանում են իրենց հիմնական պարտականություններն ու հանձնվում աշխարհիկ բարիքները վայելելու, այլև հաճախ իրենց հիմնական զբաղմունքն են դարձնում առևտրով, արհեստներով և երկրագործությամբ զբաղվելը: Կորցնելով հավատն ու երկյուղածությունը՝ նրանք կատարյալ չարիք են դառնում հավատացյալ զանգվածների համար: Օգտվելով եկեղեցական ծեսերի ու կանոնների մասին ժողովրդի անտեղյակությունից, նրանք դիմում են ամեն կարգի չարաշահումների, պահանջելով ոչ միայն ավելին, քան իրավունք ունեին, այլև հարկ առնելով այնպիսի ծառայությունների դիմաց, որոնց համար խստիվ արգելվում էր դրամ պահանջելը: Օրինակ, Երզնկացին զայրույթով է խոսում այն հոգևորականների մասին, որոնք կնքադրամ են պահանջում, որն առհասարակ մերժված է եղել հայ եկեղեցու կանոններով[77]:

Զգուշով որոշակի պարզություն մտցնել քահանաների հասույթի մեջ, նա խրատում է, թե իրավունք ունեն միայն տասանորդ պահանջելու «ի մատաղի, ի կալոյ և ի հնձանէ և յամենայն արմտեաց»[78]: Մնացած դեպքերում քահանաները պարտավոր են բավարարվելու այն նվերներով, որ տալիս են հավատացյալները միայն կամովին:

Երզնկացին առանձին դառնությամբ է արձանագրում հոգևորականության մեծ մասի տգիտությունը, որ՝ «ոչ սաղմոսն գիտեն և ոչ զբանք աղաւթից սուրբ պատարագին, և խաբեն զԱստուած և զմարդիկք՝ սուտ պատարագօք»[79]: Զաղկելով այն եպիսկոպոսներին, որոնք կաշառքով, քծնանքով կամ արյունակցական կապերից ելնելով ձեռնադրում են տգետ քահանաներ, Երզնկացին նշում է գիտելիքների այն նվազագույնը, որ պարտավոր է ունենալ յուրաքանչյուր քահանա. «Թէ ոչ զամենայն աստուածաշունչս գիրս, գոնեա զեկեղեցական գիրս ուղղիչ ընթերցմամբ և զշարականն ամենայն և զմանրուածոն ձայնաւորացն պարտ է գիտել»[80]:

Ինչպես ամեն իշխան չէ, որ աստծո դրած է, այնպես էլ ամեն քահանա աստծո դրած չէ: Սակայն եթե անարդար իշխանի դեմ

77 Մատ, ձեռ. № 2329, էջ 266ա:
78 Անդ, էջ 262ա:
79 Անդ, էջ 266ա:
80 Անդ:

Երզնկացին բացարձակ պայքարի կոչ չի անում և բավարարվում է միայն նրան բարոյագիտական խրատներ տալով, կյանքից վերցրած փաստերով աշխատում համոզել, թե նա առավել կշահի, եթե իր իշխանությունը արդարությամբ վարի, ապա հոգևորականության հարցում Երզնկացին շատ վճռական է: Նա օրենքից դուրս է համարում տգետների և անիրավների քահանայական իրավունքը, պահանջելով անընդունելի և պիղծ համարել նրանց կատարած բոլոր ծեսերը:

Երզնկացին զայրույթով է արձանագրում նաև այն փաստը, որ շատ հոգևորականներ եկեղեցուն հասանելիք միջոցները ծառայեցնում են իրենց և իրենց ընտանիքների համար փարթամ, բարեկեցիկ կյանք ստեղծելու՝ մոռանալով եկեղեցու ամենատարրական պահանջների մասին. «Լուարուք, քահանայք, զհրամանս սրբոյս, որք հարկաւոր համարիք կանաց ձերոց և դստերաց առնել բազում հանդերձս զարդարանաց և այլ յոլով փարթամութեան փոյթ ունիք, իսկ քահանայական զգեստ ոչ առնէք, որ այնքան հարկաւոր է»[81]:

Մի այլ առիթով, նկարագրելով որոշ քահանաների վարքը քաղաքներում և ագարակներում, Երզնկացին, թեկուզ կողմնակիորեն հետաքրքիր փաստեր է հաղորդում ընդհանրապես միջնադարյան Հայաստանի քաղաքային վերնախավի ցոփ կենցաղի մասին. «Եւ լուաք վասն քահանայից, որք ի քաղաքի, և վասն սարկաւագաց, թէ առանց խոստովանութեան, յաւուրս պահոց ոչ արգելուն զինքեանս ի գինոյ, այլ և անչափ յագեցմամբ արբեցութեան ախտին հրապարակին ի մէջ գինարբուացն, և անպարկեշտաբար նստին ի ժողովս և խրախճանս գուսանականաց երգովք ի կաքաւս լկտի խաղուց և այլ վասն պէս-պէս իրաց և անասնաբարոյ մարդոց: Այլ և վասն ագահութեան զբոզսն, որք ի տունս պոռնկութեան և զկանայս այլազգեաց մեծարէին ընդ քրիստոնեայս՝ տալով նոցա զմարմինն տէրունական»[82]: Կամ՝ «և զբոզսն, որք յարակայ ի պոռնկանոցսն են, վասն ագահութեան ընդ ժողովրդեանն դասիք»[83]:

Քահանաների ընչաքաղցությունն այն աստիճանի է հասնում, որ նրանցից ոմանք առանց քաշվելու թալանում են ոչ միայն

81 Անդ, էջ 266բ—267ա:
82 Անդ, էջ 273բ—274ա:
83 Անդ, էջ 271բ:

ժողովրդին, այլև միմյանց՝ գաղտնի կամ բացահայտ խլելով ուրիշի հասույթները։

Դեռևս Շնորհալին բողոքում էր այն բանի դեմ, որ շատերը եկեղեցին դիտում են իբրև տուկ հարստանալու հեշտ միջոց և աշխատում են կարճ ժամանակում տեր դառնալ հնգայական ունեցվածքի։ Նա ցավով գրում է, թե նմաններն իրար հանդիպելիս ոչ թե եկեղեցու և աստծու գործերով են հետաքրքրվում, այլ իրենց այգիների ու անդաստանների բերքով, որոնք մշակվում էին եկեղեցու անունից՝ ժողովրդական զանգվածներին շահագործելու միջոցով։ Հայտնի է, որ այս սովորությանը վերջ տալու համար Շնորհալին դիմում է նույնիսկ ծայրահեղ միջոցի՝ կարգադրելով կտրել վանքերի և եկեղեցիների շուրջը եղած բազմաթիվ մրգատու ծառեր։

Սակայն, դատելով մի շարք հանգամանքներից, հոգևորականության մասնակցությունն աշխարհիկ գործերին XII—XIII դդ. ոչ միայն չէր վերացել, այլև ընդգրկել էր կյանքի նորանոր ոլորտներ։ Հետևելով իրենց ավագ պաշտոնակիցների՝ եպիսկոպոսների օրինակին, որոշ քահանաներ փաստորեն դառնում էին աշխարհիկ իշխանավորներ։ Այդպիսիների դեմ է, որ Երզնկացին զայրույթով գրում է. «Թէ ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթեացին, և ընդ իշխանութեամբ իշխանաց լիցին՝ հարկապահանջ և ոստիկանս կարգել աշխարհական գործոց, ասէ գիրն առ նոսա. «Թէ լաւ էր, թէ բնաւ չէր ծանուցեալ նոցա զարդարութեան ճանապարհն, քան թէ ծանեան իսկ և յետս կացին»։ Այնպիսիքն մի՛ լիցին քահանայ, այլ՝ աստուածախաբ։ Պատարագ նոցա՝ կափիւնք շանց։ Մկրտութիւն նոցա՝ որպէս թլփատութիւն Հրէից։ Տունք նոցա՝ որպէս մեհեանք դիւաց։ Եկեղեցիք նոցա կրկին աւրհնեացին»[84]։

Երզնկացին արգելում է նաև այն «անատակ» սովորությունը, երբ որոշ հոգևորականներ, մտահոգված իրենց և արյունակիցների աշխարհիկ փառքով, կարգադրում են թաղել իրենց եկեղեցու բակում, փոխանակ հանրային գերեզմանատանը։

Երզնկացին նույն զայրույթով է խոսում նաև այն եպիսկոպոսների մասին, որոնք մոռանալով հոգևոր առաջնորդի իրենց կոչումը՝ կենցաղով ու բարքով առավելապես նմանվում են

[84] Մատ, ձեռ. № 2329, էջ 275բ—276ա։

աշխարհիկ իշխանների։ Այդպիսիները, ինչպես ասվեց, քահանաներ ձեռնադրելիս նախապատվությունը տալիս են ոչ թե գրագետ, համեստ վարքի տեր մարդկանց, այլ նրանց, ովքեր կաշառքով ու քծնանքով շահում են իրենց համակրանքը[85]։

Ինքնին հասկանալի է, որ այս ամենը ժողովրդական զանգվածների մեջ պետք է առաջ բերեր խոր զայրույթ և հիասթափություն եկեղեցուց ու հոգևորականությունից՝ առավել ջլատելով ժողովրդի միասնությունը, որի պահպանման համար առանց ընկրկելու խրատում ու պայքարում էր Երզնկացին։

* * *

Դժգոհ լինելով տիրող իրականությունից և պայքարելով աշխարհիկ ու հոգևոր տերերի ծայրահեղ անարդարությունների դեմ, Երզնկացին չի տալիս, և չէր կարող տալ, այդ ամենը ծնող բուն պատճառները և նշել դրանց վերացման ճիշտ ուղիները։ Սակայն նա քչերից մեկն է, որ վեր է կանգնած այդ երևույթների՝ միջնադարում դասական դարձած բացատրությունից։

Ինչպես հայտնի է, ողջ միջնադարում Հայաստանին բաժին ընկած թշվառությունները բացատրվում էին միայն աստծո զայրույթով, որ, իբր, պատժում էր հայերին իր պատվիրանները ոտնահարելու համար։ Երզնկացին, լիովին չկտրվելով միջնադարում համատարած ընդունելություն գտած այս մտքից, այնուամենայնիվ հսկայական առաջընթաց է կատարում՝ բոլոր չարիքների ամենահիմնական պատճառներից մեկը համարելով տգիտությունը։ Նա իր ժողովրդի և հայրենիքի փրկության հույսը կապում է բոլոր խավերի մեջ լուսավորության, գիտության տարածման հետ՝ այդ նպատակին նվիրաբերելով և՛ իր ունակությունները, և՛ հեղինակությունը, և՛ նյութական միջոցները։

Այսպիսով, փաստորեն Երզնկացին Հայաստանի համար նշանակալից XIII դ. առաջիններից մեկն էր, որը սաղմերն էր ցանում այն մեծ գաղափարախոսության, որի հետագա զարգացումը նոր պայմաններում պետք է բերեր նոր իմաստ ու նոր բովանդակություն և որի կրողները պետք է ոչ միայն քննադատեին, այլև մերժեին ավատատիրական կարգերը։

Անշուշտ, ավատատիրական հասարակության մեջ, այն էլ Հայաստանի ծանր իրականության պայմաններում, անիրագործելի

[85] Անդ, էջ 266ա։

էին Երզնկացու խրատներում առաջ քաշված շատ գաղափարներ։ Սակայն նրա խրատական գործերը, բացի միջնադարյան Հայաստանի իրականությունը ներկայացնող հուշարձաններ լինելուց, ցույց են տալիս այն ուղին, որով միջնադարյան բարոյագիտության ոլորտում աստիճանաբար զարգանում է հայ հասարակագիտական միտքը։

Երզնկացու մի շարք քարոզների ու ճառերի՝ մեր կողմից կատարած թոուցիկ համեմատությունն իսկ միջնադարյան հայ մեծ փիլիսոփաներ Հովհան Որոտնեցու որոշ ստեղծագործությունների և, հատկապես, Գրիգոր Տաթևացու Քարոզների նշանավոր ժողովածուի («Քարոզգիրք. Ամարան հատոր. Ձմերան հատոր») հետ, բացահայտեց այնպիսի փաստեր, որոնք ապացուցում են Երզնկացու մեծ ազդեցությունը հայ փիլիսոփայական մտքի այդ նշանավոր ներկայացուցիչների վրա։ Ի միջի այլոց Որոտնեցին և Տաթևացին բավական ժամանակ ապրել են Երզնկայում, մոտիկից ծանոթացել Երզնկացու և ընդհանրապես Եկեղյաց գավառի գիտական դպրոցի ներկայացուցիչների ուսումնասիրություններին։ Սակայն այս շատ կարևոր հարցը այստեղ մասնավոր քննության առարկա չենք դարձնում, որովհետև այն իր էությամբ ու նշանակությամբ դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից՝ կարոտ լինելով աղբյուրագիտական ու մասնագիտական մանրամասն քննության։ Մեզ մնում է միայն ավելացնել, որ Երզնկացու փիլիսոփայական հայացքների առնվազն ութսունն առ հարյուրը երևան են գալիս նրա խրատական կամ ըստ էության խրատական բնույթ ունեցող գործերում։

Երզնկացու խրատական բնույթի գործերում բավական հետաքրքիր նյութ կա նաև հայ բժշկության, արվեստների, երաժշտության և, անգամ, մարզական կյանքի պատմության վերաբերյալ, որոնց հանգամանալից քննությունը եթե անհնար է սույն ուսումնասիրության մեջ, ապա համառոտ ծանոթությունը, կարծում ենք անհրաժեշտ է և օգտակար։ Երզնկացու ստեղծագործությամբ զբաղվող գիտնականները, անշուշտ, անդրադարձել են այդ հարցերին, և մեր աշխատության մեջ նրանց առաջ քաշած որոշ մտքերի կրկնությունն անխուսափելի է։ Սակայն, եթե նախորդ ուսումնասիրողները խնդրին մոտեցել են բացառապես Երզնկացի-գիտնականի աշխարհայացքն ու գիտական ունակությունները գնահատելու տեսանկյունով, ապա մենք այդ հարցերի վրա կանգ ենք առնում՝ առավելապես ցույց տալու համար խրատական գործերի պատմա-

գիտական արժեքը, մեկ անգամ ևս համապատասխան մասնագետների ուշադրությունը հրավիրելով այդ բնույթի երկերի վրա։ Մյուս կողմից՝ գիտական շրջանառության մեջ ենք դնում մի շարք հետաքրքիր փաստեր, որոնք վրիպել են ուրիշների ուշադրությունից։

* * *

Սրանից երկու և կես տասնամյակ առաջ Լ. Խաչիկյանը գիտական շրջանառության մեջ դրեց մի փաստ, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն հայ, այլև ուրիշ ժողովուրդների բժշկագիտությամբ զբաղվող մասնագետների շրջանում[86]։

Լ. Խաչիկյանը Հովհաննես Երզնկացու՝ ձեռ սաղմոսին նվիրված մեկնաբանական քարոզի ուսումնասիրությամբ բացահայտեց, որ դեռևս XIII դ. Կիլիկյան Հայաստանում գիտա-հետազոտական նպատակներով հերձում էին մահվան դատապարտված հանցագործներին։ Ավելին, նա համոզիչ կովաններով հաստատեց նաև, որ «Կիլիկիայում (թերևս նաև բուն Հայաստանի շրջաններում) գոյություն են ունեցել բժշկական դպրոցներ, և այդ դպրոցներում ուսուցումը զուգորդվել է բժշկական պրակտիկայի հետ», իսկ «բժիշկները, իշխանների ու արհեստավորների նման, տնտեսական և իրավական այնպիսի պայմաններում են գտնվելիս եղել, որ շարժել են հասարակ ժողովրդի նախանձը»[87]։

Երզնկացու խրատական գործերում ուշագրավ նյութեր կան նաև մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի, հինգ զգայարանների, ներքին օրգանների դերի ու նշանակության, կանանց հղիության և հիգիենայի, արյան շրջանառության և բազմաթիվ խնդիրների մասին։ Երբեմն Երզնկացին տալիս է նաև բժշկական տերմինների բացատրություններ[88]։

---

86 Լ. Ս. Խաչիկյան, Դիահերձումը հին Հայաստանում, տե՛ս «Տեղեկագիր հաս. գիտ.», 1947, № 4, էջ 85—90։

87 Անդ։ Հետագայում այս փաստը հաստատող մի նոր ապացույց է բերում Գ. Գրիգորյանը՝ այն քաղելով Վահրամ Բաբունու գրած Գրիգոր Նյուսացու «Ցաղագս մարդակազմության» գործի մեկնությունից։ Վահրամ Բաբունին գրում է. «Իւրաքանչիւրքն, որ ի ներքս ի մեզ է՝ սիրտն, լեարդն, փորոտիքն, երակքն և այլ, որ ի մեզ է, թէ զինչ տեսութիւն և կայսմն ունի, կամ թէ զեա՞րդ կամ ո՞րպէս են սոքա՝ հերձին զմահապարտս ի մարդկանէ և տեսին աչօք» (տե՛ս Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, էջ 20)։

88 Տե՛ս «Նորին Յոհաննու ի խորհուրդ ստեղծման մարդոյն և մահու» (Մատ. ձեռ. № 2173, էջ 320բ)։

Ուշագրավ է, որ Հայաստանում այս շրջանում այնքան մեծ նշանակություն է տրվել գիտական բժշկությանը, որ թույլատրվել է, հանուն մարդկանց առողջության պահպանման, անհրաժեշտության դեպքում հրաժարվել պասից և բազմաթիվ — այլ ծեսերից[89]:

Երզնկացու խրատական բնույթի գործերում մասնագետ ուսումնասիրողը հետաքրքիր շատ բան կարող է գտնել նաև ճշգրիտ գիտությունների վերաբերյալ: Ճիշտ է, Երզնկացին բնագիտական և ճշգրիտ գիտությունների վերաբերյալ իր մտքերը հիմնականում շարադրել է «Յաղագս երկնային շարժմանց» երկում, որը հետագայում վեր է ածել չափածոյի[90], և «ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ...»[91] նշանավոր աշխատության մեջ, սակայն սրանցում արծարծված հարցերից շատերը երբեմն նույնությամբ, երբեմն էլ ուշագրավ տարբերակներով երևան են գալիս նաև խրատական գործերում: Այդ տեսակետից հատկապես շատ հետաքրքիր է «Յաղագս Վարդավառի տօնին ի ՁՀ սաղմոսն...» քարոզը[92]: Սրա տիեզերագիտական բնույթի հատվածների և Անանիա Շիրակացու «Աւ խոստացեալն» անունով հայտնի աշխատության համեմատությունից պարզվեց, որ Երզնկացին իսկապես ուսումնասիրել է Շիրակացու տեսությունը երկրի ու երկնքի կառուցվածքի, տիեզերական մարմինների շարժման, երկրի կայունության պահպանման և այլ հարցերի շուրջը: Երզնկացին որոշ հատվածներ ուղղակի վերցնում է Շիրակացուց[93]: Ինչ վերաբերում է եղանակների առաջացմանը, կենդանակերպերի ազդեցությանը երկրային երևույթների վրա, ինչպես և հարավային ու հյուսիսային բևեռների տեսությանը, ապա, մեր կարծիքով, դրանց մի մասը ինքնուրույն մտքեր են, իսկ մի մասն էլ քաղված են այնպիսի աղբյուրներից, որոնց ճշտելը մնում է այդ գիտությունների պատմությամբ զբաղվող մասնագետներին:

89 Մտդ, ձեռ. № 2329, էջ 273բ:

90 Նվ արձակը, և չափածոն միասին հրատարակվել են Նոր Նախիջևանում 1792 թ.

91 Մտդ, ձեռ. № 6670, էջ 179ա—207ա:

92 Մտդ, ձեռ. № 2173, էջ 17ա—30բ:

93 Համմ. ձեռ. № 2173, էջ 22ա—23ա, «Անանիա Շիրակացու Տիեզերագիտություն և տոմար», աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 1—10:

* * *

Վերջին շրջանում հայագիտության մեջ աշխուժություն է նկատվում հայ մանրանկարչության ուսումնասիրության ուղղությամբ: Սակայն, ցավոք պետք է նշել, որ միջնադարից մեզ հասած արվեստի տեսական հարցերի մասին տեղեկությունները դեռևս խիստ աղքատիկ են, և Երզնկացու հայտնած մտքերը կարող են չափազանց օգտակար լինել արվեստի պատմության ու տեսության համար:

Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում արվեստի անհրաժեշտության և մարդու՝ դեպի արվեստն ունեցած ձգտման դրդապատճառների մասին Երզնկացու տված բացատրությունը: Նրա կարծիքով արվեստի, գրականության և, մասնավորապես, նկարչության օգնությանը դիմում են ոչ թե նրա համար, որ երկիրը և իրական կյանքը պակաս հետաքրքիր ու գեղեցիկ են ու կարոտ գովեստի: Ընդհակառակը, նա գտնում է, որ բնության նկատմամբ տածած անհուն սերն է մարդու մեջ գեղագիտական պահանջ առաջացնում և ստիպում վրձին կամ գրիչ վերցնել՝ իր զգացումներն ու վերաբերմունքն արտահայտելու:

«Արդ, եթէ ոք զսոսա ներբողական գովեստից բանիւ պատմէ, ոչ առ ի լրումն պակասութեան նոցա և կամ իբր առ կարօտս գովութեան ղբանն առնիցէ, ղի գեղանձնաւորական լուսոյն իւրեանց և շարժմանն ընթացիցն մոլորականաց և անմոլոր գնդին բաւական է պատմել առանց բարբառոյ բանի: Ընդ ամենայն ծագս տիեզերաց զգովութիւն նոցա, բայց կարօտութիւն և բաղձանք առ այն է բնաւորել, որ զամենագեղեցիկ գործով ախորժական ըղձիւ յօժարի ներբողել բանիւ, և կամ թէ ոք զգեղեցիկ պատկեր կենդանոյ մարդոյ և զարքայական պատուով շքեղացելոյ նկարագրական դեղօք և պէսպէս երանգաւք հնարի զնոյն ձև և զնմանութիւն պատկերի ի տախտակս նկարել ոչ առ ի լրումն թերութեան կենդանոյն, այլ առ անձուկ սրտին բաղձանաց, զոր ունի ի փափակ և ի սէր կենդանոյն, հնարի գեղեցկափայլ դեղօք ի նոյն ձև և ի նմանութիւն ածել...»[94]:

Այնքան մեծ է բնության, իրականության դերը մարդկային մտքի պատմության մեջ առհասարակ, որ Երզնկացին շեշտում է. «Թէ ոչ աքանչանայ ոք յաղագս իրի՝ ոչ իմաստասիրէ վասն նորա»[95],

94 Մտդ, ձեռ. № 2173, էջ 4ա:

95 Անդ, էջ 112ա:

կամ՝ «զի թէ ոք ոչ սքանչանայ ընդ երևումն տեսութեան նոցա, ոչ զիմաստասիրէ զդոյացութիւն բնութեան նոցա»[96]։

Վերը ասվածից հեշտ է եզրակացնել, որ եթե Երզնկացու շրջանում դեռևս վաղ է արվեստի հարցերում քրիստոնեական գաղափարախոսությունը մերժող փաստեր փնտրելը, ապա առկա է աշխարհիկ այն զարթոնքը, որ մարդուն մղում է դեպի բնությունը։ Վերջինս դառնում է մարդու ուսուցիչը ամենուրեք, թե՛ գիտության և թե՛ արվեստի հարցերում։ Բնությանը սիրահարված մարդը, ինչպես Երզնկացին է բացատրում, վերարտադրում է բնության և իրերի ճշմարտացի պատկերը. «Զոր ասրինակ, թէ ախորժէ ոք գծագրութեամբ դեղոց պատկեր նկարել, զպէսպէս երանգս դեղոցն ի կիր ածէ, և այնպէս եդեալ զուշ դիտաւորութեանն, զի ի ձև և ի հասակ կենդանոյ յաւրինեսցէ, զի որպէս զկենդանի հաճոյ թուեսցի»[97]։

Թյուրիմացությունից խուսափած լինելու համար հարկ է ավելացնել, որ ճշմարիտ պատկերացում ասելով՝ Երզնկացին բոլորովին նկատի չունի իրերի, երևույթների ու կերպարի պատճենահանումը։ Ընդհակառակը, նա գտնում է, որ արվեստագետը պարտավոր է տալ ոչ միայն արտաքին ճիշտ նկարագիրը, այլև ներքինը, բնույթը, էությունը։ Այդ հանգամանքը պարզ երևում է դիմանկարի մասին նրա արտահայտած մի շատ հետաքրքիր մտքից. «Եւ զոր աւրինակ նկարի պատկեր թագաւորի ի մանկութեան, յերիտասարդութեան և ի ծերութեան իւրում և ի թագաւորութեանն..., զի պատկեր թագաւորին, որ նկարի ի մանկութեանն, զնոյն պահէ զնմանութիւն զտղայականն կերպ, նոյնպէս կատարեալ հասակին և ծերութեանն, և յորժամ թագ առնու, իւրաքանչիւրն զնոյն՝ նմանութիւն պահեն...»[98]։

Հետաքրքիր է նաև լայն առումով արվեստի, իբրև անհրաժեշտության, Երզնկացու տված հետևյալ բացատրությունը. «Եւ զի՞նչ է արուեստն, քան թէ յառաջախնամ տեսութեամբ և գիտութեամբ իմաստութեանն առնել զամենայն ինչ ի ժամանակի իւրում և ըստ պատշաճի, որպէս և ասէ իմաստունն ամենայն ի ժամանակի և ժամանակ ամենայն իրի...»[99]։

96 Անդ։
97 Անդ, էջ 316ա։
98 Անդ, էջ 347ա։
99 Անդ, էջ 278ա։

Թեև այստեղ արվեստ հասկացությունը և հարցադրումը շատ ընդհանուր են, սակայն, եթե նկատի առնենք, որ արվեստը վերջին հաշվով նաև մարդկային փորձի և դիտողականության վրա հենվող ունակությունն է, ապա պարզ կլինի, որ Երզնկացու ձևակերպումը վերաբերում է և նկարչությանը, գեղեցիկ խոսքին, գեղեցիկ առեղծագործությանը։ Միջնադարում արվեստի և գիտության փոխադարձ կապի այս տրամաբանությունն է, որ Երզնկացուն ստիպում է ճշտորեն արվեստ համարել նաև պետության, իշխանության կառավարումը. «Գիտելի է, թէ արուեստ է իշխանութիւնն», կամ՝ «Զի եթէ փողք և քնարք և կաքաւիչք և այլ ամենայն արուեստք ժամանակաւ և աշխատութեամբ ուսեալ լինին, որքան մարդկան իշխանութիւն և վերակացութիւն»[100]։

Հայտնի է, որ նախնական արվեստների առաջացման և զարգացման հիմնական աղբյուր են հանդիսացել ժողովրդական հավատալիքներն ու կենցաղը։ Այս առումով հայ արվեստների պատմությամբ և տեսությամբ զբաղվող մասնագետներին պետք է որ հետաքրքրի նաև հետևյալ հանգամանքը։ Խոսելով Վարդավառի և այլ տոների՝ հեթանոսությունից քրիստոնեության անցնելու մասին, Երզնկացին գրում է. «Արդ, սովորութիւն էր հեթանոսաց, զի ծառս և ծաղիկս իւրեանց պաշտամանց նուիրէին, և տօնս ուրախականս յանուն նոցա կատարէին, որպէս և յՕրմզդական տօնին, զոր Մակաբացւոցն պատմէ, և որպէս Տրդատ սրբոյն Գրիգորի Անահտա տայր տօնել։ Իսկ Քրիստոսիւ զօրացեալ քրիստոնէութեանս՝ զվաղնջուց սովորութիւնն ոչ կարացեալ խափանել մերոց հարցն, ապա հարկաւորել զարտաքինն ներքին կարգելով և զմարդկայինս յաստուածայինս փոխեցին տօնս»[101]։ Այնուհետև շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում, թե մեր հեթանոս հայրերը ո՛ր աստվածներին ինչպիսի բույսեր և ծաղիկներ էին նվիրում և ինչու։ Այս հարցի քննությունը մասնագետների կողմից, մեր կարծիքով, կնպաստի ոչ միայն ժողովրդական բարքերի, տոնախմբությունների, հավատալիքների և նրանց շուրջը հյուսված առասպելների ուսումնասիրությանը, այլև որոշ պարզության կմտցնի մեր ճարտարապետության, քանդակագործության ու մանրանկարչության մեջ հանդես եկող զանազան բուսական, կենդանական մոտիվների, նրանց աղբյուրների ու նշանա-

100 Անդ, էջ 99բ։
101 Անդ, էջ 17բ։

կութեան բացահայտման առպարեզում։ «Հեթանոսք զարմանէին արեգականն նուիրելով, իբր թէ զճառագայթից արեգականն զնմանութիւն վարսիւն բերելով, բազմաշառաւիղ յարձակմամբ երկայն ծայրիւն ի վեր առ նա դիմելով, անհաս ձեռին մարդոյ և յաւէտ տունկս այս առ մարդ նմանութիւն ունելով վարսաւորել զխովն։ Եւ զձիթենի Աթենա նուիրէին՝ որպէս նախ բուսաւ յԱտտիկէ ի դղեակն, և ալիք ջուրցն ոչ կարացին հասանել ի նա, և ոչ կարել ոք զօրեաց սրով կամ հրով, վասն որոյ զյաղթողն նովաւ պսակէին յՈղոմպիական նահատակութիւնսն, զոր և ասեն իմաստունք զինաւորեալսն առ տնկոյն սքանչելիք բաւական, զալ ի խրատ տեսողացն, զի առողջական ունի զօրութիւն և լուսոյ է նիւթ և ողորմութեան հմանուն։ Նոնեանի Գրիգորեսեա էր ձանձն, որպէս թէ ի նորա արեանն կաթուածոյ է բուսեալ, նմանապէս և զորթ, թէ նա եղիտ յուրախութիւն հիւրոց։ Սարդէ և տաֆնի՝ Ապողոնի։ Նարգոս ծաղիկ՝ եթեոպացի պատանեկին, վասն հեղձամղձուկ լինելոյ ի ջուրսն, Նեմիական լախուրն՝ Կորիբանդացն[102], որպես թէ ի նոցա պատճառս բուսաւ։ Սոճի Իսթմիական կոտոն ձանէին։ Իսկ վարդ՝ Ափրոդիտեա, և զմրուտ և զյեսմիկ՝ Արամազդեա, իբր թէ ի նորա հրամանէն ծառք և ծաղիկ բուսան»[103]։

Երզնկացին ոչ միայն բացատրում է, թե ինչու քրիստոնեութեյունը ևս որոշակի ծեսեր մտցրեց, այլև բերում է հեթանոսական և քրիստոնեական ծեսերի զուգահեռներ։ «Զարմանէին իմանալի արեգականն արդարութեան նուիրեցին, զոր տղայքն ի յովանակաճեմ ճանապարհին ընդառաջ տանելով յաղթութեան նշանակ, իբր արդար և յաղթող մահու և դժոխոց յաղագս զՊաղարն յարուցանելոյ, և զձիթենին տեառնեղբօրն նուիրեցին, որ ի հնումն ունէր զքահանայական և զթագաւորական հրամանն, զորոյ զիւորհուրդն Դաւիթ ցուցանէ՝ ես որպէս ձիթենի պտղալից տունն Աստուծոյ, և զնռնենին, զոր ի կաթլաց արենէն Դիոնիսեա ասեն, զայն սրբոյն Ստեփանոսի նուիրեցին, որ ի զարկուածոյ

[102] Կորիբանդներ—փոյուգիական կաքավող քրմեր, որոնք փրկեցին մանուկ Արամազդին Քրոնոսի կողմից հոշոտվելուց. «Արդ յորժամ զԱրամազդ ծնաւ, յերկուցեալ, թէ գուցէ և զայս կլանիցէ և կորուսէ, վէմ պատեալ ի խանձարուրս, իբր թէ տղայ, եւս ցՔրոնոս, զի կլանիցէ, և զԱրամազդ արտաքրեալ՝ պահեաց ի նրեսէ և կարգեաց առ տղային զկորիբանտան և զկուրետան՝ կաքաւել և զինուք թնդիւնս առնել...» (տե՛ս Հ. Մաճաճեան, Nonnos, Մարբուրգ, 1903, էջ 3)։

[103] Մատ, ձեռ. № 2174, էջ 18ա։

քաթանցն արեանն յորդագոյն կաթուած յերկիր հոսեալ լինէին, և զտունկ որթոյ բոլոր եկեղեցոյ նուիրեցին... Իսկ զսարդի և զտաւնի սրբոյն Սարգսի և Բագոսի նուիրեցին, և զսոճի՝ սրբոց վկային... Իսկ զվարդ, որ Ափրոդ[իտ]եա էր ձանել ի հեթանոսաց, իբր թէ կոխեաց զփուշ վարդի և յարիւնէ նորա էառ զգեղն կարմիր, և զի յարիւնէ քաջի է և հրոյ նման ներկուածովն, և նման է ոսկեհեսակ վարսի և է թագաւոր ծաղկանց, վասն որոյ բոլորք նովաւ կոչին Ռոդիսմոս[104], որ է Վարդավառ, յերկոտասանէն մայիս ամսոյ մինչև ի կատարումն յունիս ամսոյ, զոր քրիստոնէից առեալ սրբոյ Աստուածածնին նուիրեցին։ Իսկ զմրուտ և զյեսմիկ սրբոց առաքելոցն նուիրեցին յաղագս կատարման Պետրոսի և Պաւղոսի յելն յունիս ամսոյ։ Արդ սկսանի Ծաղկանց տօնն զվնի Պենդակոստէին, մինչև ցօր կատարման առաքելոցն, թէ Ծ (50) և թէ խ (40)՝ ըստ փոփոխման զատկին։ Եւ զաւուրս զայսոսիկ տօն ծաղկանց կոչեմք և Վարդավառ անուանեմք...»[105]։

Ինչպես տեսնում ենք, բացահայտվում է արվեստի պատմության և ազգագրության իմաստով անչափ ուշագրավ մի երևույթ։ Հեթանոսության շրջանում մայիսի 12-ից մինչև հունիսի վերջը, այսինքն՝ բնության բուռն զարթոնքի և ծաղիկների փթթման շրջանը, նվիրվել է հեթանոսական աստվածների տոներին, և վարդավառը ոչ միայն Աֆրոդիտե—Անահիտին նվիրված տոնն է, այլև այդ շրջանի ընդհանուր անվանումը՝ իբրև ընդհանրապես ծաղիկների տոն։

Բայց, մյուս կողմից, հայտնի է, որ քրիստոնեական եկեղեցին Վարդավառը համարում է Քրիստոսի պայծառակերպության կամ այլակերպության տոն, և սովորաբար այն տոնվում է հուլիսի երկրորդ կեսին, որը չի կարող բնության փթթման շրջան համարվել ոչ Փոքր Ասիայում, ոչ Հունաստանում և ոչ էլ Հռոմում։ Մինչդեռ Երզնկացին ոչ միայն Վարդավառի ժամանակն է տարբեր

[104] Ῥοξάλια (ὀδισμός) կամ Ῥοξάρια-տոն հին Հռոմում, Հունաստանում և Փոքր Ասիայում, որ, ըստ հռոմեական արձանագրությունների, կատարվում էր մայիս-հունիս ամիսներին։ Տոնակատարության ժամանակ գերեզմանները զարդարում էին ծաղիկներով և ապա զբաղվում գինարբուքով։ Անցնելով քրիստոնեությանը՝ այս տոնը պահպանվել էր Բյուզանդիայում, իսկ այժմ՝ Ֆրանսիայում և Ռուսաստանում։ Լատինական տերմինի փոխարեն հանդիպում է նաև հունարեն Ῥοδισμος տե՛ս Μεγάλη Ἑλληνικὴ Ἐγκυκλοπαίδεια, τομ. 21; ἐκδ. Παύλου Δρανδάκης, Ἀφῆναι, էջ 200։

[105] Մատ, ձեռ. № 2173, էջ 18բ—19ա։

նշում, այլև այն համարում է ոչ թե Քրիստոսին, այլ Աստվածածնին նվիրված տոն։ Մնում է ենթադրել, որ Վարդավառը նշվել է և մայիս-հունիս ամիսներին իբրև ծաղիկների տոն, վերագրված Աստվածածնին, և հուլիսի կեսերին իբրև եկեղեցու զարթոնքի, փթթման, աստվածային պայծառակերպության տոն[106]։ Այս ենթադրության օգտին է խոսում Խորենացուն վերագրված «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ճառը. «Ի սմա օրում ի տաղտարս տօնեմք յեօթներորդում ամսեանս... ի հնգետասաներորդում աւուր ամսոյն»[107], և Վարդավառ է կոչում, որովհետև «եկեղեցիք պսակեալ պայծառագեղս վայելչութեամբ և առաքինութեանն լուսահրաշ վարդիւք և շուշանօք՝ տօնատիրաց ոգեկեալ սեալ վայելչանան գլուխք. ըստ այսմ յիրաւի Վարդավառ զսա ձայնէ եկեղեցի...»[108]։

Մնում է մի հարց, ինչու՞ են Վարդավառի բուն տոնի հետ կապված ծեսերը, չնայած այդ ծեսի քրիստոնեական բովանդակություն ընդունելուն, աստիճանաբար մոռացության մատնվել և պահպանվել միայն Քրիստոսի այլակերպության տոնի հետ ձուլված։ Պարզվում է, որ հայ եկեղեցին, հավանաբար ձգտելով առավել մեծ շուք ու խորհուրդ տալ Քրիստոսի այլակերպության տոնին, նրա մեջ մարմնավորել է հեթանոսական երկու տոների՝ Վարդավառի և Նավասարդի խորհուրդները, մեկը՝ իբրև փթթման, բուռն զարգացման, մյուսը՝ իբրև նորելիության գաղափար[109]։

* * *

Ուշադրության արժանի են նաև երգնկացու հաղորդած փաստերը արքաների գահակալության առիթով կազմակերպվող տոնախմբությունների մասին. «Զի յորժամ նոր արքա աշխարհակալ յաթոռ թագաւորութեան նստիցի և գիրն թագաւորական հրամանի յաշխարհն առաքիցէ, ի բազմամբոխ ժողովս քաղաքացն և ի

106 Ավետարանում այն կոչվել է պարզապես այլակերպության տոն, իսկ պայծառակերպություն անվանումը հավանաբար առացել է այն ժամանակ, երբ հեթանոսական տոնի՝ բնության փթթման գաղափարը վերագրվել է եկեղեցուն։ (տե՛ս «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1905, էջ 368)։

107 «Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 330։

108 Անդ, էջ 334։

109 Այս առիթով տե՛ս Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 18—19, 171 և 377, 388։

հոգնակի շինուածս փողոցացն աւետաց իմն հնչիւն և բերկրական դիմաց տեսութիւն խրախճանութիւնս ամենապատիկս ընդ բոլոր հրապարակս քաղաքին առնիցեն, զփողոցն զարդարելով ի բազմածաղիկ նկարագործական կտաւոցն ծածկութից, ծառս և ծաղիկս ոստոց և համադամ պտղոցն գեղեցկութեամբ վայելչացուցանեն զիւրաքանչիւր զդրունս և զխանութս, և զանազան գործօնեայքն արուեստից զիւրեանցն զարդարել փութան զփողոցս և այսպէս հրապարակատես զուրախութիւն սրտից առնիցեն»[110]։

Յավոք, երգնկացին բավական ընդհանուր է խոսում։ Անշուշտ, շատ հետաքրքիր կլիներ, եթե նա մանրամասնություններ նշեր արվեստների և արհեստների այն ստեղծագործությունների մասին, որ ակնարկում է, սակայն եղածն էլ, կարծում ենք, հետաքրքիր է։ Որքան էլ մութ լինի ակնարկը, այնուամենայնիվ «զփողոցն զարդարելով ի բազմածաղիկ նկարագործական կտաւոցն ծածկութից» արտահայտությունը մի՞թե չի ակնարկում հայ աշխարհիկ զարգացած գեղանկարչության և կիրառական արվեստի գոյության մասին։

* * *

Հայաստանում, դեռևս վաղնջական ժամանակներում, զարգացած են եղել մարզական բազմաթիվ ձևեր։ Բայց նկատի առնելով, որ ֆիզիկական մարմնամարզի տարբեր ձևերի պատմության ուսումնասիրությունը մեզանում նոր, առաջին քայլերն է անում, և որ այդ հարցի վերաբերյալ միայն հատուկենտ տեղեկություններ են պահպանված սկզբնաղբյուրներում, ավելորդ չենք համարում մեջ բերել նաև երգնկացու, թեկուզ անցողիկ, վկայությունը մարմնամարզության և զինավարժության որոշ ձևերի մասին. «Այլ և վարժող և մարզիչ եղեն (սրբերը և առաքյալները — Խ. Բ.) բազմահմուտ հանճարով, զի քան զձիավարութեան և զաղեղնաւորութեան և մրցականաց և բռնամարտութեանն կրթութիւն զկարգ քրիստոնէութեանս վարժողացն մեծ հանդէս կայ առաջի, որով զամենայն օրինակ իմաստութեան ցուցին յանձինս հարքն երեվելի»[111]։ Անկախ երգնկացու եղրակացությունից, այս հատվածից երևում է, որ Հայաստանում եղել են այդ ձևերի հատուկ մարզիչներ, ավելին, որ այդ մարզիչները մեծ հարգ են վայելել, որպեսզի

110 Մատ. ձեռ. № 2173, էջ 66ա-բ։

111 Անդ, էջ 341ա։

նրանց արած գործը արժանի դառնար թեկուզ համեմատվելու քրիստոնեության ուսմունքը տարածողների գործունեության հետ։

*

* *

Միջնադարյան խրատական գրություններն իրենց ձևով և բովանդակությամբ խիստ բազմազան են՝ շրջաբերական թղթեր, նամակներ, ճառեր, քարոզներ և այլն, իսկ XII—XIII դդ. լայն տարածում են ստանում նաև խրատական այնպիսի գործեր, որոնք անմիջական ծնունդն են տվյալ ժամանակի և կոչված են դառնալու հասարակության կառավարման կարևոր լծակներից մեկը։ Խրատների այդ նոր տիպը անվանեցինք «կանոնական խրատներ»։

Խրատական գրություններում ցարդ չուսումնասիրված հսկայական նյութ կա, որը զգալի չափով լույս է սփռելու մեր ժողովրդի տնտեսական, մշակութային կյանքի պատմության բազմաթիվ մութ էջերի վրա։ Ավելին, խրատներում, թեկուզ ցաքուցրիվ, հանդիպում են նաև այնպիսի փաստեր, որոնք կամ իսպառ բացակայում են պատմագիտական այլ աղբյուրներում, կամ շատ հազվադեպ են հանդիպում։

Անկասկած, ինչպես Հովհաննես Երզնկացու, այնպես էլ միջնադարյան հայ մյուս հեղինակների խրատական գրությունների ուսումնասիրությունը հայ պատմագիտության և բանասիրության համար կարևորագույն խնդիր է։

ՄԱՍ Բ

ԲՆԱԳՐԵՐ

ԽՐԱՏ ՀԱՍԱՐԱԿԱՑ

Հովհաննես Երզնկացու «Խրատ հասարակացը» հրատարակվում է առաջին անգամ։

Մինչ որոշելը, թե ինչ սկզբունքով պետք է ընտրվեն և համեմատվեն բնագրերը, հարկ եղավ երկար ժամանակ ծանոթանալ և ուսումնասիրել այդ երկի՝ Մատենադարանում պահվող հարյուրից ավելի ձեռագիր օրինակներ։

Նկատի առնելով, որ բարեբախտաբար մեզ է հասել դեռևս Հովհաննես Երզնկացու կենդանությանն օրոք գրված բավական ընտիր մի ձեռագիր (№ 2329), որը չնայած որոշ ուղղագրական սխալների, տալիս է «Խրատ հասարակացի» հարազատ բնագիրը, որոշվեց համեմատության համար ընտրել առավել հնագույն և լրիվ ութ ձեռագրեր։

Վերը նշել ենք, որ խրատները հաճախ էին փոփոխության ենթարկվում՝ ելնելով որևէ խնդրի հրատապությունից։ Այս հարցի պատասխանը պետք է որ տային առավել ուշ գրված ձեռագրերը։ Եվ այդ հաստատվում է ոչ միայն ստորև տրվող ինը, այլև բազմաթիվ ուրիշ ձեռագրերի համեմատությունից։ Իրոք, ելնելով օրվա առաջադրած պահանջից, գրիչներն ու խմբագրողները կրճատում կամ, ընդհակառակը, ավելացնում են «Խրատ հասարակացի» այս կամ այն բաժինը, երբեմն նրանից միայն առանձին քաղվածքներ անում, իսկ երբեմն էլ նրան կցում գրեթե նույն ծավալով տարբեր հեղինակների այլևայլ խրատական գրություններ։

Ձեռագրերը համարակալում ենք լատիներեն տառերով՝ A-H, ըստ ժամանակագրության, բացառությամբ մի դեպքի, երբ նախապատվությունը տրված է № 581 ձեռագրին (մեր բնագրում՝ B), որովհետև գուցե ավելի վաղ գրված № 3937 ձեռագիրը թերի է։ Համառոտ խմբագրությունը նշանակված է լատիներեն j տառով։

Իբրև ընդհանուր երևույթ, «Խրատ հասարակացի» ձեռագրերի մեծ մասում հաճախ խախտվում է գլուխների համարակալումը,

երբեմն էլ ուղղակի բացակայում են գլուխների վերնագրերը. օրինակ՝ «Յաղագս գողութեան» գլուխը մի շարք հին գրչագրերում, այդ թվում և՝ № 2329 ձեռագրում, չի վերնագրված: Սակայն համառոտ խմբագրության մեջ այդ գլխի վերնագրի առկայությունը ինքնին հուշում է, որ հետագայում գրված որոշ ձեռագրերում այն արդյունք է ոչ թե ընդմիջարկության, այլ եղել է ընդարձակ խմբագրության՝ մեզ չհասած հնագույն ձեռագրերում: Երբեմն էլ գլուխների համարակալումը խախտվում է, որովհետև առանձին գրիչներ բաց են թողնում որոշ գլուխներ, և մեքենայորեն երրորդը համարվում է երկրորդ, 6-րդը՝ 4-րդ և այլն:

Նկատի առնելով, որ «Խրատ հասարակացը» չի պատկանում մեր մատենագրության այն դասական գործերի թվին, որոնց յուրաքանչյուր տարբերվածը բանասիրության համար լուրջ հետաքրքրություն կարող է ներկայացնել, հիմնականում նշում ենք իմաստային տարբերություններն ու նրբերանգները, ինչպես նաև ընդմիջարկություններն ու բացթողումները:

Ուղղագրական բնույթի ընթերցվածները իբրև կանոն չենք նշվում, բացառությամբ այն դեպքերի, երբ երկու կամ մի քանի օրինակներ ձեռագրի համեմատությամբ ունեն իմաստային տարբերվածներ, իսկ մեկմյանց նկատմամբ՝ ուղղագրական շեղումներ: Զանց են առնվում նաև եռևառաջությունները, եթե իմաստային տարբերություններ չկան. օրինակ՝ «աւրէնքն հրամայէ աստուծոյ» փոխանակ՝ «աստուծոյ աւրէնքն հրամայէ», կամ՝ «եղիցին նզովեալ». փոխանակ՝ «նզովեալ եղիցին» և այլն:

Վերծանված են բոլոր գաղափարագրություններն ու հապավումները, բացառությամբ թվական արժեքով օգտագործվածների:

1. Բնագիրը ներկայացրել ենք ըստ A ձեռագրի պատկերի, իսկ մյուս 7 օրինակների բնագրային կարևորություն ներկայացնող տարբերությունները բերել ենք տողատակին: A-ն, իբրև Հովհաննես Երզնկացու կենդանության Երզնկայում գրված ձեռագիր, ղերծ է աղճատումից և հեղինակային բնագիրը, մեր կարծիքով, պահպանել է հարազատորեն, այդ պատճառով A-ի տարբերությունները բնագրային դիտելով՝ տողատակ չենք տարել:

2. Պահել ենք A-ի ուղղագրությունը, որը աւ ունի փակ վանկում և ոչ օ. միայն մի տեղ՝ էջ 277ա-ի վերջին բառը էջանցի տողադարձից խուսափելու համար գրիչը գրել է պատառոգօճն, այսինքն՝ տեղ խնայելու համար օ-ին է դիմել:

3. A ձեռագրից հազվադեպ շեղումներ ենք կատարել՝ հաշվի առնելով նրա ուղղագրական որոշ (հազվադեպ հանդիպող) անհետևողականությունը. օրինակ՝ հովվին փխ հովուին—էջ 224բ, ընգալա–ընկալայ-225ա, կոչեցա–կոչեցայ-225ա, առուգա–առուկս-225ա:

4. A ձեռագիրը ենթակայական դերբայը ունի մերթ ող (հսկողի, 224բ և այլն) և ավելի հաճախ՝ աւղ (լսաւղքն, էջ 226բ և այլն) գրությամբ: Մենք ամենուր պահել ենք A ձեռագրի գրությունը:

5. Սեռական-տրական հոլովների ոյ–ոյ (ճոգւոյ–ճոգոյ), ինչպես նաև գործիականի ով–ով տարբերությունները չենք նշել, պարզապես ընտրել ենք ոյ, ով ձևերը, քանի որ դրանք միատիպ տող են № 2329 ձեռագրում և թվում են ավելի հարազատ ներկայացնում:

6. Բացարձակ վրիպակները, ինչպես նաև խուլերի ձայնեղացմամբ ընթերցվածներն ուղղել ենք՝ առանց դրանք տողատակերին ներկայացնելու (օրինակ՝ խորըրդոյ-խորհրդոյ, ընդգդմեալ-ընկըղմեալ, ընգեր-ընկեր, յանգղնոյ-յանկղնոյ, անշռութեանց-անլսութեանց, անգանին-անկանին և այլն): Նման դեպքերում երբեմն ցույց է տրվում այն ձեռագիրը, որը տալիս է ճիշտ ձևը:

7. Իմաստային արժեք չներկայացնող տարբերությունները տողատակին չենք նշում (որոշյալ հոդ, ձայնավորների և բաղաձայնների՝ բարբառային և միջին հայերենին հատուկ շեղումներ և այլն):

8. Որոշ բառերի երկձև գրությունը պահպանել ենք. օրինակ՝ Մովսէս-Մովսիսի-Մովսեսի, կաթուղիկոս-կաթողիկոս, յիշոց-իշոց, զիր-զիր, կնունք-կնուք, կանաց-կանանց, եհարց-էհարց, կիրակի-կիրակէ:

9. Ներկա ժամանակի հոգնակի թվի առաջին դեմքում գրել բայը մեկ-երկու անգամ գործածված է այժմյան աշխարհաբարին հատուկ վերջավորությամբ՝ գրեմ փխ գրեմք-ի, որ թողել ենք նույնությամբ: Ջուգահեռ ավելի հաճախ ունի գրեմք, որ դարձյալ թողել ենք նույնությամբ: Այդպես նաև օժանդակ բայի հոգնակիի առաջին դեմքը երբեմն ունի եմ փոխանակ եմք-ի, որը դարձյալ պահպանել ենք:

10. Բայի անցյալ դերբայը ունի մերթ եալ-ով (ինչպես դրաբարին էր հատուկ, օրինակ՝ կորուսեալ, սահմանեալ և այլն) և մերթ ել-ով (ինչպես միջին հայերենում է, օրինակ՝ գրկել, սսեմա-

նել և այլն). բոլոր դեպքերում մենք հետևել ենք ձեռագրի ուղղագրությանը։

11. Հոգնակի բացառականից կազմված որոշ մակբայական ձևեր հաց-ի փոխարեն հազվադեպ ունեն միջին հայերենին հատուկ եց վերջավորությունը, որ նույնպես թողել ենք անփոփոխ. օրինակ՝ յաճապեց փխ յաճապեաց և այլն։

12. Որոշ գոյականների հոլովումը, մերթ ընդ մերթ շեղվում է գրաբարյան կանոնից. օրինակ՝ ի գլխի փխ ի գլխոյն, որ թողել ենք նույնությամբ։

13. Որոշ ձեռագրերում գլուխների ցանկը սկզբում է։ Հետևելով A ձեռագրին ավելի հարմար գտանք ցանկը թողնել բնագրի վերջում։

Մյուս բնագրերը պատրաստելիս նույնպես հետևել ենք այս նույն սկզբունքներին։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

A-*Մաշտոցի անվան մատենադարանի 2329 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1291 թ., էջ 224ա—281բ.*

B-*Մաշտոցի անվան մատենադարանի 581 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դ., էջ 178ա—218բ.*

C-*Մաշտոցի անվան մատենադարանի 3937 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1370 թ., էջ 92բ—106ա.*

D-*Մաշտոցի անվան մատենադարանի 557 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1386 թ., 58ա—69ա.*

E-*Մաշտոցի անվան մատենադարանի 735 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դար, էջ 1ա—14բ.*

F-*Մաշտոցի անվան մատենադարանի 2189 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1394 թ., էջ 121—168բ.*

G-*Մաշտոցի անվան մատենադարանի 228 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1457 թ., էջ 71ա—127ա.*

H-*Մաշտոցի անվան մատենադարանի 652 ձեռ., Կանոնագիրք, ժամանակ՝ ԺԵ դ., էջ 1ա—35ա.*

i-*Մաշտոցի անվան մատենադարանի 8356 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1322 թ., էջ 157բ—158ա («Խրատք հաւատարկացի» Համառոտ խմբագրության հնագույն և լավագույն օրինակն է։ Համեմատության համար տողատակին բերել ենք այս խմբագրության ներածականը)։*

ՆՈՒԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՂՆԿԱՅԵՑՈՅ ԽՐԱՏ ՀԱՒԱՏԱՐԱԿԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ՝ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵԻ ԺՈՂՈՎԸՐԴՈՑ, Ի ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅ ԱՌԱՔԵԼՈՑ ՍՐԲՈՑ ԵԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵԻ ՍՈՒՐԲ ՀԱՒՐՆ ՄԵՐՈՅ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՅՈՐ ՅԱՄԵՆԱՅՆԷ ԺՈՂՈՎԵՑԻ ԵԻ ԳՐԵՑԻ.

5

Ամենազաւր թագաւորին մերոյ Քրիստոսի և բարերար Փրկչին հաւատարիմ ծառայք, գնեալք և ազատեալք ամբիծ և անարատ արեամբ նորա փրկականաւ, միածնի Որդոյն

Ձեռագիր № 8653։ Մեր բնագրում i։ Համառոտ խմբագրության ներածականը

157բ ՅՈՀԱՆՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՂՆԿԱՅԻՈՅ ԽՐԱՏՔ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՅԱՌԱՔԵԼՈՑՆ ԵԻ Ի ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԵԻ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԿԱՆՈՆԱՅՆ ԵԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամենառատ գթութեամբ հարցն երկնաւորի յորդեգրութեան շնորհաւք կոչեցեալք միածնի որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի ժառանգակիցք արքայութեան երկնից անուանեալք և եղեալք և կենդանարար և ազատիչ սուրբ հոգւոյն պարգեւաւք աւծեալք և լուսաւորեալք։ Լուսաւորիչ հարցն հոգւոց սրբոյն Գրիգորի գերահրաշ վարդապետութեամբն ի հաւատ ճշմարտութեան հաստատեալք Հայաստանեաց սուրբ եկեղեցիք։ Որ յամենայն գաւառս և վիճակս քաւիչ քահանայք միչնորդք աստուծոյ և մարդկան։ Եւ Քրիստոսասէր համարեան հաւատացեալք ժողովուրդք յաստուծոյ ձեզ երկնաւոր և երկրաւոր բարեաց և պարգեաց լիութիւն և հոգւոց և մարմնոց անխռով խաղաղութիւն և յամենայն չորձանաց փրկութիւն և Քրիստոսի սիրովն և կարաւտեալ հոգւով առ հասարակ ամենեցուն ողջոյն ԻԼ եւ քանզի հար ի վերայ կայ մեր և պարտական եմք հոգւով զարծաթ բանին քաղցր վարդապետութեան Քրիստոսի արկանել ի սեղան հոգւոյ ձերոց և շահել ի ձենջ գործս բարեաց և որպէս մշակ աստուածային այգւոյն զբանաւոր տունկս զքրիստոնէից անձինդ առածել և խնամել զպտուղ բարեաց գործոց ձերոյ աստուծոյ նուիրել։ Եւ վասն զի ոչ կարացի առնել զայս, է որ վասն տկարութեան մարմնոյ և է, որ վասն ժամանակիս զառնութեան և անհանգստութեանս։ Վասն որոյ գրեցաք առ ձեզ ի հրամանաց և ի դիմաց սուրբ լուսաւորչիս և ի նորին կանոնական հրամանացն և յայլ սրբոց հարցն և առաջնորդացն. լուսաւորչացն եկեղեցւոյ։ Եւ հրամանաւ կաթողիկոսի, որոյ այժմ յաթոռ սրբոյն Գրիգորի։ Եւ ծանուցանեմք ձեզ վասն հաւատոյ քրիստոնէութեան և գործոց բարութեան։

1 H վարդապետիս C խրատք 2 D չիք քրիստոնէից 4—5 C մեծ վարդապետին Հայոց Վարդանա փխ սուրբ-վարդապետի 5 D յորոց 9 F չիք և անա-

Աստուծոյ ժառանգակիցք և արքայութեանն երկնից ժառանգորդք, ճշմարիտ և քաջ հովուին հետևեալ հաւտք և խաշինք բանաւորք, կենդանասնեալք յարատև անմահարար յաւետարանական նորա քաղցր վարդապետութիւնն և կենդանարար մարմնոյն և արեանն հաղորդութիւն։ Հայաստանեացդ ազգ և ազինք, սուրբ Լուսաւորչին մերոյ և առաքելանման հաւրն նահատակութեան և չարչարանացն պտուղք և ծնունդք, արիական հովուին հսկողի և նուիրական աղաւթիւքն ի հաւատս հաստատեալք և աստուածաբուխ նորա վարդապետութենամբն ի ճշմարիտ և յուղիղ դաւանութիւն հաւատոյն — պարսպեալք և պահեալք, համարեն լրումն եկեղեցւոյդ քաւիչ քահանայք և Աստուծոյ և մարդկան հաւատարիմ միչնորդք, և քրիստոսասէր ժողովուրդք, — զձե՛զ աղաչեմ և առ ձե՛զ սակաւ բանիւքս խաւսիմ և զկիրս կսկծելիս և զցաւս հոգոյ իմոյ պատմեմ, զի յոյժ երկնչիմ և զարհուրիմ յահեղ դատաստանէն Աստուծոյ, յանխաբ և յանկաշառ աւենչէն մեծի աւուրն աներեկի և յամենատես և յարդար դատաւորին երկնի և երկրի քննութենէ։ Զի պարտապան եմ բազում քանքարաց և բիւր տաղանդաց և անհամար պարտուց Տեառն իմոյ ամենատատ պարզևատուի և բարերարի, զի զարծաթ սուրբ բանի նորա՝ զլուսաւոր և զմաքուր վարդապետութիւն և զքարոզութիւն Աւետարանին, զոր ետ ինձ անարժանիս, ոչ արկի ի սեղանաւորս և ոչ քարոզեցի ի լսելիս քրիստոնէից և ոչ սերմանեցի ի յոգիս և ի միտս լսողաց, վասն որոյ և ոչ աճեցուցի և կամ շահեցայ։ Տնկագործ և պահապան աստուածային այգոյ նորա կոչեցայ և զվարձս մշակութեան լիով ընկալայ, և յերկնաւոր տունկս և ի բանաւոր բոյսս ի ծառայական մշակութիւն քրիստոնէից անձանց ոչ աշխատեցայ։ Եւ զի՞նչ էր աշխատիլն՝ շրջիլ, քարոզել, խրատել, զբարեգործութեան պտղոցն զվնասակար չարիսն և զսովորական մեղսն կտրել, հատանել, վարդապետութեան ջրով ոռոգել, շուրջ բրել և կակղացուցանել, և ի նոցա աւրինակացն,

1 E արքայութեան աստուծոյ 2 F չիք ճշմարիտ և քաջ հովուին հետևեալ հաւտք 3 G անմահարբեր. 4 G նոր 8 CDF ճգնողութեամբ հովւին 10 H չիք դաւանութիւն 11 G չիք և պահեալք 14 B չիք զկիրս կսկծելիս 16 H չիք և յանկաշառ. յայն աւենչէ 18 F պարտական փխ պարտապան 24 F չիք վասն որոյ 28 F ծառայութիւն և ի փխ ծառայական C մշակութիւն ծառայութիւնն փխ ծառայական մշակութիւն 32 D չիք շուրջ բրել և կակղացուցանել



Մատենադարան. ձեռ. № 2329, էջ 234բ։
Մեկ էջ «Խրատ հասարակաց»-ից



Մատենադարան, ձեռ. № 2173, էջ 86ա։
Մեկ էջ Հովհաննես Երզնկացու ձեռից

որք զայս արարին, պատկառել և ուսանել պարտ էր, որպէս այն, որ վասն Թղենոյն աղաչէր զտէրն. «Մի հատանել, մինչ զի շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ, թերևս բերիցե պտուղ»։ Այլ և յաստուածայնոյն Պաւղոսի ձայնէն զգաստանալ, որ ասէ. «Ես տնկեցի, Ապաւղոս ջուր ետ, և Աստուած աճեցոյց»**։*

Եւ արդ, զի ոչ կարացի առնել զգործ մշակութեան Տեառն, որպէս արժանն էր, եթէ վասն տկարութեան մարմնոյ, և թէ վասն ժամանակիս ամբոխեալ շարժմանց և դառնութեան, և թէ հակառակասէր բարուց ոմանց կամ անլսութեանց, և կամ թէ որպէս սովոր են պատճառել զպատճառս հեղգացեալքն ի բարոյն գործաւորութենէ։

Այլ այժմ զմտաւ ածի, և հնարեցայ թեթևացուցանել զյոլով զբեռինս իմոց պարտուցն ի ձեռն սակաւ վճարման և գրեցի զսակաւ բանս խրատուց՝ ի կանոնական հրամանաց առաքելոց սրբոց և աստուածագումար ժողովոց սուրբ հարցն սահմանաց։ Եւ ժողովեցի զյոյժ հարկաւորն և զպիտանին ի յաւգուստ քրիստոնէից, որպէսզի եպիսկոպոսունքն յամենայն վիճակս իւրեանց՝ ի քաղաքս և ի գեաւղս գրեսցեն և առաքեսցեն, և քահանայքն ուսանիցին և ժողովրդոց իւրեանց քարոզեսցեն։ Զոր և աղաչեմ զաստուածապատիւ առաջնորդս եկեղեցոյ՝ զեպիսկոպոսունս և զվերայտեսուչս վիճակաց, և զքահանայսդ, որ էք հայր հոգոց և ուսուցիչ ժողովրդոց, զի և դուք զձեզ ի պարտուց ևի խղճէ թեթևացուսջիք և գրելով՝ տայք զսա յամենայն վիճակս ձեր. քահանայքդ կարդայք և քարոզէք ժողովրդեան ձերոյ, զի հարկ ի վերայ ձեր կայ, և առաջի աւետնին Քրիստոսի համարս տալոց էք վասն ժողովրդեան ձերոյ։

---

*Դուկ., ԺԳ, 8։
**Ա, Կորնթ. Գ, 6։

1 C ուսուցանել 3 H չիք զի 4—5 C զդաստանալ պարտ էր 5 D այլ փխ և 7 E մշակութեան մարմնոյ. չիք որպէս 8 E չիք արժանն էր եթէ վասն 10 F վասն հակառակասէր E չիք կամ 11 D չիք կամ F չիք որպէս G զպատճառս մեղաց 12 B գործառնութենէ փխ գործաւորութենէ 20 D ուսանիցին, ժողովրդոցն. չիք իւրեանց. 21 չիք առաջնորդս F ես աղաչեմ 24 F չիք ի պարտուց B խղճէ զձեզ 27 D ահեղ աւետնին H չիք աւետնին Քրիստոսի համարս տալոց էք վասն

Արդ, մի՛ անփոյթ առնէք զրել զսա և քարոզել, զի թերևս պատիժ դատաստանին մերոյ թեթևասցի, և լսաւղքն յաւրէնս և ի պատուիրանս Աստուծոյ գնասցեն, և մի՛ անգիտաբար մեղանչելով յաջակողմ դասէն ի ձախն խոտորեսցին, այլ ուղիղ և անխոտոր զարքունին գնասցեն ճանապարհ՝ ոչ յաջ խոտորելով և ոչ յահեակ։ Եւ սկիզբն բանիս այսպէս արասցուք։

Ա. ՅՈՂՈՎՍ ՀԱՒԱՏՈՅ

Նախ պարտ է իմանալ, եթէ զի՞նչ է քրիստոնէութիւն և զի՞նչ հաւատ քրիստոնէութեան։ Եւ արդ գիտելի է, թէ հաւատն յԱստուծոյ առ մարդիկ միջոց է և շաղկապ, զի յԱստուծոյ ի մեզ հաստատի հաւատ և ի մարդկանէ յԱստուած ելանէ, զոր և աւրինակաւ ծանուսցուք լսողացդ։

Արդ, զոր աւրինակ լոյս և շող յարեգականէ իջանէ և մտանէ ընդ ամենայն երդս և ընդ լուսամուտս, և ըստ չափոյ մեծութեան և փոքրկութեան ձևանայ և զորս ի տունն են՝ լուսաւորէ, նոյնպէս և հաւատն յԱստուծոյ ի մարդիկ իջանէ և ի սիրտս և ի հոգիս նոցա բնակէ, և ըստ մեծութեան և փոքրկութեան ընդունողացն տարեալ լինի։ Եւ զոր աւրինակ տիպ և կնիք ի մատանէհարէ ի մոմ ձևանայ, և ի մոմոյն տիպ նմանութեանն երևի տեսողացն, այսպէս և հաւատն յաստուածութենէն ի մարդիկ տպաւորի և ի սիրտս և ի հոգիս մարդկան կերպարանեալ կնքի։

Հաւատն անմարմին լար է լուսեղէն, յերկնից բարձրութենէն առ մարդիկ իջուցեալ յԱստուծոյ, զի զձեռս փոփոխելով ի վեր՝ առ Աստուած ելանիցեմք, այսինքն է պէս պէս բարեգործութեամբք։

Հաւատն բանալի է երկնից արքայութեան, զոր ետ մեզ Աստուած, զի որ ոք ի ձեռն ունիցի զհաւատոյն զաւրութիւն, բանայ և մտանէ յարքայութիւնն։

2 E յաւրէնս տեառն 8 D Նորին յաղագս հաւատոյ G Յաղագս հօտառոյ զօանութեան 11H մէջնորդ փխ միջոց 14—15 F չիք և մտանէ ընդ 15 CE չիք ընդ H ի վայր ընդ 16 F չիք 16—17 F չիք ձևանայ և զորս ի տունն են լուսաւորէ 17 D չիք 18 D չիք H չիք ըստ 19 D չիք փոքրկութեան 20 H չիք տիպ և կնիք 25 B չիք առ 28 F չիք ետ G չիք մեզ 29 H որք փխ որ ոք

Հաւատն առնակ է արմատացեալ ի սիրտս մարդկան, և է արմատ առնկոյն հայր, և ոստ ի յարմատոյն՝ որդի, և ծաղիկ անթառամելի ի տնկոյն և յոստոյն Հոգի Սուրբ, և պտուղ քաղցրահամ՝ ամենայն գործք բարութեան, զի պտուղըն յարմատոյն և յոստոյն և ի ծաղկէն է, որպէս և ամենայն գործք բարի՝ ի հաւատոյն։ Եւ որպէս ծառն առանց պտղոյ ոչ է գեղեցիկ, և պտուղ առանց ծառոյ ոչ երևի, նոյնպէս հաւատ առանց գործոց ոչ է վայելուչ, և ոչ գործք՝ առանց ճշմարիտ և ուղիղ հաւատոյ։ Եւ զոր աւրինակ մարդ կենդանի ի գլխոյ և յայլ անդամոց է հաստատեալ, և քան զամենայն անդամն գլուխն է պատուական, զի տեսանող աչքն և այլ զգայարանքն ի գլուխն է, և կենդանութիւնն ի գլխոյն իջանէ յայլ անդամն, նոյնպէս կենդանութիւն հոգւոյն հաւատն է, որպէս գլուխ, և այլ ամենայն գործք բարիք՝ որպէս անդամք։

Եւ մեծ և պատուական է հաւատոյն ճշմարտութիւն, և ընդ նմա են յարմարել, իբրև անձն՝ ընդ գլխոյ, ամենայն գործք արդարութեան։ Այլ և հաւատն հիմն է, և ամենայն գործք բարիք՝ շինուած ի վերայ հիմանն։ Եւ հաւատովք և գործովք շինիմք մեք կենդանի տաճար Աստուծոյ, որպէս և Տէրն Քրիստոս առ Պետրոս ասաց. «Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»*, որ են քրիստոնէք հաւատով շինել ի վերայ դաւանութեանն Պետրոսի։ Եւ Պետրոս առ հաւատացեալսն ասաց. «Դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր յանարատ քահանայութիւն»**։ Եւ զոր աւրինակ ի շինուածս տաճարաց հիմն միայն չէ բաւական լինել բնակութիւն մարդկան առանց որմոց և ձեղուն, նոյնպէս հաւատն առանց գործոց և գործք առանց ուղեղ հաւատոյ մեռեալ են, որպէս ասէ առաքեալն Յակոբոս։

Եւ զի այսպէս է, ապա պարտ է գիտել, եթէ երկու են սեռք հաւատոյ. առաջին է դաւանութեան և խոստովանու-

*Մատթ., ԺԶ, 18։
**Ա Պետրոս, Բ. 5։

4 G բարի ի հօտառոյ փխ բարութեան 4—6 G չիք զի պտուղն յարմատոյն և յոստոյն և ի ծաղկէն, որպէս և ամենայն գործք բարի՝ ի հաւատոյն 7 F գործոց փխ ծառոյ 14 G որ է փխ որպէս 20 E չիք Քրիստոս F մեք Քրիստոս H չիք ի վերայ այդր վիմի 21 B շինեալ C չիք իմ 22 H չիք և Պետրոս 27 F չիք գործոց G չիք ուղեղ H չիք առանց 30 F դաւանութիւն խոստովանութեանն

թեան հաւատն, և երկրորդ՝ հաւատալ ամենայն աստուածա-
յին և Սուրբ Գրոց, թէ յԱստուծոյ հոգւոյն են խաւսեցեալք
առաքեալք և մարգարէք և հայրապետքն սուրբ, և յԱստուծոյ
առ մեզ գրեալ են ամենայն բանք գրոց, և ամենայն սուրբքն
միջնորդք և պատգամաւորք են յԱստուծոյ և ուսուցանեն
մեզ զանցեալն և յորում կամքս և որ գալոցն է ժամանակ:

Արդ, դաւանութեան հաւատն այն է, զոր ի մկրտութեանն
ի ժամն քահանայն ասէ տայ կնքահարն բերանովն և յայն
հաւատոյն խոստովանութիւնն կնքէ զղջայն, և այն հաւա-
տովն սնանի և ի մահուն աւրն զնոյն հաւատոյ խոստովա-
նութիւնն տայ քահանային, և այն հաւատովն յԱստուած երթայ,
որ է բանալի արքայութեանն երկնից:

Եւ երկրորդ հաւատն այն է, որ հաւատայ, թէ ամենայն
արարածքս՝ իմանալիք և զգալիք, ոչ էին և Աստուծոյ բանիւն
գոյացան և եղեն. հրամայեաց, և հաստատեցան: Այս այն է,
որ եղեալն է:

Իսկ որ լինելոցն է, այն է, որ հաւատայ, թէ այս աշ-
խարհս, որ եղական է և սկիզբն ունի, վախճան և կատարումն
ունելոց է, և այս կենացս վճար կայ: Եւ որ յԱդամայ հետէ
մեռեալք են, ձայնիւ Որդւոյն Աստուծոյ յարութիւն լինելոց է
և դատաստան ամենայնի. և բարեգործացն բարի փոխարէն
և հատուցումն լինի յԱստուծոյ, և չարագործացն՝ տանջանք
և հուր յաւիտենական: Իսկ ներկայ ժամանակին, որ են և
յորում կամք այսպէս, պարտ է հաւատալ Սուրբ Գրոց, որ
քարոզեն, թէ՝ «Աստուած մերձաւոր է և ոչ հեռաւոր. և զոր
խորհին մարդիկ բարի կամ չար, իմանայ զամենայն. և զոր
խաւսին բանս լեզուաւ, լսէ զամենայն անսղալ. և զոր գործեն
մարմնով ի ծածուկ, տեսանէ յայտնապէս: Զի ոչ է արարած
աներեւոյթ ի նմանէ»*:

Արդ, որ այսոցիկ հաւատայ ի բոլոր սրտէ, նա է, որ
ունի հաւատ կենդանի, որ և ոչ երբէք յանդգնի խորհել չարու-

* Երեմ., ԻԹ, 23:

1 H երբորդ փխ երկրորդ 4 CF մարգարէքն փխ գրոց 7—8 DH մկրտու-
թեան ժամն 11 F չիք յաստուած 15 D եղեն լմն 17—18 F չիք լինելոցն է
այն որ հաւատայ թէ այս աշխարհս որ E այն որ թէ աշխարհս 19 C ունի
փխ ունելոց է 22 F չիք և հատուցումն լինի յաստուծոյ 24 F չիք պարտ է
H չիք սուրբ գրոց 26 F չիք բարի կամ F չիք չար

թիւն ի սրտի, կամ խաւսել անիրաւութիւն բերանով, կամ
գործել զմեղս անձամբ: Զի թէ մի ոք ի մարդկանէ մերձ
լինի, արգելուն մարդիկ յանարժան և յանաւրէն գործոցն:
Յորժամ հաւատայ, թէ Աստուած տեսանէ զգործս իւր, զիա՞րդ
ժպրհի կամ խաւսիլ, կամ գործել զչարութիւն և զանարժանու-
թիւն: Իսկ որ բանիւ միայն ունին յԱստուած զխոստովանու-
թիւն, և քրիստոնէութեանն անուն միայն ունին ի վերայ
իւրեանց, և ոչ ունին ըստ հաւատոյն և անուանն գործս բարու-
թեան, այնպիսոյն հաւատն մեռեալ է, զի առանց գործոց է:

Արդ, այսոքիք յաղագս հաւատոյ փոքր ինչ գրեցաւ, այլ
այժմ ցուցանեմ զսկիզբն և զկարգ և զսահման:

Արդ, գլուխ քրիստոնէութեանս հաւատն է, և հաւատն ի
մկրտութիւնն տպաւորի և պատկերանայ ի հոգի հաւատացե-
լոյն, ապա յայտ է, որ մկրտութիւնն է սկիզբն և գլուխ քրիս-
տոնէութեանն, զոր պարտ է ուսուցանել ձեզ, թէ զի՞նչ է
մկրտութիւնն և որպէս պարտ է ահի և դողութեամբ կատարել
պխորհուրդ մկրտութեանն:

Բ ՅԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Արդ, քրիստոնէութեան սկիզբն և գլուխ մկրտութիւնն է,
որ և կնունք սաի աշխարհի բառով: Եւ թէ զի՞նչ է մկրտու-
թիւնն՝ վերստին և հոգևոր ծնունդ է, որպէս ասաց Քրիստոս.
«Եթէ ոչ ոք ծնցի վերստին ի հոգւոյ և ի ջրոյ, ոչ մտանէ
յարքայութիւնն Աստուծոյ»*: Եւ վերստին ծնունդ ասի, զի որ
միանգամ ծնեալ է ըստ մարմնոյ ի մարմնաւոր ծնողաց,
զսխատի ծնունդն, երկրորդ անգամ ծնանի հոգևոր և աստուա-
ծային ծնունդ, ի հոգւոյ ծնաւղաց, և այս ծննդեանս հայր
Աստուած է, և մայր՝ եկեղեցին, և արգանդ՝ աւազանն, որ
ծնանի զմանուկն ջրով և հոգւով: Զի որպէս ջուր զմարմնոյն
աղտն լուանայ և սրբէ, նոյնպէս Հոգին Սուրբ զհոգին սրբէ և
մաքրէ և Աստուծոյ տաճար առնէ: Եւ մկրտութիւնն մեր ի
մահն Քրիստոսի է, որպէս ասէ Պաւղոս. «Որք ի Քրիստոս

*Յովհ., Ա, 5:

5 F չիք կամ (խաւսել). զանիրաւութիւն փխ զանարժանութիւն 6 G
չիք միայն ունին 11 F զահսման հաւատոյ 13 F մկրտութենէն 16 F և կամ
որպէս 17 F չիք գխորհուրդ մկրտութեանն 18 D Նորին վասն փխ Յաղագս
20 F աշխարհական փխ աշխարհի 22 F ըստ փխ ի (հոգւոյ)

Յիսուս մկրտեցայք, ի մահ անդր նորա մկրտեցայք»։ Զի յորժամ արկանէ քահանայն զջուրն յաւազանն և ասէ՝ «Զայն Տեառն ի վերայ ջրոց», այսինքն՝ է այն աստուածային ձայնն, որ յարարչութեանն եղև ի վերայ ջրոցն և ասաց. «Հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց». և եղեն Աստուծոյ հրամանն։ Եւ այն ձայնն, որ ի վերայ Յորդանանու եղև ի Քրիստոսի մկրտութեանն, որ ասաց՝ «Դա է որդի իմ սիրելի», — նոյն ձայն և ի վերայ այս ջրոյս, որ ծնանի զմանուկս զայս, որ է որդի հողեղէն մարդոյ և յայսմհետէ կոչի որդի Աստուծոյ։ Եւ զմեռոնն խաչանման ի ջուրն կաթեցնէ, զի մեռոնն Քրիստոս է, և խաչաձևն Քրիստոսի խաչն է։ Եւ որպէս Քրիստոս խաչիւ մեռաւ, նոյնպէս և քրիստոնէն ընդ Քրիստոսի յաւազանն խորհրդաբար Քրիստոսի խաչակից լինի և որպէս թէ ընդդէմ աշխարհիս և մեղացն մեռեալ լինի և բարեգործութեամբ միայն լինի Քրիստոսի կենդանի։ Եւ այն, որ քահանայն Գ հետ ի ջուրն ընկղմէ զմանուկն, երեքաւրեայ թաղմանն Քրիստոսի է խորհուրդ, որպէս թէ թաղեցաւ ընդ Քրիստոսի։ Եւ ի վեր բերեալ ի ջրոյն՝ որպէս թէ յարև ընդ Քրիստոսի ի մեռելոց։ Եւ ի վեր հանել ի բեմ՝ թէ համբարձաւ ընդ Քրիստոսի յերկինս, զի բեմն երկնից է աւրինակ։ Եւ հաղորդիլ զաղային՝ որպէս թէ յայսմհետէ միացաւ ընդ Քրիստոսի, որպէս ասաց Քրիստոս, թէ՝ «Որ ուտէ զմարմին և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ, և ես՝ ի նա»*։

Ահա ծանուցի ձեզ, թէ որպէս մեծ է խորհուրդ մկրտութեանն և հաւատն քրիստոնէութեանն։ Ապա պարտ է ահիւ և դողութեամբ կատարել զխորհուրդ մկրտութեանն։ Յառաջ շաբաթ մի պահ կենան ծնաւղքն և ապա կնքեն զաղային։ Երեքն անաւթի կենայ և սուրբ և պատրաստ՝ որպէս պատրաստի խորհրդոյ։ Եւ երէց, որ ոչ է պատարագաւղ, չկնքէ զաղային։ Եւ զկնքահայրն ընտրեն սուրբ և անարատ, ոչ յիշոցնատու, ոչ շնացաւղ, այլ լաւ քրիստոնէ և անարատ և գիտուն։ Զայլազգի մի՛ առնէք կնքահայր։ Ի կին մարդոյ գիրկ մի՛ դնէք, զի կնքահայրն վկայ է և երաշխաւոր և ուսուցիչ է հաւատոյն, և կին մարդն ո՛չ վկայ, ո՛չ երաշխաւոր, ո՛չ ուսուցիչ չէ պարտ, որ լինի։ Եւ զի այսպէս է, ապա մի՛ ըզմկրտութիւնն որպէս մարմնական գործ համարիք և ծիծաղելով և արբեցութեամբ առնէք, այլ ահիւ և սրբութեամբ։

Թէ այլ քահանայ լինի, միւնն մկրտէ, և միւնն պատարագէ և հաղորդէ։ Եւ թէ ոչ, նոյն ինքն քահանայն յառաջ մկրտէ և ապա պատարագ առնէ և հաղորդէ։

Եւ քահանայքն մի՛ հարկաւ պահանջեսցեն կնքադրամ և գինս անգին շնորհին, այլ զսիրով և զկամաւ տուեալն ընկալցին որպէս նուէր եկեղեցոյն, զի է այս սահմանք քրիստոնէից։ Զի յորժամ խաչ աւրհնեն, և աւր ձէթ տան չեկեղեցին ի վառումն կանթեղին, այսպէս և նորակնունք մանկանն զոր տան նուէր եկեղեցոյն՝ աւրինաւք է և Աստուծոյ հաճոյ, այլ կնքադրամ ո՛չ անուանել և ո՛չ հարկաւ խնդրել։

Եւ զնոր կնքած տղայն յամէն կիրակէ հաղորդեն մինչ ի ԽԱ աւրն, և մեղք կամ յիշոցք չլինի յայն տունն, որ նոր կնքած մանուկն է, այլ սրբութեամբ կան ահիւն և երկեղիւն Աստուծոյ։

Արդ այս առաջին գլուխ քրիստոնէութեան հաւատոյն։

---

* Յովհ., 2, 57։

1 BDF չիք Յիսուս BG չիք ի մահ անդր նորա մկրտեցայք F չիք նորա. մկրտեցայք թաղեալ ընդ նմին մկրտութեան 5 D չիք շնչոց F և եղև այնպէս· չիք Աստուծոյ հրամանն 6 F եղև ի ժամ 8 F եկեսցէ որ ծնանի 9 H չիք որդի G չիք հողեղէն F կոչեսցի շնորհօք 14 D երկնից փխ աշխարհիս 15 F ընդ Քրիստոսի E այնպէս փխ այն CE չիք որ 22 F նոյն ինքն Քրիստոս H թէ ամենայն 22—23 B չիք և ըմպէ զարիւն 24 B չիք մեծ է խորհուրդ 25 H որ ահիւ 26 F չիք զխորհուրդ մկրտութեանն, 27 չիք ծնաւղքն. տան մկրտել փխ կնքեն

1—2 C զաղայն զի խորհուրդ եկեղեցւս առաջին մկրտութիւնն է որպէս ասէ Դիոնեսիոս F այն երեց 3 C ոչ է պարտ առնել 4 F Զայլազգին ոչ է պարտ առնել կնքահայր, զի երբ ինքն ոչ է հրաժարեալ ի սատանայէ և ոչ ունի զհաւատոն գաւանութիւնն համագոյ սուրբ երրորդութեանն, այլոց զի՞արդ կարէ լինել հաւատոն վկա և լեզու 5 C գիրկ տղա 5—7 F մի դնէք զաղայն, զի կնքահայր ասեմք և ոչ կնքամայր և կին մարդ ոչ կարէ լինել վկա երաշխաւոր և ուսուցիչ հաւատոյն 7 DF այս այսպէս 9 C մի առնէք E սրբութեամբ առնէք F բազում պատրաստութեամբ փխ սրբութեամբ 13 F Եւ քահանային ոչ է պարտ հարկապահանջ լինել. 14 F գինս խնդրել 15 F կանոնք և սահմանք 17 C լուցումն փխ վառումն 20 C օր փխ կիրակէ F մկրտած (փխ կնքած). տղային պարտ է 21 H չիք աւրն B չիք նոր 22 H գնած փխ կնքած 24 F չիք արդ E չիք հաւատոյն։

Սրբութեամբ և անարատութեամբ սնուցանեն քրիստոնէքն զիւրեանց զաւակն, և զգուշ կան ի մկրտութեան աւրէն մինչ ի կատարիլ հասակին, մինչդեռ երեխայ է: Յորժամ զգայ, զխաչ հանելն ուսուցանեն, և երբ յոտն ելանէ՝ զծնրադրութիւնն: Երբ ի խաւսք ելնէ, զհաւատոյն խոստովանութիւնն ուսուցանեն, զայն, որ կնքահայրն ասաց ի ժամ մկրտութեանն:

Ուսուցանեն, որ իւր բերանովն ասէ մանուկն. «Հաւատամ ի Հայր, հաւատամ ի յՈրդի, հաւատամ ի Սուրբ Հոգին, հաւատամ ի սուրբ երրորդութիւնն և ի միասնական աստուածութիւնն: Հաւատամ ի ծնունդն Քրիստոսի, ի մկրտութիւնն, ի խաչն, ի չարչարանքն, ի յարութիւնն, ի համբարձումն, ի միւս անգամ գալուստն, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենական՝ հոգոց և մարմնոց»:

Երէցն ի շուրջ գայ ի վերայ ժողովրդեանն և ասել տայ զայս նորահնունք մանկանց, զի այս է գործ քահանային: Եւ յէ տարոյն ի վեր ի խոստովանութիւն սովորի տղայն: Ապա պարտ է ծնաւղացն, որ զգուշութեամբ և պատրաստութեամբ սնուցանեն զզաւակն իւրեանց և խնամ տանին և պահ ածեն, որ չմողուն, որ վայրաբար շրջին, տեսանեն և լսեն և ուսանին զմեղս, և ծնաւղքն լինին պարտական չարեացն նոցա յատեանն Աստուծոյ: Զի սուրբն Բարսեղ կանոնս եդեալ է. «Թէ ծնաւղքն զիւրեանց զաւակացն պիղծ գործսն տեսանեն և ծածկեն վասն ամաւթոյ՝ մեղք նոցա ի գլուխ նոցա եղիցին, է ամ ապաշխարեսցեն»: Վասն զի յերեք իրաց լինի չարութիւնն, և մեղքն բնակէ ի մարդն. կամ ի խառնուածոյ մարմնոյն, կամ ի չար հրահանգից, կամ յանուսումնութենէ: Զի թէ ի չարն վարժի և զվատթարն լսէ և տեսանէ, յաղթի և ախտիցն և մեղացն ոչ կարէ ընդդիմանալ: Եթէ ի բարի

2 G չիք և անարատութեամբ 3 F զգուշ և պատրաստ 4 F զի մինչդեռ երեխայ է և փոքր, երբ զգա զբանն զխաչ 6 D չիք ելնէ. չիք խոստովանութիւնն 10 F յորդի աստուած. հոգին աստուած 11 CE չիք և ի միասնական աստուածութիւնն 12 F զսուրբ ծնունդն 13 E չարչարանք ի թաղումն F հաւատամ զսուրբ մկրտութիւնն Քրիստոսի, հաւատամ ի սուրբ անօրինութիւնն Քրիստոսի, ի խաչն, ի թաղումն, ի չարչարանքն 15 E մարմնոց սրբութեամբ առնէք 17 F Զայս պարտ է, որ քահանայն ի շուրջ 18 F Եւ կանոնի է որ զի տարոյն 19 DH չիք որ 22 D յահագին յատենին 27 E որ բերնակէ 29 G չիք և տեսանէ 30 F զիմանալ

ումանէ անխրատ է, միտքն խոպանի, և որպէս խոպան երկիր փուշս և անպիտան բերս բուսուցանէ, նոյնպէս անուսումն միտքն զանազան չարիս բուսուցանէ, վասն որոյ պարտ է, մինչդեռ տղայն է, խնամ տանիլ և ի բարին վարժել: Զի տղային միտքն որպէս յատակ հայելի է. մի՛ թողուլ անխրատ, որ մեղաց ժանգն չնստի ի վերայ և ապականէ: Տղային միտքն որպէս կակուղ մոմ է. զբարի խրատն և զիմաստութեանն ուսումն դիր ի վերայ մատանէհար, որ այլ պիղծ և վատթար իրք չկերպարանի ի միտքն: Տղային միտքն որպէս յատակ ակն է աղբեր ջրոյ. մի՛ թողուր, որ կամ ճապաղի և ցամաքի, կամ դառն և աղտաղտուկ աւտար ջուր ի ներս մտէ և խառնի: Այլ զոր աւրինակ զջուր յականէ ոք կամի ի պէտս տանիլ ըմպելոյ կամ զանգաստան և զայգիս ջրելոյ, խողովակով և փողերակով պնդէ և հաւաքէ, զի մի՛ ճապաղեսցի և մի՛ ջուրք աւտար և հեղեղաբար ի ներս խառնեսցի: Նոյնպէս և զմիտս տղային իբրև ի խողովակ և ի փողերակ յամենայն կողմանց պնդէ աստուածային աւրինացն ուսմամբ և իմաստութեամբ և հանճարոյ և աստուածպաշտութեան խրատով, զի մի՛ եւեալ միտքն ճապաղեսցի ընդ զգայարանսն, ի տես աչաց և ի լսել ականջաց, ի յորկորամոլութիւն կամ յարբեցութիւն և յայլ գործս վնասու: Եւ կամ աւտար և ժանգ և դառն ջրոյ նման գործք պղծութեան, կամ ձայնք և երգ գուսանաց, և խաւսք և բանք աղտեղի մտեալ ընդ ականջսն, կամ գարշ և անպատեհ տեսութիւն՝ ընդ աչսն, և խառնել պղտորեն զսուրբ և զյատակ միտսն և այնպէս անպատուղ առնեն:

Եւ այս յաղագս սննդեան և խրատու և ուսման տղայոցն: Զոր և աստուածային առաքեալն Պաւղոս պատուիրէ. «Հայրք, խրատեցէք զորդիս ձեր և սնուցէք սրբութեամբ և երկեղիւն Աստուծոյ»:

2 E բոյսս փխ բերս 4 E խնամել 9 H չիք որպէս 11 F խառնակի 12 D եթէ ոք E կամիցի տանել վասն փխ կամի ի պէտս տանիլ 13 G ջրոյ H ջրելոյ յատակելով և փողերակով B փողովակով 15 D հեղաբեր 16 F իբրև փողերակ H փորակով 17 H պնդէ տղային քարկրով 20 B չիք և ի լսել ականջաց կամ E ի յարբեցութիւն H չիք կամ 21 B չիք Եւ F ժանգ մեղաց 22 D գուսանաց կամ 23 E չիք ընդ, չիք կամ 27 F պատուիրէ ասելով

Եւ արդ, որք այսպէս սրբութեամբ սնանին, և լինի կըտրիճ տղայն ժե տարոյ՝ վեհացու է, և աղջիկն՝ ժԴ տարոյ, և թէ այլ նեղին՝ ժԲ տարոյ, և ապա թէ ուզեն զայս անցաւոր աշխարհիս կեանս՝ ամուսնանան։ Եւ պարտ է քահանային, որ քննէ յառաջ, որ չլինին կարևորք, այլ յերկու դեհէն մինչև ի Դ ծնունդն հեռացեալ լինին, որ է այսպէս. երկու եղբայր կամ երկու քուրջ թոռներն խնամիք լինին ու զիւրեանց ծնունդքն իրաց տան, և որ խնամութեամբ հետ մի յիրար խառնել լինին։ Այլ աւտարքն նոյնպէս Դ ծնունդ հեռանան և ապա այլ խնամենան։ Եւ եթէ մէկ դեհն Դ լինի և մէկն Դ՝ և այն։ Եւ թէ քան զայս պակաս լինի, ո՛ սուրբ հայրապետացն յանէծք և ի բանադրանքն են մատնել այնպիսիքն և քահանայն և ժողովուրդն։ Որոց և Աստուած սպառնայ մարգրէին Ովսէի, եթէ՝ «Սուգ առցէ և նուազեսցին ամենայն բնակիչք երկրի, զի արիւն ընդ արիւնս խառնին», այսինքն է՝ զազգականացն արիւնն ամուսնութեամբ խառնեն, զոր և սրբոց հարանցն կանոնքն արգելուն։*

Ե ԿԱՆՈՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՐՑՆ

Եթէ ոք առնու կին ի մերձաւորէն իւրմէ մինչև ի վեցերորդն արժան է ի միմեանց և ծանր ապաշխարութիւն դնել ի վերայ, զի չէ ամուսնութիւն, այլ յարակայ պոռնկութիւն, և ընդ անէծիւք Աբարչին։

ԿԱՆՈՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ [Ա.ՅՆ]

Եթէ ոք առնու կին ի մերձաւորէն իւրմէ մինչև ի վեցերորդն և յեւթներորդն՝ նզովեալ եղիցին, և մեկնեսցին ի միմեանց առաչնորդքն։

---

* *Ովսէ, Դ, ե.*

1 C *Խրատք ամուսնացելոցն* F *յաղագս պսակի և խրատ ամուսնացելոց հասարակաց քրիստոնէից* 3—4 F *չիք և թէ այլ նեղին ԺԲ տարոյ* 4 G *ԺԴ տարու փի ԺԲ տարոյ* 5 CEF *չիք աշխարհիս* 6 C *չլինի ազգ կամ* F *կարեւորք միմեանց* 7 H *հեռացնեն* 8 B *որ զիւրեանց* 11 G *Դ լինի* 12 F *այլն փի այն* 13 H *չիք յանէծք* 17 F *ընդ ամուսնութեամբ* 20 E *զի՞* 22 F *զի ոչ այն* 25 C *չիք վեցերորդն* 26 F *յեւթերորդ ասաիճան*

Եւ վասն պսակին անարգելոյ ճ դրամս տացեն յեկեղեցին և Դ ամ առ դրանն ապաշխարեսցեն։ Բայց վարդապետն իշխան է զինչ կամեսցի՝ արասցէ։ Նոյնպէս և զհարսնացուն, թէ քան զԺԲ տարին պակաս պսակէ, և թէ խիստ նեղին և փեսայն այլ տղայ է, նա տասն տարոյ։ Եւ որ քան զԺ տարին պակաս է և պսակէ՝ ընդ անիծիւք են, զի աւրինաւք ԺԴ տարոյն է, և թէ այլ պակաս ԺԲ, և վասն ժամանակիս զերկու տարին այլ պակասեցուցին սուրբ վարդապետքն մեր։

Արդ, որ քան զԺ պակաս պսակէ հարսն՝ նա այնպիսի պսակն անհաստատ է, և քահանայն, որ պսակեաց, Ժ ամ ապաշխարէ։

Եւ թէ քանի մեծ մեղք և չարիք է ի լինիլ յայն մէջն, որ զփոքր աղջիկն պսակեն, զայն ոչ կարեմ գրել ի գրի աստ։ Վասն որոյ թողէ՛ք զչար սովորութիւն։ Զի և սուրբ հայրապետն Հայոց Սահակ կանոնեալ է. «Տղոյցն հասակաւ պսակ մի՛ դիցեն քահանայք»։ Նոյնպէս և կաստարելոցն, որ ոչ են տեսանել զմիմեանս և հաճել, զի բազում վնասք լինին յայսցանէ։ Նոյնպէս և զերկու տղայ և որ զմի մաւր կաթն են կերեալ մի՛ պսակել։ Եւ այր և կին, որ միոյն եղբաւր դուստր լինի և միոյն եղբաւր որդի՝ մի՛ տալ իրերաց և մի՛ պսակել։ Նոյնպէս և թէ քուրջ ծնունդ լինի։ Զհարսնացուն յորժամ քննես, որ չեն կարևոր և հասնի, և կամիս պսակել՝ խոստովանեցո՛ և զփեսայն և զհարսն, և ապա պսակես զանարատ կուսութեամբ կացածքն։

Եւ փեսայն և հարսն և երէցն, որ պսակէ, անաւթի լինի և զկերեալն և զարբեալն մի՛ թողցեն յեկեղեցին, և զանառակ արս և զկանայս։ Եւ զպսակն յառաւաւտէն մինչև ի ճաշքն արասցեն, և յետ պսակին պատարագ լինի, և հաղորդին, և յետ աւրհնութեան պսակին Ը աւր սուրբ կենան, և յետ Ը աւուրն գնայ երէցն և զյետի աղաւթքն կարդայ և զպսակն ի վեր առնու, և խրատ տայ զԱստուծոյ աւրէնքն և այսպէս ասէ. «Որ-

---

1 F *տացեն տուգանս* 2 E *իշխէ* 3 CE *չիք արասցէ* 5 C *տասներկու փի տասն* 7 C *չիք և վասն*, 8C *չիք սուրբ. մինչև վարդապետքն մեր* 9 E *պակաս է գհարսն* 12 E *Եւ քանի մեծ մեղք լինի յայն մէջն և չարիք* H *չիք մեծ* 13 C *եմ փի կարեմ* 15 F *չիք հայոց* 19 G *չիք և (կին). չիք միոյն եղբաւր դուստր լինի և* F *լինի մինչև Ը պորտն* 20 E *թէ ոչ* 23 –24 C *չիք և Ը պա պսակես զանարատ կուսութեամբ կացածքն* 25 CF *չիք եւ փեսայն և հարսն* H *պիտի կենան փի լինի* 29 CEF *կենան յանկողնո* 30 CF *գյետին*

դեակք իմ և հաւատացեալք Քրիստոսի, ամուսնութիւնն վասն այն է, որ որդեծնութիւն լինի և աճումն՝ ըստ աւրհնութեանն Աստուծոյ, և ոչ յաղագս հեշտասիրութեան»: Եւ խրատ տայ, որ զչորեքշաբաթն և զուրբաթն և զկիրակին, զԱղուհացքն և զինունքն և զայլ տէրունական տաւնսն՝ զլուացքն, զխաչի և զծայտնութեան սուրբ կենան յանկողնէն: Եւ որ այն աւուրքն պահակ չէ ի դնուիլ, այն է պատճառ, որ չկայ հրաման անկողնոյ և ամուսնութեան: Եւ որ յայս աւուրքս պահակ դնէ՝ հակառակ է աւրինացն Աստուծոյ և ընդ պատժաւք է: Զի և ի կանոնս սուրբ հարցն այսպէս գրեալ է. «Եթէ ոք ի կիրակէ անգիտութեամբ ի կին իւր մերձենայ՝ է աւր ապաշխարէ, թէ գիտելով՝ ի աւր, և թէ սովորութեամբ՝ ընդ անիծիւք է: Նոյնպէս և յորժամ յղի իցէ կինն, մի՛ ամուսնասցի, մինչև ծնցի զմանուկն: Ոչ իմանաս մտաւբդ, եթէ անպատշաճ է, որ միտս և իմաստութիւն մարդոյ ունի յայն աւուրս ի կինն մերձենալ: Այլ և զայս ուսուցանեն աստուածային Աւրէնքն. «Ոչ մերձենալ ի կինն, յորժամ յապահարսն լինի», այսինքն՝ յորժամ ի կանանց աւրինի իցէ կինն, մի՛ մերձեսցի ի նա այր իւր:

Եւ զի՞նչ է պատճառն:

Զոր աւրինակ, մշակ ոչ սերմանէ ի ճախճախուտ վայր զսերմն, զի մի նուազեցուցել ողողեսցի: Այսպէս զաւրինակ անդաստանի բերէ անձն կնոջն և այր զմշակի, եթէ յայնր ժամանակի մերձաւորի անպտուղ լինի, և թէ սաղմ ատ ի խառնեալ ընդ իրար, ապականէ զպաղափար մանկանն ի զանազան ախտս՝ յուրկութիւն, որ է գոդութիւն, ի պիսակոտութիւն, ի դիւահարութիւն և յայլ գարշելի և անբժշկելի ցաւս: Արդ, որ յայսմ ժամանակի մերձենայ ոք մոլելով, չարեացս այսոցիկ պարտական է և մանկանց ապանողք: Եւ որ ոք յանդգնի՝ մահապարտ է: Եթէ կինն ծածկէ յառնէն՝ նա է պարտական մեղացն:

---

1 F լուարուք և ի մէտ առէք զի ամուսնութիւն 2 E լինի փխ է 11 B կին մարդ 12 H սովորութեամբ է անիծած է յաստուծոյ և ամենայն սրբոցն 14—15 զF չիք որ միտս և իմաստութիւն մարդոյ ունի 17 CEF չիք կինն 21 E չիք Ասերմն. H նուազել նեխի փխ նուազեցուցել ողողեսցի 23 B կինն անպատուղ 25 C չիք որ է գոդութիւն F այսպէս յուրկութիւն ի պիսակոտութիւն 26 G իք և անբժշկելի H չիք որ

Եւ արդ, լուարո՛ւք, հաւատացեալք և քահանայք, եթէ մեք ամաչեմք և ոչ քարոզեմք, և դուք ամաչէք և ոչ խրատէք, ի մեղաց նոցա և ի խղճէ ոչ եմք անպարտ: Զոր աւրինակ բժիշկ, որ գիտէ զցաւս հիւանդի, եթէ ոչ զգուշացուցանէ, և նա վնասի, պարտական է խղճոյ, և թէ բժիշկն զգուշացոյց, և նա ոչ պատրաստեցաւ՝ ինքն է անձին իւրոյ վնասուղ:

Եւ զայս իսկ պարտ է գիտել քրիստոնէիցդ, զի այր և կին, որ Աստուծոյ հրամանաւն և աւրինաւք և սուրբ պսակաւն միաւորեալ են, չկայ հրաման այլ թողլոյ կամ բաժնելոյ, որպէս և Քրիստոս հրամայեաց, թէ՝ «Զոր Աստուած զուգեաց, մարդի մի՛ մեկնեսցէ»*: Մի՛ սովորեսցին առաջնորդք և մի՛ թոյլ տացեն բաժանելոյ և հրամանացն Աստուծոյ մի՛ կայցեն հակառակ:

Այլ և այր և կին մի՛ սովորութիւն առեալ յամենայն փոքր պատճառէ երդնուլ միմեանց, որպէս սովոր են անմիտք և անիմաստք, զի թէ վասն երդման թողուն զիրար, Աստուծոյ հրամանին և ուխտին կոխաւղք են, թէ ոչ, որ այլ ի շիջանել բարկութեանն ի միասին բնակեն, նա երդմնահարք և այնպէս Աստուծոյ յանցաւորք: Արդ, որ միանգամ անգիտութեամբ արարին զայս, քահանայն լուծ դիցէ, և պահաւք և մատաղով քաւեսցին և այլ մի՛ մեղիցեն:

Զ ՅԱՂԱԳՍ ՇՆՈՒԹԵԱՆ

Քրիստոնէք մի՛ անկցին յախտ շնութեան և մի՛ շունք և պոռնիկք կոչեսցին: Եւ թէ զի՞նչ է շնութիւն և կամ ուստի՞ ըստ կըսաւ և ի քանի՞ս բաժանի, և զի՞նչ է պատուհաս շնացելոյն: Շնութիւն այն է, որ թէ ի տղայութենէ ի հետ մինչև ի ժամ պսակին անարատ կուսութեամբ և սրբութեամբ չէ կացել, շուն կոչեցաւ և կորոյս զպսակն աւրհնութեան, և ոչ հանգչի ի վե-

---

*Մատթ., ԺԹ, 6, Մարկ. Ժ, 9:

1 F չիք հաւատացեալք 5 F խղճոյ և արեան նորա 5—6 F ոչ լսէ և ոչ պատրաստէ 7 F զայս և 8 F պատուիրանաւն փխ պսակաւն 10 F չիք զոր աստուած զուգեաց 14 F սովրեսցին C չիք փոքր 15 F չիք միմեանց 17 F ուխտին զոր եղին առաջի եկեղեցոյն յանցաւորք և կոխողք եղեն 19 E յանցաւորք օրինացն աստուծոյ B չիք անգիտութեամբ 20 CEF պահաւք և աղաւթիւք H պահօք ողորմութեամբ 21 E չիք և այլ մի, F չիք մեղիցեն 23 F զի մի չհունք

թայ նորա քահանայական աղաւթիցն աւրհնութիւն։ Նոյնպէս և յետ պսակին աւրհնութեան թէ այրն կամ կինն յատար մեղք շաղախին, անարգեցին զպսակն աւրհնութեան և շուն կոչեցան և պոռնիկ անուանեցան։ Զի պոռնկութիւնն Գ ազգ է, զի թէ յայրի կին և կամ յիւր տանն աղախին կամ ի բուռ կանայսն խառնակի, այնպիսին պոռնիկ կոչի, որ յայլ և յայլ տեղի խառնակի, կամ կին, կամ այր։ Եւ շուն այն է, որ յայլ մարդոյ կին, կամ կին յայլ կնոջ այր մեղանչեն, կամ զկուսութիւնն անարատ ոչ պահեն մինչ ի պսակն աւրհնութեան, կամ կուսութիւն՝ թէ ոք խոստացեալ լինի և չպահէ զինքն սրբութեամբ։

Արդ այսոքիկ պոռնիկք և շունք կոչին։ Եւ թէ ուստի՞ բսկըսաւ այս մեղքս և չարիք։ Յորդոյն Սեթայ և ի դստերացն Կայենի սկսաւ։ Զի Սէթ և Կայէն որդիք էին Ադամայ։ Զկայէն անիծեաց Աստուած՝ վասն իւր չարութեանն, և զՍէթ աւրհնեաց. և ուխտ եդ Աստուած Սեթայ և ծննդոց իւրոց՝ ոչ խառնիլ խնամութեամբ յազգն Կայենի։ Իսկ յետ բազում ժամանակաց ի չար հնարիցն սատանայի թոռունքն Կայենի դտին արքն՝ զգուսանութեան արուեստն, և կանայքն՝ զսնգոյրն և զծարոյրն և զայլ պճնողութեան հնարսն, և խաբեցին զսուրբ ծնունդսն Սեթայ և խառնակեցան ընդ միմեանս խնամութեամբ, և այնպէս յաճախեաց և բազմացաւ շնութիւն և պոռնկութիւն ի վերայ երկրի։ Վասն որոյ բարկացաւ Աստուած և էած զջուր ջրհեղեղին և ջնջեաց և կորոյս զամենայն երկիր, զմարդ և զանասուն, բայց ի Նոյէ և յորդոց իւրոց, որ մնացին վասն սրբութեանն։ Զի Նոյ ՃՀ տարի կոյս եկաց և ապա ամուսնացաւ և որդիս ծնաւ, վասն որոյ վերստին սկիզբն եղև մարդկութեանս, և ապրեցաւ որդովքն իւրովք։

Արդ, որ յայնպիսի մեղքն շաղախեալ են, շունք կոչին և պոռնիկք։ Շուն վասն այն կոչին, զի այն է շանց գործ, որ չունին իւրեանց զուգակից, այլ ուր հանդիպի՝ խառնին։ Եւ պոռնիկ կոչին, որ չունին աւրինաւոր սրբութեամբ զամուսնութիւն, այլ անաւրէն խառնակութեամբ վարին։

1 F չիք քահանայական H նոյն փխ նոյնպէս 1—2 H չիք և յետ 4 EF չիք անուանեցան F նախ զի թէ 6 H չիք և յայլ 7—8 F մարդոյ կին երթա 10 F չիք թէ 13 F Ասեմք թէ յորդոցն E որդոց 22 E ածեցաւ փխ յաճախեաց 25 H չիք ի Նոյէ և յորդոց իւրոց, որ մնացին վասն սրբութեանն 27 F չիք վերստին 29—30 E չիք և պոռնիկք E չիք շուն վասն այն կոչին

Արդ յաղագս այսպիսի մեղացս գայ բազում պատուհաս ի վերայ երկրի՝ սով և սրածութիւն, դերումն և սպանութիւն. շարժ և հրձգութիւն և այլ անթիւ պատուհաս, զոր եթէ ոչ դառնան յայսպիսի չարեացս, այնպիսիքն են աշխարհի կործանման և աւերման պատճառ և արեան տէր։ Եւ կանոնք սրբոցն և հրամանք վասն այնպիսեացն ապաշխարութեան, որ մին հետ յատար մեղք է խառնակել, ԺԵ տարի պահք և ապաշխարանք է։ Հաղորդ չառն և յեկեղեցին չթողուն զայնպիսիքն։ Եւ քահանայ, որ հաղորդէ զայնպիսիքն, մատնիչ և պարտական է մարմնոյ և արեանն Տեառն և զսրբութիւնն շանց ետ, վասն որոյ պարտական է դատաստանին Աստուծոյ։ Այլ շնացաւղքն զրկեալ լիցին ի հաղորդութենէ և յայն կեանքն՝ յարքայութենէն։ Որպէս և գրէ Պաւղոս. «Շնացաւղք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն»։ Եւ ոչ թէ սուրբք միայն են գրել և խրատել և քարոզել՝ հեռանալ յայսպիսի մեղացս, այլ և ինքն անտեսանելին Աստուած, որ երևեցաւ Մովսէսի և խաւսեցաւ ընդ նմա անմարմին շրթամբք. և գրեաց լուսափայլ և հրեղէն մատամբն յերկու քարեղէն տախտակսն զԺ բանք աւրինացն։ Եւ ե բանն, որ ի միում տախտակին, այս էր, զոր խաւսեցաւ և գրեաց. «Մի՛ սպանաներ, մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ երդնուր սուտ, մի՛ ցանկար»։

Որ վասն շնութեանն, թէ քանի մեծ մեղք են՝ գրեցաք։

Է ԵՒ ԱՅԺՄ ԳՐԵՆՔ ԵՒԹՆԵՐՈՐԴ՝ ՎԱՍՆ ԳՈՂՈՒԹԵԱՆ*

Զի գողն Աստուծոյ հակառակ է և սրբոցն անհնազանդ և ամենայն մարդկան թշնամի։ Աստուծոյ հակառակ այնով է, զի ասաց Աստուած Ադամայ. «Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո»**։ Արդ, որ զայլոց քրտանց և զաշխատանաց իրք գողանայ՝ հակառակ է Աստուծոյ հրամանին և սրբոցն անհնա-

* Այս գլխի վերնագիրը կարմիր թանաքով չի գրված և ընդհանրապես իբրև վերնագիր չի նշված։

** Ծնունդք, Գ, 19։

1 EF մեղաց գայ բարկութիւն և պատուհաս C բարկութիւն և պատուհաս 2 F այսպէս սով, 3 հրացանութիւն փխ հրձգութիւն 6 F գի ապաշխարութեան այսպէս է գրեալ, թէ որ 8 C եկեղեցի, չմանու փխ չթողուն 10 E զի զսրբութիւնն 12 F կեանքն ի հաղորդութենէն 13 F ասէ փխ գրէ E չիք աստուծոյ 14 F սուրբք ի մարդկանէ 15 E չիք և քարոզել 15—16 G անտանելին փխ անտեսանելին 18 E բանեան F օրէնս 22 E մեծ մեծ 23 E յաղագս փխ վասն F բան վասն 26 H չիք աստուած 27 F Արդ, որ զայս խոսեցաւ և գրեաց, թէ զայլոց 28 E չիք հրամանին

զանդ է։ Զի մարգարէն Դաւիթ ասէ. «Զվասնտակս ձեռաց քոց կերիցես, երանի՛ է քեզ, և բարի եղիցի»*։ Եւ առաքեալն Պաւղոս գրէ. «Որ գողանայրն՝ մի՛ ևս գողասցի, այլ վաստակեսցէ ձեռաւք իւրովք և տացէ՝ ոմ և պիտոյ իցէ»**։ Եւ գողն ամենայն մարդոյ թշնամի է, զի կամքն այն է, որ թէ կարէր՝ զամենայն մարդոյ գողանայր, բայց վասն այն խափանի, զի ոչ կարէ։

Գողութիւնն Գ ազգ է։ Այն, որ բռնաւորքն են, ի լերինս և ի ճանապարհակիցս նստին և սպանանեն և կողոպտեն և յափշտակեն, որպէս գազան կատաղի. և որ տկարքն են, մկան պէս որմափոր լինին, գաղտաբար շորթեն և գողանան։ Եւ են, որ յայգիս և ի ծառս և յարտաւրեայս և յանդաստանս անխըրաբար գողանան զընկերացն։ Եւ են, որ ի վաճառս գնոյ և ծախոյ խաբեն և աւելի առնուն և պակաս տան, որ կարի դառն է և աններելի։

Արդ, ամենայն գողութիւն չար է և Քրիստոսի հակառակ, որ ուսոյց քրիստոնէից. «Եթէ ոք հանէ զհանդերձս քո, տո՛ւր ի նա և զմիւսն»։ Ապա զի՞նչ պատասխանի ունին յաւուր դատաստանի, որ և զայլոց գողանան։

Արդ գիտացիք, եթէ գողն և զրկողն և յափշտակողն թէ Աստիտակացն ոչխար մի մատաղ առնէ՝ չունի թողութիւն, այլ յայն ժամն լինի թողութիւն, որ յիւր տէրն դարձնէ և ինքն դառնայ ի մեղացն և ապաշխարէ։ Եւ թէ ոչ զղջանայ յայնպիսեացն, յարքայութենէն զրկի և ի գժոխս մատնի, և յաւր դատաստանին, թէ իւր իրք մի բարիք լինին, առնուն յիրացն տէրն տան, և նա հետ սատանայի տանջի անդադրմաբար։ Նոյնպէս և այն գողութիւն է, որ գառնէ զիրքն և լսէ զձայն այնմ, որ տէր է իրացն, և ոչ գայ ի խոստ և տայ ի տէրն՝ զնոյն պատիժ կրէ

---

* Սաղ. ՃԻէ, 2։

** Թուղթ առ Եփեսացիս, Դ, 28։

1 G չիք քոց 2 EG չիք է քեզ EF չիք եղիցի 3 F այլ մի 8 F նախ նոքա են, որ բռնաւորքն 10 C չիք են 17 F ուսուցանէ ինքն տէրն F զազգս քրիստոնէից՝ ասելով, որ հանէ ի քեն CE որ հանէ 18 CEF պատասխանին 20 F լո ւարուք եղբայրք փխ գիտացիք E թէ մին սպիտակին G չիք և յափշտակող ն 21 E համար ոչխար մի F ամենևին թողութիւն 23 E չիք ի մեղացն 24 E մատնէ փխ մատնի 25 C բարի գործք լինի F բարի գործ լինի H բարի 27 F գողութիւն է և ծանր մեղք 28 F կրէ հաւուրն դատաստանի։



Ս. Էջմիածին, Մատենադարան, ձեռ. № 1796, էջ 2։
Հովհաննես Երզնկացու ինքնագիր հիշատակարանը։

Ուիներորդ բան կանոնական. ոչ է պարտ քրիստոնէին երդնուլ սուտ կամ իրաւ։ Զի թէպէտ Մովսեսի աւրինաւքն զտխմար և զանկատար մարդիկն յայն ժամանակի ուսոյց Աստուած, թէ՝ «Մի՛ առնուր զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ անօտեաց»*, այսինքն թէ՝ զքո Տեառն, որ թագաւոր և դատաւոր և քննող է քո, և զքո արարչին անունն ի վերայ սուտ կռոցն մի՛ կոչեր և սուտ երդնուլ, այլ ի Տէր Աստուած քո երդնուցուս ճշմարիտ։ Եւ զայս վասն այն ասաց, որ զտղայական և զյիմար միտս նոցա փոխէր ի կռոցն, որ զճշմարիտն Աստուած ճանաչէին։

Իսկ յոյսն մեր Քրիստոս ամենևին եբարձ զերդումն և ասէ. «Մի՛ երդնուցուս յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, և մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յերուսաղէմ, զի քաղաք է մեծի Արքային, և մի՛ ի գլուխ քո երդնուլ, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ»**։

Այլ այժմ տեսանեմք, զի լցեալ է աշխարհ երդմամբ, և յամենայն փոքր իրաց վերայ զահեղ և զսոսկալի անունն Աստուծոյ առնուն։

Եւ երեք են տեսակ երդմանն։ Է՛, որ վկայական կոչի, որ ասեն, թէ՝ «Աստուած վկայ է». և այս՝ կարի սոսկալի։ Է՛, որ զերկնի և զերկրի Արարչին անունն ի վերայ սուտ բրաց վկայ կոչել, որ թէ զթագաւորի կամ զիշխանի անունն յիշէր՝ մահապարտ էր։ Եւ երկրորդ ուրացական երդումն է, որ ասեն, թէ՝ «զԱստուած ուրացեալ է, թէ այս հայնց է», որ թէ ի ճշմարիտ իրաց վերայ ասէ զայս, մեծ անաւրէնութիւն է, որ իւր բերանովն ուրանայ զԱստուած։ Զի ասաց Տէր մեր Յիսուս Քրիստոս, թէ, «Որ ուրանայ զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հաւր իմոյ, որ յերկինս է»***։ Եւ վասն որոյ սուրբն

* Ելք, Ի, 7, Որէնք է, 11։
** Մատթ., է, 34։
*** Մատթ., ժ, 33։

1 F Յաղագս երդման բան կանոնական H Մի երդնուցուք սուտ և իրաւ 2 B ուխերորդ F Եւ արդ ոչ է պարտ 3 BCG աւրէնքն 5 BC չիք տեառն G չիք քո 6F չիք տեառն որ 6—7 F չիք թագաւոր և դատաւոր և քննող է քո և 18 E զի յամենայն 19 F յիշեն սուտ երդմամբ փխ առնուն 24 H ուրացեալ է փխ ուրացական երդումն է 25 E հայնց չէ 26 E չիք վերայ C չէ որ 29 H չիք վասն

Քարտեղ ի կանոնսն իւր ասէ. «Եթէ ոք երդնու ուրացութեամբ՝ ժե ամ ընդ ունկնդիրսն կացցէ, մի ամ՝ առ դրանն և ապա հաղորդեսցի»։

Եւ երրորդ է խոստովանողական երդումն, յորժամ ասէ. «Աստուծոյ փառքն, որ այսպէս է». կամ ասէ, թէ՝ «Այս խաչիս և Աւետարանիս փառքն»։

Արդ, յորժամ հարկ լինի քրիստոնէին, և երդումն հասանի յեկեղեցի, և քահանայի միջնորդութեամբ և ղորդ է բանն, և հոգոյ շահ կայ, և արեան փրկութիւն կայ՝ յայնժամ զայս վկայական երդումս թոյլ տան, այլ և այս ո՛չ առանց ապաշխարութեան լինի։

Բայց այնոքիկ, որ սովորաբար սուտ և չիրաւ ի փողոցս և ի հրապարակս զահաւիղն անունն Աստուծոյ վայրապար չիշեն, այնպիսիքն թէ ոչ դառնան ի չար սովորութենէն, մեծ և սաստիկ և դառն պատուհաս կրելոց են յարդար դատաստանէն Աստուծոյ։

Թ ՅԱՂԱԳՍ ՍՈՒՏ ՎԿԱՅԻ

Իններորդ կանոն գրեմք վասն այնոցիկ, որք անաստուածաբար սուտ վկայութիւն տան, զոր Աստուած խաւսեցաւ ընդ Մովսիսի և գրեաց յԱւրէնսն, թէ՝ «Մի՛ սուտ վկայեր»*, որ է մեծ անաւրէնութիւն։

Նախ առաջին այս է՝ ահեղ և սոսկալի իրք, որ զճշմարտութիւնն, որ և Աստուծոյ անուն է և զարդ է ամենայն իրաց և շինութիւն է աշխարհի։ Սուտ վկայն աւերիչ և կործանիչ է ճշմարտութեանն, որ զոր ոչն ետես և զոր ոչն գիտէ՝ վկայէ։

Եւ երկրորդ՝ զի այլոց մեղաց ընկեր լինի և հաստատէ զնոսա ի մեղս և ի չարիսն, զոր մեղան, և լինի ինքն բնակարան սատանայի, որպէս ասաց Տէրն. «Որ սուտ խաւսի՝ յիւրոց անտի խաւսի սուտ»։ Եւ յիւրոցն այն է, որպէս թէ ասէ Աստուած, թէ՝ «Իմ չէ սուտն, այլ սատանայի է, և սատանայ է հայր նորա, որ զսուտն ծնաւ, և ամենայն սուտ վկայ սատանայի է մասնակից»։

Նոյնպէս և ամենայն ստախաւս, զոր թէ ոչ դառնան և ապաշխարեն, ի տանջանս և ի կորուստ մատնելոց են ընդ սատանայի, ըստ այնմ, թէ՝ «Կորուսանէ Տէր զամենեսեան, որք խաւսին սուտ»*, զի ճշմարտախաւս բերանն դուն է Հոգոյն Սրբոյ, և բերան ստախաւս դուն է դժոխոց և մուտ դիւաց։ Վասն որոյ սովորեցուցէք զբերանս ձեր ի ճշմարտութիւն, զի բնակեսցէ ի ձեզ Հոգին Սուրբ։

Ժ ՅԱՂԱԳՍ ՅԻՇՈՑՆԱ[ՏՈՒԱՑ]

Տասներորդ կանոնք գրեմք վասն ահեղ և մեծ և դառն և զարհուրելի մեղացն, որ ասի իշոցք՝ գեղջուկ բառով և ըստ գրոց սովորութեան՝ անէծք և թշնամանք կոչի, որ խաբեալ և սովորեալ մարդիկ զբերանն և զլեզուն գործարան են տուեալ սատանայի՝ թշնամանել, հայհոյել և անարգել զմիմեանս։ Որ է մեծ մեղք և անքաւելի իշոցքն և չար է, քան զամենայն հերձուածս, զի որ յԱդամայ մինչև ցայսաւր հերձուած է լել և ժողովուլ նզովել են։ Մեծ հերձուած, քան զամենայն՝ իշոցքն է, որ զամենայն մոռացեալ մեղք և զչարիք յիշել տան Աստուծոյ և հրեշտակաց և սրբոց, և դողացուցանեն զարարածս Աստուծոյ և գարշելի և զազիր հոտով լնուն զերկիր։ Յիշոցնատուքըն փակեն զդուռն ողորմութեանն Աստուծոյ և չտան տեսանել Արարչին ողորմած աչառք զիւր արարածս, և արգելուն զսուրբսն Աստուծոյ բարեխաւսել վասն աշխարհի։ Ուր քրիստոնէական անունն և անճառ խորհուրդ քրիստոնէութեանս հայհոյի, զի այս է, որ ասաց Քրիստոս. «Որ զՀոգին Սուրբ հայ-

---

* Ելք, Ի, 13։

5 E որ ասէ G չիք այս 7 F կաթի մեծ հարկ. հասնի եկեղեցական դատաստանաւ 8 C ճշմարիտ փխ զորդ 9 B չիք կայ CE չիք կայ 10 B չիք առանց 15 H չիք և դառն 18 F տատներորդ փխ իններորդ. որ H կանոնացն 23 F անունն է որ ասաց ես եմ ճշմարտութիւն որ զարդ է 24 F սուտ վկայն այլոց 28 F խաւսի և

* Սաղմ., ե, 7։

4—5 H կորուստն սատանայի մատնելոց են փխ կորուստ-սատանայի Ջ F ըստ այնմ, որ ասէ սաղմոսերգուն Դաւիթ BCE զայնոսիկ փխ զամենեսեան 6 CE որ փխ ոյք 8—9 E չիք մուտ. ճշմարտախօսութիւն փխ ճշմարտութիւն 9 E չիք 10 D Յոհաննէս վարդապետի Եղնկացոյ ասացեալ վասն յիշոցաց 11 D Իններորդ E Մեասասաներորդ փխ Տասներորդ, D կանոն 13 D վկայութեան փխ սովորութեան G չիք և ըստ գրոց սովոր ութեան անէծք 14 C լել փխ տուեալ E չիք են 16 E չիք մեծ 17 D հերձուածոցս H յԱդամայ հետէ 18 C ժողովով E ժողովքն F չիք և ժողովով նզովել են. չիք քան զամենայն H չիք և չարիք 20 F այլ սրբոց 21 F դարձեալ զի յիշոցնատուքն 23 E չիք արարչին 24 H չիք վասն 24 F Զի որ և փխ ուր 26 C խափանի փխ հայհոյի E վասն այս F հայոյի շնորհօք հոգոյն սրբոյ յայնպիսի տեղոյն բարձաւ և որպէս ասաց Քրիստոս

հոյէ, մի՛ թողցի նմա՝ մի՛ յայսմ աշխարհ և մի՛ ի հանդերձեալումն»*: Որ յայսմ աշխարհի չէ առել Քրիստոս իշխանութիւն ումեք՝ թողուլ յիշողնատուին, ո՛չ կաթուղիկոսի, ո՛չ եպիսկոպոսի, ո՛չ վարդապետի, ո՛չ իրիցու: Եւ յայն աշխարհին ոչ ոք իշխէ բարեխաւսել՝ ո՛չ հրեշտակք և ո՛չ սուրբք ամենայն, այլ յաշխարհաստեղծ բերանոյն անիծիւք հետ դիւաց ի հուր գեհենոյն երթան յանշիջանելին: Եւ յայս-կեանքս որչափ կենդանի է, ամենայն սուրբք ի նզովել են զյիշողնատուն: Մովսէս աստուածախաւս և մեծ մարգարէն նզովել է զյիշողնատուն և զիւր ապրանքն ամենայն, զնատելն և զյառնելն: Նոյնպէս և այլ ամենայն սուրբքն: Զհայհոյիչն և զդողացուցիչն աթոռոյն Աստուծոյ ո՛վ է, որ չնզովէ:

Եւ յորժամ կաթուղիկոս և եպիսկոպոս և վարդապետ և երէց չունին իշխանութիւն թողուլ յիշողնատուին, յայտ է, որ յիշողնատուն ի կաթողիկոսէ, յեպիսկոպոսէ, ի վարդապետէ, յերիցուէ և յամենայն քահանայից նզովք կան: Եւ սուրբ հայրն մեր մեծ վարդապետն Վարդան յիւր կենդանութիւնն բազում անգամ ժողովք արար և զնոյն կանոնք հաստատեաց, որ կաթողիկոս կամ եպիսկոպոս կամ վարդապետ կամ երէց չունին իշխանութիւն զիշողնատուն կամ աւրհնել կամ հաղորդել կամ թաղել, կամ զաղայան կնքել կամ պսակել, որ չտան զարբութիւն շանց և ինքեանք նոցա մեղացն և նզովիցն կցորդ լինին, զի որ զքրիստոնէն անարգէ, զԱստուած է անարգել, և որ զքրիստոնէն հայհոյէ, զՔրիստոս է հայհոյել, զի ինքն Քրիստոս ասաց. «Կացէք յիս, և ես՝ ի ձեզ, և որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ, և ես՝ ի նմա»*: Եւ առաքեալն Պաւղոս ասէ. «Մարմին Քրիստոսի են քրիստոնէքն, և անդամք՝ յանդամոց նորա, տաճար Աստուծոյ են քրիստոնէքն, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի նոսա»**: Եւ Քրիստոս Աստուած զիւր անունն է դրել քրիստոնէից, և Քրիստոս և քրիստոնէն մէկ են, և որ զքրիստոնէին զբերանն անարգէ, զԱստուծոյ անունն է անարգել, որ բերանովն աւրհնեն, և զհաղորդն, որ բերանովն առնուն: Եւ որ զհաւատն անարգէ, հաւատն Աստուած է, որ ի մկրտութեան աւրն ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին է հաւատացեալ, զԱստուած է անարգել, որ զհաւատն հայհոյէ: Եւ որ զմեռելին գերեզմանն ասէ, զխաչն և զԱւետարանն և զհաղորդն և զքրիստոսի գերեզմանն է անարգել, զի քրիստոնէն խաչիւ և Աւետարանաւ է թաղած և հաղորդն ի բերանն, որ է Քրիստոս, և մեռոնով կնքած է մարմինն և ոսկերքն քրիստոնէից, և միռոնն Քրիստոս է:

Արդ յայտնի եղև, որ յիշողնատուն Աստուծոյ հայհոյիչ է վասն որոյ չէ պարտ զյիշողնատուն քրիստոնէ կոչել, այլ հայրըն և մայրն, եղբայր և սիրելիք, կին և որդիք գարշին յիշողնատուէն և աւեն, որպէս զգարշելի և զպիղծ: Եւ դև և սատանայ կոչեն, մինչև դառնայ ի չար սովորութենէն և պահաւք և աղաւթիւք և ողորմութեամբք քաւի և արդանայ շնորհաւքն Քրիստոսի: Ապա որչափ չէ դարձել ի մեղացն և սրբել զբերանն, չունի ոք իշխանութիւն թողութիւն առնել նմա, կամ եկեղեցի թողուլ և կամ հաղորդել:

---

* Մատթ., ժԲ, 33 և Ղուկ., ժԲ, 10:

** Ա Կորնթ., ժԲ, 27:

2 F Զի յայսմ աշխարհիս ոչ ոք ունի փխ Որ յայսմ-Քրիստոս 3 F չիք ունէք. թողուլ զմեղս H յիշողնատուին որ ունէք թողութիւն այն է ոչ կաթողիկոսի 4 F քահանա փխ իրիցու 5 B չիք ոչ (սուրբք) 9 BE չիք Մովսէս աստուածախաւս և մեծ մարգարէն F զյիշողնատուն, որպէս զհայհոյիչ հոգւոյն զի թէ 9—10 BE չիք նզովել է զյիշողնատուն F այլև զնատելն և զյառնելն, ո՛վ է որ չնզովէ: Նա և այլ ամենայն սուրբք նզովեն զյիշողնատուն, որպէս յայտ է սուրբ գիրս: Վասն զի յիշողնատուն հայհոյիչ է հոգւոյն սրբոց և զողացուցիչ աթոռոյն աստուծոյ: Այլև սուրբ հայրն մեր մեծ վարդապետն Վարդան 12 D չիք է որ H չնզովէ զայնպիսի պղծոն 13 C կամ քահանայ փխ եպիսկոպոս կամ վարդապետ 15 DE չիք ի վարդապետէ 20 E զյիշողնատուին եպիսկոպոս կամ վարդապետ 20—21 G չիք կամ թաղել 21—22 թողութիւն առնել H չիք զյիշողնատուն 20—21 G չիք կամ թաղել 21—22 թողութիւն առնել H չիք զյիշողնատուն 22 D չիք և նզովիցն F պսակել, զի ասէ տէրն՝ մի տայք զարբութիւն շանց 22 D չիք և նզովիցն F զի մի դուք կցորդ լինիցիք մեղաց և նզովիցն նոցին, զի որ H չիք նզովիցն 23 C Քրիստոս անարգէ փխ զաստուած է անարգել, չիք և որ զքրիստոնէն հայհոյէ զՔրիստոս 24 C չիք է հայհոյել

2 F չիք քրիստոնէքն 3—4 H չիք և անդամք յանդամոց նորա, տաճար աստուծոյ են քրիստոնէքն 4 DF չիք աստուած 6 C գրել փխ դրել 7 F զաստուծոյ բերանն. զի աստուած բերանովն 8 E չիք (զհաղորդն) որ 7—8 F անարգէ զաստուած է անարգել զի հաւատն 11 F չիք զաստուած է անարգել որ զհաւատն B անարգէ 12 F հայհոյէ փխ ասէ 13 H զքրիստոնէն 15 F զգաւթիւնն և ոսկերքն 18 E որ զյիշողնատուն F կոչել: Դարձեալ, զի հայոյութիւնն և յիշողքն այնպիսի չար է, զի հայր և մայրն գարշին յիշողնատուէ որդոյն, եղբայրն յեղբօրէն, սիրելին ի սիրելոյն, բարեկամն ի բարեկամէն, ղրացին ի ղրացոյն: Եւ այն պէս առեն զյիշողնատուն, որպէս այլազգի և կիսատղի գազան: Եւ ամէ նեքեան այսպանեն և նախատեն և գարշին ի նմա նէ և պղծ և գազիր համարին և հանապազ զև և սատանայ կոչեն զնա, մինչև դառնա ի չար սովորութենէն իւրմէ: (Ինացածը միճչև Յաղագս առելութեան վերնագիրը չիք): 19 E չիք եղբայր C չիք կին և որդիք 21 B ի չար սովորութենեն չնորհաւքն

Եւ այս վասն ահեղ և մեծ մեղանց խրատաք քրիստոնէից, որ զարհուրին և դառնան յայնպիսի չար և յիմար սովորութենէն։

ԺԱ. ՅԱՂԱԳՍ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ

Տասնմիերորդ բան զրեմք կանոնական՝ որ չէ պարտ, որ քրիստոնէքն զիրար սատնեն։ Զի, զոր Աստուած Մովսեսի Աւրինաւքն ասաց, թէ՝ «Մի՛ սպանաներ», Յոհաննէս աւետարանիչն գրէ, թէ՝, «Որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է»**, զի սկիզբն սպանութեանն ատելութիւնն է, զի յառաջ-ատէ և ապա սպանանել խորհի։*

Արդ ցուցանեմք, թէ ուստի՛ սկսաւ մարդասպանութիւնն և քանի՞ ազգ է սպանումն և զի՞նչ է պատիժ սպանողացն։

Մարդասպանութիւնն ի Կայենէ սկսաւ, որ էսպան զեղբայր իւր զԱբել։ Եւ է՞ր էսպան։ Իւր գործքն չար էին, և Աբելի գործքն՝ բարի, վասն որոյ Աբել սիրած էր յԱստուծոյ և ի ծնողացն, զի Ադամայ որդիք էին սոքա։ Արդ, վասն այնորիկ ատեաց զեղբայրն, և զի ամենայն մեղաց սկիզբն և պատճառ ատելութիւնն է, և ի յատելութենէն և ի նախանձէն, զոր ունէր, քէն և ոխն ծնաւ։ Յոխակալութենէն նենգելն և խաբելն և սուտ ասելն ծնաւ։ Զի խաբեց զեղբայրն, թէ ի դաշտն երթանք ի խաղ և ի զբաւսանք, և սպան զեղբայրն անխեղճ և անողորմ սրտիւ և զազանական կատաղած բարուք։ Եւ զի է մեղք գործեաց, է մեծ պատուհաս և պատիժ եղաւ յԱստուծոյ ի վերայ նորա։ Եւ այս են է մեղքն Կայենի. Ա՝ զի Աստուծոյ զվատն և զանպէտն և զխորշակահարն ի պողոց և յարտաւրէից տարաւ պտուղ և պատարագ, որ ոչ հաճեցաւ Աստուած. և Բ մեղք այն է, որ նախանձեցաւ ընդ եղբայրն և ատեաց զնա, վասն զի նա զրնտիրան ի գառանց և զչեղեցիկն տայր Աստուծոյ պատարագ.

* *Ելք, Ի, 12։*

** *Ա Յովհ., Գ, 15։*

4 D Նորին Յոհաննէս վարդապետի վասն ատելութեան E վասն փխ Յաղագս 5 C կանոն գրեմ. չիք կանոնական D Տասներորդ կանոն փխ տասներորդ կանոնական F երկոտասաներորդ. զոր չէ պարտ և օրէն նմանիերորդ բան. չիք

նէս աւետարանիչն ասէ, թէ՝ «Ամենայն, որ ատէ զեղբայր իւր, այսինքն՝ զընկերն և զհաւատակից քրիստոնէն՝ եղբայրասպան է որպէս զԿայէն, և նորա անէծքն և պատուհասն ի վերայ կայ նմա»*: Եւ Քրիստոս յԱւետարանն հրամայէ, թէ՝ «Որ ի տաբապարտուց բարկանայ եղբաւր իւրոյ՝ պարտական է դեհենի»**:

Արդ, ողորմեցէ՛ք ձեզ և խնայեցէ՛ք ի ձեզ և մի՛ ատէք զիրար: Մի՛ խեռայք, մի՛ նախանձիք, մի՛ ոխս պահէք, մի՛ մատնէք, մի՛ զրկէք, մի՛ չարախաւսէք, մի՛ անարգէք, մի՛ խռով կենայք, մի՛ հարկանէք, մի՛ լինիք անողորմ, մի՛ վասն փոքր իրայ և սակաւ պատճառի ի վէճ, ի կռիւ և ի հակառակութիւն կայք, զի ամենայն դատարկ և զուր և անիրաւ բանի համարս տալոց էք յաւուրն դատաստանի:

Արդ, այս կանոնական խրատ և պատուիրան, զոր գրեցաք յաստուածային գրոց հրամանէ, հրաժարականքն է, զոր ոչ է պարտ քրիստոնէին առնել կամ գործել: Եւ այժմ գրենք զայն, զոր պարտ է առնել քրիստոնէին և հարկ ի վերայ կայ, և Աւրէնքն հրամայէ Աստուծոյ:

ԺԲ ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅ

Եւ է առաջին պատուիրան սէրն և ի համարս կանոնաց՝ ԺԲ գլուխ, զոր ի հին Աւրէնքն Մովսէսի և ի նորս, որ է Աւետարանն Քրիստոսի, քան զամենայն պատուիրան մեծ և առաջին հրամայեցաւ, զի յԱւրէնքն գրեալ է. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն զաւրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց»***: Եւ զընկեր քո՝ իբրև զանձն քո, զի որպէս քո անձինդ ոչ կամիս չար, նոյնպէս և քո ընկերին մի՛ կամեսցիս, և որպէս քո անձինդ խնամ տանիս և զբաղձանս կատարես, նոյնպէս և ընկերին քո կամեսցիս, զի ընկերին սէրն Աստուծոյ սիրոյն հաւասար է: Որպէս ասէ Յոհաննէս աւետարանիչն. «Եթէ զեղբայրն, զոր տեսանես, ոչ սիրես, զԱստուած, զոր ոչ տեսանես, զիա՞րդ կարես սիրել»*: Եւ ամենայն ոք, որ զոր ոչ տեսանես, զիարդ կարես սիրել»*: Եւ ամենայն ոք, որ ասէ, թէ՝ սիրեմ զԱստուած, և զեղբայր և զընկեր իւր ատէ՝ սուտ է, զի որ չէ մարդասէր, նաև ոչ աստուածասէր իսկ է: Եւ Քրիստոս հրամայէ, թէ՝ «Յայնժամ երևիք, թէ իմ աշակերտ էք և քրիստոնէք, թէ սիրէք զմիմեանս: Եւ որպէս ես զձեզ սիրեցի, պարտիք և դուք զմիմեանս սիրել»: Եւ ինքն Քրիստոս այնպէս սիրեաց զմեզ, որ զանձն իւր ի մահ ետ վասն մեր: Նոյնպէս ամենայն քրիստոնէի պարտ է, որ զանձն իւր ի մահ տայ վասն իւր եղբարն և ընկերի և հաւատակից: Ապա զի՞նչ տացեն պատասխանի, որք փոխանակ սիրոյ՝ ատեն և չարախաւսեն, մատնեն և զրկեն:

Այլ զի բազում են մասունք սիրոյն, զսակաւն յիշեսցուք: Զի առաջին և մեծ է սիրելն զծնաւղսն: Որպէս գրեալ է յԱւրէնսն. «Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի յետ Աստուծոյ պատճառք և գործիք են ծնաւղքն իւրեանց ծննդոցն և որպէս թէ մարմնաւոր աստուածք են իւրեանց զաւակացն, զի ծնան և սնուցին և պատճառ կենաց եղեն: Եւ զոր ինչ ծնաւղացն բարի առնեն, ոչ է երախտիք, այլ նոցա շատ բարեացն վճար է, և թէ զայլն ամենայն վճարեն, զայն ո՛րպէս կարեն վճարել, որ ծնան զնոսա: Զի ծնունդքն ոչ կարեն զնոսա ծնանիլ և այնու պարտական գտանին: Եւ գրեալ է յԱւրէնս Աստուծոյ, թէ՝ «Որ անարգէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի»**: Եւ որ զծնաւղսն անարգէ, զԱստուած է անարգել, զոր և սուրբն Բար-

---

* Ա Յովհ., Գ, 15:

** Մատթ., Ե, 22:

*** Բ Օրէնք, Զ, 5:

2 CE մարգասպան փխ եղբայրասպան F դհաւատակից եղբայր քրիստոնեայն մարգասպան է H կամ զընկերն 3 E չիք և նորա անէծքն F պատուհասն է ընդունելոցն. չիք ի վերայ H նորայ պատուհասն ի վերայ գլխոյն 4 E և մնա փխ նմա F չիք կայ նմա. Եւ սէրն յաւետարան թէ H չիք նմա 7 E չիք և խնայեցէք ի ձեզ F խղճացէք յանձինս ձեր և մի՛ ատեք զմիմիանս փխ խնայեցէք-զիրար 8—9 G չիք մի՛ մատնեք մի՛ զրկէք 10 F հարկանէք փխ խնայեցէք-զիրար H չիք վասն 11—12 D կենայք զի աստուած փխ կայք զի ամենայն 12 D բանի ասէ 18 E չիք աստուծոյ 19 D Նորին վասն սիրոյ F կանոնք յայսգլխոյ սիրոյ H Յաղագս սիրոյ որ սիրեն զմիմեանս հոգևորական 20 F չիք և ի համարս կանոնաց ԺԲ գլուխ 21 F զի փխ զոր 24 D չիք և յամենայն զաւրութենէ քումմէ

քո, զի որպէս քո անձինդ ոչ կամիս չար, նոյնպէս և քո ընկերին մի՛ կամեսցիս, և որպէս քո անձինդ խնամ տանիս և զբաղձանս կատարես, նոյնպէս և ընկերին քո կամեսցիս, զի ընկերին սէրն Աստուծոյ սիրոյն հաւասար է: Որպէս ասէ Յոհաննէս աւետարանիչն. «Եթէ զեղբայրն, զոր տեսանես, ոչ սիրես, զԱստուած, զոր ոչ տեսանես, զիա՞րդ կարես սիրել»*: Եւ ամենայն ոք, որ ասէ, թէ՝ սիրեմ զԱստուած, և զեղբայր և զընկեր իւր ատէ՝ սուտ է, զի որ չէ մարդասէր, նաև ոչ աստուածասէր իսկ է: Եւ Քրիստոս հրամայէ, թէ՝ «Յայնժամ երևիք, թէ իմ աշակերտ էք և քրիստոնէք, թէ սիրէք զմիմեանս: Եւ որպէս ես զձեզ սիրեցի, պարտիք և դուք զմիմեանս սիրել»: Եւ ինքն Քրիստոս այնպէս սիրեաց զմեզ, որ զանձն իւր ի մահ ետ վասն մեր: Նոյնպէս ամենայն քրիստոնէի պարտ է, որ զանձն իւր ի մահ տայ վասն իւր եղբարն և ընկերի և հաւատակից: Ապա զի՞նչ տացեն պատասխանի, որք փոխանակ սիրոյ՝ ատեն և չարախաւսեն, մատնեն և զրկեն:

Այլ զի բազում են մասունք սիրոյն, զսակաւն յիշեսցուք: Զի առաջին և մեծ է սիրելն զծնաւղսն: Որպէս գրեալ է յԱւրէնսն. «Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի յետ Աստուծոյ պատճառք և գործիք են ծնաւղքն իւրեանց ծննդոցն և որպէս թէ մարմնաւոր աստուածք են իւրեանց զաւակացն, զի ծնան և սնուցին և պատճառ կենաց եղեն: Եւ զոր ինչ ծնաւղացն բարի առնեն, ոչ է երախտիք, այլ նոցա շատ բարեացն վճար է, և թէ զայլն ամենայն վճարեն, զայն ո՛րպէս կարեն վճարել, որ ծնան զնոսա: Զի ծնունդքն ոչ կարեն զնոսա ծնանիլ և այնու պարտական գտանին: Եւ գրեալ է յԱւրէնս Աստուծոյ, թէ՝ «Որ անարգէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի»**: Եւ որ զծնաւղսն անարգէ, զԱստուած է անարգել, զոր և սուրբն Բար-

---

* Ա Յովհ., Գ, 20:

** Բ Օրէնք, ԻԷ, 16:

3 E չիք որպէս քո կամեսցիս 5 D զեղբայրն քո 7 E չիք և զընկեր D չիք իւր 9 F հրամայէ յայսմ ծանիցեն յամենեքեան, եթէ իմ աշակերտ էք յայնպէս թէ յայնժամ H կու հրամայէ 10 F իմ քրիստոնէք 15 CD որ 16 F չիք մատնեն. զրկեն զմիմեանս 17 F այլ ի բազում են զսակաւն ասացուք չիք մատնեն. զրկեն զմիմեանս 19 G չիք զի յետ աստուծոյ 22—23 F աստ նախ փխ զսակաւն յիշեսցուք զի 19 G չիք զի յետ աստուծոյ 22—23 F վասն որոյ զոր ինչ զաւակքն ծնողացն բարի առնեն, այն ոչ է 24 F վճար է և փոխարէն B չիք կարեն 25 CE չիք Զի ծնունդքն ոչ կարեն զնոսա ծնանիլ D զմեզ փխ զնոսա (զի) F չիք Զի ծնունդքն ոչ կարեն զնոսա ծնանիլ և այնու 26 F Եւ զի 27—28 F Զի փխ Եւ. զծնողն

սեղ ի ԺԲ գլուխ կանոնացն գրէ. «Որդիք, որ ոչ պատուեն զծնաւղսն, եղիցին նզովեալ»։

Եւ ոչ եթէ գիրք և աւրէնք միայն խրատեն սիրել զծնաւղքն, այլ և անասունքն և թռչունքն ի բնութենէ ունին սիրել զծնաւղս իւրեանց, որպէս ասեն, թէ արագիացն ձագք, յորժամ ծերանան ծնաւղքն, ի ներքոյ թևոցն մտեն և աւգնեն, ի շուրջ ածեն և կերակրեն։ Եւ յորժամ չկարէ այլ շրջիլ, ի բոյնն նստուցանեն և կերակուր բերեն և սնուցանեն, որպէս և նոքա զձագս իւրեանց սնուցին։

Արդ, մեծ ամաւթ է, թէ մարդիկք քան զթռչունս վատթար գտանին և զծնաւղացն սնունդն և զբարիքն մոռանան։

Նոյնպէս և զքահանայսն պարտ է սիրել, զի հոգևոր ծնաւղք են և մկրտութիւնն և պսակն և խոստովանութիւնն և հաղորդութիւնն, մահն և կեանքն քահանայիցն ձեռաւքն է։ Ի գիշերի և ի տուընչեան վասն ձեր ի սաղմոսերգութիւն և յաղաւթս կան, առ Աստուած և առ մարդիկ միջնորդք և բարեխաւս են, վասն որոյ պարտ է սիրել զնոսա և ի պաղոցն և ի վաստակոցն մասն տալ։ Եւ զեկեղեցոյն նուէրքն սիրով և յաւժարութեամբ տալ, զոր և սուրբն Բարսեղ ի ձի գլուխ կանոնացն գրէ. «Աշխարհական եթէ բամբասէ զքահանայն կամ ապտակէ, ընդ խաչահանունս եղիցի, և թէ Բ կամ Գ վկայիւք հաստատի, ապա իշխանութիւն ունի դատել»։

Այսպէս պարտ է սիրել և պատուել զթագաւորս, զիշխանս, զդատաւորս, զծերս, զգիտունս, զսուրբս, զիմաստունս, զառաքինիս, զաղքատս և զաւտարականս և զամենայն հաւատացեալս։ Զի և Աստուած զմեզ սիրեսցէ և գթութեամբ և քաղցրութեամբ ի մեզ հայեսցի։

1 D ձ և Բ փխ ԺԲ 3 F զծնողս իւրեանց 4 F այլ և թռչունք ևս խրատեն, որպէս ասեն ի բնութենէ 5 C դասք փխ ձագք 8 E չիք և կերակուր բերեն G կերակրեն փխ կերակուր բերեն E չիք և սնուցանեն 10 C խթատ փխ մեծ H ցած գտուին փխ վատթար գտանին 13 F ծնողք են ժողովրդեան 14 D չիք հաղորդութիւնն F Զի է խորհուրդ եկեղեցոյ յայնպէս մկրտութիւնն D լինի փխ է 15 F այլ և ի գիշերի 16 F յաղաւթս կան, որպէս գրէ առաքեալն Պաւղոս, ունկն դիք առաջնորդաց ձերոց և հանապազ, զի նոքա աքնին նաև առ աստուած 18 F տալ նոցա 18—27 G չիք մասն տալ... հայեսցի 19 F տալ լիով ի ձեռն նոցա 20 F եթէ աշխարհական ոք 21 H ձեռք վերցնէ փխ ապտակէ E խաչահանողքն 22 D ապաշխարութիւն փխ ապա իշխանութիւն F դատել գայնպիսին նզովիւք վճռաւ։ Զի հակառակ և ընդդէմ է այնպիսին առաքելական հրամանացն, որ ասէ՝ Քահանայք կրկին պատուոյ արժանի լիցին, մանաւանդ որք աշխատիցին վարդապետութեամբ 25 F զայլ ամենայն 26 F սիրեսցէ գթութեամբ

Եւ պարտ է քրիստոնէին աւուրն Գ հետ աղաւթք առնել, իբր լուսանալ աւուրն՝ յորժամ յառնէ ի քնոյ, և ի ժամ հացին և երեկունն՝ ի ժամ քնոյն։ Այր մարդն և կորիճ տղայքն յամէն աղաւթից ժամ ԺԲ ծունր ածեն, որ լինի յաւրն ԼԲ ծունր, և կին մարդն աղջիկ տղայաւքն՝ ի ծունր յամէն աղաւթից ժամ, որ լինի ի յաւրն Կ ծունր։ Յորժամ ի քնոյ յառնէ մարդն, պարտ է աղաւթք առնել, գոհանալ զԱստուծոյ, որ ի խաւարէն ի լոյս էհան։ Եւ հացին ժամն աղաւթաւք պարտ է գոհանալ զԱստուծոյ, որ տուեալ է զկերակուրն։ Եւ մի՛ անասնոյ նման անգիտութեամբ վայելել զԱստուծոյ բարին։ Եւ իրիկունն աղաւթք պիտի, որ ի խաւար և ի մութն գիշերին անփորձ պահէ Աստուած, և գոհանայ, որ աւրն խաղաղութեամբ վճաբեցաւ։ Եւ մի՛ թողուք, որ ձեր տղայքն անաղաւթք հաց ուտել կամ առանց աղաւթից ի քուն լինին։ Եւ զայս Գ հետոյ աղաւթքս անխափան յամենայն տեղի կատարեցէք և ի ճանապարհ, ի յարտ, ի յայգի և յամենայն գործ։ Զի սուրբ առաքեալն Փիլիպպոս կանոնք եդեալ է, թէ՝ «Ամենայն այր կամ կին կամ մանկունք, դատարկացեալք ի գործոյ և այգոյն և երեկուն խափանեսցեն զաղաւթսն, ոչ գնալով յեկեղեցին և ունկն դնել սահմանեալ կարգացն՝ նզովեալ լիցին»։

Բայց շաբաթ աւրն և կիրակէն հաւասար յեկեղեցին գնացէք և ի ժամատեղն, զի շաբաթ աւրն սրբոց մարտիրոսաց տան է, որ վասն Աստուծոյ սիրոյն զանձինս իւրեանց ի մահ ետուն և անտանելի չարչարանաւք նահատակեցան, և դուք ի ժամ գնալով և զչարչարանս նոցա լսելով՝ մասնակից լինելով սրբոցն։ Եւ կիրակին Քրիստոսի յարութեանն աւր է, և մեր հաւսարակաց յարութիւնն ի կիրակէ լինելոց է, որ յԱդամայ հետէ ամենայն մեռեալքն յառնեն։ Եւ Աստու-

1 B Եւ վասն աղաւթից C Ցաղագս աղաւթից D Նորին վասն աղաւթից F վասն աղօթից կանոն առաքելական 1—14 G չիք ԺԳ վասն.... մի թողուք որ F վասն աղօթից կանոն առաքելական 2 CF Արդ փխ Եւ FH անգամ փխ հետ 3 CEF չիք և ի ժամ հացին և երեկունն՝ ի CE չիք ժամ քնոյն 5 E կրկնեն փխ ածեն 14 D չիք ձեր 15—16 F աղաւթքս պարտ է քրիստոնէից անխափան յամենայն տեղիս կատարել E չիք 22 E աւրն երթան, չիք և, կիրակէն պարտ է, 23 E գնալ D գնացէք ամէնդ ի H շաբաթուն փխ շաբաթ աւրն. 22—23 G չիք և կիրակէն–շաբաթ աւրն 23 F չիք աւրն. չիք մարտիրոսաց. 24 F ոօն է յայսինքն Քրիստոսէ, կամ մարդարէից և կամ հաւսարակաց մարտիրոսաց F Քրիստոսի փխ Աստուծոյ 29 E չիք որ յԱդամայ հետէ–Աստուծոյ F չիք Աստուծոյ

ծոյ դատաստանն ի կիրակէի է լինելոց, որ արդարք և մեղաւորք ըստ գործոց իւրեանց զիմոխարէնն առնուն յարդար դատաստանէն Աստուծոյ: Վասն այն է սահմանած սրբոց առաքելոց և հայրապետացն, որ զկիրակէն ի մարմնական բանէն պարապ կենան, որ յեկեղեցուն դուռն երթան, Աւետարանի ձայն լսեն, պատարագ տեսնուն, զշաբաթուն յանցանքն խոստովանին, զի սուրբ հայրապետքն անէծք և նզովք են դրել՝ որ կիրակին աւետարանի ձայն չլսէ: ի կիրակի տեսին սուրբ առաքեալքն և կանայքն եղաբերք զՏէրն: Եւ ամենայն արդարքն ի կիրակէի տեսանելոց են զՔրիստոս:

Արդ, որ սովորի և կիրակին յեկեղեցի գնայ և պատարագ տեսնու, և Աւետարանի ձայն լսէ և խոստովանութեամբ սրբի ի մեղաց, նա արժանի լինի Քրիստոսի տեսոյն և երանաւետ ձայնին, որ ասէ. «Եկա՛յք, աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն»: Եւ որպէս կիրակին յարութեան աւր է, նոյնպէս ամենայն մարդ, որ զվեց աւր շաբաթուն զիր հոգին մեղաւք մեռուցեալ է, յամէն կիրակի զշաբաթուն յանցանքն խոստովանի և յառնէ ի մեռելոց և կանգնի ապաշխարութեամբ: Եւ զի կիրակէն տէրունի ասի, որ է Աստուծոյ բաժին և մեր հոգոյս փրկութեան աւր, չկայ հրաման, որ այլ ցեղ մարմնական գործ և բան առնեն և յանէծք և ի դատապարտութիւն անկանին: Եւ են ոմանք, որ ի մարմնական գործոյ պարապին կիրակին և արբեցութեամբ և ծաղրով մեղանչեն, այլ որ և այն մեծ չարիք է, քան զբանիլն, և անթողլի մեղք:

1 E չիք դատաստանն ի կիրակէի է լինելոց F օր դատաստանին 3 CDE դատաւորէն փխ դատաստանէն 3—4F այն առաքեալքն Քրիստոսի և հայրապետքն սուրբ սահմանեցին կանոնօք, որ զկիրակի օրն ի փխ այն է սահմանաց սրբոց առաքելոց և հայրապետացն, որ զկիրակէն ի 4—5 E բնական գործոց փխ մարմնական բանէն 8 C դրել քրիստոնէն D դրել փխ գրել E դրել այն մարգոյն 8—9 F չլսէ ի ներքոյ կանոնաց է և պատիժ կրէ 9 D իւղաբերքն զՔրիստոս 10F նմանապէս և ամենայն 11 H չիք գնայ 14 H ձայն 15 H գանազան ուրախութիւն և զարքայութիւն աստուծոյ 16 E չիք ամենայն 19 CEF չիք զի 21 E կամ բան 23 CEF պարապ կենան փխ պարապին D արբեցութեամբ և դատարկաբանութեամբ և ծաղրով 24 CE չիք այլ

D Այս գլուխը շարունակվում է. Պարտ է յամէն գեղ Աստուծոյ անուանն տուն լինել, մեծ և արձակ ժամատեղ, որ տանի զամէն ժողովուրդն, որ ժողովին ի մեծ տաւնսն և ի կիրակէն և լսեն զձայն Աւետարանին: Եւ չէ պարտ, որ չիրիցուն տունն ժողովին, ուր անասունք են և հաւեր: Եպիսկոպոս և քահանայ, որ չտան ժամատուն շինել, նայ խղճոյ ժողովրդեանն ի ներքոյ են

Տասնևչորս գլուխ գրեմք վասն խոստովանութեան, որ մեզ յԱստուծոյ մեծ բարի և պարգեւք է և հոգոց կենդանութիւն և բժշկութիւն է: Եւ վասն անգիտութեան յիմարաբար բազումք կորուսած կան ի մէջ մեղացն և զրկել են զինքեանս ի շնորհէ խոստովանութեանն: Բազում տարիք կան առանց խոստովանութեան և առանց հաղորդութեան, ոմանք՝ զի անգէտ են և ոչ գիտեն զշնորհք և զբարիք խոստովանութեանն, և կէսք՝ վասն ամաչելոյ և վախելոյ ոչ խոստովանին, և այլք՝ զի ընկղմեալ և կորուսեալ են ի մէջ մեղացն և ոչ կամին ազատիլ ի ծառայութենէ սատանայի:

Արդ, մի՛ անգիտանայք զխոստովանութիւնն, զի բժշկութիւն է հոգոց, փախուստ է ի դժոխոց, ազատութիւն է ի սատանայէ, յարութիւն է ի մահուանէ:

Վասն այնորիկ պատուիրեցաք յամենայն կիրակէ ի դուռն եկեղեցոյն գնալ և խոստովանել, զի այն փոքր մի ամաւթովն և վախելովն, որ յերկեղէ քահանային լինի, ազատի յայն մեծ ամաւթոյն, որ ի սիեզերական յահեղ հրապարակին լինելոց է, յայն մեծ կիրակէին, որ այլ աւր ոչ փոխէ զնա. յորում ամենայն ծածուկ և գաղտնի գործք մարդկան յայտին: Եւ այն ահն և ամաւթն է անհնարին, ուր երկինք և երկիր ի մի վայր ժողովեալ հաւաքին և չկարէ ոք ծածկել զմեղս իւր, այլ յանդիմանի և ամաչէ և դողայ ի մեծ հրապարակին: Եւ յետ ամաւթոյն ի հուր գեհենին ի տանջանսն յաւիտենից երթայ հետ սատանայի, որ առաջնորդ և ուսուցիչ մեղացն է, անդ, ուր լալ աչացն է և կրճել ատամանցն:

1 D վասն խոստովանութեան H Ցաղագս խոստովանութեան խրատ 2 D չիք Տասնևչորս գլուխ 3—4 CEF չիք և հոգոց կենդանութիւն և բժշկութիւն է 4 E չիք վասն. անգիտութեամբ F Զոր փխ Եւ 5 D կորընչէն և փխ կորուսած 6 B ողորմութեանն և խոստովանութեանն F զի բազում 7 E չիք բազում... խոստովանութեանն BCH չիք խոստովանութեան և 8 D զխորհուրդ և շնորհք 9 F և այլք ոչ 12 F անգիտանայք և անփոյթ առնեք 14 F դիւաց փխ սատանայէ E դժոխոց (F մեռելութենէ մեղաց) փխ մահուանէ 15 F պատուիրեցաք հաստատեալ ժողովրդականացդ 16 C չիք մի 18 F սիեզերական EF յայն մեծ հրապարակին 19 C չիք յայն մեծ կիրակէին 20 E չիք գործք E չիք մարդկան 24 E չիք յաւիտենից 25 F երթայ ի հուր գեհենին և տանջի ըստ սատանայի F ամենայն չարեացն փխ մեղացն 26 H լալացն փխ լալ աչացն

Արդ, ողորմեցե՛ք ձեզ, ո՛վ քրիստոնէք, և մի՛ կայք ի մէջ մեղաց, զի մեղաւորն որպէս հիւանդ է։ Թէ հիւանդն ծածկէ զիւր ցաւն և չգայ ի խոստ և չասէ բժշկին, չգտանէ դեղ հիւանդութեանն։ Նոյնպէս քահանայն բժիշկ է հոգւոց. ով ծածկէ զիւր մեղքն և չխոստովանի՝ մեռանի զմահն յաւիտենից։

Մեղուցեալն, քանի որ կենդանի է, ի սատանայի բերանն կայ, թէ խոստովանի զմեղքն՝ դերծաւ ի բերանոյն, և թէ մեղաւքն մեռանի՝ մտաւ ի փորն սատանայի, և սատանայի որովայնն դժոխքն է։ Քանի որ փորը մեղք լինի, և ոչ խոստովանի ոք, այն մահ և կորուստ ածէ հոգւոյն։ Աւձին և կարձին խայթոցն փորը է, բայց դառն կսկիծ և մահ բերէ։

Արդ, խոստովանեցե՛ք, զի այն է դեղ և բժշկութիւն մեղուցելոցն։ Եւ որ ոչ խոստովանի և մեղաւք մեռանի՝ չետ մահու չկայ այլ հնար և յոյս փրկութեան։ Այլ որչափ յայս աշխարհս ենք մարմնով՝ աստ է յոյս փրկութեան մեղուցելոցն։ Են ոմանք, որ երկնչին ի քահանայէն, զի մի՛ յայտնեսցէ զխոստովանութիւնն։ Վասն որոյ սրբոյն Ներսեսի եղեալ է կանոնք. «Եթէ ոք ի քահանայից յայտնեսցէ զբան խոստովանութեան և ապաշխարութեան՝ ապաշխարողացն նզովիւք լուծցի և ամենայն իրաւք լուծցի ի քահանայական ժառանգութենէն»։

3 D չիք զիւր 4 D որ փխ ով 7 B *Մեղուցեալքն ան, որ կենդանի է* 8 F չիք զմեղքն 9 F անկաւ փխ մտաւ 10 D փորն փխ որովայնն. և փխ որ 10—11 F համարի զմեղքն և ոչ խոստովանի այն փխ մեղք-ոք 12 F *Զի թէ-պէտ օձին* 13 F *Արդ* ով եղբարք 15 E չիք հնար C *փրկութեան մեղուցելոցն. կենդանի մարմնով* F կենդանի եմք փխ յայս աշխարհս և ժամանակս ի ձեռս ի գործեացուք զբարիս, որպէս ասէ առաքեալն. «Ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան» փխ աստ է յոյս փրկութեան *մեղուցելոցն* 17 F բայց են ոմանք C–ում զի մի յայտնեսցէ զխոստովանութիւնն բառերով բնագիրն բնդհատւում է 18 BG չիք է 20 D չիք և ապաշխարութեան ապաշխարողացն F չիք և ապաշխարութեան. չարչարանաց *նզովիւք* 20—22 H անիծած կենա ի հոգւոյն սրբոյ, փոխանակ արքայութեան, *ժառանգէ զոր պատրաստեալ է սատանայի և հրալուծած և կապած կայցէ ի կրդէն փխ լուծցի–ժառանգութենէն*

Պարտ է քրիստոնէին, որ յամէն ի աւր հետ մի հաղորդեսցի, Գ աւր չետ կենայ յանկողնոյ և հաղորդի և Գ այլ ի վերայ հաղորդելոյն սուրբ կենայ։ Մի՛ առանց խոստովանութեան հաղորդիլ, զի մի՛ կիղեալ այրեսցէ զքեզ աստուածային հուրն։ Եւ բազում պատուհաս կրեն վասն անարժան հաղորդելոյն, որպէս սուրբն Բարսեղ ի դիրս կանոնացն ասէ, եթէ՝ «Որք ջնարժանութեամբ յաւրէնսն մատչին, հանդիպի նոցա այսպահարութիւն, գողութիւն, պիսակոտութիւն, մուրացութիւն, աղքատութիւն։ Պատահարք ամենայն չարեաց հանդիպի նոցա և որդոց իւրեանց և որպէս հուր կիզու զամենայն ինչս նոցա»։

Եւ մի՛ վասն ծուլութեան զրկիլ ի հաղորդութենէ և հեռանալ յԱստուծոյ, զի ասաց Քրիստոս, թէ՝ «Որ ուտէ զմարմին իմ և զարիւն իմ՝ նա յիս բնակեսցէ, և ես՝ ի նմա»*։

Արդ, որ հեռի կայ ի հաղորդութենէ, ոչ ունի զայս յոյս։ Եւ արտաքոյ եկեղեցոյ մի՛ իշխեսցեն քահանայքն ի տունս ժողովրդոցն աւրէնս տանել և անդ տալ զսրբութիւնն, բայց եթէ հիւանդ իցէ։

Եւ այս կանոնք է ի սրբոյն Սահակայ ի Իէ գլխին։

* *Յովհ., 2, 57։*

1 D Նորին Յոհաննէս վարդապետի վասն հաղորդութեան E վասն հաղորդութեան F Յաղագս հաղորդութեան 2 E քահանային փխ քրիստոնէին. չիք որ DG հաղորդի A և E ձեռագրերում տ. 2-ում և տ. 3-ում ճախապես է-ի փոխարեն Գ է եղել։ Պարզ նկատւում է, որ այն քերել և սրբագրել են հետագայում։ Բնագրում վերականգնել ենք ճիշտ թվերը։ FH *Ժե* փխ *Է* 3 B Գ աւր փխ *Է* E *կայ յանկողնոյն. և Է* աւր F կա անկողնոյ FH *Ժե* աւր փխ *Է* 6 F *Զի* փխ եւ 9 D *պիսակութիւն* 11 H չիք և որպէս 11—12 H չիք հուր կիզու զամենայն ինչս նոցա 13 H *զի* փխ *մի* 14 F *Տէրն* փխ *Քրիստոս* 15 F չիք և ես՝ ի նմա H ես ի նմայ, եթէ ես եմ հացն կենդանի, որ երկնից իջի. և որ ուտէ ի հացէս, յաւյտեան կեցցէ յաւիտեան։ Եւ հացն, զոր ես տաց, մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ Եւ դարձեալ ասէ. «Ամէն–ամէն ասեմ ձեզ, ոչ կերիջիք զմարմին որդոյ մարդոյ և ըմպիջիք զարիւնն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ձեր 20 F չիք *Սահակայ. Է գլխոյն*։ Եւ դարձեալ կանոնեալ են սուրբ հայրապետքն մեր, ոչ տալ հաղորդս չնացողացն և պոռնկացն և ոչ արբեցողացն և զրկողացն և շահակերացն և յիշընդնատուացն և այլ այնպիսի անզեղջ մեղաւորացն, որք չունին զարձ և զղջումն ի մեղաց, զի մի կցորդս դասցին մեղաց նոցա։

ԺԶ ՍԱՀԱԿԱՅ՝ ՅԱՂԱԳՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

Ողորմութիւն արարէք աղքատաց և կարաւտելոց, զի ողորմածացն է արքայութիւնն երկնից։ Քրիստոս հրամայէ, թէ՝ «Զոր ինչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք», զի դատաստանին աւրն աղքատն մատ լինի առ Քրիստոս, և ձեռաւքն ցուցանէ, թէ՝ «Զոր ինչ սոցա բարի էք արարել՝ զսոցա քաղցն լցեալ, զծարաւն արբուցեալ, զմերկն զգեցուցեալ, զաւտարն ժողովեալ, ի բանդարկեալ և ի հիւանդն ի տես գնացեալ, զայն ամենայն ինձ էք արարել»**, և տայ փոխարէն զարքայութիւնն երկնից։*

*Սողոմոն ասէ. «Որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ»***։ Ո՞վ է, որ չտայ այնպէս քաղցր և առատ վճարողին։ Եւ դարձեալ ասէ. «Ողորմութեամբ և հաւատով սրբին մեղք»****։ Զի՞նչ այլ դիւրին արուեստ, որ ողորմութեամբ սրբի քո մեղքն, զի յորժամ խոստովանիս և ողորմութիւն առնես և հաւատաս՝ սրբիս ի մեղաց և արդարանաս։*

ԺԷ ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՑ

Զպահքն սուրբ և անարատ պարտ է պահել քրիստոնէին, զի որք սրբութեամբ պահեցին՝ արդարացան, և որք ոչ պահեցին՝ կորեան։ Առաջին պատուիրան պահքն է, զոր ետ Աստուած Ադամայ։ Զի ասաց Աստուած. «Յամենայն պտղոյ կեր». այդ ուտէիցն է աւրինակ։ «Բայց ի պտղոյ միոյն մի՛ ուտել». այս պահքն է։ Զի ոչ պահեաց Ադամ. եւ ի դրախտէն և անկաւ յայս չարչարանաց աշխարհս։

---

* Մատթ., իե, 40։
** Մատթ., իե, 35—36։
*** Առակք, ԺԹ, 13։
**** Առակք, ժե, 27։

1 D վասն ողորմութեան E Սահմանական կանոն յաղագս ողորմութեան 2 F Պարտ է ամենայն քրիստոնէից յամենայն օր ողորմութիւն առնել փխ ողորմութիւն արարէք 3 F արքայութիւնն, որպէս երանէ Տէրն յԱւետարանին՝ ասելով «երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» եւ դարձեալ ասէ թէ՝ «Զոր ինչ...» 6 F Տէրն փխ Քրիստոս 7 B չիք լցեալ 7—8 E չիք զմերկն զգեցուցեալ զաւտարն ժողովեալ 11 F Որպէս ասէ Սողոմոն 14 F յանցանք փխ մեղք D մեղքն 17 D Նորին վասն պահոց խրատ F կանոնք յաղագս պահոց 21 F չիք Աստուած 22 H ուտիք աւուրն F հրաման փխ աւրինակ

Արդ, երբ մենք պահենք սրբութեամբ, ի դրախտն դառնանք՝ ի տունն մեր հայրենի։

Նոյի ժամանակին մարդիկն, որ ոչ սիրեցին զպահքն, ջրհեղեղան կորեան։ Սողոմայեցիքն, որ ատեցին զպահքն, յերկնից իջեալ հրով այրեցան։ Երեք մանկունքն, որ պահաւք էին սնուցեալ զիւրեանց մարմինն, հուրն ոչ կարաց այրել զնոսա։ Մովսէս, որ պահաւք էր սրբել, Աստուծոյ տեսոյն արժանի եղև և աւրէնս և պատգամս էառ յԱստուծոյ։ Ննոք և Եղիա, որ պահոց էին սիրեցողք, ի հողեղէն աշխարհիս յերկինքն փոխեաց Աստուած։

Արդ, քրիստոնէ, որ սիրէ զպահքն, սրբոցն փառացն արժանի լինիս։ Եւ որ ոչ պահէ զպահքն սրբութեամբ, այլ ձուկն ուտելով կամ արբեցութեամբ լուծանէ զպահսն՝ հեռ պղծոցն և չարացն է տանջելոց։

Որպէս և գրեալ է ի կանոնք սրբոցն. «Եթէ ոք զչորեքշաբթի կամ զուրբաթ և կամ զշաբաթապահք լուծանէ և կամ զայլ պահք՝ ձկամբ և կամ գինով, Գ տարի ապաշխարեսցէ և զի քառասունքն սրբապահք պահեսցէ, զի շաբթիքն, զբոլոր տարոյն։ Եւ աւուրն՝ ճՁ ծունր, զի չորեքշաբթին աւր է մատնութեանն Քրիստոսի, և ուրբաթն աւր է խաչելութեան, և ամենայն պահք սուգ է և տրտմութիւն, և վասն մեր մեղացն ապաշխարութիւն է»։

Արդ, որ լուծանէ զպահք, զայսպիսի պատիժս կրէ։

Այլ և յուտէիցն աւուրքն չափաւոր լինի գինոյն խմիլն, զի մի՛ արբեսցին. «Զի արբեցողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն», ասէ առաքեալն Պաւղոս։

Ի կնունք և ի պսակն ոչ է պարտ արբենալ, կամ գուսան

---

1 F յորժամ փխ երբ E և մենք 3—5 F Եւ դիտելի է զի յաւուրս Նոյի մարդիկ ոչ սիրեցին զպաքն, վասն որոյ երկնատեզաց հրով այրեցան և փխ Նոյի-այրեցան 5 D չիք որ 7 H աստուածային փխ Աստուծոյ 12 H չիք և D չիք զպահքն 13—14 F զպահքն այնպէսիքն ընդ պղծոյն 15 DGH կանոնք սրբոցն 16 D չիք լուծանէ և. 17 BF չիք կամ D թէ ձկամբ գինով լուծանէ 18 EF կացցէ փխ պահեսցէ F չիք զբոլոր 19 E ճՁ ծունր ածէ F ճՁ 20 B չիք Քրիստոսի և ուրբաթն աւր է խաչելութեան D չիք աւր է 21 F Քրիստոսի և ամենայն DF չիք մեր 24 H Այլ որ ուտիցն աւուրն փխ Այլ և-աւուրքն E գինի ըմպելն փխ գինոյն խմիլն 26 D-ում առաքեալն Պաւղոս բառերով բնագիրը ընդհատվում է։ Հաջորդ էջում եղած «Խրատ Նորին Յոհաննէս վարդապետի վասն հաղորդութեան» յոդվածը, դատելով ոճական որոշ առանձնահատկություններից, պետք է որ Հովհաննես Որոտնեցուցը լինի։ 27 F Նայ և ի կնունք

կոչել կամ բոզ, զի դիւաց կոչուղք են գուսանքն։ Ի տեղի, ուր հնձան կոխեն, զբացախն ոչ չիշեն և չանուշահոտ իւղ և խունկ գարշելի իրք ոչ խառնեն։ Զոմ ի տուրք և ի սոսկալի կնունքն և ի մեծախորհուրդ և ի պարկեշտ պսակն բոզ և գուսան բերեն և զորմն սատանայի ի խորհուրդն Քրիստոսի խառնեա՛ և ոչ ամաչեա՛։

Արդ, չէ պարտ քրիստոնէին ի կնունք կամ ի հարսանիս գալ և խաղալ, իբրև ի մեհենս դիւաց և զամաւթ և զպարկեշտութիւն ձգել յերեսաց և չանձնել և անամաւթիլ։ Եւ քահանայք, որ մտանեն անդ, զխորհուրդ մկրտութեանն և զհարսանեացն մեկնեսցեն և պաշտեսցեն, մի՛ անառակ և գարշելի քան զբ խաւսեսցի։

Նոյնպէս և ամենայն կարգք և սրբունք քրիստոնէութեան համով և հոտով և պարկեշտութեամբ լիցին։ Յայտնութիւնն, զաւրիկն, պենտակոստն, խաչաւրհնէքն, եկեղեցի աւրհնելն, զիշերապաշտօնեան, մատաղ, թաղումն, ամենայն խորհուրդ յանապատիցն կատարի և պարկեշտութեամբ և առանց արբեցութեան, զի փառաւորեսցի Աստուած ի փառաւորիչս իւր։

ԺԸ ՁԱՍՆ ԱՆԴԱՐՁ ԱՌՆԵԼՈՅ

Այլ և այս աւրէնք է քրիստոնէից, զի յորժամ հասանի նմա հիւանդութիւն, չկա՛ երից աւուրց լինելոյ հիւանդ, կոչեսցէ զքահանայ և զտանուտէրը, անգարձ առնէ և սահմանէ զիւր ընտանիքն և զիւր մահուն պատճէն և խոստովանի և հաղորդի, և քահանայն հաստատութեամբ գրէ ի թղթին զբան անդարձի նորա և յայնմ հետէ թէ՛ կեանք տայ Աստուած ու թէ՛ մահ՝ անհոգ լիցի և անկասկած։

4—5 G չիք ի պարկեշտ պսակն բոզ և գուսան բերեն և զորմն սատանայի ի 5 EF չիք և զորմն սատանայի ի 5—6 EF չիք խորհուրդն Քրիստոսի խառնեա G չիք խորհուրդն 8 F որպէս փխ իբրև 9 G չիք զպարկեշտութիւն ձգել... մինչև էջ179-ի տ. 8-ի նոյնպէս և արտաստուելոյն բառերը ներառյալ։ E չիք և յանձնէ 11—12 F որ իշխեսցէ անդ անառակ բանս խօսել փխ անառակ-խաւսեսցի 14 B հաւատով փխ հոտով 16—17 F թաղումն կնունք պսակ և այլ. լիցի փխ կատարի 19 F վասն անդարձ առնելոյ կանոնք 20 F հանդիպի փխ հանդի 21 H չիք չկա, հիւանդն 23 F ընտանիքն ըստ իւրաքանչիւր պատշաճի, որպէս օրէնն է և խոստովանի 24—25 F զրէ զամենայն բան անդարձի նորա ի թղթի, որ կտակագիր կոչէն և յայնմ հետէ H չիք գրէ 26 F անկասկած, զի կտակ չկա մահուան հաստատուն է, ասէ առաքեալ

Գարձեալ ի վերայ ամենայնի գրեմք և զայս կանոնք հաստատութեամբ։ Զի որպէս ծննդեամբ է մուտն մեր յաշխարհս, նոյնպէս հարկ է, որ մահուամբ ելանեմք յայսմ աշխարհէ։ Եւ ոչ է պարտ քրիստոնէին անյուսաբար և անհաւատութեամբ սուտ առնուլ ի վերայ մեռելոյն, զի առ Քրիստոս գնացին ի յոյսն քրիստոնէից, որ զինքն եւս մեզ աւրինակ ամենայն բարոյ, ամենայն իրաց, նոյնպէս և՝ արտասուելոյն ի վերայ մեռելոյն, զի ինքն արտասուեաց ի վերայ Ղազարու։ Արդ, եթէ ոք, քան զարտասուելն պարկեշտութեամբ, այլ աւելի յանդգնի՝ կա՛մ զհերն խզել, կա՛մ զճակատն հարկանել, զերեսն աւրինել, կա՛մ սև զգենուլ, այնպիսին հակառակ է Աստուծոյ հրամանին։ Եթէ զղջանայ, ի աւր ապաշխարէ, ապա թէ յանդգնի և լրբաբար ընդդէմ գառնայ քահանային. նզովելոյ է արժանի մահ և կեանք նորա, և ի յետին թաւշակէն զրկի, և թէ զղջանայ՝ մինչև ի մահ ապաշխարէ, և թէ ոչ զղջանայ՝ չէ պարտ զնա քրիստոնեայ համարել, այլ իբրև զչար հերձուածողն, որք ոչ ունին զյոյս յարութեան։ Եւ սուրբն Սահակ կանոնեալ է և զայս, եթէ՝ «Գինի ի լալիս մի՛ ըմպեսցեն և աշխար ի վերայ մեռելոյն մի՛ արասցեն, զի դիւական է, և թէ արասցեն՝ պարտական լիցին ապաշխարութեան ի դուռն եկեղեցւոյն»։ Եւ սրբոյն Բարսղի կանոնքն հրամայէ. «Թէ ոք ի վերայ մեռելոյ կոծ դնէ և արիւն հանեն, կոծադիրքն և կոծաղքն նզովեսցին յԱստուծոյ»։

---

1 F Յաղագս ոչ առնելոյ սուտ ի վերա մեռելին 2 F վասն որոյ փխ և 6 F վասն զի 7 F որ է փխ ի H զի փխ որ. չիք մեզ 8 E չիք ամենայն իրաց 8—9 F ամենայն բարեաց, որպէս ասէ առաքեալ, այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի առաջին պտուղն ննջեցելոց։ Եւ այսուբ ասէ առաքեալն, ոչ կամիմ եղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն զի մի՛ արամիջիք, որ ոչ դոյ յոյս։ Նոյնպէս և զչափ արտասուելոյն ի վերա մեռելոյն, ի Քրիստոսէ պարծիմք ուսանիլ, որչափ ինքն արտասուեաց ի վերա Ղազարու։ 9 H ինքն Քրիստոս E գերեզմանին Ղազարու։ 10 E չիք այլ 11 F յանդգնի և հեթանոսաբար սուգ առնէ. չիք կամ զճակատն հարկանել 12 E կամ աբիւնել F և սուգ առնէ. չիք կամ զճակատն հարկանել 12 E կամ աբիւնել F և սաբար

Արդ, բազում գործս անմիտս և անիմաստս առնեն տէրք մեռելոյն և կողոպտեն և զրկեն զհոգիս վախճանելոցն։ Առաջին այն է, զի սկզբ ևս զգենուն և զբաժին մեռելոյն սգոյ հանդերձ առնեն։ Եւ է և ի լուացումն հանդերձի և ինքեանց ժողովք և ուտելոյ և ըմպելոյ։ Եւ է զոր դարձեալ սպասհանէք և զբաժին պատարագի նորա։ Յայսպիսի երկրաւոր և չախտաւոր և մարմնական իրս ծախեն, ամիս և տարիս և խաչի տուն ծախս հանեն յանուն մեռելոյն։ Եւ ժողովս կանանց առնեն ուտեն և ըմպեն և զաղքատս և զկարաւտեալսն անտես առնեն։

Արդ, թողէք զայդպիսի չար և չիմար սովորութիւնդ և զայն արարէք, որ Աստուծոյ հաճոյ է և յաւգուտ մեռելոյն։ Մեռելին քանի որ սակաւ իրք լինի, քառասնից մի պատարագի հանէք, և թէ շատ իրաց լինի տէր, այլ շատ քառասնից հանէք, զի առաքելական և կանոնական հրամանք է։

Ի ՍԱՀԱԿԱՅ ԿԱՆՈՆՔ

Պարտ է քառասունք կատարել մեռելոյն, զի առաքելական հրամանք է և աւանդութիւն և ասպարէզք են նահատակաց

1 F անպատշաճ գործ 3 BEG չիք ևս 4 H չիք Եւ է 5 E ինքեանք. ժողովուրդք փխ ժողովք F ժողովին անհնթեթ և ցոփամիտ կանայք ի պատճառս փխ ժողովք և 5—6 F սգահանէք առնեն բազում ծախիւք, ուտելով և ըմպելով և զբաժին 7 E չիք իրս 7—8 F Այլ և ամիս և տարիս առնեն փխ ամիս-հանեն 8 F Նաև ի ոճի սրբոյ խաչին ծախ հանեն, զոր մեռելոց կոչեն փխ խաչի-մեռելոյն. կանանց և ընտանեաց և զրացեաց նաև բարեկամաց և սիրելեաց իւրեանց 11—12 F Մեռելոյն յընչից, զոր ինչ իւր հոգոյ բաժինն է, պարտ է քառասնից 12 H ինչք փխ իրք 14 H կանոնաց և փխ կանոնական F կանոնք է փխ և կանոնական հրամանք է 15 E Սահմանական կանոնք F Սահակայ կանոնք յանուն մեռելոյն հաջորդ գծի 1—3 F զի շնորհք և զօրութիւն պատարագին զքաղցեալ և զծարաւեալ հոգիս ննջեցելոցն կերակրէ և արբուցանէ և զպաւթումն զովացուցանէ։ Եւ զվէրս հոգւոցն բժշկէ և թեթևացուցանէ զբեռինս մեղաց։ Վասն որոյ պարտ և արժան է պատարագ մատուցանել ամենայն հաւատացելոց ի Քրիստոս։ Վասն զի ամենայն գունդք հրեշտակացն բազմութեանց, այսպիսի անուշահոտութեանց վարդագոյն արեանն Քրիստոսի սուրբ զենմունն այն գոհ առեալ, ի վերուստ խօսափելով և անդ հաւանելով և սպասաւորութիւն Որդոյն Աստուծոյ։ Եւ լինի յայնմ օրն տուն պատարագին, տուն երրորդութեանն և բնակարան հրեշտակաց։ Ճիշդ և հաւատաւոր իմ է բանս, եղբարք, վասն զի ուր Քրիստոս է, անդ է ամենայն բանականք վերին զուարթնոցն։

Արդ մեծ և հրաշալի է ուխտս այս առ մեռեալն և առ կենդանիքս։ Վասն զի այսպէս հաւատաս յեկեղեցի Աստուծոյ, թէ յորժամ յանյուսալի տարաբորոն իցէ հոգին և ժ կնքով կնքեալ իցէ և զմի ոք կարիցէ յիշատակել առաջի Աստուծոյ

սուրբ հարցն ի Սուրբ Հոգոյն, որ և մեզ ծարաւելոցս արբուցանէ ի բժշկել զվէրս մարմնոյ և թեթևացուցանել զբեռն հոգոց, զորս մեղաւորս միահամուռ ասացից։ Այլ և զմեռելին անկողինն և զհանդերձ ի վանք և ի ձեր քահանայիցն եկեղեցին տուք, զի հիւրք և աղքատք և աղաւթարարք, որք գնան ի վանքն, հանգիցեն, և ի տուն քահանայիցն որք և լինին եկեղեցականք՝ հանգչին, և մեռեալքն աղաւթիցն և պատարագացն մասնակից լիցին։

ԻԱ. ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ՝ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Խորհրդական են նուէրք ամենայն և ընծայքն, զոր տան քահանայիցն, զոր ի հնումն Աստուած Մովսեսի հրամայեաց, զնոյն և սուրբ Գրիգոր սահմանեաց, յորժամ զբուրման կարգեաց ի քահանայութիւն։ Եւ որպէս ազգն Իսրայելի Ղևատացոցն տային երախայրիք և պտուղք և տասանորդս, նոյնպէս և ժողովուրդս Քրիստոսի տայցեն ի սուրբ եկեղեցի։ Եւ որպէս Ղևատացիքն տային տասանորդս քահանայիցն, նոյնպէս քահանայքդ տաջիք եպիսկոպոսացն զմասն, որ ի մատաղէ, ի կալոյ և հնձանէ և յամենայն արմտեաց տասանորդս՝ ի սրբումն և յաճումն ստացուածոց իւրեանց։

ԻԲ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ԿԱՆՈՆՔ

Եթէ ոք արգելցէ զպտուղս քահանային, զերի և զմորթի կամ զայլ հասս սուրբ եկեղեցոյ, զոր սուրբ հարցն կարգեալ է, ազդմամբ Սուրբ Հոգոյն ընդ խաչահանունսն եղիցի։

ի փրկութիւն։ Բայց ոք սրբութեամբ և աղօթիւք կատարեն զուխտս զայս, կարող են զըմբռնեալսն փրկել և կարէ փշրել զժ նիգսն գժոխոց։ Փշրել զօրութեամբ սուրբ պատարագին և ի վերա յերկինս թռուացնէ զհոգիսն։ Եթէ միայն ի հաւատս ճշմարիտս իցէ վախճանեալ հանգուցելոցն, այն և ոչ ի յանաստուածութիւն և ի հայհոյութիւն։ Եւ եթէ ի կենդանեաց ընկալցէ ոք զխոտս այս, նոյնպէս յոյժ օգուտ է և կարևոր փխ որ և մեզ... ասացից

1 H մեծ փխ մեզ 4 G չիք անկողինն H չիք և հանդերձ G չիք ձեր քահանայիցն 6 E յօթեվանքն փխ ի վանքն G չիք քահանայիցն 7 E–ում հանգչին և բառերով բնագիրը րնդհատվում է, փոխվում է նաև ձեռագրի գրչությունը։ Հավանաբար այս օրինակը պարունակել է միայն աշխարհիկներին ուղղված խրատները, որից շատ չնչին մաս է պակասում։ 9 F կանոն Սահակայ վասն քահանայից H կանոնք սրբոյն 11 F յայս և ի հնումն 12 F հատցն փխ պգուրման 16 BG քահանայապետիցն փխ քահանայիցն 17 F քահանայք և ժողովուրդք տացեն զասունկն նուէրս եպիսկոպոսաց իւրեանց փխ քահանայքդ –զմասն G զմասնօր փխ զմասն որ 20 H Սրբոյն Բարսղի կանոնք վասն չտալոյ զպտուղ 22 F զոր առաջին

Ահա այս է կանոն, որ է քանոն և սահման քրիստոնէութեան հաւատոյս, զոր սկսաք ի մկրտութենէն և մինչ ի մահն զամենայն աւրէնք քրիստոնէութեան զրեցաք անպակաս՝ զկարեցուորն և զպիտանին։

Եպիսկոպոս և քահանայ, որ զրէ զկանոնական բանքս և քարոզեն ի վիճակս իւրեանց և ի ժողովուրդս, սւրհնեալ լիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց և ազատ մնասցեն ի խղճոյ իւրեանց ժողովրդեանն։ Իսկ որք անփոյթ առնեն և արհամարհեն՝ ինքեանք տայցեն պատասխանի յաւր երևմանն Քրիստոսի, և մեք անպարտ եմք, զի զոր ինչ և կարացաք իմանալ՝ հնարս արարաք։

ԻԳ ԿԱՆՈՆՔ ՅԱՂԱԳՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Յետ գրելոյ զհասարակաց քրիստոնէից կանոնս՝ և այժմ դիցուք զքահանայիցն։

Նախ արժան է դնել ի սկզբանս, թէ այք են արժանի քահանայութեան։

ԻԴ ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՅ

Կարգեցին առաքեալքն և եդին հաստատութեամբ, թէ ամբարտաւանք և հպարտք, սէգ և անափառք, ատեցողք, ուսումնատեացք և քնածք, յոյլք և նախանձոտք չարեաց, ցանկացողք չարեաց, պատուասէրք, խիստք և նեղասիրտք, ցոփասիրտք և յանդգնք, անգութք, անողորմք, կռուողք և ոխակալք, քամոսք, շոգմոգք և այլ, որ ինչ նման է սոցին՝ մի՛ մերձեսցին ի պաշտաւն քահանայութեանն, վասն զի գրեալ է. «Ի բա՛ց կացէք յինէն, ամենայն մշակք չարութեան»։

Արդ, լուարո՛ւք զկանոնական հրամանս և իմացի՛ք, զի թէ հին աւրէնքն խոտէր զարատաւորն անասունն և ոչ ընդունէր ի պատարագ, ապա ու՞ր այսքան արատք չար ախտից ի հոգի ուրուք իցեն, զիա՞րդ մատչին ի քրիստոսական քահանայութիւնն, զի զայսպիսիս ոչ եթէ աստուածային շնորհն կոչէ ի քահանայութիւն, այլ ի սատանայէ շարժին, որպէս և սուրբն Բասիլիոս ասէ։

ԻԵ ՍՐԲՈՑՆ ԲԱՐՍՂԻ ԿԱՆՈՆՔ

Քահանայութիւն՝ է՛, որ յԱստուծոյ է, և է՛, որ ի սատանայէ։ Զի որ ուրացողն է կամ արուագէտ, կամ անասնապեղծ, կամ պոռնիկ, կամ արբեցող, կամ ընչասէր, կամ մարմնապեղծ, կամ արիւնահեղ, կամ ագահ, կամ անողորմ, զի որ ունի յայս չարեացս և լինի քահանայ, այնպիսիքն ի հարէ սատանայէ են։ Եւ թէ չեն գիտակ նորա չար գործոցն, թէ որդի սատանայի է, նայ մկրտեալքն և պսակեալքն ի նմանէ անմեղադրելիք են՝ վասն չգիտելոյ զչարիսն, բայց ամենայն չարիք պատահէ նոցա։

Արդ, այսպէս ծանիր. զի թէ ի մանկութեանն անկեալ է յայսպիսի չարիս և ոչ խոստովանեցաւ, կամ ունի և յետոյ իբրև բնակարան սատանայի և անզղջութեամբ և լրբութեամբ քահանայագործէ, և թէ յետոյ իմացաւ, պսակեալքն և կնքեալքն անպարտ են, բայց բազում չարիք պատահէ, յայտ է՝ դիւահարութիւն, գողութիւն, անբժշկելի վէրք և հարուածք, վասն որոյ պարտ է բազում քննութեամբ ածել ի խոստովանութիւն, որ հանդերձեալն է գալ ի քահանայութիւն։ Բայց տե՛ս, զի զարբեցողն և զընչասէրն ի մեծամեծ չարեացն դնէ ի կարգ։

ԻԶ ՆՈՐԻՆ ԲԱՐՍՂԻ ԿԱՆՈՆՔ

Իսկ քահանայութիւն, որ յԱստուծոյ է, այս է՝ սուրբ, հեզ, խոնարհ, հանդարտ, աղաւթասէր, ողորմած, պարկեշտ,

4 BG զկարևորն 5 H կամ փխ և (քահանայ) 6 H իւրեանց ժողովրդոց 7 F սրբոց նորա 10 B կատարեցաք փխ կարացաք 11 B իմանալոյ H չիf իմանալ 12 F Կանոնք առաքելական յաղագս քահանայից H Կանոնք յաղագս քահանայից եպիսկոպոսաց 15 F չիf նախ արժան է դնել ի սկզբանս 17 F չիf H Յառաքելական կանոնացն է, թէ այք են արժանի քահանա 20 F նախանձոտ, չիf չարեաց 21 G չիf ցանկացողք չարեաց 22 F չարասէր կռուողք 25 H մշակդ անիրաւութեան փխ մշակք չարութեան

2 G չիf խոտէր 6—7 H որպէս ասէ սուրբն 7 B Բարսիլիոս 8 G չիf սրբոյն. 11—12 H մարմնապեղծ փխ մարմնազեղծ 12 H կամ ատահաց կամ ագահ 14—15 F չիf թէ որդի սատանայի է 16 H անմեղ փխ անմեղադրելիք. չիf չգիտելոյ 19 F կամօք փխ կամ 20 B չիf իբրև 22 F յայսինքն փխ յայտ է 27 G Նորին սրբոյն Բարսղի կանոնք H Նորին բան Բարսեղի կանոնք

խաղաղարար, յամենայն չարեաց մեկնեալ, խորհել ի պատուիրանս Տեառն։ Եւ զարձեալ՝ զայնոսիկ, որ անաւրէն ամուսնութեան ծնունդ են, ոչ հրամայէ գալ ի քահանայութիւն։

ԻԷ ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՑ

Իսկ զպոռնկորդիսն և որք յերկրորդացն են նոցին հաւասար, մինչև յերրորդ ծնունդն, ըստ առաջին կանոնացն՝ հեռի կայցեն ի կարգէն և ի շնորհացն, զի պարկեշտ և սուրբ և աներկևան եղիցի ուխտ պաշտամանն Աստուծոյ։ Զի Ղևտական ազգն այնպիսի պատուէր ընկալաւ սոսկալի և զգուշաւոր, անարատ սպասաւորութեան, որչափ ևս առաւել այժմուքս են փութոյ արժանի, ըստ Պաւղոսի վկայութեանն։

Եւ թէ յորմ՞ համակի պարտ է ձեռնադրել քահանայ։

ԻԸ Ի ՆԻԿԻԱՑ ԺՈՂՈՎՈՅՆ ԿԱՆՈՆԱՑՆ ՅԺԸ–ԻՅՆ

Ոչ է պարտ նախքան զի ամն ձեռնադրել քահանայ։

Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԿԱՆՈՆԱՑՆ

Արժան է եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ Լ ամայս և Լ ամ կալ ի կարգին և ապա լռեսցէ։ Իսկ յԺ ամայքն կամ աւելի՝ մի՛ ձեռնադրեսցին քահանայ կամ սարկաւագ և մի՛ ամուսնութիւն հրամայել, զի յայսմ վայրի անձինք աղճատին և միտք և ժամանակք, այլ զինքն պատրաստել յիւրում ուղղութեանն և պայծառացուցանել զիւր լապտերն, զի մի՛ զայլսն հոգալով՝ զինքն անփոյթ արասցէ և զրկեսցի ի յաւիտենական կենացն։

2 BG *Աստուծոյ* փխ *Տեառն* F *Տեառն ի տիւէ և ի գիշերի* H *ընկերասէր և զարձեալ* 4 B *Յառաքելական կանոնաց հրամանք* 6 F *չիf ըստ առաջին կանոնացն* 9 F *ընկալաւ յԱստուծոյ* 12 G *չիf* 13 B *ի Նիկիայի ժողովոյն կանոնաց յերեք ձԺԸ իցն* H *ի Նիկիական ժողովոյն կանոնացն է* 14 H *քան փխ նախքան* 15 B *Թադէոսի կանոնաց* F *չիf սուրբ* H *չիf* 17 B *յետ Ծ փխ յԾ* 19 G *յայն փխ յայսմ* F *անձինք մարդկան* 20 F *վասն որոյ փխ այլ. պատրաստել պարտ է*

ԻԹ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԿԱՆՈՆԱՑ

Ասէ առաքեալն. «Եպիսկոպոսն եղիցի անարատ, պարկեշտ, ուսուցող, մի՛ արծաթասէր, մի՛ արբեցող, մի՛ կերող, մի՛ զաւշաքաղ, մի՛ հարկանող մի՛ կաշառառու, այլ հանդարտ, որպէս ասաց եղբայրն մեր և գլխաւորն Պաւղոս. Եղիցի աւրինակ բարոյ, տքնող, պահող, առեցող զհանգիստ հեշտալի մարմնոյս։ Լինել աւրինակ հաւատին։ Ամենայն կարգաւ առնել զձեռնադրութիւն արժանաւորաց՝ այնոցիկ, որ հասու և գիտունք են գրոց, կարգաց և աւրինաց Աստուծոյ։ Զտգէսս խոտել ի բաց և մի՛ ձեռնադրել, քանզի տգիտութիւն՝ Աստուծոյ խոտելի է, քան զամենայն չարագործութիւն։ Յայսմանէ առաւել զգուշասցի, քան յամենայն արատոյ, քանզի տգէտ քահանայ կամ սարկաւագ, կամ ով ոք և իցէ ի ժառանգաւորաց, ելեալ յաշտիճան Աստուծոյ սրբութեան, ի բարկութիւն շարժէ զԱստուած, զի բերանովն ի միտ առնու և ասէ, և սրտիւն ո՛չ իմանայ զասացեալ և բարկացուցանէ զԱստուած, և վնասակար այսմ ամենայնի եպիսկոպոսն լինիցի։

Արդ, զի կորուստ է այդ հոգոց, փախիցէ յայսմ ամենայնէ։ Զուսումնասէրն և զգիտունսն յառաջեցուսցեն ամենայն պատուով և ձեռնադրեսցեն։ Իսկ զտգէտսն ամենևին մի՛ կացուցանել առաջնորդս, կամ վերակացու ինչ շնորհի եկեղեցոյ։ Իսկ եթէ յանդգնեալ եպիսկոպոսն արասցէ զայն՝ կամ վասն կաշառոյ, կամ վասն մերձաւորութեան, կամ վասն բարեխաւսութեան, այնպիսի եպիսկոպոսն նզովեալ եղիցի, և որ ինչ վնաս ծնանիցի, նա տացէ վրէժս յաւուրն դատաստանի յանմահ տանջանսն»։

Լ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԱՍԷ ԱՌԱՔԵԱԼՆ ԹԱԴԷՈՍ ՁՆՈՅՆ ԲԱՆ

«Արժան է եպիսկոպոսին առաւել հրաժարել ի տգիտաց ձեռնադրութենէ, ի տխմարաց և յանմտից, ի ցուփասրտաց, ի

1 B *Թաթէոսի կանոնացն* FG *Եւ դարձեալ ի սուրբ առաքելոյն Թադէոսէ* H *ի սուրբ առաքելոյն Թաթէոսի կանոնացն է* 2 F *Ասէ սուրբ առաքեալն Թադէոս* 10 F *տգիտութիւն առաւել խոտելի է* 13 F *ժառանգաւորաց եկեղեցւոյ* 17 F *չիf ամենայնի* 18 F *Եւ այս կարի ծանր կորուստ է հոգոյ, վասն որոյ զի փխ Արդ-հոգոյ* 19 F *Այլ զուսումնասէրն և զիմաստունն* 21 H *և փխ կամ* 23 G *չիf կամ վասն մերձաւորութեան* 24—25 H *եղիցի ի մահ և ի կեանք և յամին Քրիստոսի զրկի* 25 F *պատասխանի փխ վրէժս* 27 F *սուրբ առաքեալն* H *Թադէոս կանոնքն է*

վաստարտից, ի յափշտակողաց, ի շնացողաց և յայլ ամենայն վատթարութենէ։ Զայնպիսիսն ամենեին մի՛ ձեռնադրեր և մի՛ բարկացուցաներ զԱստուած»։

Ո՞ՀԱՆ ԱՂՕՐԻՔԻՑ, ԵՒ ԹԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆԻՑԻ ԱՅԺՄ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՆՔ ՈՒԷՐ՝ ԻՆՉ ԱՐԱՍՑՈՒՔ

ԼԱ ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԵՑՈՑ ԿԱՆՈՆՔ ՆՈՅՆ ԲԱՆԻ

«Արդ, են զայս ըստ իմում գիտելոյ ասեմ, թէ Որ զմանուկ տղայ գտնիցի, որ ոչ կարէ կարդալ Աւետարան ի բեմի՝ ի լուր ժողովրդոց, և զբոլոր ուսումն կարդի քահանայութեանն ոչ է ուսեալ, զպատիժ քահանայականոյն նորա նա՛ կրէ, որ ձեռնադրեաց զնա։ Զի զհատանոցն և զուսելոցն մեղացն հնարս անձինք իւրեանց տայցեն, այլ ուրէն կ՚առաւել զիտումն և զհատակած կատարեալն արժանացուցանել այսմ շնորհի, որ կարող են ապրեցուցանել զանձինս և առաչնորդել ժողովրդեանն, վասն որոյ մեծն իսկ Պաւղոս, ձայնարձակ բարբառովն զբոլոր բարձեալ ասէր Տիմոթէի, թէ՝ «Ձեռն յուրուք վերայ վաղվաղակի մի՛ դնիցես և մի՛ լինիցիս կիցորդ մեղաց ատարաց»։ Եւ դարձեալ, թէ «Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ ի դատաստան սատանայի անկանիցի»։ Այլ զի պարտ է, ասէ, քահանային անարատ լինել և վերակացու բանին վարդապետութեան և հաւատարիմ»։

[ԼՍԵ՝ ԹԷ ՔԱՆ ԶԼ ՏԱՐԻՆ ՊԱԿԱՍ ԻՑԷ ՀԱՍԱԿՆ, ՊԱՐՏ Է ԶԵՐՆԱԴՐԵԼ, ԹԷ ՈՉ։ ԵՒ ԶԱՓ ՈՒՍՄԱՆՆ ՈՐՔԱՆ ԼԻՆԻՑԻ ԲԱՒԱԿԱՆ

Պարտ է լ ամեայ լինել ըստ առաքելական և սուրբ ժողովոյն հրամանի, ապա թէ շատ լիցի՝ ի՛ւ մաց ըստ հնոյ աւրինացն և այլ մի՛ պակաս։ Եւ չափ ուսմանն, ըստ հրամանի Ներսեսի Հայոց կաթողիկոսի, թէ ոչ զամենայն աստուածաշունչ գիրս, գոնեայ զեկեղեցական գիրս ուղղել ընթերցմամբ, և զշարականսն ամենայն, և զմանրուսումն

4 F չիմ այսմ 6 B Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ կանոնք նոյն FG չիմ այսմ 6 B Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ կանոնք նոյն FG չիմ կանոնք նոյն բանի H Յոհաննու Մանդակունեցւոյ կանոնք 8 BG դիտե փխ կարէ H չիմ կարէ 9 H չիմ քահանայութեանն 11 F զնա զանկատարիցն և զտհասից և զգիտացաց մեղացն 22 H և որպէս չափ ուսման 28 F և փխ գոնեայ 29 F ընթերցմամբ կարգի աւուրցն

ձայնաւորացն պարտ է գիտել։ Բայց են և, որ ոչ՛ զաղմոսն գիտեն և ո՛չ զբանք աղաւթից սուրբ պատարագին և խաբեն զԱստուած և զմարդիկք սուտ պատարագաւք, այնպիսիքն ո՛չ են արժանի մատուցանել պատարագ, և թէ չեմ յանդիմանեցայն ի բերան առնուցուն։

Արդ, չեմ գրելոյ, թէ ո՛րք են արժանի քահանայութեան, և զհասակն և զուսումն, պարտ է գիտել, թէ որպէ՞ս արժան է քահանայագործել, զի՞նչ հարկաւոր է նոցա։

ԼԲ Ի ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԽՐԱՏՈՒԹՅՆ

Ոչ ունին քահանայք յԱստուծոյ և ի մէնջ հրաման, առանց սուրբ ծածկութիւն պատարագամատուցին զգենլոյ, մատուցանել զպատարագն, կամ Աւետարան կարդալ, կամ խաչ առնուլ ի ձեռս, կամ յայլ ինչ սրբութիւնս մերձենալ։ Զի պայծառութիւն եկեղեցոյ և քահանայից զգեստուց վասն հալածանաց ժամանակիս և աղքատութեան ազգիս է խափանել, որք և հարկաւոր պիտոյիցն կարատ են, թող թէ պայծառութեան եկեղեցոյ։

Լուարո՛ք, քահանայք, զհրամանս սրբոյս, որք հարկաւոր համարիք կանաց ձերոց և դստերաց առնել բազում հանդերձս զարդարանաց, և այլ յոլով փարթամութեան փոյթ ունիք իսկ քահանական զգեստ ո՛չ առնէք, որ այնքան հարկաւորն է, զի և ինքն Աստուած, Մովսեսի երևեալ, եցոյց զձև և զաւրինակ քահանայական զգեստուն՝ զշուրջառն և զսուանոցն և զայլսն։ Վասն որոյ աղաչեմ, զի ամենայն քահանայ իւր շուրջառ և ուրար և զգեստ ունիցի և զսպաս եկեղեցոյն իւրոյ և զծածկոյթ սրբոյ սեղանոյն պայծառ արասցէ, զի և ժողովրդականացն տեսեալ զուարճասցին ընդ գեղեցիկ կարգաւորութիւնն։ Այլ և զարարողութիւն պատարագին փոյթ տարէք և ուսիք ի գիտնոց, և սահման հաստատուն լիցի ձեզ յամենայն ժամ խոստովանել և սրբութեամբ քահանայագործել։

2 G չիմ և ոչ զբանք աղաւթից սուրբ պատարագին 5 F առնուցուն ներեալ է 9 G ի Ներսէսի Հայոց կաթողիկոսի կանոնական խրատ H ի Ներսէսի Հայոց կաթողիկոսի կանոնք 12 B կալ փխ կարդալ 16 F որ 22 B քանզի 24 F պատուիրեմ փխ աղաչեմ 28 F ձեզ փոյթ 29 F հաւատոյն հաստատուն B չիմ ձեզ

Մի՛ ոք ի ձէնջ անարժանութեամբ աստուածային խորհրդոյն սպասաւորեսցէ, կամ զոք ի ժողովրդենէն անքննաբար հաղորդեսցէ, զի մի՛ ընդ Յուդայի և ընդ խաչահանուացն դատապարտեսցի: Մի՛ ոք ծածկեսցէ յոգի իւր զգործս մեղաց առանց ճշմարիտ խոստովանութեան և այնպէս մատիցէ ի տէրունեան խորհրդոյն սպասաւորութիւն, զի մի՛ զբարկութիւնն Աստուծոյ շարժեսցէ ի վերայ ինքեան և աշխարհին, և ի բաց անկցի յաստուածային հարսանեացն, քանզի զխաւտրատեսակ մեղացն զգեցեալ պատմուճան եմուտ չկեղեցի Աստուծոյ, որ է աւրինակ վերին հարսնարանին, որ և լսելոց է զահագին բարբառն «ընկեր, զի՞արդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց», և թէ՝ «Հանէք զդա արտաքս»**. այսինքն՝ յարքայութենէն, և՝ «Կապեցէք ընդ մէջ»***, այսինքն է՝ զհաւատս և զշնորհս սուրբ աւազանին և զքահանայութիւնն ի բաց կացուցէք: Եւ մասն դուրա ոչ ընդ հաւատացեալս, այլ ընդ անհաւատսն լիցի, զի ոչ հաւատաց, թէ մարմնոյ և արեանն Աստուծոյ սպասաւոր է, այլ հաց լոկ և գինի համարեցաւ, և վասն այնորիկ անարժանութեամբ ժպրհեցաւ մերձենալ և առանց խոստովանութեան:*

Եւ արդ, աղաչեմ, մի՛ որպէս մարմնական ինչ գործ վարկանելով զերկնային խորհրդոյն կատարումն, այլ ահիւ և դողութեամբ սպասաւորեցէք աստուածային խորհրդոյն, զի թէ սերոբէն սուրբ յաւրինակն ունելեաց կարաւտանայր, մերձանալով ի կայծակունս, որ ի վերայ սեղանոյն, ապա մեզ հողեղինացս քանի՞ զգուշութեամբ պիտոյից է յաղագս ճշմարտութիւն այնր աւրինակի մերձանալոյ: Վասն որոյ զիմաս և զգայարանս պարտապան էք պարսպել յամենայն վնասակար իրաց, սպասաւորդք սուրբ խորհրդոյն, յամենայն ժամանակի, առաւել յայնմ աւուր, յորում յԱստուած մերձե-

*Մատթ., իբ, 12։
** Մատթ., իբ, 13։
*** Մատթ., իդ, 51։

1 F ի քահանայական իրատուց 2 F անամօթաբար և անարժանութեամբ 4 F խոստովանեսցէ փխ հաղորդեսցէ 12 F որ ասէ ընկեր 16 F սորա փխ դորա 17 G շիf այլ ընդ անհաւատսն 18 F շիf աստուծոյ F սուկ գինի 20 F և մերձեցաւ 22 H արկանելով փխ վարկանելով 23 F աստուածայնոցն փխ աստուածային խորհրդոյն 28 F պատրաստեցէք փխ պարտապան էք

նալ հանդերձեալ իցէք: Զի թէ Մովսէսի ասացաւ յԱստուծոյ՝ ոչ կոխել մեռել մորթովք զտեղին, ուր երևեցաւ հուր աստուածութեանն, որքա՞ն մեզ արժան իցէ լուծանել նախ՝ զիւեռլութիւն մեղաց ի մէնջ և ապա՝ յաստուածայինն մերձենալ խորհուրդ, զի ո՛չ միայն խաւսել ընդ Աստուծոյ ըստ Մովսեսի կայ մեր առաջի, և կամ տեսանել զյեռտոյն Աստուծոյ, այլ ձեռաւք շաւշափել զանշարշարելին, և շրթամբ համբուրել զէբրն, և բերանով ճաշակել զկերակրիչն ամենայնի, և ի սիրտ ընդունել, և հոգով միանալ ընդ նոյն, և լինել Աստուած՝ շնորհաւք ընդ Աստուծոյ միաւորելովն: Վասն որոյ զտեսանելիս և զլսելիս և զլեզուս և զամենայն անդամս խրատեցէք ի բարիս շարժել և ի չարն անշարժ մնալ, և ողջախոհութեամբ և սրբութեամբ յաշխարհական ցանկութեանց և զբաւսանաց զմիտս ամփոփելով, և ապա յերկնային խորհրդոյն սպասաւորութիւն մերձենայցէք, զի մի՛ ի դատաստան անձանց ուտիցէք և ըմպիցէք զմարմին և զարիւն Տեառն՝ ըստ առաքելոյ, այլ ի քաւութիւն մեղաց և և ի մաքրութիւն հոգոց ձեզ և ժողովրդեան ձերում: Մի՛ յառաւաւտէ մինչև ի ժամ պատարագին ի վաճառատրողոցս շրջել, և բազում նեաս յոգիս ընդունել ընդ զգայարանս, և այլոց նշխարաւ գալ պատարագել: Մի՛ զոք հաղորդել յառողջութիւն կամ ի հիւանդութիւն, առանց դիսոստովանութիւնն գիտելոյ, կամ այլ քահանայի, կամ գիտելով զանարժանութիւն՝ տալ մարդահաճութեամբ, զի այն է տալն զսրբութիւն շանց և զմարգարիտն՝ առաջի խոզոց: Մի՛ օրհակալութեամբ քահանայք պատարագեսցեն, կամ ժողովուրդք հաղորդեսցին, այլ նախ հաշտել ընդ եղբայրս՝ ըստ հրամանին Քրիստոսի: Եւ մի՛ խռով կալով ընդ միմեանս վասն բազում պատճառաց և փոխանակ սիրոյ ունել պատեհութիւնն:

6 F կամեր փխ կամ. շիf առաջի-աստուծոյ 7 H զանշարելին 15 F յերկնային և յաստուածային 18 G ընդ փխ ի 18—19 F Դարձեալ կանոն է վասն քահանայից. Զի մի առաւօտ 23 F քեզ կամ այլ 25 F, և արկանել զմարգարիտն 28—29 F պատճառանաց ի սրբութիւնս մերձենայցեն, զի ասէ Տէր որպէս տրտունջ ի վերա խռովութեան ձեր մի տացէ: Մի ոք փոխանակ սիրոյ ունել զատեհութիւն ընդ եղբօրն, զի այն ո՛չ է աշակերտ Քրիստոսի, այլ սատանայի: Զի ասէ Տէրն, յայսմ ծանուցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրէք զմիմեանս: Վասն զի աւագագոյն քահանային պարտ է շահել և խնամարկել զկրսերն և ղպակասամիտսն: Եւ կրսերացն և փոքրագունիցն պարտ է կալ խոնարհութեամբ ի հնազանդութիւն աւագագունիցն, մին՝ զի ժողովուրդքն ձեր և այլք, որք տեսանեն, հաճեսցին ի ձեզ և չինեսցին ի հաւատս, և մին՝ զի անուն Տեառն փառաւորեսցի, ըստ այնմ՝ տեսանիցեն զգործս ձեր բարի և փառաւոր արասցեն:*

Աւագագոյն քահանայք շահեցարուք զկրսերն և զպակասամիտսն։ Կրսերքդ խոնարհութեամբ ի հնազանդութիւնն աւագագունիցն, զր անունն Տեառն փառաւորեսցի, և ժողովուրդ շինեսցին ի ձեզ։

ԼԴ ԱՅԼ ԿԱՆՈՆՔ

Քահանային պարտ է Գ աւուրքք յառաջ զգուշանալ ի մերձաւորութենէ ամուսնոյն, և աղաւթիւք մաքրեսցէ զինքն, և ապա մատիցէ ի սուրբ խորհուրդն։ Նոյնպէս և զկնի ժամոյն այլ ևս Գ աւուրս զգուշայցէ, և այն է հաճոյն Աստուծոյ։

Որ ոք պատրաստեալ է առ վաղիւն ժամ առնել, երիկունն պարտ է պարկեշտ կալ յուտելոյ և յըմպելոյ, զի քաղցեալ և ծարաւի ննջեսցէ, և ի շատախաւսութենէ, և սուրբ խորհրդով, մանաւանդ զկնի հանգստեան աղաւթից, և մի՛ չետ քնոյն չուր արբցէ։

ԼԷ Ի ԿԱՆՈՆԱՑ ՍԲԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐՈՒ ԿԱՊՂԱԴՈՎԿԱՑՈՅՑ

Քահանայ մի՛ հշխեսցէ ի շաբաթու կամ ի կիւրակէի արտաքոյ եկեղեցոյ կալ, բայց թէ անհնարին գործ լինիցի։ Լուիցեն, որք զսպասաւորութիւն եկեղեցոյ յապաշխարողն

3 H չիf անունն 5 F Այլ կանոնք վասն քահանայից G Այլ կանոնք քահանայից H Այլ կանոնք սուրբ Հա(յրապետաց) 6 A-ում օrեի ֆանակը ցույց տվող թիվը ջնջված է։ B Գ աւուրք F Պարտ է աշխարհական քահանից ի աւուրքք G ի աւուրքք 8 F չետոյ փխ զկնի 9 B Գ աւուրս F ի օր G երեսուն աւուրս H չիf աւուրս 9—15 F զգոյշ և պատրաստ կացցէ և ողջախոհութեամբ զսպեսցէ զինքն, և այն է հաճոյ Աստուծոյ։ Ապա թէ այսպէս ոչ կարասցէ զսպել զինքն զգուշութեամբ, մի կարասցէ առնել պատարագ, և թէ յանդգնի լրբութեամբ մերձենալ յահագին խորհրդոյն, այն ծուռա է և ոչ քահանայ, որ լրբութեամբ մերձենալ ի համբոյրն՝ առ ի նշան և առիթ մատնութեան Տեառն։

Եւ գարձեալ, զի ով որ պատրաստեալ է առ վաղիւն ժամ առնել, երիկունն պարտ է պարկեշտ կալ ի կերակրոյ և յըմպելոյ, զի մի՛ ծանրասցի սիրտ իր շռայլութեամբ և արբեցութեամբ, քան տէրունական հրամանին։ Եւ ծարաւի ննջեսցէ և զգուշասցի ի շատխօսութենէ մանաւանդ զհետ հանգստեան աղօթից այլ մի՛ ևս խօսեսցի։ Եւ յորժամ պահս գարթիցէ ի քնոյն, այլ մի՛ ննջեսցէ, այլ առանձին աղաւթ խօսեսցի։ Մինչև հասարակաց աղօթից ժամու առեան լիցի 11 G չիf առ 16 B ի առասցէ, մինչև հասարակաց աղօթից ժամու առեան լիցի կանոնաց սրբոյն Բարսղի Կեսարու Կապադովկայ F Այլ կանոնք H ի կանոնաց սրբոյ Բարսեղի Կեսարացոյ Կապ(ադովկացոյ) 17 B կիրակի եկեղեցւոյն 18 F բան և գործ

թողուն և ինքեանք ի բազում աւուրս ոչ մտանեն՝ յանդիմանեսցին և ի հնոյ աւրինացն։ Զի քահանապետն միայն մտանէր ի սուրբն սրբոց խունկ արկանել և սպասաւորել, իսկ ի խորանն՝ քահանայքն։

Քահանայ ի աւր առանց խորհրդոյ մի՛ իշխեսցէ կալ, ապա թէ յանդգնի՝ նզովեալ եղիցի։

Լուարուք, որ զամն ողջոյն ծուլութեամբ հեռանայք ի պատարագէն և յաւուրս տանի և յայտնութեանն Քրիստոսի արիացեալ հանդիսանայք, յորմէ ոսեալ ժողովուրդն ձեր՝ յայնոսիկ յաւուրսն միայն երևել յեկեղեցին և զբովանդակ տարին կարաւտեալք կան ի փրկական պատարագէն, յապագա որոյ համարս տալոց էք առաջի աւենին Քրիստոսի։

Քահանայ, որ աշխարհական գործով զբաղի և ոչ կայցէ զգոյշ տանից և պաշտման՝ ունելով բարեխաւս զսուրբ մարտիրոսս, եղիցի նա որպէս հեթանոսն։ Տեսէք, զի ամենայն ապ իւր մարտիրոս ունի, որ և բարեխաւսութեամբն իւրեանց բացաւղ են դրանցն ողորմութեանցն Աստուծոյ, և գիշատակս նոցա անխափան կատարեցէք։

Քահանայ, որ առանց խոստովանութեան գչեռին թողուն տայ՝ վասն մարդկան հաճութեան, մեղքն նորա ի գլուխ նորա է, բայց եթէ Բ և Գ վկայիւք՝ արդարանայ։

Քահանայ մի՛ իշխեսցէ լուծանել զկանոն սրբոցն, զոր եդին սուրբ վարդապետքն, և առն կամ կնոջ, որ զիւրեանց մեղսն ապաշխարել չեն և փափագեն յեկեղեցի և յաւրէնս, մի՛ տացեն նոցա պղծել զտուն Աստուծոյ։ Եւ մի՛ զմարգարիտն առաջի խոզաց արկանիցեն։ Եւ եթէ ոք համարձակի՝

1 H մտանեն ընդ նա 5 F պատարագի փխ խորհրդոյ H խորհրդոյ պատարագին և խոստովանելոյ 6 F յանդգնաբարս ծուլանայցէ, ի նիկիական սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի 8 BH չիf և յարութեանն 10 F չիf միայն 15—16 B զմարտիրոսս սուրբս F պաշտաման և ոչ կատարեսցէ զսովնախմբութիւն քան պատշաճի աւուրն, եղիցի նա որպէս հեթանոսն առեցող սրբոց։ Տեսէք եղբարք փխ պաշտաման-տեսէք 18—19 F աստուծոյ, վասն որո պարտ է ամենայն քահանից անխափան ամենայն օր գչիշատակս նոցա կատարել, ունելով միշտ բարեխաս զնոսա առ Քրիստոս, որպէս ասէ առաքեալ, չիշատակ սրբոցն հաղորդեցարուք։ 21 BG մարդահաճութեան 21—22 F նորա է, վասն այն պարտ է զղջմամբ և ճիշտ խոստովանութեամբ և հաստատուն կտակաւ Բ և Գ վկաւք արդարանալ 27 B չիf ոք 25—27 F եկեղեցի մտանել և պատարագ տեսանել,

ապաշխարութիւն նոցա անընկալ լիցին, և քահանայն՝ ընդ
խաչահանունսն Քրիստոսի։

Լուարո՛ւք զսոսկալի բան սրբոյս և ի մի՛ տառէք, և
զդողացուցիչ աւետարանն Աստուծոյ, և զհայհոյիչ Հոգոյն Սրբոյ
զիշխոյն կարեցէ՛ք ի ժողովրդենէն, և զաւտար անկողնոյ
զիառնակութիւնն, զոր շունս և պոռնիկս կոչեն գիրք, և զայլ
դառնագոյն մեղս։ Եւ ըստ սրբոցն սահմանել կանոնի ապաշ-
խարեսցեն և ապա հաղորդին, որպէս և սուրբն Ամբրոսիոս
եպիսկոպոս չետ Ը ամի ապաշխարութեան ոչ թողոյր
զթագաւորն Թէոդոս յեկեղեցին։ Իսկ դուք, վասն երեսաց
ակնառութեան, որք ի գործ շնութեան կան՝ և հաղորդի՛ ար-
ժանի առնէք, և զբոզսն, որք յարակայ ի պոռնկանոցան են,
վասն ագահութեան ընդ ժողովրդեանն դասէք, և զորոց ո՛չ
գիտէք զխոստովանութիւն, անընտրողապէս հաղորդեցուցա-
նէք։ Արդ, եթէ ոչ զգուշանայք յայդմանէ, ահագին կրելոց
էք պատիժ ըստ բանի սրբոյս։

Քահանայ կամ ուխտական չէ՛ արժան ի մէջ գոհհիկ
ամբոխին, ի շուկայս և ի վաճառատեղիս, ի հաց կամ ի
գինի նստել, այլ երթալ ի տուն ճաշակել։ Եւ եթէ ոք յանդգնի՝
նզովեալ եղիցի։

1—7 F մի՛ տացեն նոցա թոյլ մտանել և պղծել զտունն Աստուծոյ, որպէս ուսուցանէ քարող պատարագին, զոր սարկաւագն ձայնէ ի լուր ամենեցուն ասելով. մի՛ ոք յերեխայ և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքուրից մերս, յայսինքն՝ որ դեռևս ի ներքոյ լծոյ և կանոնաց է և չէ կատարեալ և ի գլուխ հանել զապաշ-խարութիւն, եթէ ոք համարձակի յայնպիսեացն յեկեղեցի մտանել կամ հաղորդել, ապաշխարութիւն նոցա անընդունելի՝ իբր զհայհոյողաց Հոգոյն, և քա-հանայն ընդ խաչահանունսն դատեսցի։ Լուարո՛ւք զսոսկալի զբանս սրբոյս և ի մի՛ տառէք, զի վա՛յ և եղո՛ւկ է լսելեաց։ Զի պարտ է, ասէ, քահանային խրատել զժողովուրդս իւր և յանդիմանութեամբ չեռս կալ և պռնակ ի զանազան մեղաց. նախ՝ յօտար անկողնոյ խառնակութենէ, զոր շուն և պոռնիկ կոչեն գիրք. երկրորդ՝ կորել ի չիշոցաց, զի չիշոցնատուն հայոյիչ է Հոգւոյն Սրբոյ և դո-ղացուցիչ աւետարանն Աստուծոյ։ Եւ ո՛չ ոք ունի հրաման և իշխանութիւն թողութիւն առնել չիշնցաւորին, զի անթողելի է մեղք նոցա։ Նաև զայլ ամենայն դառնագոյն մեղս 1 BG անընդունելի լիցի փխ անընկալ լիցին 1—2 H համարձակի, թէ նա նոցա մեղաց համար կապաշխարեմ, մի՛ ընդունիր, քահանան ընդ խաչահանունսն Քրիստոսի է 6 H գիրք աստուածայինք 7 G սրբոյն 11 B չիf կան H որ 11—13 F ապահութեան հաղորդի արժանի առնէք և ընդ բարի ժողովուրդն դասէք 12 B չիf են 14 H չիf անընտրողապէս հաղորդեցուցանէք 15 H չիf արդ F ահագին և դառնա-գոյն 17 H երեց կամ կրոնաւոր փխ քահանայ կամ ուխտական F ոք չէ պարտ փխ չէ արժան 18 BF վաճառափողոցս փխ վաճառատեղիս 20 F սովորաբար նզովս կրեսցէ ի սուրբ ժողովոյն փխ նզովեալ եղիցի

Քահանայ մի՛ իշխեսցէ մտանել ի տուն կնոջ, որ ունիցի
այր անհաւատ, և մի՛ թողցէ զնա յեկեղեցի Աստուծոյ, և մի՛
ընկալցի ողջոյն ի նմանէ, և մի՛ տացէ աղ զուարակի նորա, և
մի՛ կնիք՝ ուստերաց և դատերաց նորա։ Եւ եթէ վախճան
հասանէ, զրկեսցի ի թողակէն, բայց եթէ դարձցի և ապաշ-
խարեսցէ զկարգն։ Եւ եթէ ոք ի քահանայիցն յանդգնի
երթալ առ նոսա և տալ զսրբութիւն Աստուծոյ շանց՝ եղիցի
ընդ խաչահանունսն Քրիստոսի։

Տեսէ՛ք զհրամանս սրբոյս, և մի՛ վասն սակաւ շահի
զահագինս զայս կրէք տուգանս և զդառն պատուհաս։

ԼԲ ԱՅԼ ԿԱՆՈՆՔ

Ջմիռոնն մի՛ ոք իշխեսցէ ի պէտս դեղոց մերձեցուցանել՝
կա՛մ ի վիրի, կա՛մ յականջաց աւծումն, և եթէ ոք յանդգնի՝
եղիցի նզովել։ Այլ այսպիսեացս խաչալուայ արասցեն և
աւրհնութիւն սրբոց։

Եթէ ոք զխոստովանութիւն հրապարակ առնէ կա՛մ վասն
քինու, կա՛մ կաշառ ոչ տալոյ, և թշնամանաց անձին իւրոյ և
այլ այսպիսիքս՝ լուծցին։

Եթէ քահանայ ոք զհաս քահանայի ուտէ լռել[ե]այն կամ
յայտնի, կամ զայլոյ աղ աւրհնէ, կամ պսակէ, կամ կնունք,
կամ թաղումն և այլ այսպիսիք առանց հրամանաց քահանա-
յին, նզովեալ ի կեանս և ի մահ, և կարգաւորեալքն անվնաս
են։ Եւ չետ ի աւուր առանց ժամու մնալ յեկեղեցոյն, պարտ
է աւրհնել։ Բայց թէ խնկարկութիւնք և լուցմունք են լեալ,
ո՛չ է պարտ այլ կարգս ինչ կատարել ի պղծել տաճարոյն։

1 G չիf մտանել 2 F չիf աստուծոյ 4 F չիf եթէ 6 H չիf յանդգնի 10 H զրկէք փխ կրէք. պատուհաս որոց փրկեսցէ Տէր Աստուած յայն դառն տանջանաց զամենայն հաւատացեալս անուան իւրոյ, ևս առաւել զանարժան նուաստ կրոնաւորս, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ազաչեմ յիշել ի տէր և զհայր մեր, որ յերկինսն 12 H Ջմիռոնն ո՛չ է պարտ և 17 H կամ վասն 18 F լուծցին ի կարգէ և այլ մի՛ պաշտեսցեն զքահանա հաւխտեան H լուծցի և անկ-ցին ի կարգէն անիծեալ են ի փառաց Որդոյն Աստուծոյ և Թ դաս հրեշտակաց նորայ։ 19 H Ուտէ կամ զառաջնորդի գաղտաբար կամ յայտնի 20—21 H կնքէ կամ թաղէ 21 H չիf այլ այսպիսիք. այսպիսիքս նզովեալ են ի կեանք 22 F կարգաւորեալքն ի նմանէ H ի նմանէ անվնաս են 24 H չիf և լուցմունք 25 F պարտ օրհնել

Ապա թէ Բ միայն է կացել կամ աւելի, այլ ևս պարտ է վերստին աւրհնել, թէպէտ և խնկարկութիւն և լոյս է լել։

Եթէ գազան ինչ մտանէ կամ անասուն ի ներքս, պարտ է աղաւթս կարդալ։ Պարտ է զհաղորդն փոխել յամենայն կիրակէ և զպահելն ճաշակել զկնի կատարման խորհրդոյն, յորժամ զմատուցեալն ճաշակէ։ Եւ մի՛ դիցէ ի սեղանն կամ ի սկիհն յառաջագոյն, մինչև աւարտէ զխորհուրդն։ Ապա թէ մոռացաւ և յանմատոյց բաժակ մերձեցաւ, մի՛ ճաշակեսցէ, այլ պահեսցէ։

Որ զչորեքշաբաթ կամ զուրբաթ լուծանէ, կամ զծայտնութեան պահս, կամ զԱռաջաւորաց պահն, կամ զքառասնորդն՝ ի ձուկն կամ ի ձէթ կամ ի գինի կամ յայլ պարարտ կերակուր՝ Գ ամ ապաշխարէ և զերկու քառասունսն սրբապահ կացցէ, և զտարոյն զի շաբաթիսն։ Բայց թէ քահանայ կամ կրաւնաւոր է, զբոլոր տարին շաբաթապահ կացցէ, աւուրն ճ՝ ծուխր և կանոն և ըստ կարին ողորմութիւն։ Բայց թէ վասն խիստ հիւանդութեան է, չունի զնոյն վտանգ։ Իսկ վարդապետն տեսցէ զպատճառն և զարժանն կարգի և հայելով ի ջերմեռանդն յաւժարութիւնն և ըստ հարկի հեղութեանն՝ յաւելցէ և պակասեցուսցէ ի կարգն։

ԼԷ ԿԱՆՈՆՔ ՅԱՂԱԳՍ ՊԷՍՊԷՍ ՅԱՆՑԱՆԱՑ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

Եւ լուաք վասն քահանայից, որք ի քաղաքի, և վասն սարկաւագաց, թէ առանց խոստովանութեան, յաւուրս պահոց, ո՛չ արգելուն զինքեանս ի գինոյ, այլ և անչափ յագեցմամբ արբեցութեան ախտին հրապարակին ի մէջ գիներբուացն և անպարկեշտաբար նստին ի ժողովս և խրախճանս գուսա-

3 H կամ անասուն ինչ մտանէ յեկեղեցին փխ ինչ—ի ներքս 4 F Պարտ է յամէն կիրակէի H զհաղորդս. կարգայ փխ փոխել 5 F ճաշակել իցէ 5—6 G չիմ զկնի կատարման խորհրդոյն յորժամ զմատուցեալն ճաշակէ H զհետ փխ զկնի 7 H զհին հաղորդն այլ ճաշակի փխ յառաջագոյն 9 F Այլ կանոնք վասն պահոց 10 H ուտէ փխ լուծանէ 11 F զառաջաւորն. չիմ պահոն G չիմ զառաջաւորաց պահոն 12 H կամ այլ պարարտ կերակուր կամ գինի, որ չար է քան զամենայն փխ կամ ի գինի կերակուր 14 H չիմ կացցէ 15 BG ճՄ ծուխր 16 G կարգին փխ կարին H և կանոն ինչ, որ կարի ողորմութիւն. չիմ վասն 17 H հիւանդութեան է կերել 18 H չիմ և զարժանն կարգի 20 F պակասեցուսցէ ըստ կարգի վայ և եղուկ է ի վերա Գ շաբաթին ուտողին 21—22 G Կանոն յաղագս պէսպէս յանցանաց, որ հանդիպին քահանայից և սարկաւագաց 23 H ի քահանայից վասն

նակաև երգովք ի կաքաւս լիտի խաղուց և այլ վասն պէսպէս իրաց և անասնաբարոյ մարդոց։ Այլ և վասն ապահութեան զբոզսն, որք ի տունս պոռնկութեան և զկանայս այլազգեաց մեծարէին ընդ քրիստոնեայս՝ տալով նոցա զմարմինն տէրունական։

Արդ, վասն այսոցիկ և վասն այլոց թիւրութեան, որ գտանէին առ ոմանս, եղան կանոնական հրամանքս։

ԼԸ ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՑ

Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ լուծանէ զաւուրս պահոց՝ լուծցի։

Տե՛ս, զի ո՛չ եթէ զկերակրով լուծանելն միայն ասէ, այլ և զգինովն։ Զի թէ կերակրով լուծանելն այնքան վտանգ է, ո՞րքան մեծ է գինով արբեցութիւն, զոր Պաւղոս ընդ շունս և ընդ սպանողս դասէ։ Եւ թէ ոք արբեցաւ ի քահանայից, կամ ի սարկաւագաց, կամ ի դպրաց, մի՛ իշխեսցեն ի պատարագն կամ ի պաշտաւնն մերձենալ, մինչև բազում արտասուաւք և տրտաւք տնանկաց ապաշխարեսցեն։ Զի արբեցողս ընդ սպանողս է՝ զսպանողացն ապաշխարութիւնն ընկալցին։ Լուարո՛ւք, որ մինչ յանցանել գիշերոյն յարբեցութիւն կայք, ի վաղիւն պատրա՞ստ էք ի պատարագել և դարձեալ սկիզբն ըմպելոյ առնէք։

Քահանայ, որ վայրապար զոք նզովէ, նզովեալ եղիցի։

ԼԹ ԲԱՐՍՂԻ ԿԱՆՈՆՔ

Քահանայ, որ զեխի գինով, է աւր Աւետարան մի՛ իշխեսցէ ընթեռնուլ և մի՛ մատչել ի սուրբ խորհուրդն։ Այս երիցս անգամ գրեցաւ, զի յերկուց և յերից վկայից հաստատեսցէք ի սիրտս ձեր։

4 F մեծարեն G չիմ ընդ 6—7 Որոց այսոցիկ. չիմ որ գտանէին 7 F չիմ առ ոմանս 10 F լուծցի ի կարգէ իւրմէ 11—12 F միայն է, այլ որքան մեծ է գինով արբեցութիւն 14 F պոռնիկս փխ սպանողս G դասէ փխ դասէ 18 F սպանողս է վասն այն 21 H զսկիզբն. մեռելոյ փխ ընպելոյ 20—21 F Մի՛թէ ոչ էի լուեալ զայն, որ ասէ՝ Արբեցողք զարքայութիւնն աստուծոյ ոչ ժառանգէ։ Քահանա, որ վայրապար նզովի, նզովեալ եղիցի, և անեծք իւր ի գլուխ իւր դարձցին ըստ Դաւթի, որ ասէ, Դարձի՛ն ցաւք ի գլուխ իւր։ Զի որպէս հաւ, որ թռչի ի բունոյ իւր և դարձեալ անդրէն ի 23 F Սրբոյն Բարսղի կանոնք H Կանոնք յաղագս ի սէս պէս անցանս Բարսեղի կանոնք 25 B կարգալ փխ ընթեռնուլ G չիմ մի

Կամ եղև մեծ ժողովոյն, թէ քահանայ և ամենայն ուխտ եկեղեցւոյն երթալ ի հարսանիս ո՛չ կաքաւել, ո՛չ ի պարու գալ, այլ պարկեշտութեամբ հաց ուտել, որպէս վայել է
5 *քահանայից։*

ՃԱ Ի ՆԻԿԻԱՅ ԿԱՆՈՆԱՅ

*Քահանայ և կամ այլ եկեղեցական, որ զարծաթ իւր ի վարձու տայ, այնպիսոյն ասէ դիր։ «Վա՛յ, որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան»**։ *Ուսումն մանկութեան զսաղմոսն*
10 *ասէ։ Այնպիսիքն թէ ո՛չ գան յուղղութիւն, կամ եղև մեծ ժողովոյն մերժել ի կարգէն։ Քահանայ, որ զարծաթ իւր ի վարձու տայ, մերժեսցի յեկեղեցոյ։ Մի անգամ գրեալ է այս ի Նիկիայ կանոնացն, բայց գրեցաւ և այս ի վկայութիւն։*

Որք երթան ի տունս հեթանոսաց, ուտեն և ըմպեն ան-
15 *խտիր, Գ ամ արտաքոյ, և մի ընդ աւրինաւք։ Լուսաւո՛ւր, որք ընդ հայհոյիչս Քրիստոսի ուտէք և ըմպէք նոյն բերանով, որով ճաշակիցէք զմարմինն Տեառն։*

ՃԲ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Քահանայ, որ ի մեղս զառածեալ է, Ժ ամ ապաշխարես-
20 *ցէ չերմեռանդ արտասուաւք և տրաւք տնանկաց, և ապա մտեալ յեկեղեցի հաղորդեսցի և յաստիճանէն անկցի։*

ՃԳ ԿԱՆՈՆ ՅՈՀ[ԱՆՆՈՒ] ՄԱՆԴԱԿՈՒՆԵՑՈՅ ԻՄԱՍՏ[ԱՍԵՐԻ]

Եպիսկոպոս կամ քահանայ կամ սարկաւագ կամ ով ոք և իցէ յուխտէ եկեղեցոյ յարբեցութեան գտեալ՝ մի՛

* *Առակք, Բ, 17։*

1 H *Յանտիոքայ ժողովոյն կանոնացն է սա* 4 F *նստել և համեստութեամբ հաց ուտել* 6 H *ի Նիկիայի կանոնացն է սա* 10 H *հրաման փխ կամ* 11 B *լուծել փխ մերժել* H *Քահանա կամ եպիսկոպոս.* 12 *չիճ տայ* 11—13 F *չիճ Քահանայ- վկայութիւն* 14 F *Քահանա որ երթա* 15 F *արտաքոյ եկեղեցո կացէ. և մին ամ յունկնդիրսն փխ և մի ընդ աւրինաւք* 18 F *կանոնք սրբոյն Գրիգորի լուսաւորչի* H *Գրիգորի Լուսաւորչին կանոնացն է սայ* 19 F *զառամեալ կայ փխ զառածեալ է* 21 H *հաղորդեսցի յաւրինացն* F *նե ի քահանայական յաստիճանէն անկցին։ Նե ոչ կարասցէ այլ վ խորհուրդ եկեղեցոյ կատարել, զի կարգն ի յանձն ապականեալ է։* 22 GF *Մանդակունեցոյ* 24 F *ոք իցէ*

իշխեսցէ պաշտել վկարգն, մինչև աւուրս ընդ մէջ արարեալ՝ սրբեսցէ զինքն ապաշխարութեամբ, պահաւք և աղաւթիւք և ապա համարձակեսցի մատչել ի կարգն իւր և ի հաղորդութիւն։ Իսկ եթէ յամառեալ ի նմին յորկորստութեան մնասցէ՝
5 *լուծցի։*

Այս երիցիս գրեցաւ վասն հաստատութեան ձերոյ։

ՃԴ ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ

Թէ ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթեսցին, և ընդ իշխանութեամբ իշխանաց լիցին հարկապահանջ և
10 *ոստիկանս կարգել աշխարհական գործոց, ասէ գիրն առ նոսա. «Թէ լաւ էր, թէ բնաւ չէ՛ր ծանուցեալ նոցա զարդարութեան ճանապարհն, քան թէ ծանեան իսկ և յետս կացին»**։ *Այնպիսիքն մի՛ լիցին քահանայ, այլ՝ աստուածախաբ։ Պատարագ նոցա՝ կափիւնք շանց. մկրտութիւն նոցա՝ որպէս*
15 *թլփատութիւն Հրէից. տունք նոցա՝ որպէս մեհեանք դիւաց. եկեղեցիք նոցա կրկին աւրհնեսցին։ Իսկ զղջումն եկեալ՝ ժ ամ ընդ ունկնդիրսն կայցէ, և ապա ի ներս մտեալ՝ մինչ ի վախճան ընդ ժողովուրդսն կայցեն։*

Կին քահանային թէ վախճանի ի վաթսնամենից ի վեր,
20 *քահանայն կացցէ յեկեղեցւոջն, ապա թէ ի մանկութեանն հանդիպի՝ երթեալ առ ուխտականս և անդ լինել մինչև ցվախճան, զի ա՛յն է հաճոյն Աստուծոյ։ Քահանայ կ ամեայ ի պատարագէն լռեսցէ, ապա թէ առողջ իցէ՝ հասարակաց ննջեցելոց պատարագեսցէ և մի՛ վարձեսցի։*

25 ## ՃԵ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ ԿԱՆՈՆՔ

Որպէս եղև անառակ սովորութիւն քահանայից և նոցին կանանցն, գերեզմանս առ եկեղեցիս առնել ի տեղիսն սրբութեան։ Յայսմ հետէ յառաջ մի՛ իշխեսցեն առնել, այլ ի ժողովրդականացն հանգստարանն եղիցին և հանգստարան

* *Բ Պետրոսի, Բ, 21։*

1 GF *աւուրս բազում* 5 GF *լուծ ի կարգէ քահանայութեան* 7 F *Նորին Յոհաննու կանոնք* H *Մանդակունոյ կանոնք* 12 H *չիճ իսկ* 16 F *է փխ ժ* 17 H *ապաշխարեսցէ փխ ամ* 19 F *կանոնք փխ կին. քահանաից* 21 H *չիճ առ* H *ի վանս և անդ* 22 F *զվախճան նոյնպէս և կանայք նոցա զի այն* F *վասն քահանաից* 25 BFG *Սահակայ կանոնք*

քահանայիցն, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի։

ԽԶ ԵՓՐԵՄ*

Եւ սուրբն Եփրեմ ի գիրս կտակի մահուան իւրոյ ասէ. «Եթէ ոք համարձակեսցի թաղել զիս ի ներքոյ սեղանոյն կամ ի սուրբ տաճարի Տեառն՝ մի՛ տեսցէ նա զերկնային սեղանն Աստուծոյ և մի՛ լիցի արժանաւոր արքայութեանն, զի ո՛չ է արէն որդանցն, որ ապականութիւն ունին, դնել ընդ սեղանով Աստուծոյ կամ ի սուրբ տաճարի Տեառն»։

ԽԶ ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

Պատարագս յաղագս իմոյ տկարութեանս արժանի արարէք ինձ մատուցանել, և յորժամ կատարեսցի ես, արասջի՛ք ինձ յիշատակ, զի աւգտին մեռեալքն ի կենդանեացն յիշատակաւ պատարագացն։ Զի թէ ի հասանելն ազոխն ի յայդին, դինին, որ ի տանն իցէ, շարժի և եռայ յամանն, և յորժամ սոխն, որ ի յանդի տնկի, ցամաքն, որ ի տանն իցէ, բոյս արձակէ, քանի՞ ևս առաւել մեռեալքն զգայցեն պատարագաց։ Եւ վկայի գրոց, եթէ ո՛չ է յոյսս այս, ապա զի՞ղդ մեծ մարգարէն Մովսէս աւրհնեաց զԼեռբէն՝ յերկրորդ աղգին։ Ո՞րչափ ևս առաւել քահանայք նորոյ ուխտիս բառնան զպարտս յանցաւորաց պատարագաւքն։

ԽԷ ԹԱԴԷՈՍԻ՝ ՅԱՂԱԳՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Ասէ սուրբ առաքեալն Թադէոս. «Արժան է եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ Լ ամայս, և Լ ամ կալ ի կարգին, և ապա լռեսցէ։ Իսկ Ծ ամայքն կամ աւելի մի՛ ևս ձեռնադրեսցին քահանայ կամ սարկաւագ, և մի՛ ամուսնութիւն հրամայել, զի յայսմ վայրի անձինք աղճատին և միտք և ժամանակք, այլ զինքն պատրաստել յիւրում ուղևորութեանն, պայծառացուցանել զիւր լապտերն, զի մի՛ զայլսն հոգալով՝ զինքն անփոյթ արասցէ և զրկեսցի ի յաւիտենից կենացն»։

ԽԸ ԹԱԴԷՈՍԻ՝ ՅԱՂԱԳՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Դարձեալ ասէ առաքեալն. «Արժան է եպիսկոպոսին զամենայն հաւատացեալս միապէս սիրել և զիւր մերձաւորսն մի՛ առաւել մեծարել, քան զայլ հաւատացեալսն, թէպէտ և եղբայր իցէ կամ քոյր»։ Եւ կաշառ ամենևին մի՛ առնուլ, այլ զինքն մեռեալ համարել աշխարհի։ Մի՛ երբէք քրքրել և զուարճանալ, կամ լկտի ինչ խաւսել, կամ հրապարակաւ զոք հանդիմանել՝ առանց երկրորդ հարցման. նախ՝ առանձին, ապա՝ երկու կամ երիւք վկայիւք վարդապետաւք։ Հեշտական հանդերձիւք մի՛ վարիլ, և մի՛ բնաւ առանց ընկերակցացն հարցմանց գործել ինչ, զի այն է հաճոյ Աստուծոյ՝ կացուցանել ընդ ձեռամբ իւրով վարդապետս, տեսուչս գաւառաց, քաղաքաց, հովուել զհաւատացեալսն, և նոցին ժողովրդոցն հնազանդել հովուացն՝ կացուցելոցն յեպիսկոպոսէն։ Կացուսցէ ի շէնս Բ կամ Գ քահանայ և մի սարկաւագ, իսկ յագարակն՝ քահանայ մի և սարկաւագ մի։ Զհաշմել զոք մի՛ ձեռնադրել, զի եթէ զարատաւորն չտայ պատարագ մատուցանել մարգարէն, ո՞րչափ որ զայս պատարագ մատուցանէ՝ արժան է անարատ լինել։ Առանց վկայից և քննութեան մի՛ զոք ձեռնադրել, զի մահաբերք վնաս ծնանին։

---

* Պարզ երևում է, որ ցանկը լրացված է ոչ թե ըստ հեղինակների, այլ ըստ գլուխների բովանդակութեան, այդ պատճառով այս մասը չի առանձնացված։

3—9 B չիf 3 F Կանոն սրբոյն Եփրեմի G Կանոնք Եփրեմի Խորին Ասորոյ H Սրբոյն Եփրեմի կանոնք 4 H չիf Եւ սուրբն 10 Բ չիf սրբոյն F Կանոն սրբոյն Եփրեմի G չիf H Նորին սրբոյն Եփրեմի կանոնք 17 F և իմանան և աղէէ ի նոսա շնորհք պատարագաց և զօրութիւն ներգործութեան աղաւթից և այլ արդեանց և ողորմութեանց, զոր քահանայքն և բարի յիշատակքն յանուն մեռելոյն կատարեն փխ պատարագաց 18 F չիf ապա 19 B մարգարէն մեծն 21 F պատարագքն Քրիստոսի 22 B Թաթէոսի առաքելոյ F Կանոնք Թադեոսի առաքելոյն G Թադէոսի առաքելոյն յաղագս եպիսկոպոսաց H Առաքելոյն Թադէոսի յաղագս եպիսկոպոսաց 23 F թէ պարտ է փխ արժան է

4 F այլ պարտի զինքն 5 B հոգւով փխ հոգալով 6 H առնէ 7 B Դարձեալ Թաթէոսի առաքելոյ F Նորին Թադէոսի G Թադէոսի առաքելոյն 8 F թէ պարտ փխ արժան 16 H մի վարիլ որպէս ասէ Յուդա Յակոբեան ոչ մի ընդ բեհեզս և ծիրանիս և ոչ մի ընդ բծուծս, այլ պարկեշտութեամբ, և մի՛ բնաւ առանց ընկերացն հարցման 18—19 F և վերակացուս գաւառաց, քաղաքաց, հովուել զհաւատացեալսն։ Եւ պարտին ժողովուրդքն հնազանդել 22—23 F ի հին զարատաւոր անասունն. որչափ ևս առաւել 24 F սուրբ և անարատ

Թ ՍԱՀԱԿԱՑ՝ ՅԱՂԱԳՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Պարտ է եպիսկոպոսին խնամ տանել ընտանեաց։ Ոչ զմարմնոյ ազգ յամարել ընտանի և հարստացուցանել, այլ ըստ առաքելոյ, եթէ հնար իցէ, ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն կալչիք, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ, զի չար է քան զկայենին և զԳէեզազ մեղանչելն՝ հարստացուցանել զազգն և զրկել զաղքատս և գոպաստուորս եկեղեցւոյ։

Ժ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ՝ ՅԱՂԱԳՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Որք վերակոչին յեպիսկոպոսութիւն, քննեսցի, թէ կարասցէ՞ հերքել զհերձուածողացն հոյլս տեղեկութեամբ գրոց սրբոց։ Ապա թէ ոչ իցէ առ այս բաւական՝ դադարեսցէ, թէ և ի սրբոց իցէ։ Նոյնպէս և քահանայք ուսցին նախ՝ զբարեպաշտութեան աւրէնս վարդապետել, ապա՝ ի սպաս պաշտամանն մատիցեն։

Զկանոնական հրաման սրբոցս ծաղկաքաղ արարել՝ ի մի հաւաքեցաք իբրև զծաղիկ բուրաստանաց, դեղ ցաւալի կենաց, և իբրև զհատ ցորենոյ սերմանել ի սիրտս ձեր՝ յաճեցումն բազմապատիկ պտղոց, և իբրև զգաւազան հաստատուն ի ձեռս ձեր՝ գտանել զհուն անցից յորձանահոս դեւոց փորձանաց մեզաց, կամ խթան ընդոստուցիչ ի քնոյ երազական կենաց. զի թէ նաւավարն ի քուն՝ նաւն ծովածուփ, խաշնարածն ծոյլ՝ խաշինքն վնասակար խոտ ճարակեն, և թէ առաջնորդքն անհաստատ՝ կարգքն ընդ նոսա սայթաքին։

Ապա եթէ խարխափն անշարժ՝ շինուածն ո՛չ գահավէժ, հովիւն քաջ՝ խաշինքն ո՛չ գազանակուր, դէտն զգոյշ՝ քաղաքն ի խաղաղութիւն, զաւրավարն արի՝ զաւրքն յաղթող, վարդապետքն իմաստուն՝ աշակերտքն ուղիղ։ Վասն որոյ աղաչեմ

1 F *Սահակա* H *սրբոյն Սահակա կանոնք* 2 B *ընդանեաց* F *ոչ միայն* 8 B *Հայրապետաց կանոնք* F *ի հայրապետաց կանոնաց վասն եպիսկոպոսաց* G *կանոն* 9 F *վերակոչին յաստիճան* 12 F *թէ կարի ի սրբոց* 12 F «*հրաման հաստատեաց...*»-*ի* բնագիրն այստեղ վերջանում է, սակայն վերջաբանը բերված է շատ ավելի հետո, իսկ միևչ այդ կցված են զանազան հեղինակներից խրատական գրություններ և հարց ու պատասխաններ, որոնք չեն առնչվում նրան։ 15 F *ծաղկաքաղ* փխ *ծաղկաքաղ* 19 H *անց* 20—21 H *չիմ կամ-կենաց* 23 H *անհաւատ* փխ՝ *անհաստատ*

խոտորել ի չարէն և ընտրել զբարին, լինել աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ։ Զհոգոյն պայծառ շնորհն յոգոց ձերոց մի՛ շիջուցանէք։ Տնտեսութիւն յԱստուծոյ ձեզ հաւատացաւ, և համարս տալոց էք։ Թէ հաւատարիմ գտանիցիք, քանզարի ի Տնտէնէ ընկալայք։ Բարի և շահաւետ ծառայի նմանեցէք, զի մի՛ լսիցէք՝ «Ծառայ չար և վատ»։ Ի հարսանիս հրաւիրեցայք, մի՛ մերկ կամ աղտեղի պատմուճանաւ մտանիցէք, զի մի՛ լսիցէք զահադին զձայնն, թէ՝ «Կապեալ ոտիւք և ձեռաւք՝ հանէք ի խաւարն արտաքին»։ Այլ քահանայական զգեստիւն այն զարդարեցէք զանձինս ձեր, զոր Դաւիթ ուսուցանէ. «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն»։ Զի և ցնծութեան սրբոցն արժանի լիցիք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

ԽՐԱՏՔ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌԱՒԻՏ

Յաղագս հաւատոյ Ա։
Յաղագս մկրտութեան Բ։
Յաղագս զաղայս սնուցանելոյ Գ։
Յաղագս պահոց և խրատ ամուսնացելոց Դ։
Եթէ ազգականք ամուսնանան Ե։
Եթէ ոք կին առնու ի մերձաւորէն Զ։
Յաղագս շնութեան Է։
Յաղագս երդման Ը։
Յաղագս սուտ վկայից Թ։
Յաղագս յիշոցնաւորաց Ժ։
Յաղագս ատելութեան ԺԱ։
Յաղագս սիրոյ ԺԲ։
Վասն աղաւթից ԺԳ։
Յաղագս խոստովանութեան ԺԴ։
Յաղագս հաղորդելոյ ԺԵ։
Յաղագս ողորմութեան ԺԶ։

* *Մատթ., իԲ, 13։*

2—3 H *պայծառութիւն* 2 H *չիմ ձերոց* 3 B *չիմ բարի* 13 B *ամէն (*H *ամենս)* փխ *յաւիտեանս* 14 H *խրատ կանոնական համառաւտ յաւգուտ կանոնս* (ինչպես ենթադրել է, այս օրինակում ցանկը բերված է բնագրի սկզբում, ձեռագրի Ia էջում)։

Յաղագս պահոց ԺԷ։
Վասն անդարձ առնելոյ ԺԸ։
Յաղագս ոչ առնելոյ սուգ մեռելոյն ԺԹ։
Յաղագս քառասունք կատարել մեռելոյ Ի։
Յաղագս նուիրաց քահանայից ԻԱ։
Յաղագս չտալոյ զպատուղ քահանայիցն ԻԲ։
Եթէ ոյք են արժանի քահանայութեան ԻԳ։
Յաղագս որ չեն արժանի քահանայութեան ԻԴ։
Յաղագս քահանայութեան, որ ի սատանայէ է ԻԵ։
Յաղագս քահանայութեան, որ յԱստուծոյ է ԻԶ։
Յաղագս պոռնկորդեցն, և որ չերկրորդիցն են ԻԷ։
Թէ քանի՞ ամաց պարտ է ձեռնադրել և քանի՞ ամ կալ ի քահանագործութիւն ԻԸ։
Թէ ո՞րպէս պարտ է լինել եպիսկոպոս ԻԹ։
Թէ զոգեան չէ պարտ ձեռնադրել Լ։
Եւ ոչ զաղայ, որ զբովանդակ ուսումն չգիտէ ԼԱ։
Պարտ է Լ ամեայ լինել քահանայ, և թէ շտապ՝ ԻԵ։
Թէ չէ արժան առանց սուրբ ծածկութի պատարագել ԼԲ։
Թէ չէ պարտ անարժան հաղորդել քահանայ կամ ժողովուրդ ԼԳ։
Թէ ո՞րպէս պարտ է քահանային ամուսնանալ ԼԴ։
Թէ ոչ է պարտ քահանային ի շաբաթ կամ ի կիւրակէ պատարագոյ եկեղեցոյ կալ, բայց թէ անհնարին գործ լիցի ԼԵ։
Թէ զսուրբ միւռոնն չէ պարտ ի բժշկութիւն մարմնական ցաւոց առնել ԼԶ։
Թէ չէ պարտ ուխտի եկեղեցոյ զպահսն գինով լուծանել, կամ յուտիսն արբենալ ԼԷ։
Եթէ եպիսկոպոս կամ քահանայ կամ սարկաւագ զպահս լուծանէ կերակրով կամ գինով՝ լուծցի ԼԸ։
Քահանայ, որ զեխի գինով ԼԹ։
Թէ ամենայն ուխտ եկեղեցոյն ի հարսանիսն որպէս պարտ է լինել Խ։
Յաղագս եկեղեցականի, որ զարծաթ ի վարձու տայ ԽԱ։
Քահանայ, որ ի մեղս զառածել է ԽԲ։
Յաղագս՝ եպիսկոպոս կամ այլ եկեղեցական, որ արբենայ ԽԳ։
Յաղագս քահանայի, որ գնէ և ծախէ ԽԴ։
Յաղագս գերեզման չփորելոյ յեկեղեցիս ԽԵ։

Յաղագս պատարագի ննջեցելոց ԽԶ։
Եպիսկոպոս Լնամեայ ձեռնադրեսցէ ԽԷ։
Եւ զամենեսեա[ն] միապէս սիրեսցէ ԽԸ։
Պարտ է եպիսկոպոսին խնամ տանել ընտանե[ա]ց ԽԹ։
Որք վերակոչին յեպիսկոպոսութիւն Ծ։

ԹՈՒՂԹ ԱՌ ԻՇԽԱՆՍ ԵԿԵՂԵՑԻ ԳԱՒԱՌԻ

Հրատարակվում է առաջին անգամ։ Բնագրի համար հիմք է հանդիսացել Մաշտոցի անվան մատենադարանի № 848 ձեռագիրը։ Երկրորդ ձեռագրի տարբերությունները արվում են տողատակին։ Երկու ձեռագիրը օրինակն էլ սկզբից թերի են։ Չի պահպանվել և վերնագիրը։ Բնագիրը խորագրել ենք՝ հետևելով Ա. Սրապյանի «Հովհաննես Երզնկացի» աշխատությանը (տե՛ս էջ 15-ը)։

Ինչպես նշվել է, № 3439 ձեռագրում տեղ է գտել մի թյուրիմացություն, որը մեծ դժվարությամբ հնարավոր դարձավ բացահայտել։ Այստեղ Երզնկայի իշխաններին ուղղված նամակին կցվել են Հովհաննես Երզնկացու՝ կիլիկիայի Ռուբինյան իշխաններին գրած նամակի վերնագիրը և մի փոքր հատվածը՝ թողնելով այն տպավորությունը, թե առաջին թուղթը ևս ուղղված է Ռուբինյաններին։ Պարզելով այդ թյուրիմացությունը՝ կիլիկյան իշխաններին հղված նամակի հատվածը և վերնագիրը տարել ենք տողատակ։

Օգտագործված ձեռագրեր

A —Մաշտոցի անվան մատենադարանի 848 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԹ—ԺՉ դդ., էջ 107ա—121ա։

B —Մաշտոցի անվան մատենադարանի 3439 ձեռ., ժամանակ՝ ԺՉ դ., էջ 75բ—105բ։

[ԹՈՒՂԹ ԱՌ ԻՇԽԱՆՍ ԵԿԵՂԵՑԻ ԳԱՒԱՌԻ*]

... և արեամբն որպէս Հշմարիտ քրիստոնեայ և Քրիստոսի ծառայ՝ վկայիցն եղեալ մահակից և դաւանակից և դասակից։ Ըստ որում և ձեզ ետ Աստուած լինել ժառանգ իշխանութեա-
5 նըն, իբր արեամբ հաւր ստացելոյ իշխանութեանն։ Եւ

* № 3439 ձեռագրում կիլիկյան իշխաններին ուղղված նամակից պահպանված հատվածը, որ բերում ենք ստորև. «Թուղթ ի Յովհաննէս վարդապետէ առ իշխանսն հայոց Ռուբինեանց, որ ի գաւ կիլիկեցոցն, բան խրատու ուզտակար և պիտանի։

զձեզ ետ Աստուած՝ փոխանակ հարց, մխիթարութիւն ազգի և սիւն հաստատուն սրբոյ եկեղեցոյ և դեղ դիւրացուցիչ խոցոտեալ սրտից քրիստոնէից։

Վասն որոյ և ես նուաստս Յոհաննէս վարդապետ, հայրենի նախնեաւք ձեզ զաւառական և հոմազգի և մտերիմ սիրով հուպ և մերձաւոր սրտիւ, թէպէտ տարակացեալ տեղեաւ, վասն որոյ և արտմութեանն ձեր ազգակից եղէ, և փառաց և յաջողմանն խնդակից լինիմ։ Վասն զի, թէ էր այժմ հնար զարաւք կամ գանձիւք շնորհաւորել զաստուածապարգեւ իշխանութիւն ձեր, յոյժ ախորժի է, բայց զի բանի գոլով սպասաւոր՝ բանիւ շնորհաւորեմ և օժանդակեմ և տամ օգնութիւն փափագելի սիրելոյդ։

Աղաչեմ զքեզ և յոյժ թախանձանաւք աղերսեմ՝ լո՛ւր բանից թղթիս և ի մի՛տ առ զզաւրութիւն բանից գրոյս։

Որք եմք այսաւր ազգս Հայոց ի խնամածու և հայրանման իշխանաց։ Անտէր և անայցելու են եկեղեցիք Հայաստանեաց ի վերակացու տէրանց և չիմաստուն առաջնորդաց։

Եւ վասն է՞ր եղեն հայք անիշխան և անառաջնորդ։ Չի սովորութիւն է Աստուծոյ, որ տայ զբարիքն և, յորժամ զպատիւ մեծարանացն ո՛չ իմանան և ոչ գոհանան, հանէ՛ և առնու զիւր տուեալ բարիսն, որպէս զԱդամ՝ ի դրախտէն և զՀրեայսն՝ յերուսաղէմէ, զթագաւորութիւնն՝ ի Սաւուղայ և Յովթայ, զքահանայութիւնն՝ ի տանէն Հեղեայ, զնոյն առնէ և ամենայն ազգի։ Այսպէս և Հայոց ետ մեծ իշխանութիւն և զաւրաւոր թագաւորութիւն և, յորժամ ոչ կացին յաւրէնս

ի սուրբ լուսաւորչէն ի Գերեզմանէս և յանապատս սրբոց և յամենայն եկեղեցացս, որ ի սուրբ լերինս, աւրհնութիւն և պահպանութիւն և ի նուաստ վարդապետէ, ի Յովանիսէ, Քրիստոսի սիրովն և կարաւտեալ ողջոյն։ Եւ առ ամենախնամ գթածն աստուած աղաւթք և ազաչանք, պահել զձեզ անփորձ և անսասան կենաւք յառաջագէմ յամենայն բարիս և յաջողեալ յիշխանական պատիւ։ Ծանուցանեմ քեզ զաստուածասէր հոգի այս անուն խոհեմամիտ և առաքինասէր հոգի վարդապետիս ձեր Ստփն=(Ստեփան, Ստեփաննոս), որ այս քանի ժամանակ, որ առ մեզ էր ի սէր սուրբ Գրիգորի գերեզմանիս, նայ պատմել է զձեր բարութիւն, թէ որպէս քաջ հաւատով և սիրով, արիական սրտի պնդութեամբ, քրտամբք յոլով և վաստակաւք չանայք վասն այդ երկրիս բարութեան և հանգստեան և ի սէր ազատութեան սուրբ եկեղեցացդ»։

Այստեղ նամակը ընդհատվում է։ Է շարունակվում է նկեղեայ իշխանին գրած նամակը «Վասն որոյ և ես նուաստս Յոհաննէս վարդապետ...» հատվածից։

5 հոմազգ 7 չիf և արտմութեանն—եղէ 8 յաջողմանն ձերոյ. չիf այժմ 12 սիրոյդ 15 եմք երբեմն 23—24 առ ամենայն ազգս 24 չիf մեծ

հրամանացն Աստուծոյ և ոչ լսեցին սուրբ և իմաստուն առաջնորդացն և եղեն անիրաւք և նեղիչք երկրի, էհան Աստուած յիշխանութենէն և զրկեաց ի բարի առաջնորդացն, և մատնեցաք մեք աւար աշգաց սպանողաց, գերողաց և զառն զրկողաց։

Այլ կարծեմ և յոյս ունիմք առ Աստուած, թէ զանձրև քաղցրութեան խնամոցն իւրոց ցաւղէ իբրև ի գաւազանել տունկ յազգս և յերկիրս մեր և ի հոտոյ ջրոյ ծածկէ յառաջին արմատոյն իշխանութեանն գաւազան, որ և նշան գալարութեան շառաւեղին երևեցաւ յայդմ գաւառի, զոր օրհնեաց սուրբն Գրիգոր Լուսաւորիչ աջով սրբոյն Յովաննու Կարապետին։

Լուաք վասն քո, որ եկեղեցեաց սիրող ես և առաջնորդաց պատուաւոր, արդարադատ և իրաւարար, առաքինեաց և գիտնոց մեծարող և ընդունայր, և բիւրապատիկ գոհութիւն տուաք Աստուծոյ։

Եւ վասն զի ծանեաք, թէ յօժարութիւն ունիս ի բարին և յիմաստնոցն բանսն, յԱստուծոյ աւրինացն, ի գիտութիւնն, վասն որոյ գրեցի քեզ սակաւ մի բանք յԱստուծոյ աւրինացն և յիմաստնոցն բանից խրատ, զի լիցի որպէս գաւազան ի ձեռին և որպէս ճրագ տեսողականին։

Պարտ է գիտել իշխանին զչորս զայս բանս։ Առաջին՝ գիտել զկամսն Աստուծոյ. և ապա թէ զի՞նչ են կամքն նորա. բարին և հաճոյն և կատարեալն։ Զի այն, որ իշխան լինի, կամաւքն Աստուծոյ է, զի պարտ է, որ ումն իշխան լինի, և ումն՝ ընդ իշխանութեամբ։ Եւ թէ ինքն, որ իշխանն է, զհրամանքն Աստուծոյ պահէ, նա բարի իշխան է։ Եւ թէ որք ընդ իւր իշխանութեամբն են, յօրէնսն Աստուծոյ պահէ զնոսա, նա բարի է և հաճոյ Աստուծոյ և կատարեալ։ Ահա այս է նշանն, որ ճանաչեն, թէ յԱստուծոյ է իշխանութիւն նորա և հաճոյ է նմա։

Երեք իրաւք լինի իշխանութիւնն Աստուծոյ, որ տայ, և յառողին, որ պահել մարթէ, և ի բնակչաց երկրին, որ հաւանին իշխանին։ Յորժամ այս երեք ի մէկ տեղ գան, այն յԱստուծոյ դրած իշխան է։

4 չիf մեք։ 7 չիf քաղցրութեան 15 չիf և գիտնոց մեծարող 17 չիf Եւ վասն զի ծանեաք թէ 19 չիf քեզ. բանք խրատ. 20 չիf և յիմաստնոցն բանից խրատ 24—25 իշխան է կամօքն 27 Եւ որք 30 չիք նորա 33 որ առնու և պահել

Զով Աստուած իշխան դնէ ի հաճոյ լինի, երեք իրաւք փառաւորէ՝ զդէմք երեսացն, զխաւք լեզուին, զանուանն առ լսո[ղ]ն։ Զդէմ երեսաց նորա ահարիւ լինի և պատկառելի, խաւսաւք՝ յորժամ բանն և հրամանքն զարտաւոր լինի և բանի, անուամբ՝ յորժամ լսուղքն հարկին յանուանէն և պատուեն։

Եւ թէ ո՞րպէս այս լինի. սուրբ կենաւք վարիլն զերեսն փառաւոր առնէ, ճշմարիտ և ուղիղ խաւսքն զբանն պատուելի առնէ, որպէս յատակ արծաթ, որ ունի զանուն և զգիր թագաւորի, պատուի, և որ խառնէ ևս քան սուտ անարգի և մահ բերէ։ Իսկ գիտութեամբ և իմաստութեամբ վարել զիշխանութիւն, բաւամբք և արդարութեամբ, զանուն փառաւոր և բարեհամբաւ առնէ, որպէս գիտուն բժիշկ, որ գործով է իմաստուն և ոչ սոսկ անուամբ միայն։

Զայսպիսի իշխանս սիրեն իւր հնազանդեալքն վասն երեք իրաց՝ ի բնութենէ, ի հարկէ, ի կարեաց։ Ի բնութենէ՝ որպէս որդիք զբարի և զգթած հայր, ի հարկէ՝ որպէս աստուածադիր իշխան, ի կարեաց՝ որպէս զիրաւարար և զարդարադատ։ Եւ որպէս բժիշկն հիւանդին է աւգտակար, նոյնպէս և բարի իշխանն՝ երկրին։ Երկիր և քաղաք այն մնայ ի շինութիւն, յորժամ իշխանայքն Աստուծոյ աւրինացն հնազանդին, և քաղաքն և երկիրն՝ իշխանացն։

Իշխանացն զորդութիւնն և իրաւունքն հոգի է աղքատաց։ Եւ քաղաք և երկիր, որ ոչ գոյ իրաւունք և դատաստան, մեռած են, և ելած է հոգին։

Ոչ է պարտ իշխանին զինեսէր լինել և արբեցող, զի գինին և արբեցութիւնն, գուսանն և խաղն ամենայն մարդոյ վնասէ և առաւել քրիստոնէին կարի անմաման է և անպատեհ։ Եւ աւելի վնաս պարոն մարդոյն է և իշխանին։ Զի որք անիմաստութեամբ ընդ այս են սովորել իշխանք, իւրեանց փառք հարկիք գիտեն, բայց հոգւոյ և մարմնոյ և տան և հարկեաց և անուան կորուստ է։

Լուիցէ սիրողն այսոցիկ յԱւետարանէն, յորժամ Հերովդէս թագաւորն իւր իշխանաւքն զգինարբուսն արար, և զդուստրն Հերովդիադա խաղաց, թէ զի՞նչ կորուստ գործեցին։

1 Զոր 2 զանուն նորա 4 չիf յորժամ 13 չիf ոչ 23 չիf և իրաւունքն 32 յաւետարանէն որ ասէ

Գինին ընդ բերանն արբեցոյց, և գուսանքն ձայն ընդ ականջն և խաղին տեսն ընդ աչքն։ Եւ յերէք կողմանց որպէս գետեղ մտեալ, տարաւ զերկիւղն ի սրտէ, զիմաստութիւնն՝ ի մտացն, զամաւթն՝ յերեսացն և մեծի մարգարէին և կարապետին Յովաննու սպանող եղեն։ Որ Աստուծոյ և իւր սրբոցն ընկերի կամի լինել, նայ առեցաւղ թող լինի արբեցութեան և գուսանի և բոզի։

Չորս մեծ վնաս գործէ գինին, ու այն չորսն այլ բազում վնաս ծնանին ևս առաւել առ իշխանսն։ Վասն զի պարտ է իշխան մարդոյն արի լինել և ժիր, և գինին դանդաղկոտ առնէ և հեղգ։ Եւ իշխանն արթուն պիտի, որ զիշերն հոգայ և խորհի զաւուրն բանն, իսկ գինին քուն ածէ և խափանէ։ Եւ մեծ պարոն մարդոյն յիշողականն սուր պիտի, և գինին մոռացկոտ առնէ։ Իշխան մարդն զգայուն պիտի, և գինին զգայարանք պակասեցնէ և այլ բազում չարիս գործէ։ Զի արբած մարդն նման է նաւի, որ կոտրի ի ծովն և զամենայն բարիսն ընկղմէ։ Վասն որոյ աղաչեմ՝ զպահոցն գինոյ խմելն կտրէ ի քո երկրէդ, որ չխմեն, և ուտեացն պարկեշտ և չափաւոր խմեն, որ չարբենան։

Զբարեգործն և զիմաստունն և զառաքինի և զհաւատարիմ մարդն սիրէ և պատուէ և մեծարէ։ Զի որ զբարի մարդ վիրաստէ, երկու մեծ մեղք գործէ՝ զնոսա ի բարի առաջարկութենէն վերջացնէ և երկրորդ՝ զի զայլսն ի նոյն բարի նախանձութենէն արգիլէ։

Եւ որ զչարագործ մարդն սիրէ, զմատնիչն, զրկաւղն, զանիրաւն՝ երկու մեծ վնաս գործէ. մին, որ չար մարդիքն ի ղշղումն չգան և երկրորդ՝ զի այլք այլ զնոյն չարն և զանիրաւութիւն գործեն, և փոքր մի խմորն զամենայն զանգուածն խմորէ։

Ի քո երկիրդ ուսման տեղ սահմանէ և դպրատուն, զի ուսումն և գիտութիւնն զհաւատքն հաստատուն պահէ և զազգն՝ իմաստուն։

Իշխանին չէ՛ պարտ, որ վասն կաշառաց զԱստուծոյ դատաստանն և զիրաւունքն թիւրէ։ Եւ ոչ թէ արծաթն է

6 չիf թող 8 անդ փխ այն. մեծ փխ բազում 10 չիf մարդոյն 13 չիf պարոն իսկ փխ և 14 առնէ և յիշողութիւն պակասեցնէ. չիf մարդն 14—15 զգայութիւն 16 նման է բեկած. չիf կոտրի ի ծովն և 18 չիf ի քո երկրէդ որ չխմեն. չիf պարկեշտ 19 չիf խմեն 20 զառաքինի և զիմաստուն 27 չիf այլ 30 չիf զի 32 և յազգն իմաստուն և հաստատուն պահէ որ և աճի և զաւրանայ 34 չիf թէ

միայն կաշառաք, այլ թէ վասն երեսաց հարկի կամ շողոքորթի և ի գովելի բանից պատրի, կաշառք է և անուանի։

Մեղքն մաշալ և աւերող է աշխարհի, և բարի իշխանն՝ սորին տուալ և կանգնալ է և հաստատուալ, որպէս մարգարէն Դաւիթ ասաց. «Մաշեցաւ երկիր և ամենայն բնակիչք նորա, ես հաստատեցի զսիւն նորա, և որպէս հաստատեաց, ասացի անաւրինաց, թէ մի՛ անաւրինիք»*։ Զի իշխան, որ զմեղքն և զանիրաւութիւնն բառնայ յաշխարհէ, նայ սիւն երեսն և կանգնեաց զաշխարհն։

Արար Աստուած զմարդն հոգի և մարմին և զարդարեաց յիւր նմանութիւն պատկերին, և զմիտքն հոգւոյն աչք արար և զաչքն՝ մարմնոյն ճրագ։ Մարմնոյն աչաւքն զերևելի երկրիս գեղեցկութիւնն տեսանէ, և հոգոյն աչաւքն զԱստուծոյ հրամանքն տեսանէ, որ լոյս է և զհոգին լուսաւորէ։

Զինչ յերկիրս բարի կա, որ մարդն վայելէ, հինգ իրք է. կամ աղուոր գոյն է, որ աչքն տեսանէ, կամ անոյշ ձայն է, որ ականջն լսէ, կամ անուշ հոտ է, որ քթովն իմանայ, կամ քաղցր համ, որ բերանովն ճաշակէ, և ձեռաւքն իմանայ զպինդն և զկակուղն, զծանրն և զթեթեւն։ Յայս հինգ իրացս ի զատ իրք չկայ։

Հանց տես զմարդոյն մարմինն, զինչ քաղաք մի պարսպով և հինգ դուռն ի վերայ՝ մէկ դուռն աչքն, մէկ ականջն, մէկ քիթն, մէկ բերանն, մէկ ձեռքն և ոտքն, որ է շաւշափելիքն։

Ամենայն չար և բարի յայս հինգ դրունս մտանեն և ելանեն։

Հոգին բնակիչ է այս քաղաքիս։ Մարդոյն բարի գործքն գանձ է յայս քաղաքիս և ակունք և ճօհար։ Միտքն թագաւոր է և այս գանձիս պահնորդ։ Սատանայ և դևքն չարկամք են, որ զքաղաքն առնուն և զհոգոյն բարին, որ է գանձն, գողանան։

Եւ դու զմիտքդ ի վերայ կալ և զմեղաց խրատն յականջդ մի՛ թողուլ։ Թէ առաջին մայրն մեր Եւան զաւձին խրատն յականջ չէր թողել՝ չէր խաբուել։

* Սաղմ., ՀԹ, 4—5։

2 գովել 6 չիf նորա և որպէս հաստատեաց 20 իրք չկա որով կատարէ թէ բարի է եթէ չար 23 չիf որ է շաւշափելիքն 28 պահնորդ իսկ. որ գայս 29—30 գողանան որ է գանձն այս քաղաքիս

Զինչ աւտար իրք տեսանես, աչաւքս մի՛ ցանկար։ Թէ չէր աչաւքն տեսել զպատուղն և ցանկացել գեղեցկութեանն՝ չէր կերել։

Զեռաւքս ի մեղք մի՛ խաբուիր։ Թէ չէր ձեռաւքն զպատուղ շոշափել, չէ՛ր հեշտացել և կերել։

Զբերանդ աւելորդ ուտելոյ կամ խմելոյ կամ պղեղուտ մաշում խաւսից մի՛ տար։ Թէ պահել էր զբերանն առաջին մարդն, չէր ի փառացն մերկացեալ և ի դրախտէն ելեալ և ի ներքո դատապարտութեան և անիծից անգեալ։

Զայս գիտենալ պիտի, որ սատանայն աւձն է, որ զնեայ խաբեաց և այժմ զամենայն մարդ չանայ խաբել ընդ այս հինգ դրունս։ Զմարդն իմաստուն պիտի, որ փակէ զականջն դրոց խրատով, զաչքն՝ յարատ հայելոյ, զլեզուն՝ ի չար խաւսելոյ, զձեռքն՝ ի գրկելոյ, զոտքն՝ ի պիղծ ճանապարհ գնալոյ։

Այլ և լեզուովն բարի խաւսել և ձեռաւքն ողորմութիւն առնել և յաղաւթքն աշխատիլ։ Եւ այսցեղ պահուի քաղաքս մեր, և գանձն անվնաս մնայ ի թշնամոյն։

Զորս իրք կայ, որ զմարդն ի մեղաց պահեն և ամենայն բարոյ գլուխք են։ Մարդն թող զիւր մեղքն իսկի չմոռնայ և զայլոց մեղք իսկի չհոգայ, և զինչ գործէ, թող մաւտ ի յինք տեսնու զԱստուած և զմահուն աւրն թող ի միտքն պահէ։ Եւ այն մարդն, որ զիւր մեղքն չմոռանայ, խոնարհ կենայ, և որ զայլոց մեղք չքննէ, Աստուած զիւրն չյիշէ։ Եւ որ զԱստուած մաւտ ի յինք տեսնու, իսկ[ի] մեղք չառնէ։ Որ զմահն զմտաւ ածէ, նա յայս կեանքս աւելի տամահ չտանի։

Ի չորս իրաց վախել պիտի ու մեղք չառնել։ Մէկ յայն աւրէն, որ հոգեվարք լինի, և երբ առջև Աստուծոյ տանին և երբ գործոցն պատասխանի ուզեն։ Ու մէկ այն, որ քան զմեզ յառաջ է մեռել և գնացել է տրտմին վասն մեզաց մերոյ։

Զորս իրք կայ դժար, որ առանց մեր կամաց պիտի լինի՝ հիւանդութիւնն և ալևորութիւնն, մահուն աւրն, յԱստուծոյ դատաստանն երթալն։ Այս չորս իրքս, թէ կամինք թէ ոչ, պիտի լինի։ Յայնց պիտի չանալ, որ ինչ ի մեր կամաց լինինք, զբարին գործենք։

Գրեմ քեզ խրատ իմաստութեան. տես զմարդոյն ստեղ-

4 չիf ի մեղք. չիf զպատուղ 8 չիf և ի դրախտէն ելեալ 17 գանձ հոգոյ 22 չիf մարդն 24 իսկի նայ մեղք չգործէ 25 չիf աւելի 30 մէկ քան զմէկ դժար 33 ապա հանց

ծումն, թէ ի՞նչ իմաստութեամբ է արարել Աստուած։ Թանձր մսով մարմնոյ զարիւնն է բռնել, և արիւնովն զշունչն է բռնել, ու շնչովն զհոգին է բռնել և հոգովն՝ զմիտքն։ Այսոք ընդ իրար շարել են և միաւորել՝ միտքն ի վեր Աստուած և մարմինն ի վայր յերկրիս։ Յորժամ միտքն յԱստուած հայի և հետ Աստուծոյ հրամանացն երթայ, զհոգին և զշունչն և զարիւնն և զմարմինն հետ իւր տանի և երկնաւոր առնէ, թէպէտ մարմնովն յերկիրս լինի, բայց մտաւքն և հոգւովն յերկինս է։ Ապա թէ մարմնովն հետ երկրիս երթայ, նա զմարմինն, զարիւնն և զշունչն և զհոգին և զմիտքն յերկիր քարշէ և լինի երկրաւոր, որպէս զանասուն։ Զոր աւրինակ հայելի է երկու երեսի, որ մէկ երեսն ի վեր լինի և մէկն ի վայր, այսպէս մարդոյն հոգովն հոգեղինացն է նման, և մարմնով՝ հողեղինացն, ում իւրն պիտի՝ այնոր նման լինի։

Մարդ որ իմաստուն է, վասն անցաւոր կենացս չանկանի յերկնից ի վայր երկիր և լինի նման անասնոցն։

Հոգի և մարմին արար Աստուած զմարդն, և մարդոյն գանձն և մեծութիւնն իւր մարմնոյն ծառայ է, և մարմինն հոգւոյն ծառայ է, և միտքն ամենին թագաւոր է։ Զմարմնոյն պէտքն հանդերձ հոգա, որ զհոգին չյաղթէ և իւր ծառայ առնէ։ Թէ զմարմինդ աւելի ուտելով և խմելով ուժ[ո]վցնես և աղտուր հանդերձիւ զարդարես և ի փափուկ անկողին հանգցնես, նայ զհոգի ծառայ տուեր մարմնոյդ։

Երեք իրք կայ ի մարդոյն հոգին. մէկն բանականութիւնն է, մէկ սիրտ ելնելն է, մէկ՝ ցանկալն։ Զինչ որ սիրէ բանականութիւնն, սրտմտութիւնն, ցանկութիւնն, կշռով պիտի արդար։ Թէ բանն, որ է իմաստութիւն, աւելի խորու լինի, նեն[գ]աւոր է, և թէ պակաս է, նայ չանմիտ է և տխմար, թէ հաւասար է՝ արդար է և իմաստուն։ Նոյնպէս և սիրտ ելնելն, թէ աւելի է և խիստ՝ յանդու[գ]ն է և լիրբ, թէ պակաս է՝ վախկոտ է և թոյլ, թէ հաւասար միջակ է՝ արի է և ժիր և մանուկ սիրտ։ Այսպէս ցանկութիւնն, թէ մարմնաւոր իրաց խիստ ցանկայ՝ երկրասէր է և մեղասէր, թէ զամենայն

2 զշունչն է կապել. զհոգին է արգելեր 8 յաշխարհս փխ յերկիրս յերկինս է լինի. աշխարհիս փխ երկիրս 9 երկինս է լինի. աշխարհս փխ երկրիս չիf զմարմինն 21 ըմպելով 23 ահայ փխ նայ էտուր 24 չիf մարդոյն 26 չիf ցանկութիւնն. հշռով լինել. 27 հաւասար փխ արդար 28 չիf նայ։

ցանկութիւն ի հոգևորն դարձցնէ, մարմնոյն սպանաւղ է, և թէ կշռով ի մէջ պահէ, զմարմինն յիւր չափն և զհոգին յիւր փառքն, նայ խիստ բարի է։

Այս երեք լաւ իրքս մարդոյն հոգոյն պիտի՝ արդարութիւն, ազատականութիւն, մեծահոգութիւն։ Արդարութիւն այն է, որ զԱստուծոյ աւրէնքն ի տեղն պահէ և զմարդութեանն սահման՝ յիւրն, զհոգին սրբութեամբ պահէ և զմարմինն՝ չափաւոր։ Զամէն մարդ յիւր արժանն մեծարէ, յիւր խաւքն ղորդ լինի։ Զինչ խոստումն առնէ, ի բարին կատարէ։

Ազատական մարդն այն է, որ յաւժարութեամբ տայ յիւր ընչիցն ի հարկեց տեղ և ի հոգոյ, և ուզնական լինի զրկելոց, և չառնու ինչ յայնտեղացն, որ չէ պատեհ։ Եւ յերկրիս դնացքն ազատ այնոր ասեն, որ հանդերձն պայծառ լինի, և տունն՝ գեղեցիկ շէնք, և տանն անաւելքն՝ պատուական, և ամէնն՝ յիւր հալալ արդեանցն։

Նոյնպէս և հոգւոյն պայծառութիւն պիտի և գեղեցկութիւն և պատուականութիւն։ Եւ մեծահոգի մարդ այն է, որ թէ բարեբախտութեան հանդիպի, այնոր հաւբերէ և թէ վատաբախտութեան՝ այնոր, ընդ իշխանութիւն կամ երբ յաղթէ թշնամե[ա]ց՝ չհպարտանայ և զարմանայ յիւր միտքն, և ոչ ի յաղքատանալն և ի տկարանալն կամ ի յաղթիլն աւելի տրտմի։ Որ զայս ճանապարհս պահէ՝ մեծահոգի է։

Չորս իրք կայ յաշխարհս, որ մարդոյն հարկիք բերեն՝ պատկերին գեղեցկութիւնն, անձին զաւրութիւնն, որ է ուժն, ընչից հարստութիւնն և իմաստութիւն խելացն։

Յայս չորս իրացս երեքն փոխին։ Պահ մի լաւ լինի, պահ մի վատ, բայց իմաստութիւն խելացն լաւ է, զի այն երեքն անցաւոր են, և իմաստութիւնն՝ անմահ։ Եւ որ իմաստուն է, բարեգործ է և աստուածապաշտ։ Այս երեք իրքս՝ գեղեցկութիւն, զաւրութիւն, մեծութիւն, թուր են ի մարդոյն ձեռն, թէ իւր պիտի՝ զինքն սպանանէ, թէ իւր պիտի՝ զիւր չարկամն։

---

3 A չիf խիստ բարի է 4 Այս երեք իրքս հոգոյն պետք է 7 արդարութեամբ 11 չիf յիւր 15 արդեանցն լինի 17 պատուականութիւն և գեղեցկութիւն որ սուրբ Աստուծոյ հանգչի ի հոգի նորա Աստուած 20 թշնամեաց նայ 21 չիf աւելի 26 փոփոխական է. երբեմն լաւ լինի և երբեմն վատ 27 զի եւ մահուանն 28—29 չիf բարեգործ է և

Որ զգեղեցկութիւնն մեզաւք շաղախէ և զաւրութիւնն ի չարն ի գործ ածէ և հարստութեամբն անիրաւութիւն առնէ, նայ իւրով սրտմն զինքն էսպան։ Ապա թէ զգեղեցկութիւնն Աստուծոյ տայ և անշաղախ պահէ և զուժն ի գործ ածէ և զհարստութիւնն իրաւամբ վայելէ և յԱստուծոյ պատեհն և ի կարաւտելոց ընձ[ծ]այէ՝ նայ զիւր չարկամն էսպան, զսատանայ, որ բարւոյն է հակառակ։

Վասն չորս իրաց Աստուած մեծութիւն տայ մարդոյն և պարոնութիւն. մէկ՝ թէ բարի մարդ է, ընդրկ Աստուած և տայ իւր ձեռն մեծութիւն, որ կարաւտելոց և սրբոց և այրե[ա]ց և անտիրաց զիրդ հայր լինի և ի յերկրիս շինութիւնն ի պէտք ածէ և այս կենաւքս զայն կեանքն շահի։ Զոր աւրինակ, թագաւորք ընտրեն զլաւ մարդն և ի հարկեց բանն դնեն։ Եւ չար մարդոյն վասն այնոր տայ Աստուած մեծութիւն, որ պատասխանի չունենայ ի դատաստանի աւրն և ասէ, թէ՝ իմ ձեռս ի՞նչ տուեալ էիր, որ ես կարէի բարի գործել։ Եւ մէկ այլ այնոր համար տայ Աստուած վատ մարդոյն մեծութիւն, մի-թէ այն իրաւքն յԱստուած դառնայ և ասէ, թէ՝ զայս մեծութիւնն ես ինձ, ես նորա պատուիրանն պահեմ, զի և այլ ևս տացէ յայս կեանքս և անդ՝ զկեանսն յաւիտենից։ Զինչ մէկ մի, որ տխմար տղայ մի ուզէ, որ ընդելցնէ և սովորեցնէ, որ չինքն գայ խնձորով կամ այլ ազուր իրաւք։ Եւ մէկայլն այս է. լինի մարդ, որ իւր ամէն գործքն չար է, և մէկ իրք բարի լինի գործել, նայ տայ Աստուած իւր մեծութիւն յայս կեանքս և զիւր բարին վճարէ, որ յայն կեանքն չունենայ այլ ակն բարոյ, զինչ յԱւետարանն է գրած մեծատունն Ղազարոս։

Եւ վասն չորս իրաց լինի աղքատութիւն. մէկ այն է, որ զկէս մի աղքատ արար Աստուած, որ զարքայութիւնն մեծատանցն վաճառեն, զի որ աղքատին ողորմի, Աստուած զայն իւր ի փոխ համարի և ինքն վճարէ, որ ողորմածն է։ Եւ մէկ այն է, որ զինչ զոսկին կրակով փորձեն, թէ լաւ է, թէ վատ, նոյնպէս և Աստուած աղքատութեամբն փորձէ զմարդն, թէ լաւ է, թէ վատ։ Թէ համբերաւղ է, նայ այն կեանքն տայ

---

9 աստուած ընդայ 13 Եւ երկրորդ 20 անդ տայ 21 ընտելցնել խնձորով և այլ իրօք որ չինք դառնայ 23 չիf որ իւր 27 չիf վասն

Աստուած իւր երկնաւոր մեծութիւն, և յայս կեանքս այլ մարդկանցն բարի աւրինակ լինի։

Եւ մէկ այլն այն է, որ զլաւ մարդն, որ մեծութիւն ունի, Աստուած աղքատացուցանէ և այնիւ փորձէ, թէ վասն իրացն կու սիրէ զԱստուած, թէ յաղքատութիւն այլ նոյնն է, նայ աստուած երևցնէ զայնցեղ մարդոյն բարեգործութիւնն, որպէս զՀոբայն։

Եւ մէկ վասն այն, որ լինի աղքատ, որ թէ ամէն գործքն բարի են, և մէկ մեղք է գործել, նայ վասն այն մի մեղացն չարչարէ, որ այն մին մեղքն քաւին, և երբ յայն կեանքն երթայ, նայ սուրբ է և արդար, ժառանգէ զերկնային արքայութիւն։

Երկու իրք Աստուած Ադամայ որդեացս աւելի է տուել, որ ո՛չ հրեշտակքն յերկինքն ունին և ո՛չ այլ ստեղծուած յերկիրս, բայց միայն մարդս, զի զինչ որ մեղք գործէ, երբ դառնայ ի մեղաց և ապաշխարէ, թողութիւն գտանէ։

Եւ մէկ այլ այն է, որ երբ մեռնի, ի այլ վայր յարութիւն ունի։ Հրեշտակքն, թէ մեղք գործեն, այլ թողութիւն չկայ, զերդ սատանայի, որ չեղաւ թողութիւն։ Վասն այնորիկ չկա թողութիւն, որ մարմին չունին, որ ապաշխարեն։ Եւ զինչ յաշխարհս կենդանի կայ, յետ մահու այլ յարութիւն չունին։ Բայց մարդն թողութիւն մեղաց գտնու՝ վասն մարմնոյն տկարութեան, և ի մեռելութենէն յարութիւն ունի՝ վասն հոգւոյն անմահութեան։

Երբ Աստուած զԱդամ ստեղծեաց և ի դրախտն էդիր, քանի զԱստուծոյ հրամանքն պահեց, ո՛չ ի մարմինն հիւանդութիւն կայր և ո՛չ ի հոգին մեղք։ Եւ երբ յԱստուծոյ հրամանացն ելաւ, նայ մեղքն ի հոգին գտաւ տեղի։ Եւ երբ ի դրախտէն ելաւ, հիւանդութիւնն ի մարմինն գտաւ տեղի և ապա մահն։ Նայ ողորմածն Աստուած հոգւոյն և մարմնոյն դեղ հրամայեաց։ Զինչ որ ծաղիկ կայ, յամէն մէկ Աստուած իրք մի զարմութիւն է տուել, որ ցաւի մի դեղ լինի. ամ թէ մարմնոյն դեղ պիտի և հաքիմ, որ հաքմին ասէ զցաւն, նա

1—2 այլ բարի մարդկաց աւրինակ լինի 8 չորրորդն՝ փխ մէկ 9 մէկ մեղքն չար է գործել 14 շիf յերկինքն. 14—15 շիf, երկիրս 15 շիf որ 18 երբ փխ թէ չունի փխ չկա, 19—20 շիf չկա թողութիւն 32 եւ շիf մի

գտանի դեղն։ Ապա հոգոյն, որ Աստուծոյ պատկեր է, է՞ր չլինի դեղ կամ հաքիմ։ Մեղուցեալ մարդն հիւանդի նման է, և պիտուն քահանայն լաւ հաքիմ է։ Մեղուցեալն զմեղքն խոստովանի, նայ քահանայն զդեղն ասէ։ Երբ զքահանային զխրատն առնեն, զմեղքն Աստուած թողու։ Եւ աւրինակ մի քեզ այլ. զինչ որ հաքիմ մի հիւանդ լինի ինքն, բայց երբ գիտուն է, նայ շատ հիւանդաց դեղեր առնէ, նոյնպէս և քահանան թէպէտ և մեղաւոր լինի, բայց դեղն, զոր ասէ, այլոց աւգուտ գործէ, յաւրժամ գիտուն լինի։

Որ հաքմին զիւր ամէն ցաւն չասէ, դեղ չլինի, յանց որ զմեղքն զամէն ոչ խոստովանի, թողութիւն չգտանէ։ Որ հաքմին չլսէ և փահրէդ կենայ՝ ցաւն շատնայ, որ խոստովանահաւրն չլսէ և ի մեղացն չկո[րի]՝ մեղքն շատնայ։

Մարդ որ ամէն պատկերն գեղեցիկ լինի և մէկ տեղի յինք խոռ կենայ՝ կամ աչքն, կամ ականջն, կամ ձեռն, կամ այլ տեղի, նայ զանունն յայն տեղացն ձայնեն՝ կամ կոյր ասեն, կամ խուլ, կամ կաղ, թէպէտ ամեն տեղի լաւ լինի։ Նոյնպէս հոգին է, թէ յամէն մեղաց սուրբ լինի և ի մէկ մեղաց չպահէ զինքն, նայ զայն մեղացն անունն տան՝ կամ գող, կամ զրկող, կամ շնացող, կամ զինչ լինի, նայ այն մէկ մեղքն զշատ բարի անունն ծածկէ։ Զոր աւրինակ քիչ մի աւշնդր զշատ մեղրին համն աւրէ, և փոքր մի քացախ զամէն կարասն քացախ առնէ։

Ի թագաւորին աշխարհն, յորտեղ լինի մարդն, ի ներքոյ թագաւորին հրամանացն է, բայց որ զերեսն ուզէ, որ տեսնու՝ յիւր դարպասն երթայ։ Նոյնպէս մարդն, յամենայն երկիրս, յորտեղ լինի կամ յոր աղաւթք առնէ, ընդ Աստուծոյ իշխանութեամբն է։ Բայց որ զԱստուծոյ երեսն ուզէ, որ տեսնու՝ յիւր դարբասն երթայ՝ Աստուծոյ տունն, որ է եկեղեցին։

Մարդ, որ զիւր պարոնն անարգէ կամ զիւր թագաւորն՝ մեռանի։ Եւ որ զԱստուած անարգէ, սուտպապէս մեռանի, կամ յայս կեանքս պատուհասի, կամ յայն։ ԶԱստուած այլ ո՞վ անարգէ, քան յիշոցնատուն։

1 հոգին 2 շիf դեղ կամ 2—3 շիf Մեղուցեալ մարդն հիւանդի նման է և պիտուն քահանայն լաւ հաքիմ է 5 առնեն նայ 6 թէ փխ երբ 15 ոտքն փխ ձեռն 16—17 կամ կոյր, կամ զրկող, կամ կաղ, կամ խուլ, թէպէտ ամեն տեղի լաւ է 20 գող ասեն 22—23 և փոքր մի քացախ խառնէ կարասն որ զամենն քացախ կանէ 27 յոր փխ յորտեղ, շիf առնէ 31 անարգէ. ո՞նց չմեռանի

Ի դրախտ մի շատ ցեղուցեղ տունկ լինի, ի մէկ հող տնկած են և մէկ ջրով սնանին, բայց դրախտին տէրն յամէն ծառէ զիւր պտուղն ուզէ։ Նոյնպէս դրախտ է եկեղեցի Աստուծոյ, և քրիստոնէքն տունկ են և ամէնքն զմի հոգի են առել յաւազանն, բայց պտուղ այլ և այլ խնդրէ Աստուած, այլ պտուղ՝ ի քահանայէն, այլ՝ ի թագաւորէն, այլ՝ յիշխանէն, այլ՝ ի դատաւորէն։

Իշխանի և դատաւորի պտուղ այս է՝ զդատաստան անկաշառ առնել և հարստին երես չառնէ, այլ զղորդն ղորդ առնէ։

Սուրբ մարդկացն աղաւթքն ու ղորդ-դատաստանն զերկիրն չէն պահեն։ Յորժամ այս երկու իրքս յերկիրս չլինի, երկիրքն անցնի։

Երբ ուզէք, որ քաղաքի դատաւոր դնէք, զայսպիսի մարդու ընտրեցէք, որ իւր խելքն իւր իշխան է և զիւր կեանքն մարթենայ վարել և զիւր բարքն զարդարել։ Այնցեղ մարդն տուն մի կարէ ածել ի շահ։ Եւ որ տուն մի ի սահման և ի կարգ կարէ պահել, զկին և զորդիք, զմշակ և զծառայք, այն մարդն քաղաք մի այլ կարէ ի սահմանն պահել։

Խելաւքնին զլաւ մարդն երեք իրաւք ճանաչեն՝ երեսին կերպարանն, ի լեզուին խաւսքն և ի գործքն։ Յառաջ երեսն հայիւն, նայ երեսն սրտին հայելին է։ Հետ այնոր զխաւսքն ճանաչեն, որ ի սրտէն յառաջ գայ, և ապա գործոցն միտ դնեն, թէ հետ ինչ մարդկաց կու շրջի, նա զայնոց գործքն ուսանի։ Այսով ճանաչի վատն և լաւն։

Զորս իրաւք մարդոյն տունն շէն մնայ. յորժամ միամիտ լինի յիւր հալալ կնոջն վերայ, և սէր կալնու յորդեցն վերայ և Աստուծոյ յերկեղիւն սնուցանէ, զճորտերն և զծառայքն յիւր հրամանքն պահէ, և իւր տանն ելն ու մուտն չափաւոր լինի։ Եւ ելն ի մտոցն վերայ լինի։ Թէ մուտն շատ է, և ելն՝ քիչ, խոզ է և անմարդի, թէ մուտն քիչ է, և ելն՝ շատ, անառակ է և վայրապար մսխաւղ։ Ապա զելն ու մուտն հաւասար պահել՝ խելաւք մարդոյ գործ է։

Իշխանին երեք իրք պիտի. մէկն այն, որ զբնութիւնն հետ ժամանակին սահմանէ, զինչ ժամանակն լինի, զիւր բնութիւնն յայնոր վերայ ղորդ է։ Ու մէկ այս է, որ գիտենայ, որ

16 Այն ցեղ մարդոյն որ 23 A չիf գայ 24—25 զայնոր գործեն ուսանի։ աղեկն և վատն 26 կենայ 29 չիf յիւր հրամանքն պահեն 32 չիf ապա

այնոք, որ դիմադարձք են, համարձակութեամբ և քաջութեամբ հանդիպի, և երբ այս չբանի, նայ սիրով և ողոքանաւք և տուրք տալով, բայց զտեղն ընտրէ, թէ յայս երկուացս ո՞րն պիտի։ Եւ մէկ այլ այս է. մարդ, որ իր ձեռացն ներքև լինի և իւր դիմահայեց, հետ այնոց բարէմիտ լինի և կամենայ, որ ի հաց և ի յաղրանք հասնին։

Իշխանին երեք իրք զմտաւ պիտի ածել, որ անիրաւ բան չառնէ. մէկ այս է, որ գիտենայ, թէ այնոք, որ ընդ ձեռամբ նորա են, մարդիկ են ստեղծեալ յԱստուծոյ ի միջէ զանգուածոյ, իբրև զինքն, և չունին ինչ-որ պակասութիւն, բայց միայն զիշխանութիւն։ Երկրորդն այս է, որ գիտենայ, թէ ինքն ընդ իշխանութեամբ Աստուծոյ է։ Երրորդ, որ գիտենայ, թէ ինքն չէ միշտ իշխան, այլ անցաւոր է։ Որ զայսաւք ի մտի պահէ, նայ անիրաւ գործ չառնէ։

Երկու իրաւք քաղաքն շէն լինի. յորժամ քաղաքացիքն իւրեանց իշխանացն հնազանդ լինին, և իշխանքն՝ Աստուծոյ ապրինացն։

Ղորդ դատաստանն աղքատացն հոգի է. զինչ մարմինն, որ հոգի չունենայ, մեռած է, նոյնպէս և քաղաք, որ չինք իրաւունք և ղորդութիւն չկենայ, զիա՞րդ կարէ շէն մնալ։ Անիրաւ և ծուռ դատաստանն սարդի ոստանի նման է, որ ղճանճն և զմժեխն կարէ բռնել, իսկ պիծակ և մեղուն պատառեն և ելնեն։ Նոյնպէս և անիրաւ ապրէնքն զաղքատն և զանկարն հանդիպին, իսկ մեծամեծքն և հարուստն պատառեն և ի դուրս ելանեն և ոչ հնազանդին։

Ի կռուոյ ժամանակ երկաթ լաւ է, քան զոսկին. նոյնպէս յայս կեանքս, որ պատերազմ է, խելքն և իմաստութիւնն լաւ է, քան զգանձս բազումս։

Ո՛չ զմանուկ ձի և զքաջասիրտ առանց լկամի կարեն բռնել և ո՛չ զմեծութիւն և զհարստութիւն առանց խելաց կարեն ի հաւան ածել և յաւգուտ։

Սեղան առանց հացի անաւգուտ է, և մեծութիւն՝ առանց իմաստութեան. ոչ կայ հեշտութիւն ինչ և քաղցրութիւն։

Ոչ թէ ձի զայն գովեն, որ ոսկի թևով է սարքն, թամքն և լկամն, այլ որ ազնիւ է և քաջասիրտ։ Նոյնպէս և մարդոյն՝

3 երկրաւորացս 5 նա փխ հետ։ 11 չիf ընդ 16 ապրինացն հնազանդ լինին 26 կուով ժամն 27 չիf խելքն 30 չիf և ոչ զմեծութիւն

ոչ թէ ոսկին և արծաթն, որ պատուական և հարկաւոր առնեն զմարդն, այլ աստուածպաշտութիւնն. որ զԱստուծոյ ապրէնքն պահէ և յաւաքինութիւնն քաջ է, նա է պատուական և մեծապզի։

Իշխանի և պարոնի պատեհ է, որ զայն մարդն սիրէ, որ յիւր երեսն խաւսի և յանդիմանէ, յորժամ անիրաւ բան առնէ, զի այն ի սրտէ է բարեկամ։ Եւ մարդ, զինչ որ պարոնն առնէ, նա ասէ, թէ այդ լաւ է, և առժամն զսրտին դոյրն խաւսի, նա երեսաց բարեկամ է, ապա հոգոյն չարկամ է։

Զգօրենն ոչ թէ ի գեղեցիկ արտէ բնաբեռն, այլ զայն, որ լաւ հաց լինի։ Նոյնպէս և զայն մարդն պիտի սիրել, որ ինքն բնութեամբն լաւ լինի, և գործքն՝ բարի, և ո՛չ զայն, որ մեծազգի է, և գործքն՝ վատ։ Եւ մարդն, որ ծառայութիւն չմարթէ առնել պարոնի, և ոչ այլոց պարոնութիւն մարթէ առնել։

Ըստ Աստուծոյ անհաս, անճառ իմաստիցն, զանազան և ազգի ազգի են մարգիկ, բարքն և յաւժարութիւնն և ախորժակքն ըստ իւրաքանչիւր դիմաց մարդկան, որպէս իմաստունն վկայէ։ Որպէս ոչ երեսք երեսաց և ոչ սիրտք սրտից, այլ զատեալ և որոշեալ են յիրերաց, որպէս տեսակաւք, նոյնպէս և ախորժակաւքն։

ՁԵՌԱԳԻՐ № 3439

Եւ վասն զի ամենայն ոք, որ ունի իմաստութիւն, նայ կարէ տէր լինել իրաց և յիշխանութիւն ելանել, իմաստութեամբ ի մեղաց հեռանալ և իմաստութեամբ զբարին գործել և արքայութեան արժանի լինել և իմաստութեամբ զԱստուած իմանալ, և զպատուիրանն պահել։

Հաւատ, յոյս և սէր, և այս երեքեան առաքինութեամբ լինի մարդ սիրեցող Աստուծոյ, և արդարանան աւետեան խոմբ նահապետաց և մարգարէից և մարտիրոսաց։

Որպէս գարնանային աւուրք բուսանի բազում ծաղկունս ի լերին, ի դաշտ և առ ջրաւետ ծովակս և անհամար նման սրբոց Աստուծոյ և ոչ է աւտար, այլ ի միոյ հողոյ բուսեալ, ապա գոյնն և տեսակն ազգի ազգի և հոտն, կարմիր, դեղին, կապոյտ և ճերմակ։ Այսպէս աւրինակ է լեառնն ծաղիկն ճգնաւորաց և միակեցեաց և որ կոյսք են և մաքուր։

Եւ որք ի դաշտս բուսանին, նման է մարտիրոսաց, որք ասպարէզ մահն առաջի խուռնարձակ ամբոխին, վկայեցին որպէս ի դաշտի։

Եւ այն, որ առ ջուրս և ծովակս բուսանի, նման է ամուսնաւորաց և աշխարհականաց, որ ի ծովոյ արհիս ծփանաց պահեցին ուղիղ և հաճոյացան Աստուծոյ։

Նոյնպէս են և պսակք արդարոցն, այսինքն՝ ի գոյնս ծաղկանց. կարմիրն՝ մարտիրոսաց, որ արեամբ նահատակեալ մարտիրոսացն, որպէս ասէ. Կարմրացեալ հանդերձիւ, այս՝ ով է, որ գայ յերկրէ, վկայութեամբ նահատակեցան։ Եւ դեղինն ճգնաւորաց է, որ ի փապարս լերանց կեցեալ արևակէզ և ցրտաստուոյց և զանձինս ճնշեալ ի պահս և յաղաւթս, և մարմինն դեղնեալ և նուազեալ և թարշամեալ ի սիրոյ Քրիստոսի։ Կապոյտն՝ ամուսնաւորաց, որք յաշխարհի և որք սրբութեամբ պահեցին զանկողինս իւրեանց ի խառ[ն]ակութենէ, և պահեալ զամենայն պատուիրանսն խոստովանութեամբ և յուսով։ Եւ ճերմակն՝ դաս քահանայից և հայրապետաց և կուսանաց, որ ամենայն առաքինութեամբ, հաւատով, յուսով և սիրով, որպէս պայծառափայլ փառաւք պսակեցան։ Եւ ամենայն պարգեւք, որ յԱստուծոյ, եթէ մեծ է և թէ փոքր, անկարաւտ է պսակն Աստուծոյ, որ այլոց ոչ ցանկաց և զիւրն մեծ համարի, զի լցեալ է պարգեւաւքն Աստուծոյ և ի միասին հաւասար աւրհնեն և փառաբանեն զՀայր և [զՈրդի և զՀոգին Սուրբ]։ Հաւատով, յուսով, սիրով, որ առ Աստուած, զի ոչ են աւտարք միմեանց գոյնք պսակացն, այլ ի լուսոյ կազմեալ, և հանդիստ նոցա ի Տեառնէ։ Ի մի յարեգակնէ անեալ ի Տեառնէ Յիսուսէ և աճեալ, փթթեալ և զուարճացեալ անթառամելի և անմահ։

Են և այլ գոյնզգոյն ծաղկունք, նման է ապաշխարութեամբ արդարացողաց և առաքինեաց և կարգ ստացողաց։

Եւ Քրիստոսի փա՜ռք յաւիտեան։

---

5 պարոնի պարտ է 8—9 դոյրն խաւսի, նայ ի սրտէ չէ 11 A չիf լինի 13 մեծազգի լինի և գործքն չար 19 սրտից նման. որպէս տեսաւքն ոչ են նման իրերաց 20—21 չիf նոյնպէս և ախորժակաւքն։ Այստեղ բնագիրն ընդհատվում է, նամակը շարունակվում է 3439 ձեռագրում։

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Բնագիրը ներկայացվում է ըստ Լ. Խաչիկյանի հրատարակության (տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 6, 1962, էջ 371—376). Օգտագործված է նաև № 2783 ձեռագրի օրինակը, որի տարբերությունները նշված են տողատակին: Լ. Խաչիկյանի բերած որոշ ոչ էական տարընթերցվածներ երբեմն նկատի չենք առել:

Օգտագործված ձեռագրեր

A— *Մաշտոցի անվան մատենադարանի 2329 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ 1291 թ., էջ 287բ—295ա.*

B— *Մաշտոցի անվան մատենադարանի 652 ձեռ., «Կանոնագիրք», ժամանակ՝ ԺԵ-ԺՋ դդ., էջ 70բ—75բ.*

C— *Մաշտոցի անվան մատենադարանի 2173 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դ., էջ 257ա—260ա.*

D— *Մաշտոցի անվան մատենադարանի 2783 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դ., էջ 4ա—7ա:*

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ, ՈՐՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՎՆ ՄԻԱԲԱՆՑԱՆ ՅԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵԱՆՑ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ, ՈՐ ԿՈՉԻ ԵԶՆԿԱՅ, Ի ԹՈՒԻՆ ՉԻԹ (1280)

Աստ հանդիպելով և ծերունի վարդապետն Գրիգոր Սանահնեցի, որ և գրեցաւ ի գլուխ եղբայրութեանս, և ես՝ նուաստ վարդապետ Յովհաննէս եզնկացի, գրեցի զսահմանն և զկարատ եղբայրութեանս և զշահաւետ ուգուտն որ ի սմանէ, առաչնորդութեամբ Սուրբ Հոգւոյն:

Բանն Աստուած, որ բանիւ գոյացոյց զամենայն արարածս և զբանն իւրական Հոգի կոչեաց և կեանք, բանիւն իմաստութեամբ զարդարեաց զհոգիս մեր, զի որպէս հացիւ կերակրի մարմին, այսպէս բանիւ հաստատի հոգի:

Արդ, հոգիացուցիչ բանն Քրիստոսի ուսուցանէ մեզ, զի երկու են դուռն և ճանապարհ վարուց մարդկան, զոր ընտրեն և գնան ճանապարհորդք կենցաղոյս: Նեղ է դուռն, և անծուկ է ճանապարհն, որ տանի ի կեանսն, և սակաւք են, որք մտանեն ընդ նա. լայն է և ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուստն, և բազումք գնան ընդ նա:

Արդ, նեղ և անծուկ ճանապարհ զառաքինութիւնն ասէ և զբարեգործութիւնն, որ հեշտասէրքն և մեղաւք մոլորեալքն ոչ կարեն գնալ, և սակաւք են յաշխարհի, որք յաւժարական սիրով գնան ընդ նա. իսկ լայն և ընդարձակ ճանա-

---

1 B *եղբարցս* 3 AB *մեծ* փխ *որ կոչի, եզնկայ* D սկսվում է «վարդապետն Գրիգոր» հատվածից: Վերնագրի սկիզբը եղել է նախորդ, կտրած թերթի վրա: 5 B *չիմ Գրիգոր*, 6 *միաբանութեան եղբայրութեան գլուխ*. D *եղբայրութեանն* 7 C *վարդապետս* D *չիմ վարդապետ* B *Յոհաննէս* A *եզնկեցի* B *երզնկացի* D *եզընկայեցի* 8 B *և աւգուտն* 11 AB *բանին* D *և բանիւն*. 13 D *մարմին մարդոյ այնպէս* 14 BC *զմեզ* 17 AB *անծուկ ճանապարհն* 18 B *այն* փխ *նա* D *որ լայն և* 19 B *մտանեն* փխ *գնան*

պարհ զմեղացն ասէ և զչար գործոցն, զոր մեղսասէր և աշխարհասէր մարդիկ սիրեն և յաւժարին գնալ ընդ նա։ Արդ, այս երկու ճանապարհիս երկու առաջնորդ են, որ կոչեն զմարդիկ գնալ զհետ իւրեանց։ Բարի ճանապարհին առաջնորդ է Հոգին Սուրբ, զոր և մարգարէն Դաւիթ հայցէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ»*։ Եւ չար ճանապարհին առաջնորդ սատանայ է; զոր վէմն հաւատոյ Պետրոս ասէ. «Ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ և խնդրէ, թէ զո՞ կլանէ»**։

Արդ, եղիցի եղբայրութեանս մերոյ Հոգին Սուրբ առաջնորդ, հանդերձ Հարբ և միածին Որդովն, և առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիղ՝ բարի ճանապարհաւն ընդ արքունի պողոտայն, առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ, զի մի՛ ի գինուցն երկոցունց խոցոտեսցուք, այլ իբրև ի վերայ կամրջի գետոյ ընդ մէջն գնալով՝ մի՛ վերոյ կամ ներքոյ գետաւէժ լիցուք։ Եւ զի ժողովասէր է բնութիւն մարդոյս և ընդունակ չարի և բարոյ՝ ըստ նմանութեան աւդոյս, զի զոր աւրինակ աւդ ի ծագել արեգականն լուսաւորի և ի գալ գիշերոյն՝ սևացեալ խաւարանայ, այսպէս և մարդ, եթէ զսատուածային բանն և զհոգևոր խրատն և զլոյս պատուիրանացն Աստուծոյ առնու ի միտ՝ լուսաւորի և պայծառանայ, և թէ սատանայի ազդմանցն և մեղաց խրատուն լինի ընդունակ՝ նսեմանայ և խաւարի։ Եւ զոր աւրինակ հող երկրի, զոր ինչ սերմանէ մարդ՝ զայն բուսուցանէ, այսպէս և հողեղէն բնութիւն մարդոյս, զոր ինչ սերմանեն՝ զայն պտղաբերէ, եթէ փուշ մեղաց և եթէ ծաղիկ առաքինութեան։ Արդ, լոյս պատուիրանացն Աստուծոյ լուսաւոր լիցի յոգի եղբայրութեանս, և ծաղիկք ամենայն բարութեանց բուսցին ի բնութիւն սոցա։

* Սաղմ., ՃԽԲ, 10։

** Ա Պետ., ե, 8։

1 A զչարագործոցն զոր մեղսասէրքն 4 B ի հետ 6 C ի երկիր 7 B առաջնորդն 9 B զով 10 B Արդ եղբայրութիւնս D մերոյ առաջնորդ հոգին սուրբ AB հոգի 12 D չիf ընդ 13 ոչ խոտորել A յահեակ 14 D ի գինոց երկոցունց 14—15 D մի՛ ի վերոյ. ի ներքոյ 23 B և նսեմանայ 24 AB ոք փխ մարդ D չիf և 25 D բնութիւնս մարդկան զոր ինչ ի միտս 26 D առաքինութեանց 28 AB ծաղիկ

Բայց արժան է գիտել, եթէ քանի՞ տեսակք են եղբայրութեանն։

Առաջինն այս է. զի ի միոյ բնութենէ տարերացս միոյ արարչին ստեղծուածքն երբայր ասին. և այս հասարակաց է բանականաց և անբանից, կենդանեաց և անկենդանեաց։

Իսկ երկրորդ եղբայրութիւն ա՛յն է, որ ի միոջէ ծնողաց ծնեալ լինին. և այս սակաւուստր է։

Իսկ երրորդ եղբայրութիւն, որ և ճշմարիտն է և հոգևորն, ա՛յն է, որ ի հոգւոյն Աստուծոյ ծնեալքն և ի մի աւազան մկրտեալքն եղբարք ասին միմեանց և Քրիստոսի, և երկնաւոր Հաւրն որդիք, և արքայութեանն ժառանգաւորք, և Քրիստոսի ժառանգակիցք. և այս յատուկ քրիստոնէից է պարգեւեալ շնորհք, որք անուամբն Քրիստոսի կնքին։

Այլ դուք ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ զրովն է և կանոնական սահմանաւք, և բարեսէր ժողովմամբ, և ընկերակցութեամբ, և միաբանութեամբ, և միով հաւատով և սիրով, և երկնաւոր ցանկութեամբ։ Եւ ոչ եթէ նո՛ր է այս, այլ զոր քրիստոնէից վայել է գործ՝ զայն ուսուցանէ։

Եւ քաղցր է այս եղբայրութեան սահման, զի որպէս բազմութիւն աստեղաց վերկինս զարդարեն, այսպէս և բազմութիւն եղբարց սիրով ժողովելոց՝ զեկեղեցի պայծառացուցանեն։ Եւ որպէս բազմութիւն զարուց քաջամարտիկ զինուորաց միաբանելոց զիւրաւ յաղթեն թշնամեացն, այնպէս եղբարցն բազմութիւն քաջ հաւատով և հաւասար սիրով՝ զիւրաւ յաղթեն սատանայի, և մեղսասէր դիւացն, և չար մարդկան, որք շարժին ի սատանայէ։

Եւ արդ, դիցուք զսահման մերոյ եղբայրութեանս, որ են երեք սեռական գլուխք. առաջին՝ եթէ ամենայն ոք իւր անձամբն ո՞րպէս քաղաքավարի. երկրորդ՝ թէ զի՞նչ աւգտութիւն և շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, և ո՞ր է պատուղ միաբանութեան սոցա. երրորդ՝ թէ ո՞րպէս ի հասարակաց կենցաղոյս ի մէջ աշխարհի և ի մէջ բազում

1—2 B եղբայրութեանս D եղբայրութեան 4 AB արարչի B ստեղծուածք 6 D միոյ 10 B Քրիստոսի երկնաւոր D ևս երկնաւոր փխ և երկնաւոր։ 11 D երկնից ժառանգաւորք 12 C չիf յատուկ 13 B nr C չիf որք 15—16 կանովնական 17 չիf միով D միով փխ և միով D հաւատով յուսով և սիրով և 19 չիf է 20 զոր օրինակ փխ զի որպէս 22 CD չիf սիրով D զեկեղեցիս 24 նոյնպէս փխ այնպէս 26 D որք յաղթին 27 C որ 28 B ուր 29 D զի փխ եթէ 32 D և թէ

ազգաց իմաստութեամբ գնասցեն ի շինութիւն տեսողացն և ի փառս անուանն Քրիստոսի։

Եւ արդ, ասասցուք, զոր պարտ է ամենայն ումեք իւր անձինն ստանալ. զի զոր աւրինակ արեգակն հասարակաց ծագէ, բայց ում տեսանելիքն առողջ են՝ նա՛ լուսաւորի, այսպէս և աստուածային աւրէնքն հասարակաց է ամենայն աշխարհի, այլ որ սիրէ և գործէ՝ նա՛ է աւրինազարդ և աստուածային լուսովն պայծառացեալ։

Լուարո՛ւք, երիտասարդք և աղահասակ մանկունք, որք միաբանիք յեղբայրութիւն։

Ա. Այս ձեզ առաջին աւրէնք՝ սիրեցէ՛ք զԱստուած՝ զարարիչն ձեր և վասն սիրոյ նորա արհամարհեցէ՛ք զամենայն սէր աշխարհիս։

Բ. Պատուեցէ՛ք զծնողսն ձեր՝ զհայր և զմայր, որ հետ Աստուծոյ պատճառ են ձեր ստեղծմանն, և ծերութեան նոցա խնա՛մ տարէք, և հրամանացն հնազանդ լերուք, զի աւրհնութեան նոցա արժանի՛ լիցիք։

Գ. Պատուեցէ՛ք զքահանայսն Աստուծոյ իբրև զհոգևոր ծնողն, և ձեր քահանային, որոյ ժողովուրդ էք, խոստովանեցէ՛ք, և ի վաստակոց և յաշխատութեանց ձերոց տո՛ւք նոցա պատուդ, որպէս զի աղաւթք նոցա, որ վասն ձեր մատուցանեն Աստուծոյ, ընդունելի լիցի։

Դ. Սո՛ւրբ պահեցէք զանձինս ձեր ի մեղաց և անարատ կուսութեամբ մնացէ՛ք՝ մինչ արժանի լինիք առնուլ զպսակն աւրհնութեան, որպէս զի Աստուծոյ նուէր լիցին անձինք ձեր, և մի՛ սատանայ նման գայլոյ գիշատեալ պատառեսցէ զձեզ։

Ե. Յետ առնելոյ զպսակն աւրհնութեան և միաւորիլ սուրբ ամուսնութեամբ ընդ կողակցին ձերոյ, զոր յԱստուծոյ պատշաճեցաւ, սո՛ւրբ պահեցէք զանձինս ձեր յաւտար և ի պիղծ անկողնոյ, զի մի՛ զպսակն աւրհնութեան կորուսանէք, և

3 D զայն զոր. նախ ամենայն 6 A այս աստուածային D լուսաւորի և տեսանէ 7 D սիրէ և առնէ 9—10 D որք գայք և մտանիք ի միաբանութիւն եղբայրութեանս։ 15 B ձեզ. ի ծերութեան 16 D հրամանաց նոցա 19—20 D խոստովանեցէք և ոչ այլոց և 21 B չիf զի 26 D սատանայի որ 28 C որ կողմնակիցն ձեր 29—30 պեղծ անկողնոց

անկանիք յանէծս սատակիչս, և զրկիք ի քրիստոնէութեան անուանէ՝ շունք կոչելով վասն շնութեան մեղացն։

Զ. Յամենայն աւր երեք անգամ յաղաւթս կացէք՝ ի լուսանալ աւուրն և ի ժամ ուտելոյ հացին և երեկունն՝ ի ժամ քնոյն։ Յամէն ժամ՝ ԺԲ (12) ծունր այր մարդն և ի (20) ծունր կին մարդն. և որ այլ աւելի կարէ՝ զայն իւր հոգւոյն զաւրութիւնն և սէրն գիտէ, զոր առ Աստուած ունի։

Է. Շաբաթն աւրն և կիրակէն անպատճառ յեկեղեցին երթայք, որ զԱւետարանին ձայնն լսէք ու Քրիստոսի ձայնին լինիք արժանի, և զպատարագն տեսանելով՝ զՔրիստոս տեսանէք։

Ը. Յամենայն կիրակի զշաբաթուն յանցանքն խոստովանեցէ՛ք և ի ի (40) աւրն հետ մի՛ հաղորդեցէք. և յամենայն տէրունական տաւն յեկեղեցին ժողովեցէ՛ք և զխորհուրդ տաւնին հասկացի՛ք. և զկիրակին ի բան առնելոյ սո՛ւրբ պահեցէք։

Թ. Զբերանն, որ Աստուծոյ անուանն խոստովանող է և հաղորդական, ի չիշոցաց սո՛ւրբ պահեցէք և յամենայն աղտեղի խաւսից, և մի՛ զԱստուծոյ ստեղծուածն զկեղտն սատանայի առնէք գործի։

Ժ. Զամենայն զգայարանս ձեր ամրացուցէ՛ք երկեղիւն Աստուծոյ. զաչքն՝ ի չարատ հայելոյ, զականջն՝ ի չար և ի մեղաց խրատ, զձեռն՝ ի զրկելոյ և ի գողանալոյ և ի հարկանելոյ, և զոտքն՝ ի մեղս ընթանալոյ։ Այլ այսպէս արարէք. աչաւք զԱստուծոյ գեղեցիկ արարա՛ծս տեսէք, և բերանով զարարի՛չն աւրհնեցէք, ականջով զպատուիրանս նորա լսեցէ՛ք, ձեռաւք յաղաւթս և յաշխատութիւն գործոյ և յողորմութիւն աղքատաց բարեգործեցէ՛ք, և զսիրտ ի չար խորհրդոց սրբեցէ՛ք։

2 D շուն 3 B յաւրն փխ յամենայն աւր 4 D ժամ ճաշոյն և երեկոյին. հետ փխ ժամ 6 AB հոգոյն D հոգոյ 8 AB շաբաթ C կիրակի աւրն D չիf աւրն. անպատճառ անխափան 9 D գնացէք զաւետարանի AB լսելով փխ լսէք ու D լսէք և 13 D յամէն 14—15 BD ամէն տաւնս 15—16 D տօնին գիտացէք կիրակին սուրբ պահեցէք ի մեղաց և ի գործ առնելոյ ձայն տուք միմեանց և գնացէք եկեղեցին 17—18 D զբերանս ձեր չիf հաղորդական C չիf և հաղորդական 18 D չիշոցաց ի սրբոնջանաց ի բանբասանաց ի խեղկատակութեանց և յամենայն 22 D յաւրատ փխ ի չարատ. զականջդ 23 D զձեռդ 24 AB չիf և զոտքն ի մեղս ընթանալոյ 27 D աշխատանս գործոց և յաղօթս

Եւ այս ամենայն ումեք իւր անձինն ապրէնք և զգուշութիւն յաստուածային հրամանացն և ի Գրոց Սրբոց։

Իսկ երկրորդն, որ եղբարցն առնեն և վասն սիրոյն Աստուծոյ զեղբայրսիրութիւն կատարեն, ա՛յս է.

Ա. Վասն զի աշխարհս այս ծով է, և մարդիկ ալէկոծին ի սմա պէս պէս պատահմամբ գործոց. և թէ ոք յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի և ի բռնաւորաց նեղիցի, ամենայն եղբարքն չան եդեալ հանցե՛ն զնա ի հասեալ վշտացն, զի որ եղբայր եղև մեզ Քրիստոս ասացէ. «Ի բանտի էի, և եկիք առ իս»*։

Բ. Եւ եթէ ոք ի փորձութիւն մեղաց անկեալ՝ ի ձեռս սատանայի մատնեցի, ամենայն եղբարքն աղաւթիւք և բարի խրատով և ողոքանաւք, այլ և սաստիւք և ամենայն հնարիւք ազատեսցե՛ն զանկեալն ի ծառայութիւն մեղաց և Քրիստոսի՛ ընծայեսցեն, նմանեալ այնմ, որ զթացաւ ի վերայ անկելոյն ի ձեռս աւազակացն։

Գ. Եւ թէ ոք յաղքատութիւն անկանիցի և ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան և ըստ ուժոյ ապնեսցեն, և աղքատ եղբարն ապնելով՝ Աստուծոյ փոխ տացեն, որ հազարապատիկ վճարէ յայսմ աշխարհի և ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևեսցէ։

Դ. Եւ թէ ոք ի տկարութիւն և ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկանիցի, յամենայն աւր եղբայրութենէն ի տեսութիւն գնասցեն և զհիւանդացեալն մխիթարեսցեն, և դեղով և բժշկով ձեռնատու լիցին, որպէս զի լուիցեն ի Քրիստոսէ, թէ՝ «Հիւանդ էի, և տեսէք զիս»**։

Ե. Եւ թէ ումեք աւր վաղճանին հասցէ, և փոխեսցի յանցաւոր կենացս՝ ամենայն եղբարքն զմարմինն պատուով ի գերեզման տանիցեն, որպէս վայել է, զհողն հողոյն

* Մատթ., իե, 36։

** Անդ։

1 C չիf *ապրէնք* և 2 D *գործոց* 3 B չիf և 4 B *զեղբայրութիւն* 5 D չիf *այս* 6 ABD *եթէ* 7 A և *բռնաւորաց* 9 ABD *հասանել* D *ասաց* 11 A *անգեալ* 15 D չիf *զթացաւ* 16 D *ձեռն* AB *աւազակաց* 17 ABD *եթէ* AB *անգցի* 21 C *յաւիտենական* D *հանդերձելումն* 22 AB *եթէ* D *ցաւս* 23 B *յամէն աւր առողջ եղբայրքն փխ յամենայն... եղբայրութենէն* 26 AB *եթէ* 27 AB *եթէ* D *վախճանի* 29 A *գերեզմանի* B *թաղեսցին ի գերեզմանի*

տացեն և ամէն եղբայր մին աւր պատարագ տայ առնել յանուն վաղճանելոյն։

Եւ այս սահման է, զոր եղբարքն միմեանց առնեն, եթէ մատաղոր և եթէ հեռաւոր լիցի եղբայրն՝ սիրով և հաւատով ի մէջ իւրեանց համարեսցին։

Իսկ երրորդ գլուխն այն է, որ և այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց, և կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ՝ աւգտին և աւգտեցուցանեն։

Եթէ վարդապետ եկեսցէ յայլ աշխարհէ, գլխաւորք եղբարցն ի տեսութիւն երթիցեն և պատուեսցեն զնա, և շահեսցին ի վարդապետական բանիցն և ժողովեսցին առ նա ի քարոզութիւն Սուրբ Գրոց, և ի գնալն՝ յուղարկեսցեն զնա սիրով, և ըստ մարմնոյ պիտոյիցն ըստ կարին տացեն հոգևոր սերմանողին զմարմնաւոր պաղաբերութիւնն։ Այսպէս և եպիսկոպոսաց արասցեն. նոյնպէս վանականաց և աղաւթարար եղբարցն և ճգնաւորաց ասպնջական և հանկուցիչք լիցին։

Եւ խաղաղասէրք լինիցին եղբարքս մեր ի մէջ աշխարհի. ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին, մեծարեսցեն և յիմաստութենէն շահիցին՝ առանց հակառակութեան, հեզ բարուք, հանդարտ գնացիւք, պարկեշտ կացուք, իբրև զդահեկան ոսկի ի մէջ տղմոյ աշխարհիս անաղտ և յատակ մնալով, իբրև զլոյս արևու ի մէջ գարշահոտութեանց պայծառ մնալով՝ յիւրեանց բարոյն տալ այլոց՝ որպէս արեգական լոյս, և յայլոց պղծութենէն ոչ ուսանիլ, որպէս և արեգակն ոչ առնու* յայլոց պղծութենէն։

Արդ, դուք, պատուական եղբարք, այսպիսի ապրինաւք զարդարեցէ՛ք զանձինս ձեր, զի լինիցիք միմեանց որպէս զպարիսպ ամուր, զի որպէս բազմութիւն քարանց ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամրութեան և պահպանութեան է քաղաքի, այսպէս և դուք իբրև զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէ՛ք ի հաստատութիւն։

1 B *եղբարք.* տան 4 B *եթէ փխ և եթէ* D *եղբայր* 6 B *այս է* 8—9 BD չիf *յայլ յաշխարհէ* 10 D *երթան* 11 D *բանից նորա* 16 D *եղբարց* BD *հանգուցիչ։*

* Այստեղ թերթերը բնկած լինելու պատճառով C ձեռագիրը բնդհատվում է։

17 AB *լինին* D *այլ և.* 18 D *և ընդ, ազգս. արասցեն* 19 D չիf *որ. այլ և զիմաստունս յամենայն ազգաց.* D չիf *իմաստունք լիցին* 20 D *յիմաստութենէն նոցա շահեսցին* 20 AB *շահեսցին պարկեշտք կացուք* 23 D *որպէս* A չիf *արևու ի մէջ* 24 A *արեգակն* D *արեգականն։* 28 D *լինիջիք, իբր* 29 AD *պահապան ամուր*

Եւ որպէս դրախտ բազում անկաւք զարդարի, այսպէս և դուք եղերո՛ւք իբրև զդրախտ Աստուծոյ՝ քաղցրաճաշակ պտղով զարդարեալ, և որպէս բուրաստան՝ անուշահոտ ծաղկաւք լիացեալ։ Եւ զոր աւրինակ թագ թագաւորի ի յոսկոյ և ի մարգարտոյ և յականց պատուականաց յաւրինի, նոյնպէս և դո՛ւք թագ պարծանաց լերուք գլխոյն մերոյ Քրիստոսի, և իւրաքանչիւր զիւր գեղեցիկ գործս փայլեցէ՛ք իբրև զակն լուսատու, և որպէս ակունքն յոսկին շարեալ միանան, նոյնպէս և դուք յամբիծ հաւատն և յանկեղծ սէրն յարմարեալ գեղեցիկ և պայծառ լուսով փայլեցէք, եղերուք մայր ձերոյ եկեղեցոյ կենդանի գանձ և պարծելի որդիք, եթէ ունիցէք և եթէ ըմպիցէք՝ զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք։

Արդ, որ սիրէ զեղբայրութիւնս զայս և խաւնի ի միաբանութիւն սոցա, պահեսցէ նաև զաւրէնս զայս և զսահման եղբարցս՝ գրեսցի նա ի գիր միաբանութեանս, և Քրիստոս գրեսցէ ի դպրութիւն կենաց. իսկ շնացաւղն և չիշողնատուն և այլ զանազան մեղաւք վարեալն մի՛ կացցէ ի գրի աստ. իսկ որ աւրինապահքն են, սիրով զմիմեանս շահեսցին։ Աւագ եղբայրն քաղցրութեամբ խրատեսցէ, և կրտսերն հնազանդութեամբ լուիցէ. որ գիտունն է, մի՛ հպարտասցի, և որ տխմարն է, մի՛ յուսահատեսցի, այլ իբրև զՔրիստոսի անդամ միմեանց խնամ տանիցին, զմեծն և զիմաստունն պատուեսցեն և զփոքրն և զանուսումն զթով խրատեսցեն։

Տասին գլուխն և քառասնին մեծն յամենայն ժամ ի վարդապետաց ուսցին և զայլսն աւգտեցուսցեն, և զամենայն բան բարի խրատով գլխաւորացն արասցեն։

---

2 D եղբարք փխ եղերուք 3—4 B պտղովք լցեալ փխ ծաղկաւք լիացեալ D լըցեալ. չիf ի 6 B եղերուք 7 D ոք զիւր. փայեցուցէք 8 A շարել 11 D և իւ 15 D և գրեսցի 16 D չիf և Քրիստոս գրեսցէ ի դպրութիւն կենաց 17 D վարեցեալն մի կայցէ 18—19 B աւագ գիտուն և իմաստուն եղբայրն քարոզութեամբ 19—20 B կրսերն և անմիտն և տգէտն հնազանդութեամբ 21 D զանդամս Քրիստոսի 24 D տասնաւագն 25 D ուսանիցին. աւգտեցուցանեն. 26 D բանս. արասցեն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

ԿՐԿԻՆ ԿԱՆՈՆՔ ԵԻ ԽՐԱՏՔ ՏՂԱՅԱՀԱՍԱԿ ՄԱՆԿԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ

Հրատարակվում է առաջին անգամ։ Ճիշտ է, բացի № 2783 ձեռագրի օրինակից, մյուս երեք օրինակներն ամբողջական չեն, բայց որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նախ՝ խաթարված առանձին հատվածների վերականգնման առումով և երկրորդ, որ ավելի կարևոր է, այդ ընդօրինակությունները կառուցվածքային փոփոխության են ենթարկվել։ Մասնավորապես դա վերաբերում է Վիեննայի Ազգային մատենադարանի ձեռագրին։ Ինքնին հասկանալի է, որ համեմատական բնագրի հիմք է ընդունված միակ ամբողջական օրինակը (A)։ Մյուս երեք ընդօրինակությունների տարբերությունները բերվում են տողատակին։

Օգտագործված ձեռագրեր

A —*Մաշտոցի անվան մատենադարանի 2783 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դ., էջ 7ա—11ա։*

B —*Մաշտոցի անվան մատենադարանի 848 ձեռ., ժողովածու, ժամանակ՝ ԺԴ դ., էջ 50բ—56ա.*

C —*Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի 29 ձեռ. Ոսկեփորիկ, ժամանակ՝ 1796 թ., էջ 136ա—139բ.*

D —*Վիեննայի Ազգային մատենադարանի 1299 ձեռ., ժամանակ՝ 1451 թ., էջ 158ա—181բ։*

ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶԸՆԿԱՅԵՑԻՈՅ ԿՐԿԻՆ ԿԱՆՈՆՔ ԵՒ ԽՐԱՏՔ ՏՂԱՅԱՀԱՍԱԿ ՄԱՆԿԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՅ, ՈՐՔ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐԱՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՎ ՎԱՐԵՆ ՁԿԵԱՆՍ ԱՇԽԱՐՀԻՍ, ՁՈՐՍ ԵՒ ՄԵՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՒՐԻՆԱՅՆ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՈՒՂՂԵՄՔ ՁԱՅՆՊԻՍԻՍՆ Ի ՀՈԳԵՒՈՐՆ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ:

Աստուածային առաքեալն Պաւղոս գրէ առ Հռոմայեցիսն, թէ՝ Որ[ք] ըստ մարմնոյ են՝ զմարմնոյ[ն] խորհին, և որք ըստ հոգւոյ՝ զհոգւոյ: Եւ [թէ]՝ Խորհուրդ մարմնոյն մահ է, և հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն**:*

Արդ, խորհուրդ մարմնոյ զանգիտութեանն և զմեղացն ասէ զգործ, և խորհուրդ հոգւոյ՝ զշնորհն Աստուծոյ և զգիտութիւն պատուիրանացն նորա և զամենայն գործս բարիս: Վասն որոյ պարտ է զխորհուրդ մարմնոյն, որ է անգիտութիւնն և մեղքն, փոխել ի հոգևորն, որ է գիտութիւն և [սուրբ] կեանքն: Պարտ է գիտել, զի Բ իրք է մարդն՝ հոգի և մարմին. հոգին բանական է, և մարմինն՝ գործնական: Զամենայն իրք հոգին մտաւքն տեսնու, զի միտքն աչք է հոգւոյն, և ապա մարմինն գործէ ձեռաւք և այլ անդամաւք: Եւ որ ոչ տեսանէ մտաւքն յառաջ և ապա գործէ՝ նման է անբան անասնոյ, որ անմտաբար և առանց խորհրդոյ առնէ զամենայն:

Բ ազգ է իմաստութիւնն՝ տեսական և գործնական: Տեսականն գիտութիւնն և ուսումն է, որով իմաստասիրեալ քննէ յաղագս Աստուծոյ և աշխարհի և ամենայն գոյից: Իսկ գործնականն այն է, որով գործէ զամենայն գործս բարիս հոգևորս և տւղղէ զինքն ի հաճոյսն Աստուծոյ:

Արդ, է՛ մարդ, որ զգիտութիւնն և զուսումն միայն սիրէ: Եւ է՛, որ զգործն և զառաքինութիւնն միայն ունի անգիտութեամբ: Եւ է՛, որ զերկուսն ունի՝ զգիտութիւնն և զգործն:

Արդ, որ գիտութիւնն ունի և ոչ գործէ, նման է մարդոյ, որ մի աչք ունի: Նոյնպէս և որ գործէ և ոչ ունի զուսումն գիտութեան, և նա միակնի է, իսկ որ ունի ուսումն և գիտութիւն և զայն գործէ և առնէ զառաքինութիւն՝ Բ աչօքն է լուսաւոր և մարդ է կատարեալ:

Արդ, եկեսցուք ի բանն, որ պիտանացու է մեզ: Տեսաք յաշխարհի գործ մի, որ սովորութեամբ լեալ է յաշխարհի ի մէջ մարդկան, որ լինին ի մարդկանէ, որ անուանին մանկտաւագ, և կոչեն զաղայահասակ մանկունս իւրեանց յորդեգիրս, և տան նոցա գաւտիս: Եւ չկայր հնար, որ բառնայր այս ի յաշխարհէ, զի հին էր սովորութիւնն, և քաղցր և ախորժ թուէր նոցա, որք զայս գործէին: Բայց մարմնական և երկրաւոր և անգիտաբար էր գործն նոցա: Վասն այսորիկ կամեցաք մեք նոցա գրել խրատ և ցուցանել նոցա ճանապարհ, զի գիտութեամբ և իմաստութեամբ և աւրինաւք լիցի գործն, և անխաոն ի չարէ, և վկայութեամբ Սուրբ Գրոց և մի՛ մոլոր գիտութեամբ:

Պարտ է յառաջ գիտել զայս Գ իրս. նախ՝ թէ ո՞ր են մանկտիքն. Բ. և թէ ո՞ր է արժանի լինել մանկտեացն աւագ. Գ. թէ ուստի՞ է սկսեալ այս գործս:

Արդ, մանկութիւնն Գ իրք է. մինն այն է, զի բարիսն, որ յԱստուծոյ առեալ է, ամուր պահէ և ոչ կորուսանէ. Բ. ի պատերազմն, յոր մտեալ է, արի կենայ և ոչ յաղթի. Գ. այնմ իրաց, որ խոստացած է, ջանք դնէ, որ չզրկի:

Բարի, զոր առեալ է յԱստուծոյ, այն է, որ հոգւովն պատկեր է Աստուծոյ, սուրբ և անմեղ և անմահ է հոգին: Մանուկն ա՛յն է, որ չկորուսանէ զպատկերին գեղեցկութիւնն և նման լինի անասնոց:

---

* *Հռոմ., Ը, 5:*

** *Հռոմ., Ը, 6:*

10 B *հոգւոյն զհոգւոյն* 11 B *զանգիտութիւնն և զմեղաց գործն ասէ* 12 B *զշնորհքն* 13 B *պատուիրանին* 18 B *աչքն* 21 B *անբաւարար փխ անմտաբար*

1 B *չիf գործս* 8 B *միականայ նմանէ* 9 B *չիf զայն* 9—10 B *աչաւք լուսաւորէ* 11 B *բան* 12 B *չիf յաշխարհի* 17 B *որ* 18 B *նոցա զոր առնէին* 21—22 B *մի մոլորութեամբ* 23 *իրքս առաջին թէ* 24 B *երկրորդ թէ ով* 26 CD *գարձեալ և այս գիտելի է զի մանկութիւնն* B *զբարիքն* D *որ զբարիսն.* 27 *չիf ամուր* B *ու չկորուսանէ* 28 B *չյաղթվի չիf այնմ* 29 B *իւր ջանք* C *իրք* 30 CD *չիf որ* 32 D *չիf մանուկն այն է որ* C *մին այն է*

Պատերազմ է մեզ ընդ սատանայի, իբրև զմանուկ արիացի՛ր և յաղթէ՛, և մի՛ յաղթիր և խոց առնուլ ի մեղացն նեռից։

Եւ Աստուած զարքայութիւնն յերկինս է խոստացեալ և հանգիստ յափտենական, ջանա՛ և փութացի՛ր մտանել յայն հանգիստն։

Արդ, որ յայսոսիկ ժիր գտանի, նա՛ է մանուկ, և որ զայս առնէ և զայս ուսուցանէ, նա՛ է մանկտեացն աւագ։

Արդ, պիտոյ է մանկտաւագին այս չորս իրքս. նախ՝ գիտութիւն ի Սուրբ Գրոց և յԱստուծոյ պատուիրանացն, զի գիտութիւնն լուսատու ճրագի նման է, որ լուսաւորէ զմարդիկ, որ ի տանն իցեն։ Իսկ անգէտն նման է կուրի, որպէս ասէ Քրիստոս, «Թէ կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է, և երկոքեանն ի խորխորատ անկանին»*։

Բ. Պիտոյ է մանկտաւագին սուրբ կեանք, զի ի սուրբ վարուցն աւելի ուսանին ռեսողքն, քան թէ ի բանիցն։ Զի սուրբ կեանքն նման է անուշահոտ խնկի և ծաղկի, որ ամենայն մարդ հեշտանայ ի տեսն և ի հոտն։

Գ. Պիտոյ է մանկտաւագին բարի գործք, որ լինի ողորմած, մարդասէր, զի մարդասէրն զամենայն մարդ շահի, և ողորմած բարուքն, որպէս զհայր և զծնաւղ ժողովարան լինի անտիրաց և օտարաց, ողորմած, որ խղճայ և ողորմի աղքատաց և կարաւտելոց, որբոց և այրեաց։ Եւ այնոցիկ, որ զրկած են յառաքինութենէ և ի գիտութենէ, խնամ տանի նոցա և ողորմի ցաւակցաբար։

Դ. Պիտոյ է մանկտաւ[աւ]գին, որ եկեղեցոյ հնազանդ լինի և զամենայն ինչ նոցա խրատովն առնէ։ Զի Աստուծոյ շնորհաբաշխութենէն տեղի եկեղեցին է, և արքունիք թագաւորութենէն Աստուծոյ։

Եւ թէ ուստի՞ սկսաւ այս մանուկ կոչիլ և ճանապարհորդ անուանիլ. ասեմ, թէ ի Քրիստոսէ և յիւր սուրբ առաքելոցն։

* Մատթ., ժե. 14։

2 CD մեղաց ախտից 4—5 D արքայութիւն. խոստացեալ յանգիստ 7—8 C նա է ասաք մանուկ և առնէ և ուսուցանէ նա է մանկանցն սրբոց քառանիցն 7 D չիf զայս 8 D չիf զայս B և ուսուցանէ մանկտաւագ 10 B առաջին գիտութիւն 10—11 B պատուիրանացն և ուսանիլ յամենայն իմաստուն մարդոյ զպիտանի խօսս զի գիտունն լուսատու 13 B նման կուրի որ հրամայեաց B չիf և 15 B կացք 20—21 B շահի և աւտարասէր որ իբրև զհայր 22 B չիf օտարաց 23 B կարոտելոց և որ զրկած 26 B չիf պիտոյ է մանկտաւագին 28—29 B թագաւորութենէն նորա 30 չիf և ճանապարհորդ անուանիլ 31 B չիf ասեմ թէ։

Զի մինչ ի մարմնով գալն Քրիստոսի, հնա[ց]եալ մեղաւք շրջէին մարդիկ և մոլոր ճանապարհաւ ընթանային՝ մեղաւք և անգիտութեամբ և անաստուածութեամբ. Քրիստոս Աստուածն մեր աւազանին մկրտութեամբն ի հնութենէ մեղաց մանկացոյց զմարդիկ և Աւետարանին գիտութեամբն իմաստնացոյց, աստուածային ձայնիւն կոչեաց և դարձոյց ի մոլոր ճանապարհէն։ ԶԱստուած Հայր և զինքն և զՀոգին Սուրբ ճանապարհէն՝ ասելով. «Ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք»*։

Արդ, որք զհետ Քրիստոսի կոչմանն երթան, յերկինքն ելանեն և յարքայութիւնն հասանեն, և այնպիսիքն ճշմարիտ աստուածապաշտք են և կենդանիք Աստուծոյ։ Եւ յետ Քրիստոսի համբառնալոյն սուրբ առաքեալքն եղեն քարոզք և ուսուցիչք աշխարհի, և յետ առաքելոցն՝ սուրբ հարքն և վարդապետքն, որք ուսուցանեն զճանապարհ աւրինացն Աստուծոյ։

Է՛ և այս սովորութիւն քրիստոնէից, որ զաստուածասէր և զբարի քրիստոնեայն կնքահայր առնեն և տղային հաւատոյն երաշխաւոր առ Աստուած։ Եւ յորժամ տղայն մեծանայ՝ պարտական է, որում երաշխաւոր կացեալ է, որ զհաւատն ուսուցանէ՝ տայ ի նա ուսուցանելովն և վճարէ և ի պարտուց ելանէ։

Արդ, թէպէտ ամենայն շնորհք յեկեղեցին բաշխի ձեռամբ քահանայիցն, բայց որ բարեգործ և սուրբ քրիստոնեայք են, նոցա արժան է, որ լինին մանկտաւագ և որպէս հայր և ծնաւղ գթայ ի հոգևոր որդիսն, և յորդորեն զմանկունսն յամենայն գործս բարիս, և բանիւ և գործով առաջնորդեն նոցա, և տան գաւտի սրբասէր մանկանցն։

* Յովհ., ժԴ, 6։

3 B Քրիստոս մարմնով յաշխարհս երեկ և աւազանին 5 B չիf զմարդիկք և. իմաստնութեամբ 6 B և ի մոլորութենէ դարձոյց 6—7 B չիf ի մոլոր ճանապարհէն։ 10 B յերկինքն հասանեն և առ աստուած ելանեն 11 B չիf այդպիսիքն 13 B առաքեալքն նորա 15 B վարդապետքն և քահանայքն չիf որք 18 B չիf հաւատոյն 19—21 B պարտական է որ զհաւատքն ուսուցանէ երաշխաւոր կացուցանէ և ելանէ ի պարտուց 22 B Արդ նոյնպէս թէպէտ 24 B է լինել 25—27 B չիf և յորդորեն—մանկանցն

Թէ քանի՞ են գաւտիք, որ տուեալ լինին, և կամ թէ ովքո՞ւ է խորհուրդ նոցա և զաւրութիւն։

Առաջին գաւտի քրիստոնէականն է, որ յետ կնքոյն յաւազանն զգեցուցանէ քահանայն սպիտակ հանդերձ և ածէ գաւտի ընդ մէջն՝ զնարաւտն, մանեալ կարմիր և սպիտակ։ Արդ, սպիտակ հանդերձն աւրինակ է Աղամայ անմեղութեանն, մինչ ի դրախտին էր։ Զնոյն անմեղութիւնն, որ նա կորոյս, զտանեն որդիք նորա յԵկեղեցիս, որ է նոր դրախտ. իսկ կարմիր և սպիտակն, որ գաւտի ածեն գլխոյն և խաչիւն ի ճակատն կապեն՝ սպիտակն Քրիստոսի աստուածութեանն է աւրինակ, և կարմիրն՝ մարդկութեանն մարմնոյն և արեանն, որ միաւորեաց Քրիստոս։

Արդ նոյնպէս ամենայն ոք, որ ի Քրիստոս հաւատայ և մկրտի յաւազան նորա և հաղորդի մարմնոյ և արեան նորա, պարտ է, որ իմանայ զխորհուրդն։ Զի որպէս գաւտին զմէջն պնդի, այսպէս և քրիստոնեայն յԱստուծոյ սէրն պնդի և անքակտե[լի] զհոգին իւր ի Քրիստոս կապէ, և [է]լանելով մեղացն ծառայութենէ՝ Աստուծոյ միշտ ծառայէ։

Եւ երկրորդ գաւտի քահանայականն է, որ տայ եպիսկոպոսն քահանայիցն և սարկաւագաց, զի շնորհեսցէ, զոր առին յԱստուծոյ, պնդակազմ[ս] և ժիր կացցեն, և ի գործ սպասաւորութեան եկեղեցոյն՝ փո[խ]ի և արագ։

Երրորդ գաւտի ճգ[նաւոր]ացն է, զոր ունէրն եղիա և Յովանէս Մկրտիչն հանդերձ [ի տա]ճարէ ուղտու և գաւտի մաշ[կե]ղէն ընդ մէջ, զի որպէս մաշկն [մե]ռած մորթ է, նոյնպէս և որ վասն Աստուծոյ սիրոյն ճգնի, զամենայն մեղք և զցանկութիւն և զախտ մեռուցանել և ցամաքեցուցանել պարտ է։

Չորրորդ գաւտի զինուորականն է, որով զինուորն պնդէ զմէջսն, յորում և իցեն ամենայն պատերազմական գործիքն։ Նոյնպէս և որ յայս կրաւնս քրիստոնէութեան զինուորի, ի կռիւ է հետ սատանայի՝ և զկռուոյն զգեստն ի զգաւտին։ Սուրբ առաքեալն Պաւղոս ուսուցանէ. Զգեցարո՛ւք, ասէ, զրահ զարդարութիւն, զի որպէս զրահն ի բազում ատկից է, նոյնպէս և արդարութիւնն՝ ի յոլով առաքինութեանց։ [Եւ] ապուցէ՛ք զոտս ձեր ճշմարտութեամբ, այսինքն՝ Աւետարանին խրատովն, որպէս կաւշկով, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, այս է՝ ճշմարտութիւնն գաւտի ածեալ՝ պնդէ զմէջսդ։ Առէ՛ք զվահանն հաւատոյ։ Զհաւատն ասպար առ դէմ երեսացդ և թիկանցդ։ Զոյսն սաղաւարտ դի՛ր [ի գ]լխոցդ։ Եւ զբանն Աստուծոյ զէն [և] սուսեր առ ի ձեռինդ և այնպէս կռուեաց ընդ սատանայի և ընդ դիւաց նորա, որ հնան ղքեզ ի դրախտէն, և այժմ չանայ հանել յերկինից արքայութենէն։*

Հինգերորդ գաւտի ճանապարհորդացն է, որ գաւտի կապեն և զդրաւշակս հանդերձիցն ի վեր զարնեն, որ ոտիցն հեշտ լինի ի գնալն։ Զոր աւրինակ խորայէլացիքն յորժամ ելին յեգիպտոսէ և գային յերուսաղէմ, այսպէս հրամայեաց նոցա Աստուած և ասաց՝ եղիցին գաւտիք ձեր պնդեալ ընդ մէջ և ցուպ ի ձեռին. և այնպէս յոտն կալով կերիցեն զգառն զատկին։ Այդպէս և մեք, որ ի ճանապարհի եմք յայս կեանքըս՝ պարտ է մեզ զողջախոհութիւնն գաւտի ածել և այնպէս ընթանալ զճանապարհ կենցաղոյս։ Եւ վասն այնորիկ ի

---

1 CD վասն գոտոյն 2—3 CD թէ որքան է գօտին և մինչ խորհուրդ ունի 4 C եւ այս գիտելի է զի առաջին D գիտելի է զի առաջին B կնքելոյն 6 B չիf ընդ մէջն զնարաւտն CD չիf մանեալ 7—8 B չիf անմեղութեանն, յորժամ փխ մինչ CD դրախտին էր որ զգեցեալ էր զսկզբնական անմեղութեան պատմուճանն զթագաւորական կնիքն զաստուածային կերպարանն զտիրական պատկերն զսկզբնաւիպ գեղեցկութեան նկարն 8 C կորոյս ցանկութեամբ աստուած լինելոյն և քաղցրաճաշակ պտղոյն որովայնամոլութեամբ յորմէ մերկացաւ զսկզբնական մեղաց պատմուճանն եւ գտանեն զնա որդիք D կորոյս ցանկութեամբ աստուած լինելոյն և քաղցրաճաշակ պտղոյն որովայնամոլութեամբ յորմէ մերկացաւ զսկզբնական անմեղութիւնն պատմուճան և զգեցաւ զսկզբնական մեղաց պատմուճանն և գտանեն զնա որդիք 9 B գտանեն նորա կնքածքն և հաւատացեալքըն ի Քրիստոս 10 B չիf գլխոյն 10—11 CD ճակատն պահեն։ 15 B յաւազանն և հաղորդի. արենէն պարտ 17 B նոյնպէս 20 BCD չիf և 23 B եկեղեցւոյն արագապէս CD արագ լիցին 24 CD չիf գօտի B չիf եղիա և

* Սո եփես., 2, 14։

1 B խաւ ուղտուց 2 CD մաշկեղէն մորթն մեռած է 7 B յորում են ամենայն D չիf ամենայն 8—9 B յայս կեանքս կա ի կռիւ 10 CD չիf սուրբ 11 C պատերազմօղից 12 B չիf նոյնպէս CD եւ ապուցէք 13 B զոտսդ ամրացոյ աւետարանին 14—15 B չիf պընդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ այս է 16 B չիf առէք զվահանն հաւատոյ C ընդդէմ 17 C զիր գլխոյդ։ 18 B զսատուծոյ բանն և զսէրն սուր CD այնպէս ընդ 19 B դևս 22 D չիf հանդերձիցն C զարկնեն և հանգրիչեն ոտիցն D զարնեն և հանգրիչեն ոտիցն 24 C չիf ելին. սոյնպէս 25 C ասէ 27 D որ ճանապարհի 29 C ընթանալով

վերայ միջացն ածեն զգաւաին առ ի սանձել զցանկութիւնն, զի ցանկութիւնն ի միջացս ծնանի ի ներքոյ կողիցն, ր լերդէն և յերիկամանցն։

Արդ, գաւաի ած զսրբութիւն և կապէ զմեծ վիշապն՝ զցանկութիւնն։ Եւ որպէս ճանապարհորդն զդրաւշակն ի վեր զարնու, որ հեշտ երթայ, նոյնպէս և դու ի վեր քարշէ զցանկութիւնդ, զոր յաշխարհս ունիս. և յԱստուած զարձո զքո սէրն և զցանկութիւնն, որ հեշտ լինի քեզ ի յերկինս թռչել մտաւքդ և առ Աստուած ելանել յայսմ աշխարհէս, որ խաւար անուանեալ է և նեղութիւն։

Արդ, որ ցանկայ գաւաի առնուլ ի մանկտաւագէ, զայս ամենայն խորհուրդս ուսուցանել պարտի մանկտաւագն, և որդեգիրն այս իմաստութեամբս սիրէ զգաւաին։ Արդ, պարտ է ուսանիլ զայս խորհուրդս, որ տայ զգաւաին և որ առնու, զի յորժամ հարցանէ ոք, պատասխանի ունիցին տալ։

Եւ մի՛ սուտ և մոլար գիտութեամբ վարիլ և ճանապարհորդ կոչիլ, և ճանապարհ ոչ գիտենալ։

Դու ըզքեզ ճանպհորդ գիտես,
ւ ի ճանպհէդ ի դուրս կու գընաս,
Սիրես մանկութեան անուն
ու նրսէֆ մանկան չունենաս։
Ճանպհաս է բարակ ու նեղ,
դու խրփել ես զաչուիդ ու գաս,
Քաղցր է մանկութեան անուն,
դու լեզի ւ անհամ կու կենաս։
Ճանպհորդ քեզ յայնժամ ասեմ,
որ զճանպհի հատըն գիտենաս,
Ըրնել ես ւ յաշխարհս եկել՝
տո՛ւր խապար, թէ ուտի՞ կու գաս։
Եկել ես յաւտար երկիր,

10 CD անուանեալ և նեղութիւն քան այնմ, թէ վայ զի ընդ յերկար (երկու օրինակներում էլ բնագիրը այստեղ ընդհատվում է։ Շարունակությունը մի փոքր հատված է A բնագրի երրորդ «Վասն գօտի տալոյն» գլխից) 12 B չիք ամենայն B 12—13 ուսցէ մանկտաւագն չիք և որդեգիրն այս իմաստութեամբս 13 B չիք սիրէ զգօտին 17 B «և ճանապարհ ոչ գիտենալ» արտահայտությունից հետո բնագիրն ընդհատվում է։

մէկ ցուցո՛, թէ յի՞նչ կու կենաս,
Մեռնիս դու ւ ի հող մըտնուս,
ինձ ասա, թէ յո՞ւր կու գընաս։

ՎԱՍՆ ԳԱՒԹԻ ՏԱԼՈՅՆ

Յորժամ գաւաի տայ մանկտաւագն որդեգրին, թէ ի միաբանքն են, յառաջ զմիաբանից սահմանն կարդան, որ լսէ, և հարցանէն ցնա, թէ՝ հնազա՞նդ ես ատրինացս։ Եւ թէ նա հաւնի և ասէ՝ հնազանդ եմ, ապա ասէ մանկտաւագն. «Ո՛վ որդեակ, պատուիրեմ քեզ Ած բանս, որոց առաջին այս է՝ սիրեա՛ զԱստուած, որ քո արարիչ է, և ապա վասն Աստուծոյ սիրոյն՝ զմարդիկք սիրեա՛, որ [քո] ընկերք և եղբարք են, և զինչ իրք յաշխարհիս, որ Աստուծոյ սիրոյն արգելք ու խափան լինին՝ ատեա՛ զնոսա և ի բա՛ց թ[ող]։

Յամենայն աւուր Գ հետ անխափան յաղո՛թս կացիր և յամ[ենայն] ժամ ԺԲ ծո՛ւր ած՝ առ[ա]աւտուն և ճաշոյ ժամուն և [յե]րեկոյին, զի որ զԱստուած սիրէ, [աղաւ]թիւք խաւսի ընդ նմա. [և ա]մէն կիրակի զշաբթու [մեղքն] խոստովանեա՛ քո խոստո[վանահաւրն], զի որպէս հաքիմն հիւանդին ւագնէ, նոյնպէս և խոստովանահայրն՝ մեղուցեալոյն։ Յամէն շաբաթ ու [կի]րակի ի ժամատեղն գնա։

Քո ծնողացն հնազա՛նդ կաց և պատուեա՛ զնոսա, զի յետ Աստուծոյ մարդոյն երախտաւոր ծնաւղքն են։

Սիրեա՛ զաշխատիլն, որ ի քո վաստակոցն դու ուտես և այլոց տաս, որպէս և ա[ս]է սաղմոսն, «Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, և բարի եղիցի»*։

Ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն կալ և մի՛ լինիր կռուասէր, զի խաղաղասէրն որդի Աստուծոյ է, և խռովարար կռուասէրն որդի սատանայի է։

* Սաղմ., ճԻէ, 2։

9 CD երկու օրինակներն էլ շարունակվում են «նախ և առաջին այս է» արտահայտությամբ։ 10 չիք քո CD երկրորդ և ապա 12 C երրորդ և զինչ 12—13 C արգելեալք և խափանեալք CD չիք զնոսա 14 CD չիք անխափան 17 CD չորրորդ և ամէն 18 D չիք քո 20 CD հինգերորդ յամէն. չիք շաբաթ 21 CD վեցերորդ քո 22 CD չիք են 23 CD եւթներորդ սիրեա 24—25 D (ձեռաց) և առաքեալ ասէ ձեռք որ ոչ վաստակեցին կերիցեն մի 25 C (բարի) և առաքեալն ասէ ձեռք որ ոչ վաստակեցին կերիցեն մի 26 CD ութներորդ ընդ

Որչափ կարես, առանց կնոջ կալ, զանձն քո սուրբ պահէա յօտար մեղաց։ Եւ թէ կա[միս] ամուսնանալ՝ քեզ աւրինաւք և հալալ կին առ աւրհ(ն)ութեան պսակով և մի՛ հայիր [ց]՛նկութեամբ յատար կին, զի [շ]ուն կռչի և ոչ է մարդ, որ [յաւ]տար կին խառնակի։ Որ [զԱստուած] սիրէ՝ նա պպատուիրանս Աստուծոյ պահէ, զոր Աստուած և սուրբք նորա եդեալ են, ըստ այնմ. «Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք*»։ Զի Ադամ վասն միոյ պտղին, որ առանց հրամանացն Աստուծոյ եկեր, եւ [ի դրախտէն]։

Մի՛ սիրել գինին և զարբեցութիւն, զի գինին չորս մեծ իրք կորուսանէ մարդոյն, զիան աճէ և վնաս քերէ գիտղին, զխելքն, զրուզակն և զհարկիքն։ Զոր աւրինակ նաւ յորժամ ծանր լինի՝ ի ծով ընկղմի, և զոր ինչ ի ներս կայ՝ կորուսանէ։ Նոյնպէս մարդ, որ ծանրանայ արբեցութեամբ, կորուսանէ զամենայն բարի։

Հետ վատ և մեղսասէր ընկերաց մի՛ շրջիր, զի թէ մարդ ի գողոյն և ի պիսակոտէն և ի բորոտէն և յայլ յայսպիսի վատ ցաւոց գարշի և ի զատ կենայ և վախէ, թէ փոխիցի չինքն, քանի՞ աւելի յայն մարդկացն, որ զմեղաց բորն ունին չիւրեանց հոգին, ի զատ պիտի կենալ և ի հետ սրբոցն և գիտնոցն և իմաստնոցն շրջիլ, չանալ և նոցա նմանիլ։ Եւ յորժամ զայս խրատս տայ, և նա չանձն առնու, ապա տայ նմա գաւտի բարակ զունար և այսպէս ասէ. «Կուտամ քեզ գաւտի ու կու կապեմ զքո մէջքդ չանուն Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Գաւտովդ զքո մէջքդ պնդեա՛, և դու սրտովդ չԱստուծոյ սէրն պնդեաց։ Եւ վասն Աստուծոյ սիրոյն զԱստուծոյ պատուիրանն պահեա։

Զքրիստոնէութեան անունդ, զոր առեալ ես ի վերայ քո, սո՛ւրբ պահեա և մի՛ թերանար։ Զոր աւրինակ Քրիստոս ի վերայ քո մեռաւ, որ անմահն էր, դու վասն Քրիստոսի մեռիր, որ մահկանացուդ ես, և մի՛ խնայեր զմարմինդ քո։

Զգանձս աշխարհիս, զփառս երկրաւորս զամէնն ուրացի՛ր, զԱստուածպաշտութիւնդ և զհաւատդ [միայն] հաստատուն պահեա և զայլն ամենայն մի՛ խնայեր վասն հաւատոցդ։

Զկարիս ընկերին քեզ համարեա, լաց ընդ լացողսն և խնդա ընդ խնդացողսն։

Մի՛ լեզուովդ խաւսիր չար, թէ չէ դուս կորեալ,
Թէ զմեղս քո խոստովանիս, դու արդարացար.
Աղաւթքն խաւսք է ընդ Աստուած, անտի մի՛ հեղգար,
Վաստակեա ձեռաւքդ և տուր և առ մեկին հազար։

Անգործ և պարապ մի՛ կենար, զի պարապ մարդն տեղի սատանայի է, և աշխատաւորն տեղի Աստուծոյ է։ Որպէս ասէ ոմն ի սրբոցն, թէ՝ «Յանձն [աշխա]տասէր հանգիցէ Հոգ[ին] Սուրբ»*։

Եւ Աստուած Ադամայ ասաց. «Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո». և Պ[աւ]ղոս ասէ, թէ՝ «Զնոք, որ վաստակեսցի ոչ՝ կերից[ի] մի՛»։ Եւ մարգարէն ասէ՝ Աստուած[ա]հայրն Դաւիթ. «Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, և բարի [եղիցի]»**։ Եւ տէրն ուսուցանէ. «Յ[աղաւ]թեն հայցել զհաց մեր [և] ոչ՛ զայլոց». ա՛յս է, որ քո հալալ աշխատանաց [ն] [և] ի քրտանցն եղիցի և [ո՛չ] զրկանաց կամ ի գողու[թեանց] և ի վաստակոց աւտար[աց]։

Զայս ամենայն խրատս տայ մա[նկ]տաւագն որդեգրին [և կա]պէ զգաւտին ի մէջսն և [ասէ]՝ Աստուած շնորհաւոր առն[է], [և աս]են եղբարքն՝ Ամէն և եղիցի[1]։

---

* Յովհ., ԺԴ, 15։

1 CD ինններորդ որշափ 5 CD տասներորդ որ զԱստուած 6—7 C սուրբք նորա եդեալ 7—8 D չիf զիս չիf իմ պահեսջիք 10 CD մեռասաներորդ մի 11 CD անէծ և վնասաբեր է 16 CD երկոտասներորդ հետ 18 C փոխի, աւելի փախչիլ պիտի 20 C և ի զատ 23 CD տամ և կապեմ 25 CD չիf սրտովդ 28 CD երեքտասաներորդ զքրիստոնէութեան 33 D չիf հաստատուն

* Ծնն., Գ, 19։

** Սաղմ., ՃԻԷ, 2։

1. Ցնագրին ճետևում է «Յակոբ, զարթիր ի քնոյ մեղաց» տաղի մի տարբերակ, որի վերնագիրը ճատկապես արժանի է ուշադրության.

«Նորին Յօհաննու առաքելաշնորհ և բանիբուն վարդապետի բան խրատական և յորդորումն յաղօթս զառաջին մանկտաւագն Յակոբ, զոր փոխեաց ի մարմնաւորէն ի հոգևորն, աւրհնեաց զնա և ետ նմա գօտի և ասաց [...] նա զերգս ուտանաւոր»։

3 CD չորեքտասաներորդ զկարիս C համարեալ ըստ այն թէ լաց 5 CD հինգետասաներորդ մի չիf դու 6 D դու ապրեցար 11 CD ի հարանցն 14 D չիf թէ 16 CD Եւ Դաւիթ ասէ զվաստակս 16—17 CD չիf ձեռաց քոց... բարի եղիցի 17 C ցուցանէ փխ ուսուցանէ 18 CD զայլոց և հայրն ասաց զհաց աւտրն քրտամբ երեսաց ասացաւ ուտել, և դու զյաւիտենական կեանքն քնով կամիս ժառանգել, ի քո 23 C եղիցի եղիցի եղիցի

ՑԱՆԿԵՐ*

Անձնանունները

Աբել (աստվ.) 166, 167
Աբեղյան Մ. 35
Աբրահամյան Ա. 128
Աբուլ Ֆարաջ 15, 17
Ագաթանգեղոս 88
Ադամ (աստվ.) 37, 148, 158, 159, 163, 166, 171, 176, 205, 214, 234, 238, 239
Ադոնց Ն. 35
Ալէէ 88
Աղբուղա 14
Աճառյան Հր. 5, 19, 33, 34, 87
Ամատունի Ս. վրդ. 34
Ամբրոսիոս նպս. 192
Ամիրոց 34
Անահիտ (աստվ.) 131, 133
Անանիա Շիրակացի 128
Անանուն Սեբաստացի 23
Ապաղա խան 17, 19, 80—82
Ապողոն (աստվ.) 132
Ապուլքարամ 34
Աստվածածին 133, 134
Աւագ իշխ. 14, 68
Ավգերյան Մ. 87
Արամազդ (աստվ.) 132
Ափրոդիտե (աստվ.) 132, 133

Բագոս (աստվ.) 133
Բաստամեանց Վ. 43
Բարսեղ Կեսարացի տե՛ս սբ. Բարսեղ
Բլոկ 73

Գեորգ Պալատեցի դպիր 14
Գէլեզա (աստվ.) 200
Գէորգ վրդ. տե՛ս Գևորգ Սկևռացի
Գոնսալես դե Կլավիխո 20, 116, 117
Գրիգոր Ակներցի 16
Գրիգոր է Անավարզեցի կթղ. 61, 85, 103
Գրիգոր Դարանաղեցի տե՛ս Գրիգոր Կամախեցի
Գրիգոր Գօփի 14
Գրիգոր Լուսավորիչ 34, 49, 57, 76, 77, 79, 83, 88, 103, 131, 143, 144, 181, 196, 205, 206
Գրիգոր Կամախեցի վրդ. 20
Գրիգոր Նյուսացի 127
Գրիգոր Սանահնեցի վրդ. 221
Գրիգոր Տաթևացի 126
Գրիգորիս 19, 80, 82
Գրիգորյան Գր. 36, 127
Գրիգորյան Վ. 64, 67
Գևորգ Սկևռացի 28, 32

Դանիէլ (աստվ.) 43
Դաւիթ (աստվ.) 52, 85, 103, 107, 132, 160, 163, 195, 201, 209, 222, 239
Դիոնեսիոս 132, 151

Եղիա (աստվ.) 177, 234
Ենոք (աստվ.) 177
Եսայի Նչեցի 92
Եվա (աստվ.) 37
Երեմիա (աստվ.) 37
Երզնկացիներ 22
Եփեսացի 160, 235

Զաքարհանալյան Գ. 33, 35
Զաքարէ զոր. 37
Զաքարյաններ 9, 13

Էֆթիմիուս 17

Թադէոս առաք. 57, 184, 185, 198, 199
Թէոդոս թագ. 192
Թովմա Մեծոփեցի 63
Թորոս արքայորդի 26, 82, 85

Իբն Բատուտա 19
Ինճիճեան Ղ. 134

Լենկ-Թեմուր 63, 117
Լեո 115
Լևոն Բ թագ. 19, 29, 82

Խաղբակյաններ 35
Խաչիկյան Լ. 5, 19—21, 35, 46, 61, 63—65, 67, 72, 75, 82, 114, 121, 127, 220
Խիկար 36

Կաբասիկա իշխ. 116, 117
Կայեն (աստվ.) 158, 166—168, 200
Կիրակոս Գանձակեցի 13, 14, 17, 36, 37
Կիրակոս Երզնկացի 21
Կլավիխո տե՛ս Գոնսալես դե Կլավիխո
Կյուլեսերյան Բ. 35
Կոստանդին Բարձրբերդցի 17, 46, 47
Կոստանդին Երզնկացի 21, 76
Կոստանդին Բ Կատուկեցի 46, 61, 83
Կոստանդին Գ Կեսարացի 61
Կորնթացիներ 43

Հակոբ Կլայեցի կթղ. 19, 23, 27, 59—61, 82
Հակոբ Մանկատավաղ 66, 239
Հակոբյան Գր. 45
Հակոբյան Հ. 12, 20
Հակոբյան Վ. 23, 42, 82
Հեթում պատմիչ 16
Հեթում Ա թագ. 15, 16, 19, 83, 85
Հեթում Բ թագ. 26, 29, 82, 89, 90
Հեղե 205
Հերովդէս թագ. 207
Հոբ (աստվ.) 214
Հովհան Իմաստասեր 57
Հովհան (Յոհան) Մանդակունի 57, 186, 196, 197
Հովհան Մեծոփեցի 33
Հովհան Օձնեցի 42
Հովհաննես իշխ. 17—19, 25, 78, 80—82, 93
Հովհաննես Սործորեցի երզնկացի 21, 31, 33
Հովհաննես Ճլուզ վրդ. տե՛ս Հովհաննես Պլուզ երզնկացի
Հովհաննես Որոտնեցի 126, 177
Հովհաննես Պլուզ Երզնկացի 6, 7, 9, 12, 15, 17—41, 46, 48—53, 57—70, 74—136, 139—141, 143, 163, 175, 177, 204, 205, 221, 230, 233, 238, 239
Հովհաննիսյան Ա. 5, 93
Հովսեփյան Գ. 35
Հռոմկլայեցի Անապատական տե՛ս Ստեփանոս Երզնկացի
Հուլաղու (Յուլայու) խան 17, 19, 82

Ղազան խան 11
Ղազարոս մեծատուն 132, 179, 213
Ղուկաս ավետարանիչ 164
Ղևոնդ Ալիշան 28, 31, 33—35, 93

Մալխասյանց Ստ. 37
Մանանդյան Հ. 5, 15, 87, 132
Մանգու խան 15, 16
Մանկու Տամուր 81
Մաշտոց 5, 18, 42, 76, 142, 204, 220, 229
Մատթեոս ավետարանիչ 147, 157, 161, 164, 176, 188, 201, 226, 232
Մատթեոս եպս. 92
Մատթեոս Ուռհայեցի 67
Մարիամ տիրուհի 17
Մարկո Պոլո 20
Մարկոս ավետարանիչ 157
Մարտիրոս տանուտեր 63
Մելիք Աշրաֆ 88
Մեծոփեցին 34

* Կազմեց Ա. Հ. Շաղգամյանը

Անունները բերվում են ըստ ուսումնասիրության և բնագրերի մեջ նրանց ունեցած ուղղագրության։

Մեսրոպ Մաշտոց վրդ. 32
Միքայել Բալեոլոգոս (Պալեոլոգ) 17
Մխիթար Գոշ 36, 37, 42, 43, 49, 52
Մխիթար Երզնկացի 21
Մովսես Երզնկացի 21, 28, 31, 32
Մովսես (աստվ.) 38, 119, 141, 159, 161, 162, 164, 166, 168, 177, 181, 187, 189, 198
Մովսես Խորենացի 39, 134
Մսերյան Մ. 115

Յակոբոս առաքյալ 147
Յոզ 205
Յոհաննէս աւետարանիչ 165—169
Յովաննէս Մկրտիչ 235
Յովհաննէս Կարապետ 79, 206, 208
Յովհաննէս վրդ. տե՛ս Հովհաննես Պլուզ Երզնկացի
Յուդա 188, 190
Յուդա Յեակոբեան 199

Ներսես արքեպս. 19, 80, 82
Ներսես կթղ. 57, 186—188
Ներսես Շնորհալի 24, 45—47, 52, 53, 59, 92, 121, 124
Ներսես Պարթև 23, 93
Ներսէս քահ. 28
Նշանյան Մ. 20
Նոյ (աստվ.) 158, 177
Նուշիրվան 36
Նուսրաթ խաթուն 34

Շահնշահ իշխ. 14, 34
Շամլյան Զ. 22

Ովսէ (աստվ.) 154

Զամլյան Մ. 35, 81
Զնքիշ 81

Պալյան Տ. 29, 89
Պաղտին իշխ. 77
Պաւղոս առաքյալ 97, 133, 145, 149, 153, 159, 160, 165, 170, 177, 184—186, 195, 230, 235, 239
Պետրոս առաքյալ 133, 147, 197, 222
Պողարյան Ն. 34
Պոստուրյան Մ. 35
Պռոշյաններ 35
Պրոպպ Վ. 74, 75

Ջալալ Հասան 14
Ջալապի 82

Ռոբէ 198
Ռուբինյաններ 76—80, 204
Ռուբրուկ 12
Ռուքն էդ Դին 14

Սաւուղ թագ. 205
Սարգիս արքեպս. 17—20, 25, 78, 80, 81, 93
Սբ. Բասիլիոս 183
Սբ. Բարսեղ 56, 57, 152, 162, 169, 170, 175, 179, 181, 183, 190, 195
Սբ. Գրիգոր տե՛ս Գրիգոր Լուսավորիչ
Սբ. Եփրեմ 57, 198
Սբ. Լուսավորիչ տե՛ս Գրիգոր Լուսավորիչ
Սբ. Կարապետ 104
Սբ. Ներսես 174
Սբ. Սահակ 56, 57, 155, 175, 179—181, 197, 200
Սբ. Սարգիս 133
Սբ.Ստեփանոս 132
Սեթ (աստվ.) 158
Սողոմայեցիներ 177
Սողոմոն Իմաստուն 38, 43, 176
Ստեփանոս երզնկացի 29, 61, 83, 89
Ստեփանոս երկայն քահ. 31
Ստեփանոս կոստիկոսցի վրդ. 85
Ստեփանոս Դ Հռոմկլայեցի տե՛ս Ստեփանոս երզնկացի
Ստեփանոս Սկևռացի 83
Ստեփանոս վրդ. 27, 76, 77, 79, 83, 205
Սրապյան Ա. 15, 18, 21, 22, 27, 31, 32, 35, 59, 66, 67, 76, 20, 81, 101, 104, 108, 204

Վահրամ իշխ. 14
Վահրամ Բաբունի 127
Վասիլ 34
Վարդան վրդ. տե՛ս Վարդան Արևելցի
Վարդան Այգեկցի 77
Վարդան Արևելցի 28, 46, 48, 57, 58, 60, 119, 143, 164

Տաշյան Հ. 37
Տեր-Ավետիսյան Ս. 31
Տեր-Մկրտչյան Ե. 22
Տիմոթէ 186
Տրդատ թագ. 131
Տուխար 82
Տունն Դամբլուն 88
Տունն Ոսպեթալի 88

Փիլիպպոս առաքյալ 171

Քեշիշյան Մ. 81
Քյուրտյան Հ. 14, 15, 17, 18, 21, 23, 35, 81
Քրիստոս 18, 29, 31, 38, 51, 52, 63, 69, 85, 92, 93, 101—104, 106, 107, 120, 131, 133, 134, 145, 147, 149, 150, 152, 156, 157, 160, 161, 163—165, 168, 169, 171, 172, 175—179, 181, 182, 189, 191—193, 196, 198, 204, 205, 219, 221, 223—226, 228, 232—234, 238
Քրոնոս (աստվ.) 132

Օրբելյան Ստ. 81
Օրմանյան Մ. 17, 33, 35, 59

Տեղանուններ, հուշարձաններ

Աբեղ 97, 132
Ակներ վանք 33, 34
Ամենափրկիչ վանք 31
Անի տե՛ս Կամախ
Անտիոք 17, 57, 67, 196
Ապլստան 81
Առաջավոր Ասիա 16
Աստրիք 88
Աւտիկէ 132
Արևելյան Հայաստան 46
Արևմտյան Ուկրաինա 64
Աքա 88

Բաղդադ 16
Բարդոզ լեռ 63
Բեյրութ 33
Բյուզանդիա 12, 42, 133
Բոստոն 22

Դարանաղյաց գավառ տե՛ս Եկեղյաց գավառ

Եգիպտոս 88, 89, 235
Եկեղյաց գավառ 12—15, 17—20, 23, 24, 28, 30—32, 35, 60, 76, 77, 79—81, 83, 84, 86, 88, 93, 98, 107, 126, 204, 205
Եվրոպա 11, 73, 114

Երզնկա 12—21, 23, 25, 27, 30, 32—35, 61—63, 67, 69, 70, 72, 73, 77, 78, 80—83, 85, 88, 92, 93, 107, 113, 114, 121, 126, 140, 204, 221
Երզնկայի էմիրություն 15, 18, 81
Երիզա գավառ 14, 15, 17, 18, 23, 35
Երուսաղեմ 19, 20, 25, 31, 34, 35, 59, 82, 92, 107, 161, 205, 235

Զաքարյան Հայաստան 53
Զմմառի վանք 81

Թակալթու տե՛ս Բարդոզ
Թավրիզ 92
Թեոդուպոլիս տե՛ս Կարին
Թիլ ավան 23, 93

Իկոնիա 9, 12—16
Իսպանիա 117
Իսրայել 181

Լուսավորչի լեռներ 20, 77, 83
Լուվր 73

Խարբերդ 82
Խորին անապատ 30

Կամախ 28, 63

Կամենեց-Պոդոլսկ 64
Կապադովկիա 190
Կարին 59, 63
Կեսարիա 13, 29, 89
Կիլիկիա 9—11, 15, 16, 20, 25, 27, 29, 30, 32—34, 45, 59, 60, 62, 78—83, 85, 88—90, 93, 95, 103, 127, 204
Կիլիկյան Հայաստան 127
Կիլիկյան թագ. 9, 12, 16, 44, 53, 79, 88, 102
Կիև 64
Կողբ 63
Կոշի եկեղ. 68
Կոռիկոս 85
Կոստանդնուպոլիս 17, 35, 134
Կրետե 132

Հաղբատ 32
Հայաստան 5, 9, 10, 12, 13, 16, 20, 29, 41—47, 49, 53, 59—65, 67, 71, 73, 78, 83, 87, 89—93, 95, 102, 103, 107, 123, 125—128, 135, 144, 186—188, 205
Հյուսիսային Հայաստան 12
Հռոմ 12, 82, 102, 133
Հռոմկլա 25, 29, 88, 89
Հունաստան 133
Հունգարիա 64

Ղրիմ 11

Մարբուրգ 132
Մելիտինե 34
Մեծ Հայք 10
Մերձավոր Արևելք 15
Մոլդավիա 64
Մոսկվա 115

Յաղլովեց 64
Յորդանան գետ 150

Նիկիա 57, 184, 191, 196
Նիկիտա 82
Նոր Նախիջևան 26, 128
Նոր Ջուղա 31

Ջաման Կատուկ 13

Պարսկաստան 42

Ռումինիա 64
Ռուսաստան 133

Սբ. Դանիելի վանք 29, 89
Սբ. Կաթուղիկե 81
Սբ. Կարապետի վանք 29, 89
Սբ. Ղազար 14
Սբ. Մինասի անապատ 27, 60
Սբ. Նշան եկեղ. 32, 33
Սբ. Փրկիչ եկեղ. 19, 23, 82
Սեբաստիա 13
Սեպուհի լեռներ տե՛ս Լուսավորչի լեռներ
Սիս 85
Սյունյաց նահանգ 12

Վաղարշապատ 34, 35, 43, 87
Վան 63
Վասպուրական 22
Վենետիկ 14, 28, 33, 35, 37, 39, 87, 90, 134
Վիեննա 29, 37, 81, 229
Վրաստան 11, 26, 60

Տրապիզոն 117

Ուկրաինա 64

Փարիզ 68
Փոքր Ասիա 15, 16, 133

Ֆրանսիա 133

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

ՄԱՍՆ Ա

ՊԱՏՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 7

Գլուխ առաջին

Հովհաննես Երզնկացին և նրա ժամանակը 9
Ա. Ժամանակը 9
Բ. Երզնկան և եկեղեցաց գավառը XIII դարի երկրորդ կեսին . 12
Գ. Կենսագրական դիտողություններ 21

Գլուխ երկրորդ

Հովհաննես Երզնկացու խրատները 35
Ա. Կանոնական բնույթի խրատների անհրաժեշտությունը . . 35
Բ. Երզնկացու «Խրատ հասարակաց»-ը 48
Գ. Խրատա-կանոնական երկու գրվածք 61
Դ. Երզնկացու խրատական թղթերը 75
Ե. Խրատական բնույթի այլ գործեր 84

Գլուխ երրորդ

Հովհաննես Երզնկացու խրատների պատմագիտական նշանակությունը . 87

ՄԱՍՆ Բ

ԹՆԱԳՐԵՐ 137
Խրատ հասարակաց 139
Խրատք կանոնական համառատ 201
Թուղթ առ իշխանս եկեղեցաց գաւառի 204
Սահման եւ կանոնք միաբանութեան եղբարց 220
Կրկին կանոնք եւ խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց 229
Յանկեր 240

ԷԴՎԱՐԴ ՄԻՔԱՅԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ЭДВАРД МИКАЕЛОВИЧ БАГДАСАРЯН

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ՇԱՂԱՄՅԱՆ
Նկարիչ
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐՇԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՉԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 05035 պատվեր 308 հրատ. 4553 տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 15. IV. 1976 թ.: Ստորագրված է տպագրության. 10/III 1977 թ.: Տպագրական 15,37 մամուլ, +4 ներդ. հրատ. 12,7 մամուլ, Թուղթ № 1, $60\times90^{1}/_{16}$: Գինը 2ռ. 32կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության, 24 գ.
Издательство АН Арм. ССР. Ереван, 375019, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան